

ՀԱՐՔԱՆՆԵՐ

VI ՏԻԼՈՒ

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. Մ Ս Ա. Գ. Ի Ր

№ 11-12

ՆՈՅԵՄԲԵՐ—ԴԵԿՏԵՄԲԵՐ

1906



ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐԱՊԵՏԱԿԱՆ

Տպարան «ՀԱՐՔԱՆՆԵՐ» Խաղաղության, № 15:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ № 11—12

ԵՐԵՎ

- 1) «ՄՈՒՐՃ» ամսագրի 1905 և 1906 թ. թ. նիւթը սիւս-տեմբի վերածած... 5
- 2) Ո՞Վ ԿԸ ԳԱՅ ԻՆՁ ՀԵՏ... ոտանաւոր Հր. Փալեանի 5
- 3) ՆՈՐ ՕՐ (արձակ բանաստեղծութիւն) օր. Մ. Գուլազեանի 7
- 4) ՍՏՈՒԵՐՆԵՐ, Էսկիդ Ե. Բանաթուրի 7
- 5) ԱՊՐԻԼ, ոտանաւոր Հր. Փալեանի 10
- 6) ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ Գալուստի 11
- 7) ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՑ Հր. Ալիանաքի 43
- 8) ՅՐՏԱՀԱՐ, ՀՈՂՄԱՀԱՐ ոտան. Վ. Տ.-Դրիգորեանի . . . 53
- 9) ԱՐԴԻՒՆԱՔԵՐՈՒԹԵԱՆ ԵՐԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ. քննադատ, աշխատանք եւ կապիտալ: 54
- 10) «ԱԶԳԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ», փաստաթղթեր և խորհրդածութիւններ 78
- 11) ՄԻ ԱԿՆԱՐԿ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑԵԱԼԻ ՎՐԱՅ Յ. Այվազեանի 105
- 12) ԹԻՒՐԳԻԱՆ ԵՐԲ ԿԸ ՎԵՐՁԱՆԱՅ Վամբերի, 113
- 13) ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ ԵՒ ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՆ ԸՍՏ Կառլսկու . . . 113
- 14) ԿԱՐԼ ՄԱՐԿՍԸ ԵՒ ՄԱՐԿՍԻՉՄԸ Բ. Իշխանեանի . . . 128
- 15) ՄՕՏԻԿ ԱՆՑԵԱԼԻՑ, Անկախի 151
- 16) ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ 1) Ս. Զաւարեան «ծրագիր» 2) Ю. Веселовский, Очерки Армянской литературы и жизни, 3) Армянская Муза, сборникъ изданный под ред. Ю. Веселовскаго и проф. Г. А. Халатянцъ, со вступительною статьею, 4) լրացուցիչ կարծիք Ե. Ա.
- 17) ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐԲԵՐ ??
- 18) ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Յեղափոխական բոմանտիզմը.— «Խուս մարդկանց զաշնակցութիւն».—Կաղէտները ծայր

Ղոր շրջան VI տարի

Հրատ. XVIII տարի

ՄՈՒՐՃ

ԴՐԱԿՈՆ, ՀԱՅԵՐԵՎԵՆ ԵՒ ՔԵԼԵՔԵՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 11-12

ՆՈՅԵՄԲԵՐ—ԴԵԿՏԵՄԲԵՐ

1906



ԹԻՖԼԻՍ

Տպարան „ՀՐԱՄԷՆ“ Բնկ. Մադար. փող., 15.

1906

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ № 11—12

ԵՐԵՎԱՆ

- 1) «ՄՈՒՐՃ» ամսագրի 1905 և 1906 թ. թ. նիւթը սիս-
տեմի վերածած... 5
- 2) Ո՞վ ԿԸ ԳԱՅ ԻՆՉ ՀԵՏ... ոտանաւոր Հր. Փալեանի 5
- 3) ՆՈՐ ՕՐ (աբձակ բանաստեղծութիւն) օր. Ս. Գուլազեանի 7
- 4) ՍՏՈՒԵՐՆԵՐ, Էսկիզ Ե. Բանաթուրի 7
- 5) ԱՊՐԻԼ, ոտանաւոր Հր. Փալեանի 10
- 6) ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ Գալուստի 11
- 7) ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՑ Հր. Ալիանաքի 43
- 8) ՅՐՏԱՀԱՐ, ՀՈՂՄԱՀԱՐ ոտան. Վ. Տ.-Գրիգորեանի . . . 53
- 9) ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԵՐԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ. քննութիւն,
աշխատանք և կապիտալ: 54
- 10) «ԱԶԳԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ», փաստաթղթեր և
խորհրդածութիւններ 78
- 11) ՄԻ ԱԿՆԱՐԿ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ԱՆ-
ՑԵԱԼԻ ՎՐԱՅ Յ. Այվազեանի 105
- 12) ԹԻՒՐԴԻԱՆ ԵՐԲ ԿԸ ՎԵՐՉԱՆԱՅ Վամբերի, 113
- 13) ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ ԵՒ ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՆ քսա կառուցիւ . . 119
- 14) ԿԱՐԼ ՄԱՐԿՍԸ ԵՒ ՄԱՐԿՍԻՉՄԸ Բ. Իշխանեանի . . . 128
- 15) ՄՕՏԻԿ ԱՆՑԵԱԼԻՑ, Անկախի 151
- 16) ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ 1) Ս.
Զաւարեան «ծրագիր» 2) Յ. Веселовский,
Очерки Армянской литературы и жизни,
3) Армянская Муза, сборникъ изданный под
ред. Ю. Веселовскаго и проф. Г. А. Хала-
тянцъ, со вступительною статьею, 4) արացի
կարծիք Յ. Ա.
- 17) ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐԲԵՐ ??
- 18) ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Յեղափոխական բոմանտիզմը.—
«Ռուս մարդկանց Դաշնակցութիւն».—Կազմները ծայր

երկրներում.—Հայ Դեմոկրատիական կուսակցութիւն.—
Դաշնակցութիւնը՝ ազգային «փողրաչի».—Երեք մաս.
Նահապետեան, Սեդրակեան եւ Պետրոսեան:

19) ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Եւրոպական կապիտալիզմը Աթ-
րիկայում.—Գերմանական քայխստագի արծակումը.—Ճա-
պոնիայի գերիշխումը Խաղաղ Ուկրաինոսում եւ Ասիա-
յում.—Ճապոնական եւ ամերիկական կապիտալիստնե-
րի մրցումը եւ առանձնայատկութիւնները:

18) ՊԱՐՔԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ «Armenia»,

«Անահիտ»: 154

19) ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ 155

20) ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ 156

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագրերից՝ գրել պարզ
մանաւանդ քուերը, յատուկ անուններն ու osare բառերը, եւ քերքի միայն մի
երեսի վրայ. առանձնապէս ուս դարձնել կէտադուքեան, ուղղագրութեան եւ
նոր պարբերութիւնները որոշակի լինելու վրայ: Թարգմանութեան հետ պէտք
է ուղարկել խմբագրութեանը նաեւ բնագիրը:

2. Ձընդունուած մեծ յօդուածները պահուում են խմբագրատանը 6 տ-
միս, իսկ յետոյ ոչնչացնուում են: Ձեռագիրը յետ ստանալու համար պէտք է
ուղարկել ճանապարհածախսը: Փոքր յօդուածներն ու ոտանաւորները չեն
վերադարձնուում:

3. Դրուածքների վարձատրութեան չափը որոշում է խմբագրութիւ-
նը: Խմբագրութեան առանց պայմանների ուղարկուած ձեռագիրները հա-
մարում են անվճարելի:

4. Խմբագրութիւնը իրան է վերապահում ուղարկուած յօդուածները
փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:

5. «Մուրճի» համարը չստացուելու դէպքում պէտք է խմբագրութեա-
նը տեղեկութիւն տալ ոչ ուշ, քան յաջորդ համարի լոյս տեսնելը:

6. Խմբագրութեանը զանազան հարցումներով դիմող անձինք պէտք
է պատասխանի համար ուղարկեն նամակադրոշմ կամ պոստային քանկ:

7. Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոպէկի Հասցէի
փոփոխումը պէտք է ստացուի իւրաքանչիւր ամսի 10-ից ոչ ուշ, որպէս-
զի առաջիկայ համարն ուղարկուի նոր հասցէով: Նոր հասցէի հետ պէտք է
յայտնել նաեւ հին հասցէն:

„ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹԻՒՆԸ

1905 և 1906 թ. թ.

I. Բ Ե Լ Լ Ե Տ Ր Ի Ս Տ Ի Կ Ա

1) ՎԷՊԵՐ, ԴՐԱՄԱՆԵՐ, ՊՈԷՄԱՆԵՐ, ԵՐԳԻԾԱԿԱՆ.

Ա. ԻՆՔՆՈՒՐՈՅՆ

Ահարոնյան Ա. Մեր ճանապարհը (1905, № 1):

Առանձնագր. — Մ. Բուրժի Սանտրը (1905, № 1.) Երկու պատկեր (1906, № 1.):

Բահաթուր Ե. — Մույլ օրերը (1905, 4), Մեր դժբախտութիւնը (1905, 6) Կեանքի անիւը (1905, 8), Երբէք (1906, 10): Ստուերներ (1906, 11):

Գալաչիան Նոր օր (№ 11—12)

Գրիգորեան Ռ. — Զուլմա (1905, 6):

Սէլէն. — Սամէլէօն (1906, 6), Սարգը (1906, 4—5), Ծիծառը (1906, 4—5):

Սամա. — Ո՛վ էր իսկական ժեղաւորը (1906, 3—4):

Թումանեան Գովնանէս. — Թմբկաբերդի առումը (1905, 1, 2, 3)

Մանուէլեան Ն. — Սասունցի Դաւիթ և Մարամելիք (1905, 4, 5), Վերածնունդը (1906, 7):

*) Նոր շրջանի «Մուրճի» 1901—1904 թ. թ. բովանդակութիւնը աւելուածէր «Մուրճի» 1905 թ. № 1-ում: Այժմ տալիս ենք 1905 և 1906 թ. թ. բովանդակութիւնը բաժանած որոշ սխառեմով: Ընթերցողը թէ այս ցուցակից և թէ 1905 թ. № 1-ում տպածից կարող է զաղափար կաղմկել այն հսկայական զբաղան աշխատանքի մասին որ ամփոփուած է աւելի քան 70 հատորների մէջ: Մշտական բաժինների մանրամասն բովանդակութիւնը առաջ բերել զժբախտաբար անկարող եղանք, խուսափելով աւելորդ ծախքերից: — Այդ 70 հատորը մօտ 10 հազար ընդուն դիֆէցիտ է պատճառել մեզ...

- Պետրոսեան Վ.—Շուշանիկ (1905, № 1), Սև Մշակ (1906, 7):
 Շանթ Լ.—Ուրիշի համար (1905 11—12, 1906, 1):
 Զաւախեցի.—Ընկերս (1905, 4):
 Փափազեան Վ.—Քեօխվա (1905, 2—3), Ստարշինա (1905, 6), Զորագլխին (1905, 7), Անտառը շարժում է (1905, 9), Խաղ (1905, 10, 11—12), Փարհատ և Շիրին (1906, 3):
 *.—Խուսափող փաստեր, (1905, 1):
 Ֆերնանդո—Դօն Կարապետի արշաւանքը դէպի Կղերաստան (1906, 9):
 Զարհատ.—Զպատմած իրականութիւններ (1905, 10)

Բ. ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

- ?—Զինորան ու Ֆէյան, ճապոնական լեզենդա, Թարգմ. Սալիւմեանի (1905, 11):
 Բաղէն Ռ.—Օրերէները (2—3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11—12, 1906, 1):
 Էյօբէյըր Զաքանի.—Կատուների և ձկների կոիւրը, Թարգմ. Վ. Փ. (1905, 5):
 Իւհանի Ահոն.—Դու կը հանդիպես իսկ ես կը վառեմ, Թարգմ. տ. Մ. Մ.—Բ. (1905, 10):
 Մօրիէր Զ.—Հաջի Բաբան Անգլիայում (1905, 4—12, 1906 1—8):
 Պինսկի.—Սեւագարների տանը (1906, 10):
 Սումբատով.—Դաւաճանութիւն (1905, 1, 2, 3, 4):
 Սենկելիչ.—Ասպինվալի Փարոսի պաշտպանը, Թարգմ. Ա. տոմ (1905, 8):
 Վերա.—Մէկը շատերի համար (1906, 2, 3, 4, 5): Թարգմ. տ. Հրա.:
 Ֆոարիէ Լ.—Ջրհանկիրը, Թարգմ. Ա. Շահէն
 Լըվիկ Մօրիս.—Մեղմացուցիչ պարագաներ, Թարգմ. Ա. Շահէնի:
 Միրբո Սպաւ.—Շունին մահը, Թարգմ. Ա. Շահէնի (1906, 8):
 Վօլտեր.—Կանգիտ, Թարգմ. Ա. Կ. (1906, 9):

2) ՈՏԱՆԱԻՈՐՆԵՐ

Ա. Ի Ն Ք Ն Ո Ի Ր Ո Յ Ն

- Իւզրաշեան Սմբ.—Կը գայ գարուն (1905, 6):

Իսահակեան Ա.—Երեկոյեան (1905, 2—3), Նման դայլերի (1905, 2—3), Նուէր, օր. № № (2—3), Ես կ'ուզէի արեւովուն (4), Հիմա հեռաւոր (4) Բաղերը վայրի (4), Քաղած վարդը (1805, 5) Մարդկանց արարքներն (1905, 5), Արտոյան երգում է (1905, 9), Եղբայրութիւն կամ թէ սիրոյ խօսք (1905, 11—12), միշտ զգում ես (1906, 1) Քաջերին (1906, 1), Մութ պարտիզում (1906, 2), Քնքոյշ տատրակս (1906, 2):

Ծատուրեան Ալ.—Կեանքի ձայնը (1905, 2, 3), Բախտի խաղ (№ 4), Դաշտ (4) Թռչնիկները (1905, 9):

Հայկունի.—Դու մի վրդովուի՛ր (1905, 7), Դու յոգնած ես (1905, 8):

Սիպիլ.—Ամպը (1905, № 1), Խունկը (1905, 1):

Մանուէլեան Լ.—Սերունդներ (1906, 7), Եթէ յոգնեցիր կեանքի մէջ (1906, 7):

Յովհաննիսեան Յ.—Հատուած (1905, 5):

Տէր-Գրիգորեան Վ.—Էլեգիա (1906, 7), Stances (1906, 9) Երգ (1906, 9), Աշնան սոսնետներից (1906, 10) Յրտահար (№ 11—12)

Չախան Հր.—Վաստակեալներին (1906, 10): «Ո՞վ կը գայ քնձ հետ» (11—11) Ապրել (1906, 11),

Բ. ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

Քայրոն.—«Այսօր վերջացնում եմ երեսուն վեց տարիս», Թարգմ. Յ. Մասեհանի (1905, 5):

Հերեզիա.—Արծիւին մահը, Թ. Ա. Չոպանեանի:

Միրաբեան Իս.—Քրդական Առած (1906, 10):

Ս. Յով.—Քրդական երգերից (1906, 5):

Պետեօֆի.—Իմ սէրը, Թարգմ. Ալ. Ծատուրեանի:

Շիվեր.—Իրիկոսի կռուները, Թարգմ. Լ. Մանուէլեանի:

Ֆիդգեր Ա.—Դոյութեան կուր, Թարգմ. Ե. Հ.:

II. ՃԱՆԱԴԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՒ ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Անարոնեան Ա.—Դէպի Անի (1905, № 4, 2—3, 4, 5, 7):

Ալօ.—Եգիպտական գիշերներ (1905, № 1):

Գալուստ.—Խաբրիկներ Ուրմիայից (1905, 1), Ուրմիայից Խոյ (1905, 5, 6):

VI

Կ.-ցի.—Ճանապարհորդութիւն Թիւրքաց Քրդաստանում (1905, 5, 6, 7, 8):

Տ.—Արէշի գաւառ (1906, 4—5):

Տ. Ա. Մ.—Դարալագեազ կամ Վայոց Ձոր (1905, 2—3):

Գալուստ.—Ճանապարհորդութիւն Պարսկաստանում (1906, 11, 12):

III. ՅՈՂՈՒԱԾՆԵՐ

1) ՌՈՒՍԱՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ

Գուլոյեան Աւ.—Մեր խօզէյինները և ընթերցասիրութեան հարցը: (1905, 1):

Ընդհարումների վայրերից (1905, 10):

Լ. Ս.—Հարաւային Կովկասի վիճակագրութիւնից (1905, 4):

Մ.-Հ. և Մ. Տ. Գ.—Հայունիների պատասխանները (1905, 4):

Տ.—«Ազգային կառավարութիւն» (1906, 9, 10, 11 12)

2) ՀԱՅ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ (դադուքներ)

Վարդանեան Հ. Ք.—Բիրմանիայի հայերի անցեալից և ներկայից (1905, № 21)

Յ.—Շողեր խաւարի մէջ (Պարսկաստան) (1905, 1)

Հայ հատուածներ Հունդարիա, Տրանսիլվանիա, (1905, 23)

Ա. Շ.—Նամակ Եգիպտոսից (1905, 5)

3) ՀԱՅ ԳՐԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ

Ռ. Պատկանեանի նամակները (1905, 2—3, 4, 5, 6, 8, 9, 10):

Անկախ.—Մօտիկ Անցեալից (4—5, 6, 7, 10, 11—12, 1906):

Արդոս.—Ճեմարանցու յիշողութիւններից (1906, 4—5, 6, 7):

Բ. Ս.—Յ. Պարոնեան (1905, 4):

Լէօ.—Անցեալի հարցերից—Շիրակի արձանագրութիւններից (1905, 10): Հայոց Հարցը (1906, 6, 7):

Կուսիկեանց.—Միքայէլ Նալբանդեան 1906. 1:

Ղլթեան Ա.—Ընտրողական սկզբունքը հ. եկ. պատմական կեանքում (1904, 8, 9):

Չոպանեան Ա.—Մ. Պեշիկթաշեան (1905, 5, 6, 7):

Ականտոս.—Թիւրքօ-քրդական արշաւանքի 25 ամեակը (1906, 2, 3—4, 5, 6, 8):

Սրապեան.—Մի կարեւոր բացատրութիւն (1906, 7):

Լ. Ս.—Դրական էթիկայ և Ա. Ահարոնեան (1906, 8):

4) ԿՈՎԿԱՍԵԱՆ ՅԵՂԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

Տ. Փիրումյան. Վրաց կեանքից և գրականութիւնից—վրաց մամուլի ոգևորութիւնը, վերանորոգուած «Բվերիան», նոր խմբագրի գիրքը հայերի վերաբերեալ, հայերի պետիցիան և վրացիք (1905, 5)

Տ.—Օսեր (1905, 9):

5) ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԹԻԻՐՔԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

Տիգրան. Կովկասի թուրք մամուլը (1905, 2—3 4, 5, 6, 7, 8, Հիւսէն Զադէ. Ովքեր են թուրքերը և ովքերից են բաղկացած. (1905, 10, 11, 12)

Վամբերի. Իրանական թուրքերը (1905, 11, 12, 1906 1,)

6) ԹԻԻՐՔԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Բերքերեան Ռ.—Թիւրքիայի ֆինանսները (1905, 2—3, 4, 5, 6, 8,)

Բրէյս Զ.—Թիւրքերու և Եւրոպան (1905, 6)

Իւլար Ա.—Վիլհելմ կայսրը պաշտպան համխառնութեան (1905, 7)

Վամբերի.—Թիւրքիան երբ կը վերջանայ (№ 11—12, 1906)

Շաքէ.—Նամակներ թիւրքիայից:

Շտերն.—Հիւանդ մարդը, թարգմ. Բաբայեանի (1905, 9, 10, 11—12)

Տ. Զ. Երիտասարդ թիւրքերի կոչը (1905, 9)

Տ.—Հայերի թիւը թիւրքիայում (1906, 10)

7) ՌՈՒՍԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Տ.—Գորկիի «Дачники» և Սնդրէեւի «Красный Смѣхъ» (1905, 4):

8) ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Գրիգորեան Ա.—Գիւանի հայերը (1906, 11—12):

Գրինֆելդ.—Նապէտգլին Շահի բեֆորմներ մտցնելու փորձը թարգմ. Ա. Շահ. (1905, 9):

Գ. Ե.—Նամակներ Պարսկաստանից (1905, 5):

VIII

Մուրադեան Ե. Վ.—Ո՞վ փակեց Լիլավա թաղի դարձուցները (1905, 2—3):

Ֆրանդեան Ե.—Կանանց բար. ընկ. Ատրպ. (1905, 2, 3):

Սար.՝Յով.—Պարսկաստանի զեարերը (1906, 9):

9) ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԿԵԱՆՔԻՅ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՅ

Կիկ Մ.—Շիլլեր. թարգմ. Ս. Ղ. (1905, 5)

Ռովին Մ.—Ներկայ ճապոնը թարգմ. Մատենհանի (1905, 6, 7)

Էմիսենի.—Ասպետական ոգին ճապոնիայում (1905, 9)

Աթուրեան Գ.—Ընտրողական իրաւունքն Անգլիայում (1905, 11—12)

Ն.—Ֆինլանդիա (1906, 2, 6, 7)

Էմստան.—Միջազգային լեզու (1906, 10)

10) ՔԱՂԱՔԱԿԱՆ,—ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՅԵՐ

Բերնշտեյն Է.—Ընդհանուր քաղաքական գործադուլ և յեղափոխական բոմանտիզմ (1906, 1)

Խշիանեան Բ.—Տնտեսական զարգացման ֆազերը (1905, 9, 40, 11—12) Քաղաքական կտրոնացման և ֆեդերացիայի խնդիրը (1905, 11—12)

Սարգսեան Եր.—Մի քանի խօսք բամբակաղործների համաժողովներին առիթով (1905, 1):—Ազրաբային հարցը և նրա լուծումը Ռուսաստանում (1906, 2, 3)

Ս. Շ.—Դասակարգերը ժամ. Եւրոպ. հասարակ. մէջ (1905, 5, 6)

Տ. Նաւթադրինաբերութեան աշխարհից (1905, 11—12) Ադմինիստրացիա և դատաստան (1906, 3):

Ռուբինի Ա.—Հայ-թուրքական ջարդերի տնտեսական-քաղաքական պայմանները (1905, 11—12)

Լ. Ս.—Pro domo sua (1905, 11—11, 1906, 8)

Դանիէլեկեան Ս.—Կանանց հարցը (1906, 6)

Սալիմեան.—Պերճախօս թուեր և ուշադրաւ տեղեկութիւններ. (1906)

Բժ. Ե. Տ. Սարգիս. Ընդարձակութիւն և խաղաղութիւնը ըստ Բուզովելտի (1906, 8)

Կարրշեյ. Արդիւնագործութեան երեք պայմաններ (1906, 11)

Կառուցիկ.—Պրօլետարիատը և ինտելիգենցիան (№ 11—12)

11) ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆ

Ալվարդեան Յ.—Ակնարկ մարդկութեան նախապատմական անցեալի վրայ (№ 11—12, 1906)

Յովհաննիսեան Միքայիլ.—Փիլիսոփայ-սոցիոլոգ, (Սպենսեր) —(1905, № 1, 5, 8 11—12).

Իշխանեան Բ. Ֆրիդրիխ Էնգելս (1905, 9) Կարլ Մարքս և Մարքսիզմ (1906, 1—12)

Նալբանդեան Մ.—Արևին ամբողջական խաւարումը (1906, 3)

Փաշայեան Կ.—Մտքի յոգնութիւնը չափելու մեթոտներ (1906, 11—12)

Ֆերթօրն—Հոգու մեխանիկէն, Թարգմ. Լ. Բարխ. (1906, 8)

12) ԳԵՂԱՐՈՒԵՍՏ

Ա.—Թիֆլիսի Հ. Դրամ. ընկ. ներկայացումները (1905, 1, 2—3)

Ալիանար Հր. Համառօտ տեսութիւն զեղարուեստի զարոյց-ներու սկիզբէն մինչև նորագոյն շրջանները (1905, 4, 6, 7, 9, 1906, 11)

Գեղասէր.—Գեղարուեստը խրախուսող ընկերութեան XIV-րդ ցուցահանդէսը (1905, 1)

Զաւէն Տ.—Մեր ազգային երաժշտութիւնը (1905, 5)

Թորոմանեան Թորոս.—Հայ ճարտարապետութիւնը (1905, 5)

Կրեսչենկո.—Մի փոքրիկ ակնարկ մեր երաժշտութեան մասին (1905, 1)

Տ.—Հայոց Թատրոն (1905, 5)

Յակոբեան Ս.—Սիմֆոնիզմը դրամայի մէջ (1906, 3 14)

13) ԴՊՐՈՅԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

Պորրիտ.—Ժողովրդային սկզբնական ուսուցումը Անգլիա-յում (1905, 9, 10)

Տէր-Միրաքեան Յով.—Դեռահասները ինչ կարգան (1906, 1—

Մարիամեան—Յովանեան օր. ուսումնարանը. (1906, 8, 9, 10)

Էդիբեան Գուրդէն.—Մանկավարժական խնդիրներ (1906, 10)

IV. ԸՆԹԱՑԻԿ ԲԱԺԻՆՆԵՐ

(Իւրաքանչիւր համարում)

- 1) ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ
- 2) ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ
- 3) ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ
- 4) ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ
- 5) ՆՈՐ ՍՏԱՅՈՒԱԾ ԳՐՔԵՐԻ ՑԱՆԿ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՅ, ՄՈՍ-ԿՈՒԱ.

ՊԵՏ. ԽՈՐՀՐԴ. ԴԱՆԻԷԼ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ ՔԱՆԱՆԵԱՆԻ ՄՐՅԱՆԱԿԻ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ԿԱՆՈՆԱ-ԴՐՈՒԹԵԱՆ 7-րորդ յօդուածի հիմամբ Լազարեան Ճեմարանի Մասնագիտական Դասարանների Խորհուրդը իւր՝ 1905 թ. Ապրիլի 5-ին կայացած նիստում վճռեց յայտարարել ի գիտութիւն մասնագէտների առաջիկայ երկու նիւթը՝ երկու մրցանակի համար, իւրաքանչիւրը՝ 1000 ռուբլի:

Ա.—Հայ գաղթականութեան պատմութիւնը հանդերձ իւրաքանչիւր գաղութի պատմական տեսութեամբ՝ սկսած Հայ Արշակունիների անկումից մինչև մեր օրերը:

Բ.—Հայերի և Վրացիների քաղաքական և կուլտուրական փոխադարձ յարաբերութիւնները՝ հին ժամանակներից սկսած մինչև Վրաստանի միանալը Ռուսաստանի հետ:

Հետազոտութիւնները կարող են ներկայացուել Հայերէն կամ Ռուսերէն, Փրանսերէն կամ Գերմաներէն:

Լաւագոյն հետազոտութիւնը յիշեալ իւրաքանչիւր նիւթի մասին կը պարգևատրուի Խորհրդի կողմից հազար (1000) ռուբլի մրցանակով:

Եթէ առաջին կամ երկրորդ նիւթի մասին ներկայացրած հետազոտութիւններից երկուսը հաւասար արժանաւորութիւն ունենան, Խորհուրդը կարող է բաժանել մրցանակը երկուսի հեղինակների մէջ:

Հետազոտութիւնները պէտք է ներկայացուեն ոչ ուշ քան 1-ն Սեպտեմբերի 1907 թ.:

ԲԱՑՈՒՆԺ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1907 Թ.

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳՐԻ

(Նոր շրջան VII տարի)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԻՆԸ

ԳՐԱՍՈՒՄՆԵՐ	տարեկան	10 ռ.	ԱՐԱՍԱԽՈՒՄՆԵՐ	տարեկան	12 ռ. (32 ֆ.)
	կէս տարին	5 ռ 40 կ.		կէս տարին	7 ռ (18 ֆ.)
	ամսական	90 կ.		ամսական	(3 ֆ.)

Բաժանորդագիրնը կարելի է վճարել նաեւ մաս-
մաս(5—5 ռ.), նրկըորդ վճարը լինում է մայիսին: Տարր.
դպրոցներում ուսուցանողների, աշակերտների, ուսանող-
ների, գիւղացիների եւ քանուորների համար բաժանոր-
դագիրնն է (Բուսաստ.) 8 ըուրլի տարեկան, որ կարելի
է վճարել մաս-մաս(4-4) ռ.:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԻՈՒՄ Է

ԹԻՖԼԻՍԻՄ — Խմբագրատանը (ձազճալաձեան փողոց, տ. № 12)

Կայսութեան այլ ճեղքից պէտք է գիրմիլ՝ Тифлисъ,

въ редакцію журнала «МУРЧЪ».

Արասախոմից՝ Tiflis, Rédaction de la revue «MOURTCH».

Եթէ 1907 թուականի բաժանորդագրութիւնը սկզբում աջող գնայ՝ Մուր-
ճը դառնալու է ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ:

ՅԱՇՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ամեն լեզուով: Յայտարա-
րութիւնների համար վճարում են.— 1 երես բոնող յայտարարութեան հա-
մար 10 ռ., 1/2 եր. 5., 1/4 եր.— 2 ռ., տողատեղ (կորպ.)— 40 կ.:

Խմբագիր՝ ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ

ԲԱՅՈՒԱԾ Է

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԲԱԶՄԱՎԵՊ“ Ի

ԲԱԶՄԱՎԵՊ, ամսաթերթ Ս. Ղազարու Հայկական Ճեմարանի, հայ պարբերութիւններու երիցագոյնը, իր վաթսներորդ չորրորդ տարեշրջանին մէջ պիտի մասնակցի, նորագոյն թափով, ազգային մտաւոր վերածնութեան:

Իր նպատակին հասնելու համար, ԲԱԶՄԱՎԵՊ կը ներկայացնէ հայ ժողովրդեան բաժին մը՝ բոլորովին ազգային գիտութեանց նուիրեալ.—

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ.

Կը յաջորդէ բաժին մը՝ նուիրեալ գեղեցիկ ղպրութեանց, ուր կը ներկայացունին բանաստեղծութիւններ՝ օտար գրականութիւններէ, իտալականէն, մասնաւորապէս, որ քիչ ծանօթ է ազգին: Բաղմովէպի «գրական» բաժինն ունի վէպեր, նորավէպեր,—թատերագրութիւններ, են:

Վերջապէս Բաղմովէպ պիտի ունենայ նաև համազգային Գիտութեանց ու Գիւտերու նուիրեալ բաժին մը, որուն պիտի աշխատակցին Եւրոպայի համալսարաններէն վկայեալ հայ բժիշկներ և մասնագէտներ: Տարեկան գինն է Փր. 10:

Դիմել հետեւեալ հասցէին.

Rédaction de la Revue «Bazmavep», Venise (Italie), St. Lazare

ԲԱՅՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1907 ԹԻՒՆ

“ՀՈՍԱՆՔ,”

ՀԱՍՍԱՐԱԿԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹԻ.

Բաժանորդագիրն է Թիֆլիսում և զաւառներում՝ առեկան 6 բուրլի, ամսական 50 կոպէկ:

Մինչև 1906 թւականի վերջը՝ բաժանորդագիրն է 50 կոպէկ: Յայտարարութիւնների վճարն է. առաջին երեսում իւրաքանչիւր տողին պետիտով 6 կոպ. վերջին երեսում 3 կոպէկ: Տարեկան և տևողական յայտարարութիւնները՝ փոխադարձ համաձայնութեամբ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

В Ъ К Ъ

ежедневно политическая, общественная и литературная газета.

Условія подписки:

съ 14-го ноября до конца года—1 р. 15 к.,

съ 1-го декабря до конца года—75 к.

ЗАГРАНИЦУ ВДВОЕ

ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ: въ конторѣ редакціи (Кузнецкій Мостъ, домъ Купеческаго общества), у Н. А. Печковской и во всѣхъ большихъ книжныхъ магазинахъ Москвы, Петербурга и провинціальныхъ городовъ

ԲԱՅՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1907 թ.

ՀՈՎԻԻ

Հոգեւոր-բարոյական, հասարակական եւ մանկավարժական տարաբերրի

Հրատարակւում է շաբաթը մի անգամ, կիրակի օրը (Երկրորդ տարի)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ

Տարեկան 4 ռ., կէս տարուանը 2 ռ. 50 կ., ամսական 50 կ.: Քահանաները և ուսուցիչները բաժանորդագինը կարող են վճարել մաս-մաս (2—2 ռ.), երկրորդ վճարը լինելու է Ձառկի տօներէց յետոյ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴՈՒՆԻՈՒՄ Է

Թիֆլիսում-խմբագրատանը՝—Большая Ванкская ул. №16 Կայսրութեան այլ տեղերից՝ պէտք է դիմել Тифлисъ. Редакция «ОВИВЪ»

Արտասանւոց՝ Tiflis Rédaction de la revue «Hovive»

Սմբ. հրատ. Եղնիկ ա. ք. Երզնկեան

—Բաց նամակներ խաթարւալ»ից 18 տեսակ նկարներով, 100-ը 2ր. 50 կ.—500-ը և աւելն հատը 2 կոպէկով: Ծոռատիպ Պ. Մարիմեան, Պուշկինեան Պատտաժ Թիֆլիս:

Բ Ա Յ Ո Ւ Ա Ծ Է Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ը
1907 թ.

ԵՐԿՐԻ ԶԱՅՆԸ

Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ Ի,

որ նուիրուելու է մասնաւորապէս թիւրքահայկական հարցի լուսարանութեանը. ծանօթաց-
նելու է իր ընթերցողներին հայ և թիւրք կեանքի քաղաքական, հասարակական, գրական ու
գեղարուեստական զանազան երևոյթների հետ. պէտք է ձգտի հայ-թիւրքական համերաշխ
գործակցութեան

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Ե Ա Ն Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը

	Տարեկան	Վեց ամսուան
Թիֆլիս	3 ռ. 50 կ.	2 ռ. —
Գաւառ	4 ռ. —	2 ռ. 25 կ.
Ամերիկա	2.50 դոլ.	1.50 դոլ.
Արսասանման	13 ֆր.	7 ֆր.

Խմբագրութեան հասցէն՝—Тифлисъ, редакция «Еркри Дзайнъ», Грибоѣдовская, № 16, д. Зубалова, կամ Tiflis, rédaction de l'«Erkri Dzaïn», Griboedovskaya, № 16, maison Zoubaloff.

Թիֆլիսում կարելի է բաժանորդագրուել և «Գուտտենբերգ» զրավաճառանոցում:

1915 WORKS

1915

1915

Ո՞վ, ԿԸ ԳԱՅ ԻՆՁ ՀԵՏ...

Տանջուած, արիւնոտ իմ սրունքներով,
Անապատների փոշին լանջերիս,
Մըրիկները վէս ու խօլ յոյգերով,
Ես պիտի քայլեմ մօայլ իմ ուղիս...
Ո՞վ կը գայ ինձ հետ...

Բիբերիս վերև երազ մ'անսահման,
Ու լուռ ճակատիս՝ անհուն ճիւղերի
Յաւադին ու մունջ տկօսներ լայն-լայն,
Ես պիտի քայլեմ ըմբոստ, քաջարի,
Ո՞վ կը գայ ինձ հետ...

Ապառաժները կը ճեղքին իմ սիրտ,
Ու կ'արիւնոտին փուշերն իմ ճակատ,
Ինձի կը ճնշին և՛ խաւարը բիրտ,
Եւ շղթան... բայց ես կը քայլեմ հպարտ...
Ո՞վ կը գայ ինձ հետ...

Եւ դեռ... կ'արիւնի իմ թիկունքը մերկ
Տառապանքի մութ ժայռերը զրկած,
Ու վերքերս ձեզ կը համբեմ մէկ-մէկ,
Բայց և՛ կը քալեմ հպարտ անձնուրաց...
Ո՞վ կը գայ ինձ հետ...

Հողիս, բարձրերի երազովն իր սէզ,
Պիտ ապրի կեանքի մեծ երկունքն յաւէտ,
Յաւատանջ, մենակ, ու վաստակաբե՛կ—
Ա՛հ, պիտ քայլեմ միշտ... ո՞վ կը գայ ինձ հետ...

1904 թ.

Հր. Ֆայևան

Ն Ո Ր Օ Ր

(Արձաղ բանաստեղծութիւն)

Նոր օր է. լոյսը բաժանւում է խաւարից, մեզը ծանր ծալքերով դեռ քողարկում է ամեն ինչ: Արեւելքը մութ է:

Նա կանգնած է միայնակ, լուռ հայեացքը լարած դէպի հեռուն, մութ արեւելք... Նոր օրը կը բացուի!

Անթարթ աչքերը խոշոր են, սև ու խոր, ու տըրտում, ու լի անթիւ անհամար յոյս ու կասկածի, սէր ու ատելութեան թանձր խառնուրդով, նորա անթափանցելի են:

Մեզը հալչում է, ձիւնապատ լեռները սպիտակին են տալիս, երկինքը վարդագունւում:

Նա ցնցուեց: Նոր օրը գալիս է!

Երկնքի շողերը անցան նորա գէմքից, դարկեցին կարծես լիճ աչերին, խառնեցին նորա հատակը:

Հայեացքը պարզուեց, աչքերը փայլեցին վարդագոյն յոյսով:

Արեւելքը բացուեց, երկինքը ոսկեգօծուեց:

Արևի ոսկի շողերը առաջին համբոյրը դրոշմեցին այդ աչերին:

Ծփեցին աչերը, տատանուեց ներսը, ու շողերի համբոյրին անհուն սիրով փայլեցին...

Նոր օրն եկաւ:

Որ. Ս. Գալաչեանի

ՍՏՈՒԵՐՆԵՐ

Փոթորիկը տադարել էր...

Կապարային ամպերը դեռ ևս կուտակուած... դեռ ևս սպառնում էին յոգնած երկրին կատաղի յորձուամով...

Խիտ քօղը հազիւ ճեղքելով՝ վերջնալոյսի մարող շողերը աղօտ լոյս էին փռում... Մեղմ հողմիկը խաղում էր տերևների մէջ... ջրերի կաթիլները գողգողալով գլորում...

Նա նստած էր՝ կեսնքի փոթորկից փշրուած՝ ալեզարդ մաղերը կնճառապատ երեսին թափուած... Արտասուքից չորացած աչքերը կիսափակ էին, անգոյն շրթերունքները ամուր սեղմուած իրար...

Հեռուից մեկաւաղձոտ, վշտահար երգի հնչիւններ էին դալիս, զարթեցնում յիշողութիւնների անվերջ շարքեր... հրում իրար, փոխարինում, մարտնչում...

Ահա նա կոյս է՝ զոդարիկ, զեղունի... սիրում է քաջին... բայց նրանից խլեցին, տուին մի ուրիշին... Տարիները անցնում են միապաղաղ... Գէթ լուսոյ մի շող... Յետոյ՝ տանջանք, ցաւեր, երեխայք իրար յետուից... Մոռացւում է սուր թախիժ... Հոգսեր, զործ անվերջ... Ահա և այրի է... փոյթ չէ... նա մայր է երջանիկ... Երջանիկ... աւաղ... վաղանցուկ... Նա մայր է տարաբախտ, մայր սևադգեստ...

Այդ ի՞նչ ստուերներ են, սգաւոր ստուերներ...

Կծկւում է սիրտը մորմոքիչ ցաւից... տանջւում է անվերջ։ Անդրանիկն է դա... նիհար պատանի, ազնիւ

քնքոյշ սրտով... Աքսոր... տառապանք և հեռաւոր երկ-
րում, կարօտ սիրող գէմքի, մեղմիկ մի խօսքի... Սառը
ձիւնի տակ՝ խռովայոյդ հողին՝ զտաւ հանգիստ յաւէրժ...

Հնչում է երգը... արձագանքը սրտառու է լեռնե-
րում ձայնակցում...

Ի՞նչ է լացում... ո՞ւմ է նա ողբում... Գուցէ իր
քաջարի սիրուն Արծուի թաղման երգն է երգում...
Սիրուն Արծուի, որի վեհ սրտում զնգակը խփուեց,
թշնամու զնգակը լեռների միջին, երբ նա անվախ իր
ժողովրդին տարաբախտ սլաշտպան էր հանդիսանում՝
դագան խուժանի գէմ...

Լսիր, դու երգ... մի փշիր՝ գեփիւռ հովիկ... Թող
ողբան ժայռեր, քարեր արտասուեն: Կորաւ քաջ Ար-
ծիւ, լեռների իշխանը... Ամպեր սլառեց երկինք, կայ-
ծակ, որոտ պայթեց... Սե քօղը հագաւ իր գէմքին նրա
հարսը չքնաղ... Արիւն արցունքներ կաթ-կաթ հոսում են
սև մօր աչքերից...

Բայց սա ի՞նչ տեսել է, կրկին սգաւոր...

Վհուկ դու չար, մահ նենգաւոր... Հեռու... գնա,
կորիր... Պանդուխտ, հալածուած, երկրից երկիր թա-
փառում... ո՞ւմ ես դու փնտռում... Ի՞նչ ես կորցրել:
Իմ խղճուկ զաւակ... Մութ բանախ մէջ, թէ ծանր բեռ
ուսին... Թէ՛ սղատ երկնքի տակ՝ վայելում ես կեանք
օտարի դրկում... Հայրենիքդ չքնաղ արիւնով է լուսոց-
ւում... Երկիրը գժբախտ տանջանքից կծկւում...

Պառասխան չկայ... Քամին է միայն փչում, վշտա-
րէզ սղում...

Ո՛հ, ուրեմն, դու ես կորած... խոր փոս թնդիր իմ
սրտում...

Զորացած աչքեր՝ արցունքից կուրացած... դուք
վաղ կուրանայիք, չտեսնէիք այս քան ցաւ...

—Ո՛ւր է իմ աղջիկ... լեռների ծաղիկ... շուշան գոլտ-
րիկ... դու մեր չքացար... Հարսնացու սղնուած՝ պսա-
կով զարդարուած, թէ՛ վայրենի գագոնի դու որան ես
խղճալի...

Հեռու տեսիլներ, մռայլ տեսիլներ... Ի՞նչ էք ինձ խեղդում, հոգիս մորմորում... Շունչս է միայն մնում... այն էլ վերցրե՛ք՝ ինձ հանգիստ թողե՛ք... Թե՛ սառը գերեզման... այն էլ չէ ինձ արժան... կրկին կը թափու՛նք... կրկին կը խեղդու՛նք... Հեռու... հեռու...

— Ո՞ւր գնամ... ի՞նչու եմ այստեղ ձեռներս խաշած նստած...

Անձրեն է ծեծում... արեն՝ այրում... Ո՞ւր է իմ տունը, սիրած անկիւնը... Ահա... հեռում հրոյ լեզուակներ վառում... մարում... Մութը օձապտոյտ երկինք է հասնում...

Մնացի որբացած, ինչպէս մենաւոր նոճի... տխուր, վշտահար... Վայ ինձ, վայ գլխիս...

Վերջնալոյսը շողաց, թագնուեց ամպերի մէջ... Հրաժեշտի թախիժը գրկել էր բնութիւնը... Հեռաւոր երդը վաղուց էր դատարել...

Փչում էր հողմը՝ ալեգարդ մագերը երեւում՝ փրփում դէմքին սգաւոր... Անձրեւի կաթիլներ թափւում են գլխին, այրուող ճակատին, կորացած մէջքին...

Նա չի նկատում... զառանցում է նա... զրուցում իր սիրելիներին հետ... Նրան հաղորդում են և գոռոզ մտքեր, ոսկեհոլեր յոյսեր, լիճեր սրտաբուղիս և տանջանք, կսկիծ...

Անգոյն շրթունքները դողդողում են, անկապ խօսքեր են բերանից թռչում... և սէր, փաղաքշանք և անէծք կրբոս...

Ժպիտը կիսամեռ... ցաւագարի հառաչք... և վիշտ, ցնծութիւն... իրար են խառնում... Նրիտասարդ դէմքեր և արիւն և կմաղը՝ իրար հետ զրկախառն՝ սիրոյ երկ են երգում, մահուան պար պարում...

Ամպերը սևացան... որոտը թնդաց... կայծակ փայլակներ օդը ճեղքեցին...

Չորացած, մարած աչքերի առաջ ստուերներ են անցնում... սգաւոր ստուերներ...

Ն. Բահաթյան

Ա Պ Ր Ե Լ

Անդորրութեան մէջ, վայելքի զրկում,
Անցընել կեանքը ազատ, անարգել,
Ու փառքի աստղը ժպտայ երկնքում...
Օ՛, այդ չէ՛ ապրել...

Վառ բնութեան մէջ զարնան ծաղկաբոյր,
Ուր վտակի հետ հոսում է ջինջ սէր.
Բոց այտից քաղել հեշտանքի համբոյր...
Օ՛, այդ չէ՛ ապրել...

Մնալ շղթայուած ոսկիէ կուռքին
Գետնաքարշ ընկած երկինքն անարդել.
Ու մահուան առջև սարսուռ ոյժգին...
Օ՛, այդ չէ՛ ապրել...

Կամ կենալ միշտ հեզ, համեստութեան մէջ.
Ճակտից բրտինքի կաթիլներ թափել—
Սարուկի քրտինք, անվերջ ու անվերջ...
Օ՛, այդ չէ՛ ապրել...

Բճրճր, ժխորից այս կեանքին ցամաք.
Դէպ կատարները վեհ իդէալների.
Մաքառել, քայլել...

Ու այրուել կրճքիդ յոյրերովն համակ...
Ահ, այդ է՛ ապրել...

1902 թ.

Հր. Ֆալևան

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԳՈՒԹԻՒՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԵՄ

(Ժառիգից դէպի Ուրմիա)

Ճանապարհորդութիւնը Պարսկաստանում զեռ ևս այնպիսի պայմաններում է կատարւում, որ մարդ անկամ զրիչ է վերցնում նկարագրելու այն հազար ու մի աներևակայելի դժուարութիւններն ու տանջանքները, որոնք, կարծես, չպէտք է լինէին: Այստեղ ճանապարհները աւելի ապահով են քան նոյնիսկ Կովկասի շատ տեղերը. այստեղ ճանապարհները մեծ մասով անց են կենում տափառակ դաշտերով և ընդհանրապէս դիրուգնաց են: Ըստ երևոյթին այս երկու հանգամանքը բաւական են ճանապարհորդութիւնը դուարձալի դարձնելու, բայց արի տես, որ, մանաւանդ անձանօթ ճամբորդի համար, հէնց առաջին քայլում երևան են գալիս դժուարութիւններ, որոնց աղթելու համար անպայման փորձառութիւն է հարկաւոր. և այդ դժուարութիւնները կապուած չեն ուրիշ բանի հետ, և թէ ոչ հէնց թուրք «չարվադարի» հետ: Դժբախտութիւնը այն բոլոր պէից է սկսում, երբ մարդ իր մի քանի օրուայ կեանքի ղեկը յանձնում է չարվադարի հասկացողութիւններին ու կարգադրութիւններին: Աւելացնենք սրա վրայ և այն, որ Կովկասի տըխուր դէպքերի լուրը բազմապատկուած չափով է այստեղ հասնում:

Մեր կառապանը նոր էր իշապահութիւնից դէպի կառապանութիւն բարձրացել, թէև պաշտօնով «թօփչի» էր (թնդանօթածիգ զինուոր) հետևաբար և առաջուց քիչ շատ ծանօթ պէտք է հղած լինէր կառքի գործածութեանը: Այդ մարդը չունէր կառապանութեան աստիճանի զարգացում, որի հետևանքով կառքը ճանապարհին 4—5 տեղից ջարդուեց և 10—15 թուման ծախսի դուռ բաց արաւ, զեռ չհաշուենք այն նեղութիւններն ու վտանգները, որոնց ենթարկեց իր վարձուորներին, ցերեկները արևի տակ խաշելով և միշտ էլ գիշերուայ ժամը 10-ին կայտրան հասցնելով: Նրա ունեցածը մի փոքրիկ կառք է, չորս ուղիորի համար պատրաստուած, երկու էլ վատոյժ ձի, բայց ախր նա խիստ ապահ է, մեծ ծրագիրներ ունի կողմած

շուտ հարստանալու համար, և տհա նա պայմանաւորում է ամէն պատահողի հետ. չորս ուղիորի փոխարէն ունենում է ութ և երբեմն տասն ուղիոր:

Արեւածագի կոչնակաները¹⁾ հնչեցրին, երբ մենք ութ ուղիորներս՝ պատրաստ էինք ճանապարհ ընկնելու փոքրիկ կառքով: Վաղ առաւօտից արդէն Թաւրիզի հոշակաւոր շուկան եռուչեռի մէջ է. հազարաւոր մարդիկ իրանց առուտուրով մի սարսափելի ժխոր են բարձրացնում. մեր կառքի զգրղիւնը մի րոպէ նրանց զրազուած հայեացքները դէպի մեզ է գրաւում. լսում ենք մեր հասցէին յիշոցներ, որոնց մէջ պարզ սպանալիքներ էլ կային: Արդէն քաղաքի հայերը բոպէ առ րոպէ կոտորածի էին սպասում, այնքան յանդուգն էր թուրքերի վերաբերմունքը վերջին օրերում: Մեզ շրջապատեցին տանեակ կիսամերկ տղայ ու աղջիկ մուրացկաններ. նրանք դժուարացնում էին մեր ընթացքը, պահանջում էին «սալամաթ փուլի, հազրաթի իսա իօխդայ». քաջ է այն մարդը, որ կը կարողանայ բոլորին էլ գոհացնելով՝ ազատուել այդ աներես մուրացկաններից. տալը զեռ բաւական չէ, պէտք է աշխատել անպայման կերպով բոլորին էլ հաւասար բաժանել, ապա թէ ոչ նրանք ձեռք չեն քաշիլ: Պարսկաստանի մեծ քաղաքների անթիւ մուրացկանների բարքի և ապրուստի մասին կարելի է զրել ստուար հատոր, այնքան հետաքրքիր մանրամասնութիւններով. արդէն թէ հայ և թէ օտար գրականութեան մէջ յաճախ կարելի է պատահել այդ թշուառների կեանքի մի որևէ կողմ ուսումնասիրող յօգուածների: Եթէ գործարանական վիթխարի քաղաքներում առաջ է եկել միմիայն մի ձեռք հազուատից դատ ոչինչ ունեցող մարդկանց բազմութիւն, Պարսկաս-

¹⁾ Պարսկաստանի ամեն քաղաքում, ուր հաքիմ (դատաւոր-կառավարիչ) է նստում, արեւածագին և արեւամարքին հանդիսաւոր կերպով հնչեցնում են թմբուկներ՝ շեփորի նուագակցութեամբ. այս անում են ի պատիւ արևի և է մնացորդ Զարդուշտի (Զրադաշտ) արեւապաշտական վարդապետութեան ամենափառաւոր մի արարողութեան, որը առհասարակ լինում էր բարձր լեռների վրայ, հազարաւոր արեւապաշտների և մողերի ներկայութեամբ: Այժմ այս արարողութեան լոկ ստուերն է մնացել՝ իբրև սովորութիւն սրբազործուած:

Մի քիչ աւելի փասաւոր են կատարում Թէհրանում, ուր թմբուկին ու շեփորին ընկերանում է զինուորական մուղիկան և յատուկ պատրաստուած բարձրադիր տեղի վրայ պար են բռնում մի բոլորակ շրջանով մանկաւիկներ խումբեր:

Այս արարողութիւնը Թէհրանում կոչւում է «նաղարա խոնայ» (նաղաբա—թմբուկ), իսկ Ուլամիայում և ուրիշ տեղերում կոչւում է «քեարանէյ խոնայ» (քեարանէյ—շեփոր):

տանի մուրացկանը այդ էլ չունի, և այս ոչ թէ նոր շրջանի քաղաքակրթութեան պայմանների շնորհիւ, այլ հէնց գրանից էլ առաջ, չէ՞ որ այդ նոր շրջանի քաղաքակրթութիւնը դեռ ոչ մի կերպ չի ազդել Պարսկաստանի կեանքի վրայ: Եւ ուրեմն այս երկրում բոլորովին ուրոյն ճանապարհով ստեղծուել է այդ դասակարգը: Այս անգործ դասակարգն էլ մի տեսակ լուծողին-պրօլետարիատ է իր կեանքով, նրանք աւելի նման են անասունների, նրանք միասին աշխատում են, միասին սպրում և միասին վայելում աշխատանքը:

Մինչ այս մինչ այն, մեզ կողմատուղ մուրացկանների խումբը ստուարանում էր և մենք խիստ նեղւում էինք: Մի բռնակիր իր բռնան ծանրութեան տակ ծռուեց, գետնից քար վերցրեց և չնրի նման հալածեց նրանց կողիտ հայհոյանքներով, որ նրանք չեն ամաչում իրանց ցեղակիցներին կոտորող «էրմանի»-ներից 1) ողորմութիւն են ուզում: Մենք ազատուելինք մուրացկաններից, բայց և մեզ վիրաւորուած զգացինք:

Շուկայից դուրս գալուց յետոյ չդեռ բաւական պէտք է պնակ մինչև Աջի գետի մեծ կամուրջը (13 աշքանի), որից յետոյ կարելի է քաղաքից դուրս եկած համարել: Մինչև այդ նշկատում են մի քանի ուշադրաւ բաներ, որոնք բնորոշում են թուրքի ընդունակութիւնը զիւղատնտեսութեան երկու ճիւղերում, այգիների և բանջարանոցների մշակելը թուրքի անհերքելի գրական յատկութիւնն է, որի մէջ ոչ մի ուրիշ ազդ մրցել չի կարող. իսկ սեխաստանի մրգերի մշակութիւնը խօ թուրքին, միմիայն թուրքին տուածութիւ անպայման ընդունակութիւն է: Այս վերջին գրաւմունքի համար յատկապէս ամեն գաւնան բաւական թուով թուրքեր են անցնում Տաճկաստան՝ սեխաստաններ մշակելու համար, և «աջմու պախէզի» սեխն ու ձմերուկը միշտ աւելի յարգի է, քան միւսներինը: Հրաշալի են Աջի գետի ափին տարածուած այգիներն ու բանջարանոցները. վերջիններս բռնում են ահագին տարածութիւն հէնց գետին կիւած: Տարուայ ամեն եղանակներում ամեն տեսակի բանջարեղէն անխափան մատակարարում են առատօրէն թաւրիզի հարիւր հազարաւոր բնակիչներին: Գետերից հանուած առունները ամեն տեղ էլ ճանապարհները անանցանելի են դարձնում, նրանց վրայ շինուած խախուտ փայտեայ կամուրջները շատ վտանգաւոր են կառքերի համար. բայց թաւրիզեցի պար-

1) «էրմանի» բառը նախատական անուն է Պարսկաստանում, գործածւում է իբրեւ ծանր հայհոյանք. իրար հետ կռուելիս շատ անգամ «էրմանի» են անուանում մէկմէկի, որ խիստ վիրաւորական է համարւում:

տիպականները մի ճարպիկ հնարք են մտածել, որ ամեն կերպով օգտակար և թէ լաւ էլ է. երբ պէտք է լինում առուն ճանապարհը կտրելով անցկացնել, նրանք փայտէ կամուրջ չեն շինում, այլ ստորերկրեայ անցք են փորում ճանապարհի տակով, և առատ ջուրը հեշտութեամբ անց են կացնում ճանապարհի միւս կողմը. ջուրը մեծ յորձանքով պտտւում է հանգարտ, իջնում է ցած և միւս կողմից նոյն հանդարտութեամբ ու յորձանքով բարձրանում է և շարունակում իր ճանապարհը: Բացի օգտակարութիւնից՝ լուռ տեսարան էլ է ներկայացնում այս հնարքը, ճանապարհի երկու կողմերում կան փոքրիկ լճակներ, որոնց ջուրը միշտ պտտւում է, միշտ էլ սպիտակ փրփրուն է, իսկի չի կարելի իմանալ որ հէնց ուների տակից հոսում է բաւական առատ ջուր:

Դեռ Աջիի կամուրջը չհասած, փողոցը լայնանում է և մարդու բախտութեամբ ազատւում է նեղ ու ծուռումուռ փողոցների ճնշող տպաւորութիւնից. միշտ երկնակամարի մի փոքր մասը միայն տեսնելու դատապարտուած՝ երբ հասնում ենք Աջիի կամրջին. տեսարանը մէկ անգամից փոխւում է և մեր աչքի առաջը սկսում է թաւրիզի հովիտը իր գետով և անվերջ տարածուող այգիներով: Մաքուր ու առողջարար օդ, գեղեցիկ տեսարաններ, հիանալի մշակուած այգիներ, դրանից այն կողմը սիրուն բլուրները. բայց այս բոլորը միայն թաւրիզեցի թուրքն է վայելում, իսկ հայը բոլորովին զրկուած է գեղեցիկ բնութեան հրապոյրներից՝ փակուած ապրում է իր լայնարձակ հորիզոնից զուրկ տան կամ մութ խանութի մէջը: Եթէ կիրակնօրեայ հանգստարան գնալը չլինէր, որը քառասուն րոպէի ճանապարհ է, տեղի հայերից շատերը, մանաւանդ կանացի մասը, չէին իմանայ, թէ ինչ է դաշտ ու այգեստան ասած հրաշալի տեսարանը: Աւելորդ է ասել, թէ ինչ տխուր հետք է թողնում մտքի ու հասկացողութեան վրաց նմանօրինակ զրկուած կեանքը. և, պէտք է ասած, օտարների համար ճիշտ նկատելի է այդ ազդեցութիւնը թաւրիզեցի հայի մտաւորի վրայ: Թէև տղամարդիկ, յաճախ կովկաս երթեկեկելով, շիւում են աւելի ազատ հայեացքների և սովորութիւնների հետ և շատ բան իւրացնում, բայց միւս մասը, կտնացի դասը, լճացած խաւար հայեացքի տէր է, այդ պատճառով էլ տղամարդկանց դրսից բերած նոր հոսանքը չի կարող շուտ թափանցել կեանքի մէջ: Բաւական չէ տարադը և լեզուն փոխելը, հարկաւոր է և հոգեպէս թարմանալ ու բարեփոխուել: Օտարական ամուրիների և բնտանիքաւորների բերած աւելի առաջագէտ հայեացքները դէմ են առնում, ինչպէս խոփը հողի մէջ թաղուած քարի:

Թաւրիզի հովտին մի առանձին գրաւչութիւն է տալիս քաղաքի հիւսիսակողմի Էյնալ-Ձէյնալ բարձր լեռնաբլուրը, որի ապստամբոտ կողերը գեղեցիկ հակապատկեր են ներկայացնում իր ստորոտի այգիների ընդարձակ կանաչութեան հետ. քաղաքի ծուխը, առաւօտեան և երեկոյեան պահին, մի սպիտակ շերտ է կազմում կարմիր սարի մէջքին. գեղեցիկ պատկեր է: Այս լեռնաբլուրը մի մասն է կազմում նշանաւոր Դամալէնդ լեռնաշղթայի, որ սկսուելով սահմանադիւային Զակրոշ լեռներից, կտրուած է ամբողջ Պարսկաստանը արեւմուտքից արեւելք և միանում Միջին Ասիայի սարահարթի լեռներին: Այս շղթայի մասերն են. Ատրպատականի Մշով, Գիւնէյի, Մարանդի, Սահանդ, Էյնալ-Ձէյնալ, Սաւալան, Գիււանի և Թալիշի լեռներն ու գագաթները, որոնցից միայն վերջիններս անտառապատ են, մնացածներից՝ Ատրպատականի արեւելեան կողմը եղածները՝ ցամաք հողակոյտեր են ներկայացնում, առանց ջրի և բուսականութեան, ինչքան որ նրանց ստորոտ գաշտերը բարեբեր են, այնքան իրանք անբարեբեր են:

Կանգնած Աջի բարձր կամրջի վրայ հիւանալի են և՛ հսկայ քաղաքի ցրլուցան տները, և՛ այգիները, որոնք պարտակուած են մի գոգաւոր հովտի մէջ, որի միայն մէկ կողմը ցած է ու բաց տարածութիւն է ներկայացնում, այս արեւմտեան կողմն է, ուր ծիւղւած է Կապուտանը, քաղաքից հազիւ 6 ժամ հեռաւորութեամբ:

Կամրջից մի քիչ հեռու, Էյնալ-Ձէյնալի առեւտեան փէշերը բերելով անցնում է Աջին, որի այդ ափի վրայ են զըտնուում հարիւրից աւելի թուրք երկսեռ բորոտների բոյները. այդ խեղճերը արտաքսում են անկարեկից կոպտութեամբ. առողջանալու ոչ մի խնամող միջոց չունին: Եթէ քաղաքից արտաքսուէին և գոնջերը (քաշալ), այն ժամանակ, կարելի է ասել, ստորին դասակարգի երեխաներից ոչ մէկը չէր մնայ քաղաքում, այնքան տարածուած է այդ տարափոխիկ հիւանդութիւնը. մուրացկանները արդէն բացառապէս ենթակայ են այս ախտին: Բժշկուելու մասին ոչ ոք չի մտածում, վերքը մնում է, բռնում ամբողջ գլուխը, հնանում է ու վերջնապէս անցնում, բայց հետեանքը լինում է հալարաւոր անձազլիւրի գլուխներ: Աշխատաւոր դասակարգի մէջ դժուար է գտնել մի գլուխ, որ գոնջութեան հետք չունենայ: Տեսնես քաղաքակրթութեան բարիքներից երբ պէտք է այս ժողովրդին էլ բաժին հասնի: Մօտ է քաղաքակրթութիւնը—երկաթուղու ճանապարհը շուտով Թաւրիզի կամրջին կը հասնի, թէև առայժմ խճուղի անուան տակ. բայց, երևի, ներկայ շարժումը կ'ետա-

ձգի երկաթուղու մուտքը թաւրիզում: Կաժըջից մի փոքր այն կողմը մեզ հանդիպում են հարիւրաւոր համշարիներ, որոնք վերադառնում էին Կովկասից: Եւ ոչ մի փոփոխութիւն նրանց արտաքինի վրայ նկատելի չէր. վերադառնում էին ոտաբոքիկ և պատառոտուն հագուստով. նրանք չէնց այդպէս էլ գնացել էին: Հապա թող մի պատահէր տեսնել Կովկասից վերադարձող հայի կամ ասորու. իսկոյն յայտնւում է, որ նա վերադառնում է աւելի կանոնաւոր երկրից:

Այդ համշարիները վերադառնում էին Բապուի օգոստոսեան կոտորածից յետոյ, նրանց անսովոր հայեացքը կանգ առաւ մեր կառքի վրայ. այդ չարքաշ գէժքերի վրայ մենք նկատեցինք ոչ սովորական համշարիների արտայայտութիւն. այնտեղ նկարուած էր և՛ ատելութիւն, և՛ կատաղութիւն գէպի մեզ:

Մեր գէպի Սալմաստ տանող ճանապարհը կտրեց անցաւ Զուլֆայի ճանապարհը, որը սեխն էր տալիս բոկոտն համշարիներով: Ստում էին, որ զիշերով եկողները բեռնաւորուած են լինում կողոպուտի աւարով. մինչև անգամ իբր թէ բերում են գերի տարած հայ հարս ու աղջիկներ: Մեր քաղաքից դուրս գալուց մի քանի օր առաջ յամառ լուրեր էին պտտւում, որ արգէն բերում էին մի քանի կիներ՝ Նախիջևան գիւղերից գերի վարած:

Ճանապարհը ընթանում էր տափարակ դաշտով, մեր ընթացքի ուղղութեամբ ձգւած էր աղապայ երկաթուղին. դեռ ոչ բոլորովին պատրաստ կառքի համար. այդ ճանապարհի պատրաստուելուց յետոյ կարելի կը լինի մի օրում անցնել թաւրիզից Զուլֆայ, իսկ այժմ, ճանապարհի անկանոնութեան պատճառով, երբեմն մինչև երեք օր է տևում: Ամենավտանգաւոր տեղն է Դարա-գիւղ կոչւած հեղեղատի հունը, որտեղ երրորդ անգամն է, որ ճանապարհը շինում են, բայց հեղեղը դարձեալ քանդում է. այդ տարածութիւնը բաւական երկար է և միակն է, որտեղից կարելի է անցնել. միւս կողմերում տարածուած են Մարանդի բարձր սարերը: Եթէ կարելի չլինի Դարա-գիւղ հեղեղատի կատաղութիւնը սանձել, ապա հրեի պէտք կը զգացուի ստորերկրեայ անցքի:

Թուրքերի մէջ արգէն շշուկ է տարածուած, որ այդ ճանապարհը երկաթուղու համար է շինւում. շատ շատերը չեն հասկանում, թէ այդ ինչպիսի բան է և զօռ են տալիս իրանց հրեակայութեանը այնպիսի յատկութիւններ վերադրելով շողեկառքին, որ ոչ մի դարում իրագործել չի լինի: Բաւական ծիծաղաշարժ անեկդոտներ էլ են պատմուած:

—Քեալրալա, հարցնում է մի զիւղացի, իր մի քիչ աւելի բանտես ծանօթին, շոգեկառքն (մաշինա) ի՞նչ բան է: Կարո՞ղ է այս սարերից՝ էլ անցնել զնալ:

—Ո՛չ պատասխանում է Քեալրալան, շոգեկառքի ճանապարհը շատ ուղիղ պիտի լինի և երկաթներ պիտի լինեն ձգուած երկու կարգ. այ այսպէս,—նա փայտով գծում է գետնի վրայ. —մաշինան ոչ կարող է սար բարձրանալ և ոչ էլ իջնել:

—Բաս ուրեմն մեր էշերը դրանից լաւ են ասա, էլի. այսքան չարչարանքով և ահագին փողով ճանապարհ չինելու էլ ի՞նչ պէտք կայ, մեր Թաւրիղի էշերը մէկ անգամից ինչքան բան ասես կարող են տանել ու բերել:

Ուղղում ենք զէպի Սալմաստ: Դէպի Սալմաստ տանող ճանապարհները երեք են. ամենակարճն է Մայանի ճանապարհը, որը ծովափով է գնում, բայց սա միայն ձիու ճանապարհ է և ամառները անանցանելի է՝ ճահիճների պատճառով: Միւս ճանապարհը անցնում է Սոփիանով, որտեղից թողնում է Զուլֆայի ճանապարհը և ուղղում զէպի արեւմուտք: Երրորդ և միջին ճանապարհն է Կում-Թափա կոչուածը, որը ամենից յարմար է: Այսպէս է կոչում նրա համար, որ անցնում է Կում-Թափա յայտնի աւազարւորների ստորոտով, այստեղ բաւական տարածութիւն ճանապարհը խիստ աւազոտ է, և ստորուայ երկու եղանակներին՝ գարնան և աշնան նախընտրելի է Սոփիանի ճանապարհը:

Աւազարւորները դեռ շատ հետուից նկատուում են՝ գեղապրական դիրքով. երկու մեծ բլուրներ են՝ ընդարձակ փեշերով կողք կողքի, փեր բարձրանալը գրեթէ անհնար է. այնպէս որ մարդու սարքը խրում է. մաքուր ու շատ մանր աւաղ է, մէջը ոչ մի խիճ չի գտնուում: Ոմանք ենթադրում են, որ այդ բլուրները աւաղահանք են, ենթադրողներ էլ կան, որ դարերի ընթացքում բամու կատարած մի խաղ է. այս ենթադրութիւնը աւելի հիշտ ընդունելի է այն տեսակէտով, որ շատ անգամ բամին բլուրների ձեւը նոյնիսկ տեղը մի քիչ փոխում է, այնքան մանր ու թեթեւ են աւաղի հատիկները. բացի դրանից, գիրքն էլ նպաստում է այս կարծիքին. մի կողմը դառնում է Կապուտանի հիւսիսային ընդարձակ եզրը, որին զուգահեռական ձգւում են Գիւնէյի, Մշով, և Մաղանդի սարերը՝ պատի պէս ուղղաձիգ, արեւմուտքից արեւելք գտնւում է մինևղ ու երկար տարածութիւն, որտեղ քամիները աւելի կատաղի են լինում. Մարանդի սարերը իրանց ուղղութիւնը մի քիչ փոխում են, որից կազմւում է մի կիսաշրջան տարածութիւն, այդ տեղ հէնց փոխւում է և փշոյ քամու ուղղութիւնը և թափն էլ

կոտորուում, հէնց այստեղ էլ կազմուել են աւագաբլուրները:

Այս բլուրների ստորոտում շինուած է եղել համանուն Կում-Թափա գիւղը, բայց որովհետեւ բլուրները աւելի են մօտեցել գիւղին և լցուել տները, աւագախառն քամիները մանաւանդ նեղել են բնակիչներին, ուստի Նորանք լքել են իրանց գիւղը և բաւական հեռաւորութեան վրայ շինել են մի նորը: Դժուար է երեւկայել մի աւելի խղճուկ գիւղ, չորս կողմը ներկայացնում է անապատ տարածութիւն. բնակիչները նեղուում են աչքացաւից, որովհետեւ թեթեւ քամին իսկ օդը լցում է աւագահատիկներով. խմելու միակ ջուրն է Աւագաբլրի ստորոտի նուազ աղբիւրը, եթէ միայն կարելի է աղբիւր ասել այդ պղտոր ջրին:

Թաւրիգից մինչև Գիւնէյիստանի սահմանները տարածւում է մի անապատ մի քանի աննշան գիւղերով. ամառուայ շոքն անտանելի է. ամբողջ այդ ընդարձակ տարածութիւնը գուրկ է ջրից. անցնում են մի քանի աղային բաղադրութիւն ունեցող բարակ առուներ. որոնք իջնում են Մարանդի սարերից և ապարդիւն անցնում, թափւում ծովը: Ահա այդ անապատում տօթ ճիշտ կէսօրին, տեղի ունեցաւ մեր նշանաւոր կռքի առաջին խորտակումը. ծանրութիւնից ջարդուել էր զսպանակներից մէկը: Ով եղել է նման դէպքերում, կարող է իմանալ թէ որ աստիճան վատ է աղղում ուղեորի վրայ կառուի ջարդուելը, և այն՝ անմարդաբնակ գիւղում, անջրդի ու տաք անապատում: Կառապանի վրայ վայրանալը, կամ ծեծելը չի օգնի այդպիսի դէպքերում, ինչքան էլ մարդ նեղսրտի: Մենք իջանք կառից, պարզուեցինք աւաղի վրայ, որ տեսնենք ի՞նչ է լինելու: Աւելի վատ էր մեզ հետ եղող մի մօր և իր երկու աղջիկների դրութիւնը: Ամենամօտիկ գիւղն է Կում-Թափան, որտեղ մի հատիկ ծառ անդամ չկայ, էլ զրտեղից պէտք է գտնել մի փայտ, որով կարելի լինէր գոնէ կառքը մինչև գիշերուայ տեղը հասցնել: Հեռուից զալիս են թուրք կիներ, սափորներ ուսած, հետու աղբիւրից ջուր տանելու. նրանք հեռու կանգնեցին և ուշադրութեամբ դիտում էին մեզ հետ եղած կնոջ և աղջիկներին. նրանց դէմքը խնամքով ծածկուած էր, իսկ ոտները մինչև ազդրը բաց էին. հագուստի ձևը շատ անշնորք էր, նրանք թևով իրար նշան էին անում և ցոյց տալիս մեզ հետ եղած աղջիկների վրայ: Գուցէ առաջին անգամն էին տեսնում:

Կառապանը, մեզնից աւելի յուսահատ, ինչ որ խօսեց թուրք կանանց հետ և ուղղուեց դէպի գիւղը: Նա վերադարձաւ մի քանի թուրքերի հետ, մի կոճղ ձեռքին. թուրքերից

մէկի երեսին անհնար էր նայել. նրա բոբբոքուած կոպերը դէպի գուրս էին դարձել մեծ ու կտրմիր վէրքերով. աչքերը շարունակ բռնուած էին. այս ծերուկը մեր կառապանին թանկ գնով ծախել էր մի անարժէք կոճղ. մեղնից մէկին բժշկի տեղ ընդունեց և իր սարսափելի աչքը դէմ անելով աղերսեց բժշկել. այս տեսարանն էլ աւելի վատ ազդեց մեզ վրայ. ծերուկի կողքին կանգնած էր նրա փոքրիկ թուռը, նոյնպէս ցաւագար աչքերով: Խորհուրդ տուինք սառը ջրով յաճախ լուսնալ աչքերը. բայց ուր է ջուր, որ սառն էլ լինէր: Այդ ճնշող տրամադրութեան մէջ սկսեց մեզ թախանձել, որ «հիւր լինենք» իրեն. պարզապէս կեղծաւորութիւն:

Մենք հնք սկսեւ ճողալ կառքի մասին. կառապանը շուտով է. մեղնից մէկը կարողացաւ կոճղը զսպանակի տակը տեղաւորել. կառապանը պարան չունի, քանզում հնք մեր կապոցների պարանները. այդ բողէին կարծես կառքը աւելի մերն էր քան կառապանին: Մի կերպ ճանապարհ ենք ընկնում, արեւմուտքին հասնում ենք առաջին թուրք գիւղը, բայց այստեղ գիշերել չի կարելի, որովհետեւ գիւղացիները իրանց օրում երբէք հայերի ոչինչ են ծախել, ոչ էլ գիշերելու տեղ տուել, այնքան մոլի են: Ճանապարհի վրայ գտնուող միւս գիւղերը էլի մի սենեակ յատկացնում են հայերի համար. բայց այս գիւղը դեռ չի վարժուել, թէ և ճանապարհի վրայ է: Մինչև հետեւալ գիւղը առաջներս կայ 20 վերստ (մօտ երեք յարսկալան աղաջ) տարածութիւն. ստիպուած յանձն առանք երկիւղալի ճանապարհը գիշերով կտրել անցնել:

Դեռ հեռուից երևում էր Գիւնէյ կամ Գիւնէյստանը: Կում-Թափայի անապատից յետոյ իսկական դրախտ է ներկայացնում պտղալից Գիւնէյը. բայց վաղուց արդէն մթնիկ էր, և մենք մեր ջարթուփշուր կառքի ետևից գնում էինք: Ճանապարհը հազիւ էր տեսնուում, կառքը գնում էր շատ զանգաղ. յաճախ պատահող փոսերը արգելում էին արագ քշելը: Կառապանը խորհուրդ տուեց չծխել, կամ գոնէ չերեացնել կայծը. կարող էին կայծի ուղղութեամբ գնդակ արձակել և աներևոյթանալ գիշերուայ խաւարի մէջ: Հետաւոր այգիներում երևում էին վառուող կրակներ: Մենք բոլորս լուծ էինք. երբ հարցով դիմում էինք կառապանին, նա միշտ պատասխանում էր՝ թէ հասանք արդէն, բայց գնում էինք ու գնում, չէինք հասնում: Ժամանակը խիստ երկար էր թուում և մենք մի քանի քայլ փոխելով կարծում էինք, որ անցել ենք ահագին ճանապարհ: Լեռների զանգուածները միշտ նոյն տեղումն էին, նրանց հրէշաւոր ձևերը գիշերային մթութեան մէջ ահամայ պարզանք էին

ազգում մեզ. մեքենայօրէն փոխում էիք քայլերս՝ ամէն մէկս իր մտքերի հետ ընկած. վերջապէս կառապանը «հասանք» ապաց. մենք ոչինչ չենք տեսնում. հասել էինք Դիզա-Պալիլ մեծ գիւղի այգիներին. այնտեղ մեր հանգստանալու տեղն էր:

Քարվանսարայի տէրը մեզ պատուաւոր հիւրերի տեղ ընդունեց՝ դատելով մեր արտաքինից և առաջնորդեց յատկապէս պատուաւոր հիւրերի համար պատրաստած սենեակը. այնտեղ հանգստանալու ամեն յարմարութիւն կար: Ամբողջ օրը հոգեւէս և ֆիզիկապէս տանջուած լինելով՝ հիւրասէր թուրքի այս սրտաբաց վերաբերմունքը մեզ ամեն բան մոռացնել տուեց. ինչ խօսք որ նա մեզնից նիւթական վարձատրութիւն էր սպասում, բայց այնուամենայնիւ հազուադիւրս են այգիպիսիներն էլ: Թաւրիպից Ուրմիա տանող հինգօրեայ ճանապարհի վրայ մէկն էլ երկրորդ գիշերելու գիւղն է, որ հայերին իջևանելու լաւ յարմարութիւններ է տալիս. Դիզա-Պալիլ և Թասիււզ գիւղերում իջևանողները իրանց տան ուղև են զգում: Չնայած այս վատ ժամանակներին, երբ ամեն մի թուրքի տրամադրութիւնը թունաւորուած է դէպի մեզ, էլի այնպէս սիրալիր և պատրաստակամ գտայ մեզ հիւրասիրող թուրքին, ինչպէս առաջուայ 4—5 անգամ կատարած անցուղարձիւ ժամանակները:

Դիզա-Պալիլը պատկանում է Վալիահոտ—Թաւոթառան գին և այն գիւղերից մէկն է, որոնք ներկայ Մուզաֆֆէլէզզին շահը, իր թագաժառանգութեան ժամանակ ծախել է. բայց որդին բոլորը նորից ձեռք է բերում: Դիզապիները զանգատուած էին, թէ տուրքի կողմից խիստ նեղւում են և Վալիահոտը աւելի շատ հարկ է պահանջում, քան նախկին տէրերը, մինչև իսկ հասոյթներից մի քանիսի վրայ նոր տուրքեր է գրել: Ինչքան որ հայրը շոայլել է անխնայ և բոլոր կալուածները ծախել, նոյնքան սրդին խնայեղ և նոր պնած կալուած—գիւղերով հարուստ: Այդ գիւղը խիստ հարուստ է. ունի 1200 տան չափ բնակիչ. ընդարձակ այգիներով շրջապատուած է, ունի հանած աղբիւր (քաշրիկ) հէնց գիւղի կեդրոնում: Այս գիւղում և մէկ էլ Մայանում կայ մի տեսակ կենդանի, որին տեղացիք մալս են ասում, մեծութեան հազիւ մի մրջինի չափ, բայց խայթում է խիստ վտանգաւոր, տեղացիների ասելով, նոյնիսկ մահացու. պատճառում է սև վէրք, որը տարիներ է տևում, թոյնը շատ զօրաւոր է և վերքը միշտ նորոգւում է. տեղացիների վրայ թոյնը թեթև ներգործութիւն է ունենում:

Սակայն մենք այնքան յուզուել էինք, որ ոչ մի ուշք չէր դարձրինք մալայի վրայ և հանգիստ քուն եղանք թուրքի տանը:

Առաւօտեան մեր առջեւ բացուեց մի հաղուագիւտ տեսարան, վերջապէս աղատուեցինք անվերջ այգիներէց ու մեզ զբոսանք արձակ հորիզոնի տակ: Դէպի հարաւ տարածւում է Կապուտանը իր անվերջ կապոյտ մակերևոյթով, միւս կողմերում ձգուած են Մարաղայի լեռները, Սահանգի կտր գագաթը, Մարանդի, Դիւնէյտանի և Փոչաուշի լեռները, որոնք, մի քնդարձակ շուրջ պար բռնած՝ ձեացնում են Դիւնէյտանի պարզաբեր գաւիթայր գաշարը, լեռները, հիւսիսից կողերը արեւին դէմ տուած՝ իրանց դէպի ծովը պարզուած փէշերը, առատութեամբ կլանում են արեւի տաքութիւնը և ծովի խոնաւութիւնը միաժամանակ. էլ ի՞նչ է պակասում, որ այդեստանի և սեխաստանի պտուղները առաջնակարգ յատկութիւնն էր ունենան. քնում է հողի տեսակին տեղուշտ, այն էլ կարմրաւուն աւազախառն հող է, ամենայարմարը այդ կարգի պտուղների աճեցման համար: Լեռները, բացի Մշովից, զուրկ են բուսականութիւնից և ներկայացնում են կարմիր շերտեր, տեղ տեղ ընդհատուած մոխրագոյն շերտերով: Դեռեր չունի Դիւնէյը, եղածները հեղեղատներ են, որոնք գրեթէ միշտ չոր են, նրանց կեանքը հազիւ մի քանի ժամ է տևում, երբ անձրեւը առատութեամբ տեղում է լեռների վրայ, հեղեղները բազմաձևում են և շատ էլ կատաղի են դառնում, և որովհետև ծովն էլ շատ մօտիկ է, իսկոյն վաղում, ծովն են իջնում մօտիկ սարերից և ամեն բան հանդուստնում: Ամենից մեծը և ընդարձակ հուն ունեցողը Քաւթաւ-Ալի-Չայն է, որը կտրել անցնելը մօտ 10 բոսէ է տևում՝ սրա հունը տեղ տեղ վարում են և ցորին ցանում, դաշտի մակերևոյթին հաւասար է գրեթէ և, առատ անձրից յետոյ, հոսում է ամբողջ դաշտի երեսովը:

Ամառուայ տօթ եղանակներին զգալի է լինում ջրի մեծ կարիք, և զիւղացիները ստիպուած են մեծ աշխատանքով ստորերկրեայ ուղիներով ջրեր հաւաքել և քահրէզներ դուրս բերել այգիներին ջուր մատակարարելու համար: Այդ զժուարութիւնից աղատուելու համար տեղացիները իրանց այգիները վարժեցրել են և ամբողջ ամառուայ ընթացքում 1—2 ջուր են տալիս: Կան այնպիսի տեղեր էլ, ուր ամբողջ ամառուայ ընթացքում խակի չեն էլ ջրում այգիները. այլ միայն դարնանք մէկ անգամ: Հետաքրքիր է Քահրիւղ անունով գիւղի այգիների ջրելու ձևը. խաղողի որթը որ դարձնում, կոնաչում է, նրա արմատի մի կողմը մի խոր փոս են փորում, լցնում են ջրով և ծածկում. այդ փոսը ամբողջ տօթ ամառուայ ընթացքում իր մէջ խոնաւութիւն է պահում և ջուր մատակարարում հաստարմատ որթին:

Նոյեմբեր, 1906.

Գիւնէյիւտանը 1) հացաքոյսով աջնքան նշանաւոր չէ, որքան պտուղներով. արտերը բոլորն էլ գէժ են, այսինքն սարեւրի լանջին և անջրդի-ոստին, հետեւաբար և անձրեւի քանակութեան վրայ է նրանց պտղաբեր լինելը:

Այս դաշտավայրը կազմում է մի երկար տարածութիւն՝ սեղմուած ծովի և լեռների արանքում, լայնութիւնը միջին հաշուով 4—5 վերստ է, իսկ երկարութիւնը 80 վերստից աւելի: Իր մէջ պարունակում է 100-ից աւելի գիւղեր, ոմանք կպած լեռներին, գեղեցիկ ձորերի մէջ, ոմանք էլ կպած ծովափին: Մի քանիսը հազարաւոր տնից են կազմուած, ունին շուկայ և տրհասարանների խանութներ: Գաւառի կենտրոնն է Չարվատար գիւղը, ուր նստում է դատար: Ժողովրդի զբաղմուքը գլխաւորապէս այգեգործութիւնն է և սկիստամանիւր ժապէլը: Ամբողջ ամառուայ ընթացքում հազարաւոր էշեր կրում են ամեն տեսակի արգեր գէպի Սալմաստ և գլխաւորապէս գէպի թաւրիդ, որի ընդարձակ շուկայի պտուղների խանութները առաւելապէս այստեղի պտուղներով են ծանրաբեռնուում և միշտ էլ մի քանի շահի աւելի արժէքով են ծախւում: Բացի առատութիւնից և ընտիր տեսակի լինելուց, շուտ էլ է հասնում, երբ շրջակայ երկրներում գեռ ոչ մի պտուղ չի հասել: Այդ դաշտի ժողովուրդի տնտեսականը լատ է, գիւղերում չի երևում այն աչք ծակող աղքատութիւնը, ինչ որ յատուկ է Պարսկաստանի միւս թուրք գիւղերին ընդհանրապէս: Պտուղները տեղում չեն մնում և փշանում, իսկոյն էշերով (այս կենդանիները նոյնն են Պարսկաստանի համար, ինչ որ ուղտերը Արաբիայի համար) գիշերանց տեղափոխում են ծախելու Պտուղներից յայտնի են սեխը, շատ տեսակի խաղողները և նուէր: Սըրանք են տեղացու ապրուստը հոգում:

Գիւնէյիւտանի ամբողջ երկարութիւնը կտրելու համար ուղիղ երկու օր է հարկաւոր, ճանապարհը թէև ուղիղ է, բայց շատ քարքարոտ է և խորդ ու բորտ: Առաջին իջեանից մինչև երկրորդը հազիւ 40 վերստ տարածութիւն է, բայց մի օրուայ սոսկարէզ է: Ծանապարհի գոարձալիութեանը խօսքը չկայ, եթէ կարելի լինի օգտուել դրանից. այդ ճանապարհին տեղի ունեցաւ մեր կառքի անուի ցրիւ դալը, իսկ առանցքը վաղուց

1) Արաքսի աւազանում երկու տեղ կայ ճիշտ նման դիրքով տեղեր, որոնք էլի «Գիւնէյ» են կոչուում. այս բառը համապատասխան է մեր «Արևիկ» կոչման, որը տրուած էր այժմուայ Մեղրիին՝ իբրև արեգգէմ երկիր. այդպէս են բոլոր Գիւնէյ, կոչուած տեղերի դիրքերը օրինակ, Կադգուանի մօտ չին Երոսխաձոր գաւառի մի մասը այժմ կոչուում է Գիւնէյ. այդպէս է կոչուում և Սևանայ լճի հիւսիս արևմտեան ափի մի մասը:

էր ծուռել: Մենք նորից ստիպուեցանք մի փշտոնեու հովա-
նուն ապաստանելով՝ օրը մթացնել կասքը կարկատելով և այն-
քան հրաշալի ճանապարհները անցնել մութ գիշերներով: Երբ
բացի խիստ ձանձրոյթից հազար ու մի փորձանքների ենթա-
կայ ենք լինում:

Գիշերուայ ժամի 11-ին հասանք Թասիւ կամ Թասիւշ) Խրքարնակ մեծ գիւղը, սա էլ Գիւնէյի ամենամեծ և հարուստ
գիւղերից մէկն է: Գտնուում է Մշով լեռան ստորոտում. որի
շնորհիւ և նշանաւոր է այս գիւղի իւղն ու մեղրը ամբողջ
շրջակայքում: Լիւր ջրաշատ է և գեղեցիկ արօտներով ծած-
կուած. սնուցանում է ոչխարի բազմաթիւ ընտիր հօտեր: Այս
լեռան վրայ պատահում է «մշկապորտ» կոչուած այծիամբ.
այնտեղ, ուր այս կենդանին հասում է, բուրում է մուշկի հոտ.
ստում են շատ դուրեկան հոտ է և այծիամի հեռանալուց դեռ
երկար ժամանակ յետոյ էլ հոտը չի վերանում: Պարսիկները
այս լեռան Կոհի Մաշուկ են անուն տալիս, հայերէնում յայ-
տնի է Մշկունեաց լեռներ անունով: Գործնական հասարակ
անունն է Մշով-զաղ: Սրա հիւսիսից է հոսում Ջունսա գետը,
որը միանում է Կըզըլ-սուլին, որը թափւում է Երասխի մէջ:

Թուրիլից Սալմաստ գնացող ճանապարհը աւղեղնաձև է
ընթանում, Թասիւշ գիւղը գտնւում է աղիղի ամենաձգուած
կէտում, որից յետոյ ճանապարհը ուղղւում է դէպի արևմտա-
հարաւ: Գնալով լեռները մօտենում են ծովափին այնքան
որ մնում է հազիւ մի փոքր տարածութիւն. հէնց այդտեղ է
Ռախտարխանայի նշանաւոր կիրճը, որտեղ վերջանում է Գիւ-
նէյը և սկսւում Սալմաստը: Սրանից մի փոքր վերև, խոր ձո-
ւերով մի նեղ ճանապարհ է բաժանւում դէպի յոյւր: Կիրճը
միակ ճանապարհն է դէպի Թասիւլի, զրա համար էլ այդտեղ
է հաստատուած եղիւ մաքսատունը, երբ Դիլմանում չկար այդ
հաստատութիւնը դեռ ևս:

Սակայն նա ոչ թէ մաքսատան տեղ էր ծառայում, այլ
դարձել էր կատարեալ աւաղականոց, խուզարկւում էր ամեն
անցորդ անխտիր թէ ապրանքների հակերը և թէ խեղճ ճա-
նապարհորդի կապոյը. մաքսային տուղանքի էր ենթարկւում
ամեն բան: Կատարեալ կամայականութիւն էր տիրում, պար-
սիկ պաշտօնեայի անյաղ կողոպտելու ունակութիւնը չափ ու

¹⁾ Հին Հայաստանի Պարսկահայք կամ Ատրպատական նահանգի Տե-
սուշ գաւառը այստեղ է գտնւում, Կապուտանի հիւսիսային ափին. հաւան-
օքէն այդ անունն է- որ մնացել է յիշուած գիւղի վրայ. Թասիւ են արտա-
սանում, բայց զրում են Թասիւշ:

Տեսուշ և Թասիւշ շատ մօտիկ նմանահնչիւնութիւն ունեն:

սահման չէր ճանաչում այլևս, մինչև որ ազգարնակչութեան քանիցս կրկնած միահամուռ բողոքները լսելի եղան վերջնապէս ու տուած կաշառքները տնդօր եղան, այն ժամանակ ոչնչացաւ այդ հաստատութիւնը բեկիւցիւնների ձեռքով, որի տխուր պատերը՝ առանց ծածկի, դեռ սարսափեցնում են անցորդին: Մեծ շինութիւնը այժմ քարուքանդ է, բայց կողոպտուածները էլի վախով են անցնում այդ չորս քայլ տարածութիւնը: Այժմ էլ ճանապարհի ամենաերկիւղալի տեղերից մէկը Ախտարխանայի (նաև Ռախտարխանայ) կերճն է:

Ախտարխանայի կրճի պէմը, ծովի միւս ափին փռում է Փոչաւուշի երկար թերակղզին ուր սա կողմում է Կապուտանի հիւսիսային՝ կտուցածն ծոցի մի կողմը—հարաւային ափը, թերակղզին ձգւում է արեւմուտքից արեւելք և վերջանում է Սուրաթ հրուանդանով:

Սալմաստ մանեկիս ճանապարհորդին թւում է, թէ իջնում է. և իրօք Սալմաստի սափարակը աւելի ցած է քան Գիւնէյստանը, բայց եղանակի կողմից նրանից ցուրտ է, որովհետեւ գիրքն ուրիշ է, լեռները հարաւահայեաց չեն, թէև երեք կողմից պատնէշի նման շրջապատում են գաշտի բոլորտիւրը: Գիւնէյստանի գիրքը բարեյաջող է պտուղների համար, իսկ Սալմաստինը՝ հացահատիկների համար:

Սալմաստի գաշտը սկսւում է մի աւազստ տարածութիւնով, որ տեղ անապատ է գրեթէ՝ բնակութիւնից զուրկ. այդտեղ աճում են մի քանի տեսակ բոյսեր, մի տեսա՛լը աղի համուռի և հէնց հողն էլ աղի, հաւանաբար ծովի ջուրը մի ժամանակ այդ մասը ողողել է:

Բոյսերի մի ուրիշ տեսակը շուան է կոչւում, ունի հաստ բուն և ճիւղեր, բուսական բարձրանում է, չորանալուց յետոյ մեծ գէղեր էազմած կրակ են տալիս, մոխրի մէջ գոյանում է քարի նման մի սև զանդուած՝ մեծ մեծ ծակոտիներով, այս քարը կոչւում է Կալիանդաշի ¹⁾, արտահանում են գէպի Ռւրմիա, որ սաղաւյի պատրաստութեան ժամանակ գործ են ածում:

Մտանք վերջնապէս գեղեցիկ Սալմաստը. սարգաբաստների սարսափելի կաշառակերութեան այս կլասիք երկիրը, որի մասին այնքան անգամ գրուել է, և որը, սակայն դարձեալ մնում

¹⁾ Այս նիւթը պատրաստում են և ուզալուք կոչուած բոյսից, որը գերեզմանատեղերի յատուկ բոյսն է. պալսկերէն ասում են սպանդ, նոյնը և մենք ենք գործածում: Սպանդից սամրգայի քար են հանում Բարանդուղում միայն, որովհետեւ զօւար է այնտեղ բերել Սալմաստի կալիանդաշին:

է իւրեւ հրապուրիչ չազ պատառ ի բնէ կաշառ (Ջառա) ուսող պարսիկ պաշտօնեաների:

Ջահվար աղայի խայտառակ մահից յետոյ ցրիւ են եկել Աւգոյիների աւաղակարարոյ քրդերը, որոնք պատիւ էին դարձել խաղաղ ազգաբնակութեան գլխին, գլխաւորապէս թուրք գիւղացու: Կարծուած էր, որ նրանք սարսափելի վրէժ պիտի լուծեն, իրանց աղայի սպանման համար, ամբողջ Սալմաստից, սակայն այդ չեղաւ, որովհետեւ կառավարութիւնը օր առաջ ձիաւորներ էր ուղարկել: Հակառակ սպասածին ձիաւորները այս տարի իրանց շատ կարգին էին պահում. ոչ այգիներում գողութեան էին գնում և ոչ ճանապարհներին կողոպուտներ անում, միայն իրանց ձիաների համար յարգ էին վերցնում ցանկացած տեղից: Այս ձիաւոր գինուորների հրամանատարն է երիտասարդ իշխան Բէյօիւք խանը՝ նախկին յայտնի ապստամբ և այժմ ծերունի Ռահիմ խանի միջնակ որդին. սա աշխատում է գինուորական կարգ ու կանոն մտցնել իր գնդի մէջ, և այս բանին պէտք է վերադրել, որ ձիաւորները իրանց լաւ էին պահում:

Հետգնեալ քաղաքի կերպարանք է ստանում Սալմաստի գլխաւոր կենտրոն Դիլիման գիւղաքաղաքը: Այստեղ իսկոյն աչքի էին ընկնում բազմաթիւ ռուսաստանցի թուրքեր, որոնք եւսանգով գէնքեր էին գնում. նրանք իրանց տրամադրութեան տակն ունեն բաւական մեծ գումարներ և գնում են ամեն պատահած հրացան՝ առանց երկար ու բարակ նայելու, թէ ի՞նչ տեսակի է: Դիւտած գէնքերը Խոյ-Շահթախտի ճանապարհով անց են կացնում սահմանը. իմաց տրուեցաւ ժաքատան կառավարչին, բայց բռնել չկարողացան. նրանք գէնքերը տեղաւորում են ուղտերի փալանների մէջ և գիշերով ճանապարհ գնում: Տեղի թուրքերը խեղճ են և իրանց ունեցած գէնքերն էլ, բարձր գնից շրացած, ծախում են: Իրօք խեղճ ու խաղաղասէր է սալմաստեցի թուրքը, նա իր վայրենի բնազդները թողել է, երևի ենթարկուելով կլիմայական ազդեցութեան. այսպէս է և ուրմիացի թուրքը: Սալմաստի հայերը ունեն բաւական պատրաստութիւն՝ գիմարելու կոտորածի ամեն մի փորձի: Ամբողջ Պարսկաստանում այս միակ անկիւնն է, որը կարող է պաշտպանուել հայ թուրքական ընդհարումների ժամանակ՝ եթէ պատահի տեղիս մահաւանդ հայաբնակ գիւղերը բնազդմաբարութիւն ցոյց կը տան: Նրանք յաճախ գործ են ունեցել թալան տանող աւազակ քրդերի հետ և վարժուել են կռիւներին: Պէտք է խոստովանել, որ եկուոր հայերը նման

դէպքերում, միշտ ասաջնորդողներ են եղել, տաճկահայը բաջութեան օրինակ է ծառայում:

Ժողովրդի տնտեսականը շատ վատ էր այս տարի, միայն դէմի (զատիվայր) արտերն էին լաւ արդիւնք տուել իսկ ջրովի արտերը արդիւնք չեն տուել: Արդէն Սալմաստը հացաբոյսի մշակութիւնով է ապրում և մէկ էլ Ռուսաստան պանդխտելով-այդ երկուսն էլ չկային, հետեարար և հացի գինը սուղ էր և ժողովուրդը նեղոււմ էր: Քաղցած քրդերի բազմութիւնը լցուած էր Դիլիմանի շուկան. դրանք քրդերի երկրագործ դասակարգից էին, որոնց վիճակը միշտ էլ քաղցածութիւնն է, որովհետեւ անհող «մերիւաներ» են:

Սալմաստի հայերի կրթականը միշտ նախանձելի է եղել համեմատած Պարսկաստանի ուրիշ գաւառների գիւղերի հետ. սակայն այս տարի, թէև արդէն սեպտեմբերի կէսն էր, բոլոր դպրոցներն էլ անկերպարան վիճակի մէջ էին: Անցեալում տարուայ վերջին հետացան բոլոր գրսեցի ուսուցիչները և նրանց տեղերը դատարկ մնացին. իհարկէ պատճառը չափազանց չնչին վարձատրութիւնն է, թէև պակաս չափով չազդեց կովկասահայ դպրոցների բացուիլը: Յայտնի Աւտիսեանի թեմական տեսչութիւնից յետոյ դպրոցները միշտ ետ են գնացել. մինչև որ մի արմատական բարեփոխութիւն չլինի ուսուցիչներին կանոնաւոր վարձատրութեան և դպրոցների նախահաշուի սւեւացման խնդիրներում, գործը միշտ կաղնիկազ կը ընթանայ: Վերջերս նամակով իմացուեց, որ Ռոստովում ապրող սալմաստեցի հարուստները կազմել են մի ընկերութիւն՝ բաւական դոնացուցիչ գրամագլխով և իրանց վրայ են առել ամբողջ Սալմաստի դպրոցների նիւթականը: Ինչ խօսք, որ գործի կանոնաւոր և յարաւս ընթացքը, կարճ ժամանակում, աչքի դարձող արդիւնք ցոյց կը տայ: Արդէն երկու տարուց ի վեր սաւրացի հարուստ Յովնանեանները տարեկան 300 բուլլի էին յատկացնում իրանց գիւղի ուսումնարանին: Այնքան հարուստ սալմաստեցիներ կան Ռուսաստանում, որ շատ հեշտութեամբ կարող են հոգալ բոլոր դպրոցների ծախսը:

Սեպտեմբերի վերջին կիսատ-պոստ կազմուեցին Հավթիւնի, Մալհամի և Ղալասարի դպրոցների ուսուցչական խումբերը. յետոյ պիտի կազմուէին Փայաջուկի և Սաւրայի խմբերը. իսկ միւսները յայտնի չէ:

Սալմաստի գուտ հաշարնակ գիւղերից Փայաջուկը ներկայումս շատ տխուր պատկեր է ներկայացնում. Բաֆֆիի հայրենի գիւղը բարոյապէս և նիւթապէս քայքայուած է, նիւթապէս քայքայուած է, որովհետեւ սրիկոյական դէպքերի պատ-

ճառով տուած մեծ տուգանքներից աչքը չի բաց անում, սրան կը հետեի անշուշտ և բարոյական անկումը: Փայաջուկն էլ ուղեց Հալթիվանի նման հողերը գիւղատէրերից գնել և ազատ սեփականութիւն դարձնել, և արաւ էլ, սակայն այժմ բոլորը նորից ձեռներիցը դուրս է եկել: Ինչո՞ւ, նրա համար որ աւտոկրուն են դրել մի խումբ ենիչարներ, որոնք ոչ մի հեղինակութեան չեն եւթարկում, ասորում են զիւղայիների ճաշուին, իրանց քէֆի ուզածի պէտք փչացել է կանանց բարոյական, ջնջուել նահապետական ամօթխածութիւնը: Երանցից շատերը գինեվաճառութեամբ են պարագլուծւում, և ինչ էք կարծում, հազիւ 200 տուն ունեցող այդ դժբախտ գիւղը ուղիղ 30 գինետուն ունի... մնացած ամեն բան էլ սրանից պէտք է գտտել: Ամեն մի գժբախտ զէպք սովոր է այս գիւղում պատահել, հղբայրասպան կռիւներ, «գիշերային արշաւանքներ», ենիչարական տուգանքներ: Բազմաթիւ գինետուններ զէպի իրանց են քաշում ամեն կողմից հարեցող թուրքեր, որոնց գինի կամ օդի մատակարարողը կին է կամ նորատի հարս: Ո՛ր սալմաստեցուն հարցնես, հարիւրաւոր տխուր բաներ կը պատմի այս գիւղի համար: Այս բոլորից յետոյ, շատ բնական է, որ գիւղը անբարոյականութեան վայր կը դառնայ: Եւ մինչև այսօր ոչինչ չի գրուել այդ մասին:

Ինչքան անպատուարեր է մեզ համար, որ Բաֆֆիի հայրենի գիւղը այս վիճակին է հասել մի խումբ սանձարձակ մարդկանց շնորհիւ, որոնք երբեմն մի սուրճ գործի են ծառայելիս ելել: Այդ փոքրիկ բռնաւորները կամ տիրանները վայր զցեցին «յեղափոխականի» անունը:

Մեր չորս օրուայ ճանապարհորդութեան ընթացքում աւկանատես չեղանք ոչ մի գէպըի կամ իրողութեան, որ մեզ յիշեցնէր պարսից կառավարութեան գոյութիւնը. ման եկէք ամբողջ Սալմաստի 75 գիւղերը, որոնցից շատերը 3—4000 բնակիչ ունեն, բայց երբէք չէք հանդիպի կառավարութեան մի ներկայացուցչի, մի պաշտօնեայի: Միայն գաւառի կենդրոն Դիլման փոքրիկ քաղաքում դուք կարող էք հազիւուրեմն տեսնել ձեր փնտրածը: Այս ետ ընկած անկիւնում կան կառավարական երեք հաստատութիւններ՝ պոստ-հեռագրատուն, մարսատուն և դադարան. առհասարակ յայտնի են նման հաստատութիւնների օրիգինալ անկանոնութիւնները ամբողջ Պարսկաստանում, իսկ տննչան և խուլ անկիւններում արդէն շատ հետաքրքիր են դառնում: Բազմաթիւ են զէպքեր, երբ, օրինակ Սալմաստից Ուրմիա, կամ Թաւրիզից Սալմաստ «արա-

զընթաց» պոստային էշերը նամակը աւելի շուտ են հասցրել քան հեռագրատան պաշտօնեաները՝ հեռագիրը։ Օ՛հ, դանդաղաբեկութիւնը պարսիկ պաշտօնեայի՝ անտանիլի է. ծալապա- աիկ նստած պաշտօնեան, իր աֆիօնամուրութեամբ պոզոյն զէմ- քով ու մարած աչքերով միթէ կարող է էգիւրնի գործիքին ծառայել։ Իսկ բելգիացիների կատարած բարեփոխութիւնները դեռ չեն թափանցել մութ և հեռաւոր անկիւնները, ուր դարձ- եալ հաղորդակցութիւնները անդրջրհեղեան ձևերով են կա- տարւում։

Երկու շաբաթից ի վեր, մի անհասկանալի պատճառով, Թաւրիզի պոստը Սալմաստում չէր ոտացւում. վերջապէս հե- ռագրուեց, թէ իր ժամանակին կըստացուի. եկաւ պոստը. կա- ռավարիչը արդէն շատ քիչ է գալիս իր պաշտօնատեղը, գործը կատարում է նրա ծառան, բայց արի տես, որ նա էլ այդ բո- պէին անհետացել է, ոչ ոք չի լմանում նրա տեղը, բաւական մեծ բաղմութիւնը սպասում է, ախր չէ՞ որ ամենքը սրտա- տրով նամակների են սպասում Կովկասից, ամենքը պանդուխտ- ներ ունեն աշխտեղ, և աշխտեղ կրակի ու թալանի ասպարէզ է դարձել վաղուց։ Շնչակտուր ու քրտնաթաթախ եկաւ, հասաւ կառավարչի ծառան, խեղճը մի քիչ շփոթուեց, ձեռները դող- դողում էին, կապոցների կապերը չէին հպատակում նրան, որ աշխատում էր մատներով կտրել, թէև միջատը առաջը դը- րած էր. բաղմութիւնից մէկը խեղճին գլխի գցեց...

Նամակներն ու ծրարները բաժանուեցին։ Դրսի մարդիկ և վաճառականները գնացին, մօտեցան հասարակ գիւղացինե- րը, նրանք էլ ամէն մի նամակին 4 շահի վճարեցին ու ապա ստացան. «ինչո՞ւ այդպէս» հարցրի նրանցից մէկին. «այդպէս է» պատասխանեց նա, մի քիչ էլ զարմացած իմ հարցնելու վրայ։ Յետոյ տեղեկացանք, որ գիւղացիներից շատերը, մանաւանդ հեռաւորները, չեն կարող ժամանակին գալ, իրանց նամակները վերցնել, այդ պատճառով պարտաւորւում են 4 շահի վճարել. իբրեւ «պահւալար» եթէ հեղութիւն չքաշեն, չափեն, չէ՞ որ կարող են կորչել... Այդ պոստատան (պոստատուն ասելը սխալ կը լինի. պէտք է ասել «պոստախանութ, որովհետեւ խանութների շար- քից մէկը ծառայում է իբրեւ պոստատուն») ծառան ամսական ստանում է 3 թուման (ճիշտ 5 ուրլի) և օգտւում էր նման աղբիւրներից. այս սովորութիւնը պարսից կառավարութեան ամենահիւանդոտ կողմն է. ամսական ուճիկը նրանց համար նշանակութիւն չունի։ Պէտք չկայ զարմանալու, երբ լսէք, որ շատ բարձրաստիճան պաշտօններ գոյութիւն ունենան առանց ուճիկի, մինչև անգամ այդ պաշտօնը ձեռք բերելու համար ի-

քանք մեծ գումարներ են վճարում: Այս մասին շատ անգամ գրուել է մեզանում: Չուռանամ մի նշանակելի իրողութիւն ևս յիշատակել: Անցեալ տարի Դիլմանի և Ուրմիայի պոստատները սկսել էին մարկայի ընդարձակ վաճառակոչութեամբ, բայց ոչ թէ իրենք էին ծախում, այլ գնում էին գործածուած մարկաներ, իսկ ուրիշ տեղերից ստացուած նամակների մարկաները պոկում էին: Սկզբում չիմացուեց այդ զաղանիքի պատճառը, սակայն յետոյ պարզուեց. այդ մարկաները նրանք կը պահում էին նամակներին (Պարսկաստանի շատ տեղերում մարկայի փողը յանձնում են պաշտօնեային, նա մարկան կապընում է և ուղարկում), կնիքը խփում բանեցրուած մարկայի վրայ նորից և ուղարկում. իսկ երբ տրանք էլ վերջացան, այն ժամանակ Ուրմիայի և Սալմաստի նամակները առանց մարկաների էին ստացում, երկու տեղի պաշտօնեաները պայմանաւորուել էին: Այսպէս տեւեց ամիսներ, և այս եղծումի պատճառն այն էր, որ մարկաները վերջացել էին... Ինչքան շատ է գրուել այստեսակի բաների մասին, բայց դորձեալ կարելի է գտնել հաղարարութեան եղծումներ: Հազիւ հազ սկսած կառավարական բարենորոգչութիւնը մինչև ամեն անկրկնելի թափանցի, դեռ շատ Զուր կը հոսի լեռներէից դէպի ծով, դեռ շատ քամիներ կը գան, կանցնեն այս զժախտ երկրով:

Սալմաստում այդ օրերը առանձնապէս թուրքերի մէջ խօսակցութեան առարկայ էր դարձել մի դրօշակ. այդ դրօշակը տնկուած էր Հալիվան գիւղում, պ. Մարտիրոս Փիրանեանի տեսչութեան յանձնուած «Զուիցերական կրթական պատուարանի» շինութեան վրայ. նախագիւղական մի անմեղ գործ, բայց արի տես, որ ժամանակը խիստ վատ է. լուրերը հասան մինչև Ուրմիա և Թաւրիզ, «հայերը ապստամբել են, դրօշակ են բարձրացրել» խօսում էին թուրքերը. թէ ինչպէս էր ազդել այս գէպը խիստ երեւոյցով թուրք խուժանի վրայ, երևում է այն հազար ու մի պատմութիւններից, որ բերնէ բերան տարածուեց Ուրմիայում. սկսեցին լուրջ երկիւղներ կրել, մինչև անգամ պատրաստուել զիմազրել հայ կաշաղներին, որոնք հազարներով լցուել էին մօտակայ ձորերը. մի պոչաւոր սուա, որը վերջապէս անձահարեց մի քանի սրիկայ գրգռիչներին... Դրօշակը ստիպուեցին ցած առնել:

Առաջ քան դէպի Ուրմիա անցնելը կ'արժէ մի քանի խօսք տեսել Հալիվան գիւղում եղած օտար հաստատութիւնների մասին. պատուելի Մարտիրոս Փիրանեանը նորերս Հին Քաղաքից

(Քէօհնա Շահար) տեղափոխուեց այս գիւղը՝ իր կրթարանը պատասխարանով:

Այս հաստատութիւնը հիմնուել է պ. Փիրանեանի ջանքերով՝ 1903 թուին. անունն է «Սալմաստի Զուիցերական կրթարան պատասխարան». ծախսը հոգում է Զուիցերիայի Յիւրիխ քաղաքում հիմնուած մի ընկերութիւն՝ նախագահութեամբ դոկտօր G. von Benoit-ի. նոյն քաղաքում ամեն տարի գերմաներէն լեզուով Ընկերութեան գործունէութեան տեղեկագիրը հրատարակում է, «Schweizerische Missionsarbeit in Persisch-Armenien» 1905 sept. որից իմանում ենք, որ առաջին տարուայ ծախսը 4000 ֆրանկի է հասել, վերջին տարուայ տեղեկագրի մէջ ծախսը աւելի կրճատուած է՝ որքերի պակասութեան պատճառով: Դրա համար էլ պ. Փիրանեանը, այս տարուանից սկսած բաց է արել աղջկանց դպրոց: Հաստատութեան մէջ պաշտօնավարում են երեք վարժուհիներ, մէկը գուիցերուհի՝ օր. Marie Brennualder, որ սկզբից եկել է Սալմաստ, ծառայում է շատ չնչին սոճիկով, աւանդում է գերմաներէն (մեծ սաներին) և ձեռագործ, սովորեց է հայերէն և ամեն կերպ ընտելացել է դիւզական կեանքի. պատասխարանի տնտեսական հոգսը ամբողջապէս նրա վրայ է ծանրանում: Կարելի է յուսալ, որ այս հաստատութիւնը կարողանայ օգտակար լինել: Հաստատութիւնը թողնում է մի խաղաղ և աշխատող ընտանիքի տալուորութիւն: Պ. Փիրանեանը քարոզութիւն էլ է անում:

Միւս հաստատութիւնն է «Սալմաստի Շուէզական որրանոց-վարժարանը»-ը. հիմնուել է 1902 թուից, պահում է 12 աշակերտուհի որքեր: Հաստատութեան կառավարիչն է օր. Էլին Սունդվալը, որ կանոնաւորապէս տիրապետում է հայերէնին, որովհետեւ վաղուց է հայերի մէջ գտնուած, եղել է Կովկասի շատ քաղաքներում և թաւրիպում: յարգելի օրիորդը այս 4 տարուց ի վեր, ինքը միայն իր վրայ է առել այդ հաստատութեան բոլոր ծանրութիւնը. մի անձնաւորութիւն չպիտի կարողանայ կանոնաւորապէս բաւականութիւն տալ որք սանուհիներին նիւթական և մատուր պահանջներին, ուստի մաքուր հագնուած և «չաղացած» աղջիկները մատուր կրթութեան կողմից թոյլ են: Հաստատութեան տարեկան ծախսը 600 թիւմանի է հասնում:

Ծնորհակալութիւն այս երկու փոքրիկ աղգերի մեզ ցոյց տուած օգնութեան համար:*)

*) Պղնալի «աղգ» իր երեակայական «կուտորականութեամբ», որ միայն ենիչերիներ, կեղեքողներ և սրիկաներ է ուղարկում զիւղերը, իսկ

Մօտ մի շաքաթ Սալմաստում մնալուց յետոյ ճանապարհ ընկանք գէպի Ուրմիա. կտուք ճարելը շատ գժուար է, ուստի վերցրինք «բազառչիները» ձիեր, որոնք ամեն շաքաթ երթևեկում են և ապրանքներ են փոխադրում: Թողինք ծառաշատ ու գիւղաշատ Սալմաստը, դուրս եկանք ընդարձակ ու մրգաւէտ չիմանները, որոնք տարածւում են արեւելեան կողմը, գէպի ծովը: Այդ հիւանալի տափաստանները երկու մասի են բաժանւում, աւելի ընդարձակը կոչւում է Դըրբիշկի Չիման, միւսը՝ Մինասի Չիման. այսպէս է կոչւում իր արեւեան կողմում եղած Մինաս գիւղի անունով, որը զուտ թրքաբնակ է, թէև տնունը ուրիշ բան է ասում: Չիմանների ծովափնեայ մասում իրար մօտիկ դուրս են ցցուած բազմաթիւ քարաժայռեր, իրանց արանքում դարձեալ տարածւում է չիմանը՝ նեղ շերտերով: Այս լեռները փեշեր չունեն ամենևին, այսքան բազմաթիւ և իրար մօտիկ լեռները պէտք է կաղմէին ձորեր, նեղ ու քարքարոտ. սակայն ինչպէս ասացինք, հէնց որ լեռը մօտենում է չիմանի մակերեւոյթին, սկսւում է ուղիղ տարածութիւն՝ հաւասար միւս ընդարձակ տաքածութիւնների բարձրութեանը. շատ հաւանական է կարծել, որ այդ արանքները մի ժամանակ ջրով ողողուած են եղել:

Դէպի Ուրմիա տանող երկու գլխաւոր ճանապարհ կայ. մէկը, աւելի բանուկը կտրում, անցնում է Դըրբիշկի Չիմանը լաշնութեամբ և մտնում է Սախկալ-Թութան կիրճը, իսկ միւսը մտնում է Մինասի Չիմանը, ոլորւում է լեռների մէջ և միանում է տաւջինին՝ Սախկալ-Թութանն անցնելուց յետոյ: Աւելի գեղեցիկ է այս ճանապարհը, իրար մօտիկ ցցուած են Փռչաւուշ, Մինաս, Հարաշ, Մինաշա, Քաւ և Թամար լեռները. սրանց արանքներից շերտ շերտ կապուտին է առյիս Կապուտանը, որի մէջ երկարում են Սուրաթ և Բոկալի հրուանդանները. երբեմն, լեռների միօրինակ գորշութեան մէջ, երևում է մի պատառ կապուտ ջուր, այս հակադիր պատկերը տեսարանին առլիս է անօրինակ տեսք, անցնում ես մի քանի քայլ, կապուտակ շերտը մէկ անգամից ընդարձակւում է և տեսարանը փոխւում է: Կարելի է ասել, ամեն մի հարիւր քայլ այնպէս է փոխւում տեսարանը, որ ոչնչով չի նմանւում նախորդին. բազմազանութիւնը գեղեցիկ է. իսկ երբ հեռուից, Կապուտանի միւս ափից երևում է Դիւնէյի մշուշապատ լեռների շարքը

Իսկական կուտուրան մուրում է ուրիշներից, փշտնքներ սպասում Ահա հէր է հասցրել մեզ Դուղուրութիւնը, պարծենկոտ, կեղծ դաստիարակութիւնից ալանդակուած հայեր!

Մ. Խմբ.

հանդիպակաց ուղղութեամբ, տեսարանն էլ աւելի հիանալի է դառնում:

Մենք անցել էինք Երեք աղաջ (մօտ 20 վերստ) ճանապարհ և մօտենում էինք Կուշչիի նշանաւոր գետգիւղին. ճանապարհը պարզ երևում էր իր բոլոր պտոյտներով՝ մինչև վերելքի ամենաբարձր մասը, թէև բաւական հեռու տարածութիւն էր: Ճանապարհի ամենահեռու և բարձր մասը յանկարծ սկսեց սեանալ, մենք կարծեցինք, թէ նախիր է գալիս, սակայն հետաքրտակը պարզ ցոյց տուեց, որ դրանք նախիր չեն այլ մարդկանց մի ահագին բազմութիւն, բոլորն էլ ոտքով. լեռան միւս կողմից դեռ շարունակում էին գալ: Արդէն վատ նախագգացումներով սողորուած, որ արդիւնք էր ժամանակի տխուր դէպքերի աղղեցութեան, մենք, բոլորս էլ զարմացած և միաժամանակ վախեցած, իրար նայեցինք. թուրք ձիապանները նկատեցին մեր երկիւղը, «բու նամանայ դըր, պարըն» (այս լինչ բան է, պարոն) հարցրին մեզ. մենք ոչինչ տեսել չկարողացանք: Մեզ հետ եղող ասորի բժիշկը դիտարկով մէկ էլ նայեց և յանկարծ «հա, հա, հա», ասաց, «բննի շապնայ մինուփրեթ Օսմանլու րիկինայ» (սրանք Տաճկաստանից փախած ջէլօներ են) ասաց նա իր ընկեր ասորիին, նոյնը յետոյ մեզ հայերէն կրկնելով: Զէլոները Տաճկաստանում ապրող ասորական մի ցեղ է, կառավարութիւնը ճնշում է նրանց, իսկ քիւրդերը, իրանց շարունակական թալաններով, նրանց յուսահատեցրել էին վերջապէս, ուստի թողել էին ամեն բան և մերկ ու քաղցած Պարսկաստան անցել: Ուրմիայի փողոցները մի քանի շարաթ սրանց համար պատսպարան էին դարձել. այժմ էլ մի մասը գիւղերում էին ցրուել, իսկ այս մեծ խումբը մտադրուել էր Կովկաս գաղթել: Այս մասին արդէն Սալմաստ լուր հասել էր: Մենք հանգստացանք: Կամայ կամայ մեզ հասաւ անօրինակ կարաւանի սկիզբը. ամեն հասակի ու սեռի արարածներ, բոլորն էլ կիսամերկ, արեւից խանձուած, բոլորն էլ միագոյն շորերով փաթաթուած. ոչինչ կար հետները. փոքր երեխաներին քամակները կապած, մի փայտ ձեռներին, գնում էին նրանք դանդաղ, առանց կանգնելու. սարսափելի էր նրանց դէմքերը, բերանները կիսաբաց, միայն ատամների շարքն էր սպիտակ: Կանանց գլուխները ծածկուած էր, իսկ աղջիկները, կարելի է ասել, գլխաբաց էին, նրանց գագաթի վրայ կար մի բոլորի շորի կտոր, որը բարակ կապով ծնօտի տակն էր կապած: Իսկապէս դժբախտների մի ժողովածու էր, որ անցնում էր մեր առաջից, մենք կանգնել էինք, նրանց ճանապարհ էինք տալիս, մի քանիսը, ինչ որ խօսքեր տեսնում, ձեռները մեզ

պարզեցին: Երեխաները թափուեցին մօտիկից հոսող առուի վրայ, մի քանիսն էլ գաղտագողի մտան սեխաստանի մէջ. տէրը մի քար վերցրեց, նրանց բոլորին դուրս փախցրեց: Մեր ուղեկից ասորիները խօսեցին նրանց հետ, բայց շատ բան չը հասկացան, նրանց լեզուն ուրիշ գաւառաբառ էր և քրդերէնով խառն: Գրեթէ բոլոր մեծերը իրանց քամակներին ունէին փոքրիկներ կապած, թէև սեպտեմբերի վերջերն էր, բայց տօթը նեղում էր խեղճ փոքրիկներին, նրանք բոլորն էլ գլուխները ետ էին ձգել, ամեն բանով նման էին թափառական բոշաների, մենք այդպէս էլ պիտի կարծէինք, եթէ մեզ սոսոք չլինէր նրանց մօտին:

Վերջապէս ցար ու ցրիւ եկան անցան բոլորը, համարեցինք, երկու հարիւրից անցաւ: Հեռուից ճանապարհը մեր ետեւում դարձեալ սևին էր տալիս: Դժբախտները չէին կարող հասնել Սալմաստի գիւղերից մէկն ու մէկը. օրը երեկոյանում էր. երեկ գիշերը չիմաններում կը մնային. թշուառները հացի պաշար էլ չունէին հետները, ինչ պիտի անէին...

Մենք շարունակեցինք մեր ճանապարհը. բարձրացանք աղբիւրներով առատ գետիւղը և շուտ եկանք գէպի Ուրմիա: Ճանապարհը շատ զառիւլայր է. այդտեղ հանդիսատես եղանք մի սարսափելի ծանր աշխատանքի. Արաբօրի ամի քարանձաքերից ջրաղացի քարեր էին տանում Ուրմիա, մօտ, 100 զոյգ կը լինէր. ամեն մի քարին մի զոյգ գոմէշ լծած. անասնի զլժուարութիւններով ցած էին իջեցնում սարից. պատահում էր, որ հսկայ գոմէշները անկարող էին լինում պահել նոյնքան հսկայ քարերի թափը, ու նրանց հետ միասին ճանապարհից դուրս էին գալիս. գլխուքում կողքի հեղեղատը, իսկ այդ տեղից դուրս բերելն էլ արդէն տաժանիկի աշխատանքը տանապատկում էր: Եթէ լինէր կանոնաւոր ճանապարհ, որքան քիչ ջանք հարկաւոր կը լինէր:

Անցանք նեղ հորիզոնից դուրս, յանկարծ, մեր աչքի առջև պատկերացաւ աշխարհիս հազուագիւտ տեսարաններից մէկը. հրաշալի կուպուտանք իր տարածութեան մեծ մասով փռուած էր մեր ոտներին տակ. մի քիչ հեռու, կապոյտ տարածութեան զրկում, երեխաների նման դուրս էին ցցել իրանց զրկանքը բազմաթիւ մեծ և փոքր կղզիները. աւելի հեռուն, մեր գէմուղէմը, փռուած էր գեղեցիկ Գիւնէյստանը, Թաւրիզի ու Մալաղայի լեռները, իսկ մեր կողքին, կիսաշրջանաձև տարածւում էր Անդալի մահալը, շրջապատուած Միւրիւթ, Սոմայի, Բիւրդիստանի և Ալզաշ լեռներով. Դարբանդ, Բէհրութ և Կրդկալա հրուանդանները երկարում ծովի մէջ և աւելի բոլորչի

են դարձնում ցորենաշատ Անգալը: Ծոփն էլ, հեռուոր երկրներն ու լեռներն էլ, Անգալն էլ, հրաշալի են, ու միայն... վայելողն է որ տխուր տպաւորութիւն է թողնում: Մէկ անգամից տպաւորութիւնը կորչում է, երբ մարդ թշուառ թուրք գիւղերը և նրանց էլ աւելի թշուառ բնակիչներն է տեսնում: Հասանք Կուշչի գիւղը, ես ժամանակից օգտուեցի, վերցրի ձեռքի պայուսակա և դուրս եկայ թուրքերի մէջ: Յոյց եմ տալիս տեսարանները, լեռներն ու ծովը և տեղեկութիւններ հաւաքում, բայց նրանք ոչինչ չեն ուզում յայտնել, շրջապատել են ինձ և բոլորի ուշքը պապղուն պայուսակիս վրայ է. փսփսում են իրար հետ. եթէ մէկն էլ մի կարճ պատասխան է տալիս իմ հարցին, միւսները սաստում են նրան և արգելում: Մօտեցաւ մի սէյիդ, միւսները մի կողմ քաշուեցին. «ինչո՞ւ ես գրում» հարցրեց ինձ ու միւսներին հրամայեց հեռանալ ինձնից: Երևի Կովկասի գէպրերը հրէշաւոր հէքաթներով սրանց էլ էր հասել, ևս զարմացայ և խոհեմութիւն համարեցի էլ հարցումփորձ չանել. նրբունք, իրանց վաս երևակայութեամբ, ինձ ընդունել էին իբր մի քաղաքական գործակալ, այդպէս ասաց ինձ մեր ձիապանը միւս անուօտեան, նրան խօսեցրել էին տեղացի թուրքերը, գուցէ ակնոցս, մօրուքս, գլխարկս և պայուսակս (որին նրանք «Չէբախանայ» էին կարծել), առիթ էին տուել նրանց այդ անհեթեթ կարծիքին:

Գիշերով կարեցինք անցանք Անգալը, լուսաբացին հասել էինք գէմի Աղլաշ լեռնաշղթայի ստորոտը. օդը ցուրտ էր, մեր կտրավանը զանգաղութեամբ առաջ էր գնում ծովափով, որի ալիքների թոյլ ձայնը մթութեան մէջ լսւում էր: Հեռուից եկող ուղտերի զանգերի ձայնը, մեր գիշերային ճանապարհորդութիւնը՝ մեզ տեղափոխեցին հին ժամանակները, իսկապէս ամեն բան խորհրդաւորութեան աղդեցութեան տակ էր դնում մեզ, մէկ մէկ պատկերանում էին կարգացած արևելեան ճանապարհորդութեանց նկարագրութիւնները. կտրավանով ճանապարհորդութիւնը, ծովի ափով, գիշերանց, արևելքին յատուկ մի հրապշյր է, որը չի կարելի ձեռք բերել ոչ մի կերպ ուրիշ տեղերում: 50-ից աւելի էր մեր ուղեկիցների և նրանց զրաստների թիւը. և սակայն բոպէն այնքան տպաւորիչ ու խորհրդաւոր էր, որ ոչ մէկս չէինք խօսում, մինչև իսկ ձիապաններն էլ իրենց անախորժ «գէհ, գէհ»-ները կտրել էին: Ուղտերը զանգաղորէն անցնում էին. մթութեան մէջ նրանք ստուերների պէս հրէշաւոր էին երևում. իսկ զանգակները, ծ, ինչ անուշ օրօր էին ասում մարդու երևակայութեանը: Մենք վայելում էինք արևելքին յատուկ այս հաղուազիւտ հրապոյրը

մի տեսակ նիրհի մէջ ընկղմուած, աչքներս կիսաբաց: Սակայն մեզ պահում էր և մի ուրիշ անակընկալ հո. մինչ մենք մեր օրօն էինք նիրհում, արդէն լոյսը առատացել էր և արշալոյսը ռսկեղօծել ու կղզիարնակ հաւքերը իրանց թափահարումն ու կանչն էին սկսել: Մօտիկ կղզիներից լուում էր նրանց թևերի ձայնը շատ պարզ, իսկ բարեկոնեան երգասացութիւնը տարօրինապէս քաղցր էր հնչում մեզ: Արևն էր պուկաս միայն, որ բնութեան հոյակապ սքանչելիքը արդէն անորկացնէր ժարդու տկար երեսկայութիւնը իր վեհութեան հանդէպ: Կըզ-կալա հրուանդանին հասած չհասած, որտեղ ճանապարհը ուղիղ ծովափն է քերում, արևը «ծաղկեց» իր աննկարագրելի փայլով. ինչ գեղեցիկ էր Կապուտանը, իր ժշուշ շղարշով, արևի անդրանիկ շողերի մէջ, իր ժպիտներով արևի անդրանիկ փայլի մէջ: Մեծ լճերի տեսարանը՝ արեածագի կամ մարքի ժամերին, աւելի հրաշալի ու չքնաղ է քան ծովերի՝ նման տեսարանները որոնք միայն վեհութիւն ու պատկառանք են առընում, մինչդեռ լճերը, իրանց շրջապատի տեսարաններով, որոնք չեն ծածկում հորիզոնի սակ, այլ գեղաբաղան նորութիւններով ու յատուկ ցուցադրում են ձեր հանդէպ, պատճառում են և՛ հրճուանք և՛ քնքշութիւն, և՛ ինչպէս ասում են, Գրացիա ու նազանիութիւն միաժամանակ, որոնք խաղում են մեր արեւելցիների սրտերի հետ. այնինչ ուղիւսն ու տեսարանը կարող է մեզ դուր չգալ ու վախեցնել...

Այս համեմատութիւնը առաջ բերեց ասորի բժիշկը, որ նոր էր վերադառնում Ամերիկայից, նրա ասելով ոչ մի տեղ այսպիսի գեղեցիկ տեսարանի չի հանդիպել, թէև եղել է շատ շատ տեղեր: Մեր ձիասանը, որ մեզ մի քանիսի կովկասցի էր ընդունում, ինքն էլ յայտնեց իր հիացումը անպարտձ խօսքերով, որին կպցրեց մի քանի ակնարկութիւններ հայ-թուրքական յարաբերութիւնից.— «Սահար ¹⁾ նա խճշ գի, բախ բիլիմ բու Իրանդա հար զադ դա բէլա եախշի դըր. ամա ինդի քի օրթալըխ... օ թայդա սիդ հախշի օլմադի»... (պարոն, ինչ լմւ է. տես, մեր այս Իրանում ամեն բան էլ այսպէս լաւ է, բայց հիմա որ մէջտեղը... այն կողմում (Արաքսի միւս ափում) դուք լաւ գործեր չէք տեսնում. զիտեմ, բարձրութիւնդ նրանցից չէք, բայց դարձեալ լաւ բան չկալա...): Նա իր խօսքը կտրեց նոյնպէս անկողի կերպով, ինչ-

¹⁾ Պարսկաստանում թուրքերը երոպական տտրագով ամեն մարդու էլ սահաբ, արբար, ադա և այլ կոչականներ են տալիս. այս բոլոր բառերի իմաստը մէկ է և համապատասխանում է «տէք» բառին—պարոն:

պէս և սկսել էր. աշխատեցի խօսեցնել և խօսել, բայց այդ բոլորէն նրա մեծ եղբայրը բարկութեամբ խփեց նրա թիկունքին և իբրև թէ բանի դրաւ:

Այս ակնյայտնի գգուշութիւնն ու ծածկամտութիւնն վատ ազդեց և փչացրեց մեր հիանալի տրամադրութիւնը...

Վերջապէս անցանք Ալ-Գաշ-Կըլ-Կալան ու մտանք Ուլ-միա. ամենագեղեցիկ ու պտղաբեր մի դաշտավայր՝ բարձր լեռներով շրջապատուած: Ծովափին ցցուած է մի մեծ քարաբլուր Զամբիւլ-գալ անունով. իսկ դաշտի կետրոնում ցցուած է Բախշի-Կալան, որը իբր թէ ստորերկրեայ անցք ունի մինչև Կըլ-Կալան, որի միջով առաջինի երիտասարդ տէրը սիրային յարաբերութիւն է ունեցել վերջնի տէր իշխանուհու հետ: Բարձրացանք Կըլ-Կալան, յայտնուում են աղիւսի հետքեր մեծութիւնը—է ոռոսական քառակուսի տրչինի: Այս լեռը ինչպէս և մօտիկ Գէշիշ գաղն ու Գեջ-Աւա լեռները գտնուում են Սոմայի բլրերի ձեւքում: Գեաջ Աւից հանում են շատ սպիտակ և փխրուն քար, որը դործ են ածում գերեզմանների համար: Այնտեղ կայ և կրահանք: Ճանապարհը, մինչև Ուլ-միա քաղաքը ընթանում է հիանալի ծառուղիներով՝ բացառապէս բարդի և ուսի ծառերից, տեղում է 5 ժամ և կտրում է դաշտը գրեթէ ուղիղ մէջտեղից: Այդ դաշտը ներկայացնում է մի հրակայական անվերջ այգի, ջուրը առատ է, Նազլու և Շահար չայերը բաւականացնում են:

Մենք թողինք գլխաւոր ճանապարհը, որպէսզի հայկական գիւղերը շրջենք: Պարսկահայ գիւղացուն շատ զթուար է տարբերել պարսկից. մինչև անգամ քահանաները գործ են ածում թուրքի մեծ փախախներ: Մեր հանդիպած Ռահիմարաղ. Իքի-Աղաջ, Նախջևան-թափայ և Գեարգարաղ գիւղի հայերը երկիւղի մէջ էին. մեր կարծիքով նրանց վախը անհիմն էր. չէր կարելի նրանց թուրքից վաճաղանել. տարազը աճրող-ջապէս նման, ածելուելը նոյնպէս, թուրքերէն խօսում են շատ վարժ. նրանց վախը տեղացի թուրքերից չէր, այլ Եկուոր սարբազներից, որոնք իբր թէ, գալիս էին կոտորելու. մանաւանդ ուրմեցի հայը այնքան նմանուել է թուրքին ամեն արտաքինով որ միմիայն շատ քչերն են նրանց վաճաղանում. ուր մնաց եկուոր սարբաղը. պէտք եկած տեղերում նրանք ամենայն աջողութեամբ թուրք են ձեռնում ու խաբում շատերին: Այդ երկիւղների պատճառով արդէն թագցրել էին թանկագին իրերը այգիներում. խեղճերը անյոյս դուրթեան մէջ էին և մեզնից յուսալիր տեղեկութիւններ էին խնդրում. բայց ճիւղեղից. Կովկասը միշտ նսրանոր աւերների բօթեր էր հասցնում մեզ: Այդ գիւղերը

գտնուում են Նազլու-Չայի շրջանում և ամենաբնորոշ աղբյուրներն ունին: Նախջևանի մօտ գտնուում է մի մեծ բլուր, որի մի մասը քերել տարել է գետը և որից շատ հնութիւններ են գուրարեւում, երկաթեայ գործիքներ և զրամներ:

Ուրմիոյ դաշտի այս մասը վատառողջ է, որովհետև մի քիչ ճահճային է և բրնձի ջրերը թէ օդն են ապականում և թէ դետի ջուրն են անգործածելի դարձնում խմելու համար. ամառուայ ընթացքում գիւղացիները հորի ջուր են գործածում, որ շատ անախորժ է: Նազլուն առատութեամբ պարունակում է երկու տեսակ միջակ մեծութեան ձկներ, որոնցից միայն հայերն են օգտուում. թուրքերը չմորթուած կենդանի չեն ուտում և ձուկը այդ տեսակետով հարամ են համարում:

Անյնելով Շահար-Չայի շրջանը մօտենում ենք քաղաքին հիւսիսային կողմից. բայց մինչև պարսպի դուռը քաղաքը տեսնել չի կարելի, ծառերը թոյլ չեն տայ մի քիչ հեռուն անգամ տեսնել, դաշտի և քաղաքի դիրքը դիտելու համար անհրաժեշտ է մի բլուր գտնել, թէև քաղաքի դիրքը բաւական բարձր է: Քաղաքը շրջապատուած է հողէ բարձր պարսպով, ունի հոյաւկապ գոտեր, հիւսիսային և արեւմտեան կողմերից փորուած կայլայն խրամատ: Քաղաքի ամեն ինչը, և՛ կեցոտութեամբ և՛ փողոցները, և՛ տները զուտ պարսկական են. շուկան՝ էլ աւելի հարազատ: Իբրև վաճառաշահ քաղաք Ուրմիան սկսել է առաջադիմել. բանկային և տնտեսական տներն աւելանում են. հեռախօսը, մի քանի ամսուայ մէջ, իր ցանցերով քաղաքը պատեց. շինուում են մեծ քարվանսարաններ: Ժողովուրդը վերին աստիճանի խաղաղասէր է, թաւրիգեցի թուրքի վայրենութեան նշանը չունի. աւելի պատկառանքով է վերաբերում դէպի օտարը, ամբողջապէս գտնուում է սէիդների ազդեցութեան տակ. կրթուած գասակարգ դեռ գոյութիւն չունի, թէև խաների և խանուհիների տներում մուտք է գործել մի քիչ ւերոպականութիւն»: Կան բաւական թուով ուսաստանցի խանութպան թուրքեր, որոնք ամեն կերպ ցանկանում են դրդումներ առաջ բերել և կարողացան էլ մի քանի «շուլուղներ» անել. սակայն դատաւոր Իմամ-Գուլի-Միրզա Շահզադան ամեն անգամին էլ կարողացաւ կտրուկ միջոցներով դիմացն առնել. առհասարակ այս Շահզադան յայտնի է իբրև կառավարչական մարդ. նա իր այդ ընդունակութիւնը ցոյց է տուել Արգարելում, շահիսավան ձիաւորների յայտնի կուռի ժամանակ. անցեալ տարին էլ երբ կառավարութիւնը տեղիս մուշտէիդ Միրզա-Հիւսէն-Աղային, սպանուած միսիօնար Լաբրիի խնդրով, թաւրիդ էր կանչում և սա չէր ուզում գնալ, Շահզադան թնդանօթներով սարձնոյեմբեր, 1906.

սափեցրեց աղմկող ժողովրդին և միանգամայն մի ամենալատ եղանակում ստիպեց մուշտէիդին դուրս գալ քաղաքից:

Ինկատի առնելով այն հանգամանքը, որ Ուրմիայի հայերի խիստ նուաղ լինելը կարող էր առիթ դառնալ իրանց մինչև վերջին շունչը կոտորուելուն և այս դժուար բան չէր, մենք միայն կառավարութեան և Իմամ-Գուլի-Միրզային ենք պարտական, մանաւանդ վերջինս: Մակայն ամսոս որ նրա հետանալու լուրը վերջի վերջոյ ճշտուեց և բոլոր քրիստոնեաների ներկայացուցիչների հեռագիրները անհետեանք մնացին: Դրա փոխարէն իր տեղում պինդ հոտել է Սալմաստը քարուքանդ անող սարսափաւոր Մուշաւլալը, որը այստեղ էլ է քարուքանդ անում. վերջին օրերում «մամուլներ» էր ուղարկել հայ գիւղերը խուզարկելու և կաշախները բռնելու նպատակով, այսպիսի լարուած օրերում սրա այս վարժունքը, որ պարզապէս մի քանի թիւման զուտ տուգանք առնելու նպատակով էր միայն, մեծ երկիւղ պատճառեց հայ գիւղացիներին: Մամուլները «հարս ու աղջիկ» էլ են պահանջել:

Չնայած իր բոլոր կեղեքումներին, որի վրէժը հայերն են գլխաւորապէս, սկսել է պատրաստել տալ մի հանրագիր, որի զօրութեամբ պիտի կարողանայ նորից հաստատուել իր պաշտօնում, որպէսզի Ուրմիան էլ Սալմաստի օրին ձգի. մեր վաճառական դասից մի քանի հայեր ստորագրել են այդ հանրագրին, գործակալ վարդապետը մերժում է, չի ստորագրում, գործակալական խորհրդի անդամը, գլխուղի հոգաբարձուն ստորագրում է...:

Ուրմիա քաղաքի փոքրիկ հայ գաղութը վերջին 10 տարուայ ընթացքում է կաղմուել. եղել են տեղացի հայեր, բայց չեղածի հաշուով: Քաղաքի մօտ 60 տուն հայերը պարագում են վաճառականութեամբ, արհեստներով և մի մասն էլ զանազան հիմնարկութիւններում ծառայողներ են. աչքի են ընկնում վանեցի, սալմաստեցի և թաւրիդեցի եկուորներ. լինելով տարբեր բարոյական և շահադիտական հայեացքների տէր, այս երեք մասերը խորթ են իրար նկատմամբ. պառակտում կայ մէջները, ուստի, փոխանակ գաղթային կենսունակութեան յատուկ առաջադիմութեան շաւղի մէջ մտնելու, խիստ ետ են մնացել: Անցեալ տարի, երբ Էջմիածնից ուղարկուած գործակալ Արլահամ վարդապետը նոր էր եկել, ժողովուրդը ոգևորուած շրջապատեց նրան և սկսեց ուրախալի շարժում. պառակտուած մասերը, իրանց հաշիւները մի կողմը թողնելով, սկսեցին ամեն կերպ աջակցել գործակալին: Մակայն վարդապետը, իր կատարեալ անճարակութեամբ, չկարողացաւ օգ-

տուել ժողովրդի տրամադրութիւնից և օգտակար գործերի ձեռնարկել: Նա հէնց առաջուայ շարաթուայ ընթացքում երեւցաւ իր խորին տգիտութեամբ և ապիկարութեամբ: Զարմանալի բան. ամբողջ պարսկահայ ժողովուրդը լրագրութեան և առանձին համակների միջոցով չկարողացաւ էջմիածնին հասկացնել, որ Պարսկաստանում հոգևորական ներկայացուցիչը կառավարական բարձր պաշտօնեայ է, հարկաւոր է ընտրովի մարդիկ ուղարկել, որ կարողանայ իր «անսահման» իշխանութիւնից օգտուել: Դի որևէ ամայի վանքի անկիւնում տարիներ զլուխ պահած մի խեղճի չի կարելի ամբողջ Ուրմիան «ընծայել»: Նւայդ մարդը պատճառ դարձաւ, որ պառակտումը աւելի սաստկանայ և հասարակութեան օգտակար գործերը երեսի վրայ մնան:

Ուրմիոյ գործակալութեան մօտ 1500 տուն հայ ժողովուրդը, փոխանակ գործակալին դիմելու իր բողոքներով, սարփարտատին է դիմում: Իսկ սարփարտատին դիմելը՝ նշանակում է 10—20 թումանից ձեռք վերցնել և ուրիշ զրկանքներ կրել: Գիւղերից շատերը չեն ուղում «սլտդի» հոգևոր հասոյթը վճարել, պատճառաբանութիւնը շատ իրաւացի է. Բարանդուզի շրջանում երեք տարուց ի վեր պողի չի հաւաքուել: Իսկ Թաւրիդի անտէր առաջնորդարանը խօ, ոչ մի օգնութիւն չի տրել այստեղի հայ ժողովրդի հոգևոր պէտքերին: Ո՞ւր են նախկին առաջնորդները, որ իրանց արձակած թոյլ հրամանով՝ Թաւրիդ էին քաշ տալիս ամենաաղքեցիկ գիւղատէր աղային անգամ: Թաւրքերը՝ իրանք էլ խոտովանում են, որ «խալիֆայի» սարսափեցնող անունը այժմ ընկել է: Այդ հեղինակաւոր պաշտօնին վերջնական հարուածը տուեց ներկայ գործակալ Աբր. վրդ. Ռշտունին՝ իր... մարդ չգիտէ լո՞ւն մեղմ անուն տայ... իր անպէտք պաշտօնավարութեամբ:

Մի կողմ թողնելով գիւղացիների վիճակի մասին խօսելը, բաւական է քաղաքացիների վիճակի մասին երկու խօսք տալ: Տարիներ առաջ ամեն բան վանեցիների ձեռքին է եղել. այժմ նրանք՝ ետ են մղուած և առանձնացած. եկեղեցին երեսի վրայ է մնացած, այստեղ մինչև անգամ ներկայացման (?) ժամանակ թէյ են ծախում հանդիսականներին: Արգէն կար «Գրիգոր Զանգեան» անուն մի գրադարան-ընթերցարան (որի անունով Թիֆլիզում հաւաքուած 700 կտոր գրքերից միայն 90-ը տեղ հասան—գրադարանին բաժին եղան), մէկն էլ գալորոց է սկսել կազմել՝ «աշակերտական գրադարան» անունով. առանձնացած վանեցիներն էլ կազմեցին մի ուրիշ գրադարան՝ Մ. Աւետիսեանի յիշատակին՝ նոյն անունով. հերթը չէ՞, ոչ, դեռ

մէկն էլ կայ. Թաւրիզի Հայունհայ Ընկերութիւնն էլ, երբ քա-
քաքի դպրոցը իր ձեռքից դուրս եկաւ, անհրաժեշտ համարեց
մի գրադարան էլ ինքը կազմել, որպէսզի իր պահած դպրոց-
ները օգտուեն, և ահա հիմնուեց «Սահակ—Մեսրոպեան» գրա-
դարանը: Այս չորս գրադարանները իրարից հեռու են 4—5
քայլ. բոլորի մանր մունր բրօշիւր—գրքերի թիւը 1000 ի չի
հասնում. իսկ յաճախողների թիւը շարաթական... 0, 1, 2-ից չի
անցնում: Ահա պառակտումի գեղեցիկ հետեանքը, չորսը իսկի
մեկը չարժեն: Իսկ եթէ այս չորսը իրանց գոյութեան ապա-
հովութեան համար հանգստակութեան, ժողովարարութեան և
այլն ի դիմեն հազիւ 35—40 հոգու շրջանում առանձին, այն
ժամանակ իրապէս «ազգերնիս կը յառաջադիմէ կոր» և այդ
գրադարաններն էլ կը յառաջադիմեն...*)

Մի քանի անհամներ գեռ նախանցեալ տարուանից մտա-
դիր էին քաղաքի դպրոցը իրանց միջոցներով ու հսկողու-
թեամբ պահել և դուրս բերել Հայունհայ Ընկերութեան ձեռ-
քից. շատ գեղեցիկ միտք, մանաւանդ, որ պ. Ա. Մելիք-Ազար-
եանցը տարեկան 300 բուրլի նպաստ է տալիս. այս բանը դիւ-
րութիւն էր տալիս դպրոցի թէ բիւզճէն և թէ ծրագիրն ըն-
դարձակելու: Այս տարի աջողուեց այդ, սակայն ծրագիրն և
մանաւանդ բիւզճէն այնքան ընդարձակուեցին, որ հոգաբար-
ձութիւնը շուտաւ է մնացել. փոխանակ կամայ կամայ զործը
հիմնաւոր սկսելու և ապա ընդարձակելու, հոգաբարձուները
մէկ անգամից իրանց թուիչքի տուին, այժմ նշանները ցոյց են
տալիս, որ նրանց զործը մի տարուայ կեանք հազիւ ունենայ,
բաւական խոշոր բիւզճէն ծածկել են ուզում վստազան արուես-
տակեալ միջոցներով, որը դժգոհութիւն է առաջացրել ծը-
նողների մէջ: Աւելի զօրեղ դժգոհութիւն առաջ բերեց դպրոցի
վարչութեան մի նոյնպիսի սխալ թուիչքը, ինչպիսին հո-
գաբարձութիւնն էր կատարել—այդ թուիչքը սխալ մանկավար-
ժական էր. գուեցեքական մեթոդը կարելի է այստեղ պատու-
աստել շատ-շատ նոր դպրոց ընդունողների վրայ. իսկ եթէ
12-ից 18 տարեկան տղայ ու աղջիկներին այդ ձևով մէկ ան-
դամից առանց հսկողութեան թողնենք միասին խաղաժիջոցնե-
րում, բաւական անախորժ անպատեհութիւններ տեղի կ'ունե-
նան...: Համոզմունքով համաձայն լինելով բոլորովին նոր սիս-
տեմի դպրոցական դործունէութեան, չենք կարող այդ աչքա-
թող եղած կէտը չչեշտել: Այսբանի պատճառով տարուայ կի-

*) Երևելի «Կուլտուրականութիւն», ցնծաւ «ազգասէր» և տիրացու հայ:
Ծ. խմբ.

սում աշակերտներն սկսեցին պակասել. հին հասկացողութեան տէր մարդիկ չեն կարող տանել և դպրոցի ուրիշ փոփոխութիւնները:

Ուրմիոյ հայերի մէջ գուցէ անհնար լինէր մի ուրախալի բան գտնել և արձանագրել, եթէ չլինէին մի խումբ երիտասարդներ: Այդ երիտասարդների շնորհիւ է, որ կազմակերպւում են շնորհալի ներկայացումներ, յետոյ և դասախօսութիւններ կը լինեն. ափսոս որ կարծես անխուսափելի դարձած պառակտումը բաժանում է սրանց էլ: Այդ գուցէ մեր ցեղական արամն է...

Անհրաժեշտ է մի քանի խօսք էլ ասել Թաւրիզի Հայուհեաց պահած գիւղական դպրոցների մասին: Այս դպրոցները 7—8 տարուց ի վեր սկսելով՝ Ուրմիայի և Բարանդուզի գաւառում հասել են 7-ի, որոնցից օգտւում են 11—12 զիւղեր. սակայն, տարաբախտաբար, հէնց իսկոյն ցայտուն կերպով աչքի է ընկնում աննպաստ հանգամանքների մի շարք, որոնք այնքան էլ բաւարար արդիւնքի չեն հասցրել եղած ծախսերն ու ջանքերը: Այս աննպաստ հանգամանքները կարելի է երկու տեսակի վերածել. մէկը պատճառները պէտք է ընկերութեան գործունէութեան մէջ որոնել. իսկ երկրորդինը՝ գիւղացիների տնտեսականի և անծայր տգիտութեան ու այնպէս հեռաւոր անկիւն տեղում լինելու մէջ:

Ընկերութեան վարչութիւնը պաշտօնեաներ ընտրելու գործում շատ միամիտ ու անփոյթ է եղել, տարիներ շարունակ ուսուցչական պաշտօն են վարել այնպիսի անձեր, որոնց բարոյական ու բարեխղճութեան մակարդակը զգուշիկ է եղել եղել են իբր թէ «տեսուչներ», դարձնալ պատահական մարդիկ, որոնք միաժամանակ քաղաքի ուսուցիչն են եղել և պարտական են եղել շրջել 40—50 վերստ տարածութեան վրայ զբոսած գիւղերի դպրոցները. ասենք թէ այս էլ հնարաւոր լինէր, նա ինչպէս կարող էր մի քանի օրում վերահասու լինել ուսուցչի աշխատունքին, մանաւանդ, որ դպրոցները երկսեռ են և առանձին:

Տեղացի ժողովրդի հետ կապուած աննպաստ պատճառները աւելի կործանիչ են եղել. այս գիւղացու համար տղան ու աղջիկը տաւարից աւելի ստոր արարածներ են. այն ժամանակ երբ սրանք այլ ևս չեն կարող տաւար արածացնել կամ ուրիշ աշխատանքի դնալ, այսինքն երբ ձիւնը գետինը ծածկել է, ապա, տնից դուրս անելու համար, ուղարկւում են դպրոց, այս տևում է առաւելն 3—4 ամիս միայն: Ինչ խօսք, որ ստոր պաշտօնեայի համար այս ձեռնտու է... Մինչև այժմ գիւղա-

ցին ոչ մի կերպ չի մասնակցել դպրոցի ծախսին, մինչև անգամ վառելափայտը, որ այն քան առատ է, չի ուղղում տալ. ամեն ինչ ձրի է ստացել: Ժողովուրդը ճրիակերութեամբ փչացել է:

Այժմ, երբ պ. Տիգրան Աֆրիկեանը հոգում է դպրոցներից մեծ մասի ծախսերը. աւելի լուրջ հոգս է տարւում. վարձուել է մի տեսուչ, որ ազատ է դասերից և շարունակ պէտք է շրջի դպրոցների վրայ. ջանքեր են անւում գիւղացիներին աւելի մեծ չափով մասնակցել տալ ծախսերին. տեղիս գործակալի անունով փորձ եղաւ ստորագրութիւն առնել ծնողներից, որ իրանց որդիները 9 ամիս դպրոց ուղարկեն: Ինչ որ մի քանի տարի առաջ պիտի լինէր, այժմ է լինում:

Կարելի է յուսալ, որ այսուհետեւ գործը աւելի արդիւնաւոր լինի. քանի որ մեծ փոփոխութիւններ են լինելու պաշտօնավարողների մէջ, ափսոս կը լի ի գործը կիսատ թողնել և գործունէութիւնը տեղափոխել ուրիշ տեղ... Միայն, վարձատրութեան չափը պէտք է աւելացնել. որովհետեւ ոչ մի պատրաստ մարդ այդքան չնչին ուժակով չի գայ այստեղ պաշտօնավարելու, եթէ պատահմամբ ընկաւ էլ. հազիւ մի տարի մնայ: 7 դպրոց պահել 14 պաշտօնեայով և տեսչով ու ամեն ծախսերով, դրան յատկացնել 2000 թումանի մի փոքրիկ բիւզնէ... Ի հարկ է պարզ է, որ շատ էլ արդիւնաւոր չի լինի մինչև այսօր եղած գործունէութիւնը: Նպատատակայարմար կը լինի փոխել բոլոր հնացած ու թուլացած պաշտօնեաներին. տեսուչ վարձել անպայման 4 տարի ժամանակով ու նրան տալ «հէօքէ», որով նա կարողանայ իր բոլոր բարեփոխութիւնները ընդունել տալ գիւղացիներին: Այս մարդիկ խոնարհւում են միմիայն ոյժի առաջ, և ոչ յորդորների: Այդպէս են սովորել...

Գալուստ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՑ

Համոռոտ տեսիլն գեղարուեստի դարձմունքն սկիզբէն մինչեւ նորագոյն
օրջաններ *)

Յեղական, կլիմայական, տեղադրական և այլ կարգ մը
բարդ պայմանները ինչպէս տեսանք՝ միշտ նշանաւոր և խոշոր
ղեր մը կատարած են գեղարուեստներու մէջ, յատկանիշելով
իւրաքանչիւր ցեղի արտադրած գործը և ձգտումները:

Անգլիան իր մասնաւոր պայմաններով՝ իստանուածքով,
եթէ կարելի է ըսել՝ հակուած է Արուեստը ըմբռնելու հոլան-
դացիներու հայեցակէտէն, իբրեւ համանման պայմաններով քոյր
ազգ մը:

Իրանց գեղագիտական (էսթէթիք) հասկացողութիւնները
համանման են հոլանդացի արուեստագէտներու ըմբռնումին,
սա տարրերու թեամբ միտյն, որ այստեղ ընտելեան մանրադրն-
ներն ուսումնասիրութիւնը, պաշտումը հասած է աւելի ծայրա-
յեղութեան:

Անգլիացի յայտնի գեղագէտ մը՝ Ճոն Ռիւքէն անցեալ
դարու կէսին իր դասնանքը բացատրած է յստակօրէն, դա-
տապարտելով յունօ-լատինական սկզբունքը, և գտնելով որ
«հիւսիսի հանճար»-ին (այսինքն իրանց) արամազծօրէն հակա-
ռակ է ան:

«Ժայռերու իւրաքանչիւր դատաւորութիւնը, հողի իւրա-
քանչիւր փոփոխութիւնը, ամպերու իւրաքանչիւր տեսակը պէտք
է ուսումնասիրուի և ներկայացուի (նկարչութեան միջոցով) եր-
կրարանական և օգերեսութարանական ճշմարտութեամբ մը»:

Անգլիացի գեղագէտի կարծիքով, նկարիչը ուրեմն՝ պար-
տաւոր է լինել լոկ ընդօրինակող մը և աւելի նեղ սահմանե-
րու մէջ զրուած, որքան չէին հոլանդացի արուեստագէտները:

Նախորդ հին դարոցներու՝ մանրանասնութիւնները ընդ-

*) «Մուրճ», 1905, №№ 4, 6, 7, 9.

հանուր գեղեցկութեան և ճշտութեան զոհելու՝ սկզբունքին տրամագծօրէն հակառակն է սա:

Անգլիացի արուեստագէտները՝ նախամիծարօրէն ուրեմն՝ բաւական ժամանակ ընդօրինակած են հուլանդացի վարդապետներու գործերը, չունենալով սակայն՝ բոսին իսկական առումով գեղարուեստական զարոյց մը:

Ներկայ քիչ թէ շատ գեղարուեստական գիրքը շատ մօտաւոր ժամանակներու և լուրջ աշխատանքներու արգիւնք է միայն:

Հսկայ ոյժերը, իրենց ետեւէն քաշող, տանող, նոր ու լայն ուղիներ, անկասկածելի և անսահման հորիզոններ բացող հանձարները պակասած են Անգլիային: Այստեղ՝ զուցէ իրանց հափազանց անհատական և անկախ բնավորութեան ազդեցութեամբ գեղարուեստը կրցած է անհատներ միայն ստեղծել, որոնք առաջին շրջաններուն մէջ օգտուած են հուլանդացի և ֆրանսացի արուեստագէտներէն:

Ի՞նչ իր «Արուեստի փիլիսոփայութեան» մէջ իր հեղինակաւոր ու սեղծ տրամաբանութեամբ կը բացատրէ այդ երևոյթին պատճառը, ցուցադրելով անգլիացիին աւետարական կեանքը, ընտանեկան կեանքը և պահանջները, որոնք կը ստիպեն զինքը աւելի ևս յամառարար աշխատելու, դրամ շահելու մինչդեռ ազնուականը կամ հարուստը իրենց կողմէն՝ ունին քաղաքային հարցերու, միթիսկներու, հսկայ լրագիրներու ամենօրեայ պարունակութեան վերահասու ըլլալու հոգը, որոնք միանալով կարգ մը կլիմայական ու ցեղական պայմաններու հետ, արգելք մ'են եղած գեղարուեստական տրամագրութիւններու զարգացումին:

Միջին դարու ոճիւրը կամ աւանդութիւնները աւելի երկար ժամանակ պահպանուած են Անգլիայի մէջ՝ քան այլուր, մինչև որ վերածնական շարժումը իտալացիներու միջոցաւ սկսած է հոն, ստիպելով հետաքրքրուել այդ հսկայ յեղաշրջումով, — և եթէ նորագոյն ժամանակներու մէջ գեղարուեստներու մասին աւելի մեծ շահագրգռում մը կը նկատուի, այդ ստացուած կրթութեան շնորհիւն է միայն:

«Գեղեցիկ ձևերու և գոյներու զգացումը այստեղ կրթութեան պտուղն է» կը գրէ Թէն:

Քաղաքական կրօնքը Անգլիայի մէջ գիցարանական կամ այլաբանական նկարչութեան չծաղկելուն միակ պատճառն է եղած, որով անգլիական Արուեստը սահմանափակուած է սոսկ կեանքի տեսարաններու (ժանրը) շրջանակին մէջ:

Հուլանդական վարպետներու բաղձաթիւ ընդօրինակիչ-

ներուն մէջ Հօկարթ (1698—1764) միայն XVIII-րդ դարու սկիզբներուն, ինքնուրոյն, բնորոշ ուղղութեամբ և անգլիական բարոյախօս-ծաղրանկարչի խառնուածքով նոր ճիւղ մը կը բանայ, և հետզհետէ գեղարուեստի հորիզոնին վրայ կը յայտուին անհատներ, որոնց մէջ կը գտնուին Կէնսպօրունի (1727-1788), Պէնժամէն Ուէսթի (1787-1820), Լաուրանսի (1769-1830), Ճօն Քօնթապլի (1776-1837), Տաւիտ Ուիլքի (1785-1841), Գոնինկթընի (1801-1828), Կամ Սըր Ճօզիւա Ռէյնօլանսի (1723-1792) նման արուեստագէտներ որը կենդանադրերու մէջ եթէ ոչ հաւասարած՝ ղէթ ժօտեցած է Գան-Տիբի նրբութիւններուն և կատարելութեան, և որուն Անգլիական դպրոցի պետը կ'ընդունեն:

Հօկարթ անգլիական նկարչութիւնը դրած է բարոյախօսի մը դերին մէջ, վրձինի միջոցաւ ձաղկելով անգլիական բարբերութեան կամ անհեթեթ կողմերը, և իր գտած յաջողութիւնը կ'ապացուցանէ որոշապէս, թէ նկարչութիւնը իր այդ ուղղութեան և պաշտօնին մէջ աւելի կը հասկացուէր ժողովուրդէն, քան միւս ճիւղերը:

Հօկարթի կեանքէն պատմուած հետեւեալ փոքրիկ պատմութիւնը լիովին կը բացատրէ իր նկարչական ուղղութիւնը:

Օր մը՝ աշակերտ ժամանակ՝ գինետան մը մէջ գտնուելով, ներկայ գտնուեցաւ երկու գինոջներու կռուի մը, որոնք արիւնաթաթաւ վրձակի մը մէջ գետ վայրագօրէն կը ծեծկուէին: Հօկարթ շատ փոքր էր՝ միջամտելու համար, իսկ արտասուիլը ոչ մի օգուտ կրնար ունենալ:

Հօկարթ նախամեծար համարեց մատիտ մ'առնել և այդ տեսարանը գծել: Իր արտադրած նկարէն գոհ, իր ընկերներուն ցոյց տուաւ զայն՝ ըսելով «եթէ նկարս բոլոր գինետաններուն մէջ կ'ախէին, ոչ որ պիտի ուզէր գինոջալ»:

Եւ այդ օրէն միշտ կը կրկնէր «ես օգտակար պիտի ըլլամ, եւ օգտակար պիտի ըլլամ», և այդ օրէն իսկ իր ուղղութիւնը գըծուած էր:

Իր արտադրած գործերը նկարչական գեղեցկութենէ գրեթէ զուրկ են եղած: Ամեն բան սիրով դրած է նկարի մտքին, պարունակած պատմութեան և գաղափարին. և այդ պատճառաւ է՝ որ քննադատ մը զինքը «ծաղրանկարիչ» մը անուանած:

Բանդակագործութիւնը միևնոյն ընդհանուր ուղիմաններուն մէջ գտնուելով, բացի կենդանագիր-արձաններէ, չէ կրցած արտադրել այնպիսի գործեր, որոնք իրանց բարձր գաղափարներուն, վեհ գագուսներուն և հանճարեղ ստեղծա-

դործութեան շնորհիւ մարդկութեան կը պատկանեն, անոր քաղաքակրթութեան շաւղին վրայ դարապաշտներ և սահմանագիծներ նշանակելով:

Գոյութիւն ունեցած միջակութիւններուն մէջ Ճօն Ֆլէքմէն (1755-1826) գրեթէ միակն է եղած, որ իր զարգացումին և յայտնի արտադրութիւններուն պատճառաւ տեղ գտած ըլլայ պատմութեան մէջ:

Տեղագրական դիրքով, կլիմայով, ազգաբնակչութեան բարեյաջող խառնուածքով, Սպանիան ընդհակառակը ամենանպաստաւոր պայմաններու մէջ գտնուած է:

Բնական դարձած օրէնքով մը, Սպանիոյ մէջ ևս ճարտարապետութիւնը կանխած է միւս արուեստները: Քանդակագործութիւնը իբր նախորդին անհրաժեշտ և զայն ամբողջացնող մէկ տարրը, եկած է անմիջապէս յետոյ, մինչդեռ նկարչութիւնը սկիզբները օտար հոսանքներու ընդօրինակութիւնը ըլլալէն յետոյ, միայն 1450 ին առաջին յայտնի նկարիչ Յուան Մանդէզ Տը Քասթոի Սէվիլի մէջ հիմնած առաջին դպրոցով կը սկսի նոր ու սեպհական ուղղութեան մը մէջ մտնել, մինչդեռ պատմաբան մը իբր Սպանիական դպրոցի առաջին նկարիչը կը համարի Լուի տը Մօրալես արուեստագէտը (1509-1586), ինչ որ սխալ է:

Սպանիա ունեցած է Վալանսի, Թօլէտի, Մատրիտի և Սէվիլի չորս դպրոցները, որոնց առաջին երկուքը սակայն շուտով ձուլուած են վերջիններուն մէջ, երբ մանաւանդ Մուրիլլօի (1618-1682) յայտնութեամբ և Սէվիլի մէջ հիմնած ակադէմիայով, այդ դպրոցը կսկսի ուժեղանալ և փայլել:

Աթէնքի գեղարուեստական դերակայութիւնը ապահովող նպաստաւոր պայմաններու Սպանիոյ վերաբերմամբ կը թուի թիւնը, հզօր ազդակը կը ըլլայ գեղարուեստներու բարգաւաճման, երբ արդէն երկիրը տիրապետութեան ընդարձակուած Ամերիկայի գիւտով հպարտացած, վաճառականական ընդարձակ յարաբերութիւններով առաջնակարգ դիրք մը կը ստանայ քաղաքակրթուած աշխարհին մէջ:

Իտալիոյ հետ ունեցած վաճառականական յարաբերութիւնները շփման մէջ կը դնեն երկու երկիրներու արուեստները, այնպիսի ժամանակամիջոցի մը, երբ Իտալիոյ երկնքին տակ Միշէլ Անժեր, Վինչիներ, Դիցիանօներ, Ռաֆայէլներ և Քօրբէճիօներ կ'ապրին, ամբողջ Իտալիան իրանց հսկայ հանճարներու հզօր ու ներազդու շունչով ցնցելով:

Այդ հանճարներէն ազդուած սպանիացի արուեստագէտներ, վերադարձած են իրանց հայրենիքը, ուր միևնոյն ժա-

մանակ իշխաններու, թագաւորներու կամ աղնուականներու առատածեռութիւնէն քաջալերուած՝ զիմով օտար արուեստագէտներու հետ միացած, սպանիական արուեստին տուած են նոր փայլ մը, որու մէկ մասը սակայն իրաւամբ կը պարտին օտար ազդեցութեան և ճիգերուն:

Արաբական արուեստը՝ որ բացառապէս ճարտարապետական մտացածին և ինքնատիպ ձևերէ և քանդակներէ կը բաղկանայ, բացի արձանագործական սակաւաթիւ և միամիտ փորձերէ՝ իր ամենափայլուն շրջանին հասած և ամենաշքեղ շինութիւնները հիմնարկած է Սպանիոյ երկնքին տակ, շփուելով և պատուաստուելով սպանիական արուեստին հետ:

Իրանց կեանքի, բնավայրի (Արաբիա) և կրօնքի ներմուծած անբարեյաջող պայմաններուն պատճառաւ մահմէդական արուեստը սահմանափակուած է միմիայն ճարտարապետութեան մէջ: Նկարչութիւնը և արձանագրութիւնը արգելուած արուեստներ են եղած, կրօնքը արգելած ըլլալով մարդկային զէմքի մը կամ մարմնի մը ընդօրինակութիւնը ունենալ տան մը մէջ:

Անկասկած այդ սահմանափակումներու հետևանքներն են այն հազար ու մի աներևակայելի, մանուածապատ զարդնկարներու, ձևերու յօրինուածքները, որոնցմով այնքան հարուստ է արաբական ճարտարապետութիւնը (Arabesque), որ այդպիսով կը ներկայանայ այն միակ ասպարէզը, որ արաբական տաք ու բեղուն հրեակայութիւնը յորդած է, ունեւարձակօրէն խաղալով դիժերու հետ:

Մահմէդական արուեստի նախափորձերը կը համարուին Ամրուի մզկիթը (Եգիպտոս), և Օմարի մզկիթը (Երուսաղէմ). բայց՝ ինչպէս և ըստ պատմաբանները համաձայն են՝ իր կատարեալ արտայայտութիւններուն հասած է Կրէնատաի (Սպանիա) մէջ, Ալհամպրաի պալատին (Մետինաթ-Ալհամրա—կարմիր-քաղաք) հսկայ և բարդ շինութեամբ, որուն շինութիւնը տեւած է 1248—1354:

Արաբական արուեստը Արևելքի մէջ «Բիւզանդական և մանաւանդ հայկական արուեստի ազդեցութիւնը «կրած է» *) կը զրէ Փրօֆ. Ռօշտպլավ (B. Rocheblave) իր «Արուեստի Պատմութիւնը» երկին մէջ (եր. 94):

Օտար հեղինակութեան մը կողմէ եղած պատուաբեր, շահեկան ու կարեւոր յայտարարութիւն մ'է այդ կէտը, որուն

*) Ստորագծումը մերն է (Ժ. հ.)

քննութիւնը մեր գծած շաւղէն դուրս ըլլալով, կը յանձնենք մեր աւելի ձեռնհաս մասնագէտներուն:

Սպանիոյ մէջ արաբական ճարտարապետութիւնը երկու շրջաններու բաժնած են, որուն առաջինը կսկսի VIII-րդ դարէն և կը համապատասխանէ Քօրտուլի խալիֆայութեան, իսկ երկրորդը կսկսի XIII-րդ դարէն համապատասխանելով Կրը նստի խալիֆայութեան:

Այդ նորիկ տիրապետողները մեծապէս օգտուած են դեռ կանդուն հռովմէական շինութիւններու տարրերէն և զարդերէն: Իրենց պալատներու կամ մզկիթներու շինութեան պակաս չեն օգնած նաև այդ միջոցներուն ամէն անգ ցրուած յոյն արուեստագէտները, որոնք իրենց բնորոշ կնիքը՝ բիւզանդական ոճի զարդարանքները՝ դրած և միախառնած են արաբականներուն: Միակ անխառն և սեպհական ոճը կիսալուսնի ձևով կաղմուած արաբական կամարներն են, որոնք «նոր լուսնի ժամանակ Մէտինէի փախուստին խորհրդանշանը» ըլլալ կը հաստատեն:

Երկրորդ շրջանին մէջ՝ Մաւրերու տիրապետութեան տակ՝ բիւզանդական ազդեցութիւնը բոլորովին կ'անհետանայ. տեղ տալով Մաւրիտանական կոչուած ոճին (Mauresque), և որուն զուգորդօրէն համարուած է և կը համարուի Ալհամպրան:

XVII-րդ դարը սպանիական գեղարուեստական դպրոցներուն ամենափայլուն շրջանը, ոսկեդարն է եղած:

Կրօնական նիւթերը սպանիական նկարչութեան կարևոր մէկ մասն են կազմած: Գերագանցօրէն կաթոլիկ Սպանիան պարզ է որ չպիտի կրնար հասկանալ մտապատկերները Ռամպրանտներուն, Հօպպէմաներուն կամ Պրատէրներուն, որոնց՝ ինչպէս տեսանք նախընթաց էջերուն մէջ՝ իր քաղաքական լուծին հետ, ի զուր հարկադրեց ընդունել նաև իր բմբուռօմներն և մտապատկերները:

Սակայն պէտք է նկատել, որ սպանիացի խորհրդապաշտ նկարիչները իրենց արտադրութիւններու գոյներուն և ձևերուն մէջ անկեղծ իրապաշտներ փնտցած են. իրական գոյներու սէրը բնական պահանջ մէ եղած անոնց համար, պահանջ մը առաջացած կլիմայական պայմաններէն:

Ֆրանցիսկօ տը Հէրրէրա (ծնր. 1576-1656)՝ Վէլասքէզի ուսուցիչը՝ և մանաւանդ Ֆրանցիսկօ Զիւպարան (1598-1662) գերագանցօրէն կրօնական նկարիչներ եղած են:

Այս վերջինը՝ աղքատ հողագործի մը զաւակ՝ իր հանճարին շնորհիւ կրցած է Ֆիլիբ IV ի նկարիչը դառնալ, և այդ

գահակալի գեղեցիկ ստացուածքով «նկարիչներուն թագաւորը» կոչուիլ:

Իր գործերուն մէջ «իր յուզումնալից, ջերմեռանդ, մը-
ռայլ, խորհրդաւոր և կեպիտ նկարչութեան մէջ ամբողջ Մպա-
նիան պարփակուած է» (այսինքն կրօնական Սպանիան):

Եւ իր նիւթերը գրեթէ բացառապէս առած է կրօնաւոր-
ներու կեանքէն, առանձին սիրով մը նկարելով ունոնց ճգնա-
ւորական դէմքերը և հագուստները, և այս հասկանալի կը լինի
հրը նկատի ունենանք Սէվիլի մէջ՝ ուր իր կեանքին մէկ մա-
սը անցուցած է՝ այդ ժամանակ կը գտնուէին 60 կրօնական
կարգեր և միաբանութիւններ:

Այդ կրօնական հոսանքին հակառակ ուղղութեամբ գոր-
ծողներէն ամենաուշագրաւը եղած է Վէլասքէզ (1599—1660)
որուն իրապաշտ մ'ըլլալը մի քանի պատմաբաններ կը մեղադ-
րեն, ի կատարով՝ ուր «երբ կենդանագիրներ չէր նկարեր, առ-
հասարակ ոչ-ազնիւ և հասարակ տիպեր կ'ընտրէր իր նկար-
ներու անձնաւորութիւններուն համար»:

Իր կրօնասէր և ջերմեռանդ կաթողիկ մը ըլլալուն հակա-
ռակ, կրօնական գործեր գրեթէ չէ արտադրած: Իր մասին
գրուած յետագայ սուր տողերը իր ըմբռնումը և ճաշակը կը
ընտրողն, միևնոյն ժամանակ բացատրելով իր կրօնական նիւ-
թեր չմշակելուն պատճառը:

«Վէլասքէզ չէր սիրեր երեւակայութեամբ նկարել, և որով-
հետեւ հրեշտակները երբէք իր դէմը չկանգնեցան՝ իբր օրինակ
ծառայելու, չլրցաւ անոնց կենդանագիրները նկարել, բայց
փոխարինարար իր շրջանակներուն մէջ ապրեցուց իր ժամա-
նակի և շրջապատի կիները և տղամարդիքը»:

Թէպէտ Զիւպարանի հման Ֆիլիբ IV-ի տան նկարիչ, և
մեծ մասամբ պալատական կեանքով ապրող, բայց նոյնպէս
գրեթէ երբէք պատմական նկարներ չէ արտադրած: Իր համո-
զուած իրապաշտի խառնուածքը «ազատ մօրութներու և
հասարակ տիպեր» ու միջավայրին մէջ աւելի լաւ և ազատ
ղգացած է իրեն:

Բնութիւնը ճշգրտօրէն թարգմանելու փորձերը երեք ու-
րոշ շրջաններէ անցած են իր գործերուն մէջ, որոնց վերջինը՝
զծերու նուազ խնամքով, և մարմիններու ընդհանուր մասերուն
գոյներու վերարտադրումով արտայայտելու ձևը, այս պահուս
հետևողներու ստուարացող թիւ մը կը կազմէ Փարիզի մէջ:

Իբր դիմանկարիչ Վէլասքէզ այնքան յայտնի է դարձած
պատմութեան մէջ, որքան եղած են Վան-Տիք, Դիցիանօ,
Ռիւպէնս, Ռէյնօլտս ևն «և եթէ գերազանցած է իր հայրենա-

կիցները, իր միւս ղարոցներու հակառակորդներէն չէ գերազանցուած:»

Կը պատմուի՝ թէ Տավրա Ուրլըի՝ Անգլիացի յայտնի նկարիչը, մասնաւորապէս Վէլտսթէյլը ուսումնասիրելու համար Լօնդօնէն Մատրիտ վնաց, սակայն հոն իր ուսումնասիրութիւնը ամփոփելով և կենտրոնացնելով մի միայն անոր հռչակաւոր գլուխ-գործոցին «Խմորները» կոչուած նկարին վրայ, ամէն օր՝ ինչ եղանակ ալ որ լինէր՝ կերթար թանգարան, իր սիրելի նկարին դիմաց նստելու, և լռիկ հիացմունքի երեք ժամեր անցնելու, օր մը յետոյ, դիտելէ և հիաստիք սպառած, սրտին խորերէն «ճւֆ» մը կարծակէր, ոտքի կելլար և գլխարկը առնելով կը մեկնէր:

Վէլտսթէյլի զարգացման և հռչակին մէջ ապահովարար խոշոր դեր մը խաղացած են զինքը շրջապատող նպաստաւոր պայմանները, քաջալերութիւնները և համակրանքը:

Արուեստները զարգանալու համար խնամքի դուրգութեանքի և պատուի պէտքը ունեցած են: Անվիճելի ճշմարտութիւն մ'է այս: Պատմութեան մէջ արուեստին ամենափայլուն ներկայացուցիչները համարուող արուեստագէտները՝ գրեթէ բոլորն ալ՝ աննկատելի բացառութեամբ, թագաւորներու, իշխաններու, պապերու կամ ազնուականներու պաշտպանականները եղած են, անոնց իշխանութեան հովանիին տակ գտնելով ինքնափութմի և խաղաղ աշխատանքի միջոցներ, իւրաքանչիւր օրուան ստացած յարգանքներէն և պատիւներէն խթանուելով, ձգտելով աւելի բարձրանալու՝ և հետեարար աւելի կատարեալ գործեր արտադրելու:

Նախորդ էջերուն մէջ տեսանք, թէ այդ միևնոյն ձևի քաջալերութեան խելացի գործադրութիւնը Յունական և Իտալական արուեստի գերակայութեան զլխաւոր աղբակն էր եղած: Շիպերթիի գլուխ-գործոցը ամենափայլուն ապացոյցն է պատմութեան մէջ: Միևնոյն դեղեցիկ և օգտակար հետեանքը ստածուած է այն ամէն տեղերը, ուր գեղարուեստները և արուեստագէտները ուշադրութեան և հոգածութեան առարկայ եղած են:

Վէլտսթէյլ առանց այն անսահման պատիւներուն, վայելած բացառիկ առանձնաշնորհումներուն՝ որոնք զինքը Սպանիոյ թագաւորին՝ Ֆիլիբ IV-ի մտերիմ բարեկամը ըրած էին, առանց այն լայն միջոցներուն և ստեղծուած նպաստաւոր միջավայրին՝ ուր կեանքի մանր հոգսերը, ջլատող ու քայքայող մտածումները չէին կրնար մտնել՝ առանց այդ բոլորին, ապահովաբար չպիտի հասնէր այն կատարելութեան աստիճանին, այն

բեզուսութեան և նրբութեան, որոնք զինքը Սպանիոյ վարիչ-ներուն ամենաառաջինը կը դասեն:

Մէլիլլի մէջ ծնած՝ և անոր գեղարուեստական դպրոցին երկրորդ պետը եղած է Էստէբան Մուրիլլօ (1618—1682) որու զգայուն և քնքուշ վրձինը՝ ընդհակառակը՝ նախընտրած է կրօնական նիւթերու զերբնական աշխարհին մէջ ապրիլ, բայց և այնպէս միացնելով այդ նիւթերու վերարտադրութեան՝ բնութեան խորունկ ուսումնասիրութիւն մը, գոյներու անզուգական ներդաշնակութիւն մը, և աշխատանքի պարզ ու քնքուշ ձև մը՝ որ միանալով կը կազմեն այն անդիմադրելի հրապոյրը, որ, ունին իր նկարները, և որոնք կատարեն դիտողին երկար իրանց առաջ, յաիշատիւնի, խռկալ, ու ակամայ բաժնուելով հեռանալ:

Մուրիլլօ Սպանիական դպրոցներուն ամենէն շնորհալի և հանճարեղ կրօնական նկարիչն է եղած: Ինչպէս առ հասարակ Իտալացի և Սպանիացի նկարիչները, կլիմայական և աշխարհագրական սլայմաններու բերումով Մուրիլլօ երանդագէտ (Coloriste) մ'է, բայց ամենալայն հասկացողութեամբ: Իր գոյներու նրբութիւնը, բազմազանութիւնը և թարմութիւնը, լոյսի, օդի և տարածութեան խոր բմբռնումը, կատարեալ գեղագիտական հաճոյք մը կը դարձնեն զայն դիտելը:

Պատմաբան—քննադաներէն ոմանք՝ որոնք XVIII-րդ և XX-րդ դարուն մէջ գեղ կրօնական կոյր մոլեռանդութիւնը պահպանած ըլլալ կը թուին, հակառակ Վօլթէններու և Զօլաներու դոյաւթեան՝ իր Աստուածամայրերուն կամ Յիսուսներուն մարդկային ըլլալը իրր թիրութիւն մը կը մատնանշեն, կարծիք մը, որ իրր արժանիք մը կը նկատեմ, նա մանաւանդ՝ որ իր շնորհալի և հանճարեղ կազմաւորութիւններուն, բնական ձեւերուն, գէմբերուն և զիրքերուն հետ կրցած է հոյակապօրէն միախառնել այն քնքոյշ, բանաստեղծական արտայայտութիւնները, որոնք գաղափարականացուցած են իր Աստուածամայրերէն շատերը, և որոնց մէկ փայլուն օրինակն է Լուվրի թանգարանին մէջ դտնուող «Ս. Կոյսի անարատ յղութիւնը» կոչուած նկարը (1852-ին գնուած 600,000 ֆրանքի):

Եւ իսկապէս Մուրիլլօ բացառապէս կրօնական նկարիչ մը չէ եղած: Իր ճկուն վրձինը երբեմն քմահաճօրէն քրքրած է կեանքի յատակը եռացող ախպարներու կեանքը, զանոնք ներկայացնելով իրանց ամենայատկանշական զիրքերուն և զբաղումներուն մէջ, ինչպէս Լուվրի թանգարանում հագուստներուն և ժարմին վրայ մանր միջատներ որոնող տղուն նկարը, որը այնքան մօտ իր յայտնի Աստուածամօր նկարին, այն-

քան ուժեղ կերպով կը արտայայտէ նկարչի լայն հայեացքը և ըմբռնումը, անվերապա՝ աշխատանքի և վերարտադրելու ձեւը, ու համոզուած իրապաշտի այն խորունկ զգացումը, որը առաջին նայուածքով հակասութիւն մը ըլլալ կը թուի, իր կրօնական ոգով նկարներուն հանգէպ:

Սակայն Մուրիլլօ իր յայտնի գլուխ-գործոցին «Հունգարիոյ Սրբուհի Եղիսարէթ»-ին մէջ կրցած է մեծ հմտութեամբ միախառնել բորոտներու և վիրաւորներու հասարակ ու ցաւագար գէմքերը, իրենց վէրքերը դարմանող և գլուխները լուացող իշխանուհի—սրբուհիին հանգարա ու երկնային շնորհով մը պայծառացած՝ դէմքին, ու զինքը շրջապատող պալատական կիներուն ազնիւ ձևերուն հետ, ցոյց տալով որ ամպերէն վեր, թէ սալայտակին վրայ, իր աչքերը գերազանցօրէն զիտող և ուսումնասիրող նկարչի մը աչքերը եղած են, քան կրօնամոլի ու նեղ հաւատամքներու մէջ պարփակուած մոլեռանդի մը:

Շնորհիւ Վէլաքէզի՝ որ Մատրիտի պալատներուն և մեհաստաններուն դռները իր առաջ րանալ տուած է, Մուրիլլօ ուսումնասիրած է Թիցիանօի, Ռիպէնսի, Վէրօնէզի գլուխ-գործոցները, որոնք հաւանականաբար իր ճաշակին, զգացումներուն և աշխատանքի ուղղութեան վրայ որոշ դեր մը խաղացած են:

Սէվիլյ վերադարձէն յետոյ է որ Մուրիլլօ կ'արտադրէ յարստեալաբար, և կը մեռնի՝ վրձինը ձեռքին՝ Գատիքսի մէջ, նկարած ժամանակ լաստակերտէն վար իջնալով:

Մուրիլլօի մահուամբ սպանիական երկու զեղարուեստական դպրոցները կը սկսին տժգունիլ, երկու դար ապրելէ, փայլելէ և Սպանիոյ պարծանքները համարուող արուեստագէտներ արտադրելէ յետոյ, որոնց կը յաջորդեն անկման շրջանին յայտնուող և զայն յատկանշող երկրորդական և անգոյն ընդօրինակիչները կամ գիմանկարիչները, որոնց մէջէն պատմութիւնը կը յիշէ Անթօնիօ Փէռէտարի, Ժիւան Գառէնիօի, սը Մեռանտարի, Ռիպալթարի և Ֆրանզիսկօ Կոյարի անունները:

Այս վերջինը (1746-1828) իր քմահաճ աշխատեալներովը «իբր տարօրինակ, սնյարդար, վայրենի, ոճէ և կանոններ է զերծ, բայց նիւթեղ և ինքնուրոյնութեամբ լեցուն տաղանդով»—ինչպէս կը զրէ Վիարտօ—իւր վրայ հրաւիրած է գեղարուեստասէրներու ուշադրութիւնը, մանաւանդ անոնց, որոնք՝ ներկայ տպաւորական դպրոցին երկրպագուներ՝ իր մէջ տեսած են այդ դպրոցին նախակարապետներէն մէկը:

Նկարչութեան կենդանագիրներու այդ ձիւղը իր օգտա-

կարութեան յայտնի մէկ ապացոյցը տուած է, կտաւներու վրայ յաւերժացնելով այնպիսի փաստեր, որոնք ընդհանուր պատմութեան տեսակէտէն այնքան թանգ են գնահատուած: Այդպէս՝ Սպանիական հինգ թագաւորներու՝ Շարլ-Քէն եւ սկսած մինչեւ Շարլ II-բդ տասնհինարար արշաւներու, Դիցիանօի կենդանագիրներէն սկսած մինչեւ Վէլտսըէզի և Քառէնիօի նկարներու շնորհել զխտուած և հաստատուած է, անհերքելի փաստեր գնելով պատմութեան տրամադրութեան տակ:

Ներկայիս՝ Սպանիա՝ թէպէտ նախկին գեղարուեստական փայլը կորուսած, համեմատաբար որոշ զիրքի մը վրայ կը գտնուի, շնորհիւ այն տար, զիւրադպած խառնուածքին, ընածին յատկութիւններուն, յարակապոյտ երկնքին, փայլուն արեւին և յարակից կլիմայական այն բոլոր պայմաններուն, որոնք կը պատրաստեն գեղագէտ և գեղասէր ժողովուրդ մը:

Հր. Ալեանաք

* * *

Յրտահար, հողմավար
Դողացին մեղմաբար
Տերևները գեղին
Ծածկեցին սև ուղին.
Ճաճանչները թռչնան.
Կանաչները աշնան՝—
Իմ խոհերը մոլար
Գընում են հողմահար...
Յրտահար հողմավար
Դողացին մեղմաբար
Անուրջները իմ հին
Գընացին, դընացին...

Վահան Տէր-Գրիգորեան

ԱՐԴԻՒՆԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԵՐԵՔ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Բնութիւն, աշխատանք եւ զբաղակալութիւն:

Ի՞նչ է հարկաւոր որեւէ իր արդիւնագործելու համար *): Ուշագրութիւն դարձրէք, օրինակի համար, պատուհանի վրայ: Ի՞նչ պէտք է ունենար արդիւնագործողը, ի՞նչ պէտք է նա առնէր, որպէսզի պատրաստէր այդ առարկան: Նախ և առաջ նրան հարկաւոր էր նիւթը, փայտ, ապակի, փական, մեխեր, սոսի՛նձ: Նա չէր կարող պատուհան շինել, եթէ նա չունենար այդ բոլորը, բոլոր այն նիւթը, որ նա վերցրեց բնութիւնից: Բայց բնութիւնը նրան միայն այդ չտուեց. եթէ չլինէր բնութեան ոյժը, մեխերը չէին ծակիլ տախտակը, շրջանակը չէր պահուիլ իր տեղում: Եթէ չլինէր տարութեան ոյժը, չէր կարելի երկաթը ծեծել: Ուրեմն, նախ և առաջ արդիւնագործին օգնում էր բնութիւնը: Նա տուաւ նրան նիւթ և ոյժեր: Ոչ մի արդիւնագործութիւն հնարաւոր չէ առանց բնութեան այդ բարիքների: Յետոյ, միանգամայն պարզ է, որ այդ բոլոր նիւթը չէր կարող պատուհան դառնալ առանց արդիւնագործողի մշակութեան: Մշակութեամբ, աշխատանքով մարդու ռանգը ունի և իրար կպցնում տախտակները, պատրաստում և գտնում մեխերը, մտցնում ապակիները և այլն: Վերջապէս, արդիւնագործողը չի կարող նիւթից պատուհան շինել լոկ ձեռներով: Նրան անհրաժեշտ է կացին, սղոց, գործիքներ, ալմաս. նրան հարկաւոր է արհեստանոցի համար սենեակ: Մի խօքով, պատուհան շինելու համար, նրան հարկաւոր է, որ նախօրօք որոշ՝ աշխատանք գործադրուէր՝ գործիքների, մեքենաների, շինութիւնների և նման բաների վրայ: Ահա նախընթաց աշխատանքի այդ արդիւնը կոչւում է կապիտալ:

Այդպէս ուրեմն, արդիւնագործելու համար անհրաժեշտ են. բնութեան բարիքները, աշխատանքը եւ կապիտալը: Բացի դրանից

*) Քաղուած է Կարլըշիլի «Экономическія бесѣды» գրքից:

մենք գիտենք, որ բնութիւնը ազդում է մարդկանց տնտեսական գործունէութեան վրայ ոչ միայն նրանով, որ նիւթ և ոյժեր է տալիս, այլ և այլ ուրիշ կերպ (մտաբերենք կլիմայի ազդեցութիւնը): Ծանօթանանք ուրեմն արդիւնագործութեան նկատմամբ նախ և առաջ բնութեան, ապա՝ աշխատանքի և, վերջապէս, դրամապլուի կամ կապիտալի ազդումներին հետ:

1. ԲՆՈՒԹԻՒՆ

Բնութեան բարիքներից օգտուելու եղանակը:

Ինչպէս արդէն ասուած է, առանց բնութեան բարիքների մարդս անկարող է զարգացնել իր արդիւնագործունէութիւնը: Ես մի քիչ վերև ասացի որ բնութիւնը տալիս է նրան նիւթ և ոյժեր, որոնցով նա օգտուում է: Մարդս, ուրեմն, կնծարկում է իրան այդ ոյժերը և նիւթերը՝ իր նպատակներին համեմելու համար: Արդ, ի՞նչպէս է այդ նա անում: Ի՞նչպէս է կարող մարդ ենթարկել իրան կամ նուաճել բնութիւնը:—Առաջ կարծում էին թէ մարդ ստեղծում է, շինում է նոր նիւթ, որ մինչև նրա աշխատանքը գոյութիւն չունէր: Առաջ ասում էին, որ եթէ երկրագործը պցել է հողը մի հատիկ, իսկ ստացել հունձի ժամանակ մէկի փոխարէն հինգ հատիկ, ուրեմն իր աշխատանքով նա ստեղծել է չորս նոր հատիկներ: Տեսնենք իրաւացի է այդ: Նախ քան հատիկը ցանելը, երկրագործը հերկում է հողը: Ինչո՞ւ է նա այդ անում: Որովհետև նա գիտէ որ հատիկը ծիլ կ'արձակի միայն այն ժամանակ, երբ նա կ'ենթարկուի հողի յատկութեան և խոնաւութեան ազդեցութեան: Հողը պէտք է փոշիոջ դարձնել, յետոյ պցել սերմը և ապա ծածկել նրան հողով—միայն այն ժամանակ նա կը սկսի աճել: Ուրիշ խօսքերով, մարդս իմացաւ թէ ի՞նչ պայմաններում բնութեան օրէնքներով սերմը կարող է զարգանալ: Մարդը մատակարարում է սերմին այդ պայմանները, իսկ բնութիւնը ինքը կը տայ սերմին աճում: Յօդունը աճում է ոչ մարդու կամքով, այլ բնութեան անփոփոխ օրէնքներով: Մարդս միայն կարողացաւ գործադրել այդ օրէնքները իր նպատակին—հաց ստանալու համար: Յետոյ, հաւաքելով հունձը, նա կրում է հատիկները ջրաղաց: Այնտեղ նա հատիկները տեղաւորում է երկու ծանր քարերի արանքում, որովհետև նա գիտէ որ մէկ քարի պտտելով միւսի վրայ հատիկը տրորուելու է ծանրութեան օրէնքի համաձայն: Մարդս գիտէ որ հատիկը պիտանի է ուտելու համար միայն այդ կերպ տրորուելուց յետոյ: Նա գիտէ, որ առանց հացի նա անկարող է ապրել: Այդ բոլոր գործունէութիւնների մէջ մարդ

միայն օգտուում է արդէն պատրաստի, ոչ իրանից ստեղծուած բնութեան ոյժերից, նա հակադրում է մէկ ոյժը միւսին և դրանով ստիպում է աշխատել իր համար: Յետոյ, հողի մասնիկները ամուր շաղկապուած են իրար: Մարդը գիտէ որ այս շաղկապումը անկարելի է քակել բուժ գործիքով (օրինակ երկաթէ ձողով), նա գործ է ածում սուր գործիք (գութանի խոփը): Աշխատող անասունների կամ շոգու (կան և շոգեշարժ գութաններ) ոյժով նա յաղթում է հողի մասնիկների շփումը խոփին: Ջրադացքարի ճնշման ոյժով նա յաղթում է հէնց իրա հատիկի մասնիկների ընդդիմադիր ոյժը և դարձնում նրան փոշի, որ կոչւում է ալիւր: Մարդ գիտէ որ երկրի ձողական ոյժի շնորհիւ գետերի ջուրը հոսում է ներքև հունի թեքուածութեամբ, որ ջուրը վերև հոսել չի կարող: Նա փոխում է ջրի ճանապարհը, ամբարդակ է շինում գետի լայնութեամբ և ջուրը ստիպում է հոսել միայն փոքրիկ առուով, որի վերջում գնում է ջրադացի փռոսնը: Ջրի անկման ոյժը գրանից աւելանում է այն աստիճան սր սկսում է շարժել փռոսնը: Գամելով պատի մէջ մեխը մարդս գիտէ որ մեխը կարող է պահել որոշ ծանրութեան կախուած իր, շնորհիւ պատի մասնիկների և մեխի մէջ շփման ոյժի: Յանկանալով իր կերտուածները համար փայտ ստանալ, մարդը խախտում է ծառի մասնիկների շաղկապման ոյժը սուր գործիքով (տապալքով) և ստիպում է ծառին վայր ընկնել գետին երկրի ձգողական ոյժի պատճառով: Դուր տեսնում էք որ այդ բոլոր դէպքերում մարդը չի ստեղծում ոչ նիւթ, ոչ ոյժ: Եւ ծառը, և ապակին, և գետը, և ջրադացի քարը, և ձգողական ոյժը, և շրփումը և մասնիկների շաղկապումը, և տաքութիւնը, և խոնաւութիւնը—այդ բոլորը արդէն գոյութիւն ունէր բնութեան մէջ մինչև մարդը. գոյութիւն ունի և պիտի գոյութիւն ունենայ մինչև այն ժամանակ, մինչև որ գոյութիւն ունի այն աշխարհը, որի մէջ մենք ապրում ենք: Մարդը այդ բոլորից ոչ ինչ չի ստեղծել, ոչինչ էլ չի կարող ստեղծել: Բնութեան ոյժերի շնորհիւ հատիկը ծլեց և հասունացաւ, ազատուեց ալիւր և հաց դատաւ: Բնութեան ոյժերի շնորհիւ եզներն և ձիաները, քաշելով իր անց ետևից գութանը, պատրաստում են հողը երկրագործի համար: Բնութեան ոյժերի շնորհիւ ջրադացը գործում է, մեխը պահում է ծանրութիւնը, ծառը կտրւում և տապալւում է: Ուրեմն ի՞նչ է անում մարդը: Նա նախ և առաջ ուսումնասիրում է բնութիւնը: Նա գիտութեան և փորձի ճանապարհով իմանում է թէ ինչպէս ամենադիւրին կերպով—ժամանակի, ոյժի եւ աշխատանքի նուազագույն սպառումով—իր օգտին

բանեցնել բնութեան նիւթերը և ոյժերը, ինչպէս հակադրել սրանցից մէկը՝ միւսին որպէս զի ստացուի այն աղբեցութիւնը, այն առարկան որ նրան հարկաւոր է: Եւ մարդը միայն այդ կարող է անել բնութեան հետ իր արգիւնագործական աշխատանքում և աւելի ոչինչ: Որքան շատ է մարդ իմանում, որքան նա աւելի զարգացած է, այնքան նրա աշխատանքը արգիւնաւոր է, այնքան հեշտ է նա եսթարկում իրան բնութիւնը:

2. Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Աշխատանքի նշանակութիւնը մարդկանց արդիւնագործութեան մէջ.—Տրեսեսական աշխատանք. ա) ծրագրաշարիւրն բ) նիւթական պտիւններ զոհաւորւմ. գ) նիւթականութիւն.—Տրեսական աշխատանքի որոշումը.—Աշխատանքի գումարը եւ արդիւնաւորութիւնը.—Աշխատանքի գումարի փոփոխութեան պայմանները հասարակութեան մէջ. ա) ազգաբնակչութեան դասաւորումը ըստ սակի. բ) ըստ սեռի. գ) օրգանիզմի միջին պիտանիութիւնը աշխատելու մէջ. դ) հիւսնդութիւնը. ե) արդիւնաւոր մեծիկների քանակը.—Տօներ.—Աշխատանքի արդիւնաւորութիւնը, նրա պայմանները. ա) աշխատանքի քաժանում. Պարզ եւ բարդ հասարակութիւն. բ) աշխատանքի ազատութիւնը. գ) աշխատանքի գործիքների պատկանելիութիւնը. դ) Քիսեիլիների զարգացումը:

Այդպիսով, բնութիւնը տալիս է մարդուն նիւթ և ոյժ: Դրանցից մարդ պէտք է ճարի իր համար բոլորը, ինչ որ նրան հարկաւոր է իր գոյութիւնը պահպանելու համար: Ինչի՞մ է այդ նպատակին հասնում: Աշխատանքով: Քամին անօգուտ է մարդուն մինչև այն պահը, մինչև որ մարդ աշխատանք չգործադրի քաժանաց շինելու, շրջու. ոյժը—մինչև շոգեշարժ շինուելը, երկաթահանքը—մինչև նրա մշակումը և մինչև որ դարբինը կամ փականագործը չեն դնի նրա վրայ իրանց աշխատանքը: Բնութիւնից մարդուն մատակարարող համարեա թէ ամեն բան չի բերում նրան այն օգուտը, որ կարող էր բերել մինչև նրա վրայ որոշ քանակի աշխատանք ղենելը: Մինչև անգամ դետի մակերեւոյթի վրայ լողացող ձուկը օգտակար է դառնում միայն այն աշխատանքից յետոյ, որ գործ է դրած նրան բռնելու և ուտելու համար պատրաստելու համար: Հասարակածի տակ ամենափարթամ բնութեան մէջ մարդ պէտք է սովից և ծարաւից մեռնի եթէ թնալ չուզէ աշխատել: Հետեւաբար, աշխատանքը տալիս է մարդուն բնութիւնից արտադրած օգտակարութիւններ: Համարեա ամեն մի օգտակար առարկայ այդպիսին է դառնում միայն նրանից յետոյ, երբ որ և է մէկը աշխատի այն բանի վրայ, որ նրան շինի, կամ գոնէ այն բանի վրայ որ նրան գործադրի մարդու կարիքների համար: Իրաւ է, ոչ ոք չի աշխատում արեւակի

լոյսը արդիւնագործելու վրայ: Այդ—մէկն է այն սակաւաթիւ բարիքներից, որոնք արւում են բոլոր մարդկանց անխտիր: Բայց նոյն խիստ անհասկացիկ է հանել բոլոր հնարաւոր օգուտը միայն աշխատանքով: Որպէս զի նա օգտակար լինի, օրինակ, հացաբոյսերի աճեցման համար, նախ և առաջ պէտք է աշխատանք սպառել հողը հերկելու և սերմ ցանելու վրայ: Ոչ ոք չի աշխատում այն բանի վրայ որ գետում ջուր լինի: Բայց ջրից բոլոր այն օգուտը ստանալու համար, որ նա կարող է տալ, պէտք է, օրինակ, նախ աշխատանք բանեցնել որպէս զի ջրաղաց շինուի հատիկներ աղալու նպատակով, նաև շինուի մարդկանց և ծանրոցներ տեղափոխելու և այլն: Զարգացած մարդը զիստակցում է աշխատանքի այդ ամենամեծ նշանակութիւնը մարդկանց համար և խոնարհւում է նրա առաջ:

Բայց ամեն տեսակի աշխատանքը չէ ծառայում մարդկանց արդիւնագործութեան մէջ: Յաճախ կարելի է աշխատել այնպէս, որ աշխատանքի արդիւնքը չի լինի ոչ մի իր, որ մարդկանց արդիւնագործութեան նպատակն է: Նայէք, օրինակ, այն մարդու վրայ, որ գնում է աննպատակ, անծրադիր գրօսներու: Նա, ի հարկէ, աշխատանք է բանեցնում: Նա գօտում իր մեկանները է, կարող է շատ յոգնել, եթէ գրօսանքը երկար տևի: Սակայն աշխատում է նա արդիւնագործութեան նպատակով, ի հարկէ՝ ոչ: Նայէք, յետոյ, մանուկի վրայ, որ գնդակ է խաղում: Միթէ նա չի տքնում: Ի հարկէ տքնում է—և աշխատութիւնը շատ օգտակար է նրա առողջութեան համար: Եթէ դուք մարմնամարդական վարժութիւններ էք կատարում—այդ շատ օգնում է ձեր մարմնի զարգացման: Բայց ձեր ալ աշխատանքը և մանուկի աշխատանքը արդեօք մի բանով տարբերում է, այն աշխատանքից, որ գործադրում է արհեստաւորը արհեստանոցում: Իհարկէ, սաստիկ տարբերում է: Այստեղ աշխատանքի արդիւնքը լինում է իր, որ հարկաւոր է մարդուն, որ կարելի է վաճառել և ձեռք բերած փողով հաց գնել, հագուստ—և առհասարակ ամեն բան ինչ որ հարկաւոր է ապրուստի համար. իսկ այնտեղ ոչ մի այդպիսի իր չի ստացւում, և եթէ մարդիկ կեսնքում պարապէին միայն մարմնամարզութեամբ ոչինչ չէին ստանալ, ինչ որ հարկաւոր է նրանց գոյութիւնը նրկարելու համար: Նրանք չէին իմանալ արդիւնաբերական գործունէութիւն: Վերջապէս, կայ ևս աշխատանք, որ չի վերաբերում այդ գործունէութեան: Դա մտաւոր, հոգեկան աշխատանքն է:

Եթէ դուք արհեստանոցում պատրաստել էք զուլթան կամ մեքենայ, դուք պատրաստել էք նոր իր, որ ծառայում է մարդուն նոր աշխատանքի համար:

Եթէ դուք կարկատեցիք հնացած տափանը—դուք գործադրութեան համար ոչ պիտանի առական դարձրիք պիտանի: Եթէ դուք շինեցիք նոյն իսկ ոչ հարկաւոր կամ առհասարակ ոչ կարեւոր իր—դիցուք որեւէ խաղալիք,—կը գտնուի մարդ որ կը գնի այն իր երեխաների զուարճութեան համար: Գուք պատրաստեցիք նրան համար առարկայ, որին նա տալիս է որոշ գործադրութիւն: Մի խօսքով, ձեզ մօտ իբրեւ աշխատութեան արդիւնք միշտ երևան է դալիս որեւէ իր, մարդու համար օգտակար կամ խնայող: Եւ այդպէս է լինում իւրաքանչիւր աշխատանքի արդիւնքը այնտեղ, ուր մարդ արտայայտում է իր արդիւնագործունէութիւնը: Եւ երկրագործը մարդկանց մատակարարում է երկրի նորանոր պտուղներ, և ջուլհակը հայթայթում է նւրանց նոր կտորներ, մահուդ, և վաճառականը տանում է այնտեղ, ուր նրանք չկան,—հետևաբար, աւելացնում է այդտեղ մարդկանց հարկաւոր իրերի քանակութիւնը: Բայց այդ բանը չկայ մարդկանց մտաւոր գործունէութեան մէջ: Ուսուցիչը, օրինակ, որ սովորեցնում է մանուկներին, բժիշկը, որ բժշկում է հիւանդներին, ոչ մի նոր իր մարդուն չեն մատակարարում: Ուսուցիչը ուսուցանում է նրա համար, որ աշակերտները աւելի շատ տեղեկութիւններ ձեռք բերեն. բժիշկը բուժում է որ հիւանդները առողջանան: Իսկ ինչի՞ համար են աշխատում երկրագործը, վարպետը, ջուլհակը: Որպէսզի իրանց համար մի կտոր հաց ճարեն: Ուսուցիչը, բժիշկը ռոճիկ են ստանում նրա համար, որպէսզի նրանք ապահովուած լինելով անհրաժեշտ բաների մէջ կարիք չունենան արդիւնաբերական գործունէութեան մէջ: Եթէ նրանք վարձ չստանային իրանց աշխատքի համար, նրանք պէտք է զբաղուէին երկրագործութեամբ կամ արհեստով և այլն, այսինքն ժամանակ չէին ունենալ ուսուցանել և բուժել: Գրանց այդ պաշտօնների վրայ են գնում ոչ նրա համար որ նրանց ռոճիկ տան, այլ նրա համար որ նրանք սովորեցնեն, բժշկեն և ուրիշ բանով չզբաղուեն: Երկրագործը, վարպետը, ջուլհակը իրանց գործունէութեան մէջ այլ նպատակներ չունեն քան ապրուստ հայթայթելը: Վարպետը գութան է շինում ոչ նրա համար որ զբանով օգուտ բերի ուրիշներին, այլ նրա համար, որ վաճառելով այդ գութանը իր համար օգուտ ստանայ:—«Ոչ միայն հացիւ կեցցէ մարդ»: Մարդկանց նոյնպէս անհրաժեշտ է ունենալ ուսուցիչ և բժիշկ, ինչպէս և մի կտոր հաց: Ձի կարող մարդկային հասարակութիւնը ապրել առանց այն որ չունենայ իրան ուսուցանող և բժշկող մարդիկ: Գիտութիւնը կը սովորեցնի մարդկանց աւելի արդիւնաւոր աշխատել, առողջութեան պահպանութիւնը նպաստում է աւելի ժամանակ գործադրել աշխատանք

քի վրայ: Սակայն այդ բոլոր մարդկանց աշխատանքը չի մտնում այն գիտութեան կազմի մէջ, որ նուիրուած է միայն արդիւնարեւրական գործունէութեան ուսումնասիրութեան:

Ուրեմն, զորն է տնտեսական աշխատանքը: Առաջինը, այդ աշխատանքը պէտք է կատարուի որոշ պլանով, տանի որոշ նըպատակի, որ ունի բանուորը: Ուստի նա կոչւում է—պլանով կատարուած կամ ծրագրամետ: Սկսելով շինել արօր վարպետը գիտէ որ արօր է շինում և ոչ թէ մի այլ բան: Երկրորդ՝ աշխատանքի նպատակը պէտք է լինի անպատճառ որեւէ իր, որ գոհացնում է մարդկանց որեւէ պահանջ: Որքան որ և պահանջ մօտ է առաջնակարգ պահանջներին, այնքան և նրան գոհացում տուող աշխատանքը, իհարկէ աւելի կարեւոր է: Վերջապէս, երրորդ՝ այդ աշխատանքը պէտք է լինի ոչ մաաւոր, ոչ հոգևոր, այլ ֆիզիկական, որի հետեանքը որեւէ օգտակար կամ ախորժելի իր է: Այլ կերպ այդ աշխատանքը կոչւում է մկանային (մուսկուլային): Ահա աշխատանքի այն երեք յատկութիւնները, որոնցով մենք իմանում ենք, գոհացնում է արդեօք նա մարդկանց արդիւնարեւրական գործունէութեան: Այն աշխատանքը որ ունի այդ յատկութիւնները՝ կոչւում է տնտեսական: Ուրեմն ի՞նչ է տնտեսական աշխատանք: Դա ֆիզիկական, որոշ պլանով կատարուած, մարդկանց նիւթական պահանջներին գոհացնում տուող աշխատանքն է:

Ոչ բոլոր մարդիկ միատեսակ են աշխատում: Ոմանք շատ են աշխատում, ոմանք—քիչ: Ոմանք հասցնում են շատ բան շինել, քան ուրիշները, միևնոյն ժամանակի ընթացքում: Երեւան, ապա չեն կարող այնքան գործ կատարել, որքան հաստակաւորը. յաճախ տօներ սիրողը—այնքան, որքան աշխատասէրը, մեքենաների հետ վարուելու մէջ ապիկարը այնքան, որքան կարողը: Վայրենին երբեմն կուշտ է նրանով, որ բռնում է ձուկ, և այդ նրանից քիչ ժամանակ է խլում, իսկ բաճուորը երբեմն սպիալուած է աշխատել 16—18 ժամ օրեկան, որպէսզի մի կտոր հաց հայթայթի: Ուրեմն, մէկը աշխատում է շատ, միւսը քիչ, այլ խօսքերով մէկի աշխատանքի գումարը աւել է, միւսինը պակաս:—Յետոյ, որեւէ վայրենի գազանորս կէս օրից պակաս չի գործադրում որ մի որս վայր գցի, որով կերակւրւում է, իսկ նոյն ժամանակամիջոցում բանուորը գնդասեղային գործարանում կարող է մի քանի հազար գնդասեղներ պատրաստել և այլն: Ուրիշ խօսքերով, մէկը աւելի աջողակ, արգասաւոր է բանում, կարողանում է աւելի շատ բան շինել, աշխատում է, այսպէս ասած, աւելի արդիւնաւոր, քան միւսը: Հետեաբար, աշխատանքի գումարը եւ արդիւնաւորութիւնը հասարա-

կութեան մէջ կարող են չափազանց մեծ չափերով փոփոխուել:—Տեւեմներ ինչ պայմաններից է կախուած:—Սկսենք ամենապիտանի պայմաններից, որոնք աւելացնում են կամ պակասեցնում մարդկանց աշխատանքի գումարը (սոււմման).

1. Այգպիսի պայմաններից է նախ և առաջ մարդկանց բաժանումը ըստ տարիքի: Ամենից շատ է ընդունակ աշխատանքի, ամենից ամուր, ուժեղ է լինում մարդ 25—45 տարեկան ժամանակը: 15—25 տարեկանում ոյժերը աւելանում են, սակայն դեռ բոլորովին չեն հասնում զարգացման: 45—60 ոյժերը թուլանում են, թէև դեռ չի հասնում զառամութիւնը: Մինչև 15 և 60-ից անց մարդս համարում է բոլորովին անպէտք մշտական աշխատանքի: Ակնհերև է որ այն հասարակութիւնը, որի մէջ 25—45 տարեք ունեցող մարդկանց թիւը դիցուք, 40% է, կարող է աշխատանքի աւելի մեծ գումար տալ, քան այն, որի մէջ այդ թիւը 30% կամ 40% է: Որքան քիչ է հասարակութեան մէջ երեխաների, պատանիների և ծերերի թիւը համեմատած չափահասների, այնքան աւելի է նա կարող աշխատել, այնքան նրա կազմը անտեսադէս ձեռնուռ է:

2. Երկրորդ պայման պէտք է գնել մարդկանց բաժանումը ըստ սեռի: Կինը տղամարդուց թոյլ է և կարող է առհասարակ նրանից աւելի պակաս բան շինել: Այն հասարակութեան կազմը, որի մէջ 100 տղամարդուն ընկնում է, օրինակ, 106 կին, աւելի քիչ է ձեռնուռ, քան այն հասարակութեան կազմը, որի մէջ 100 տղամարդուն ընկնում է, օրինակ, 98 կին:

3. Երրորդ պայմանն է հանդիսանում մարմնի կազմի կամ օրգանիզմի պիտանութիւնը աշխատելու նկատմամբ: Տարբեր մարդկանց օրգանիզմներ տարբեր ունակութիւն ունեն գէպի աշխատանքը: Մէկը չի կարող անել այն բանի կէսը, ինչ որ կարող է շինել միւսը: Այգպիսի տարրերութիւն լինում է ոչ միայն զանազան մարդկանց մէջ, այլև մինչև անգամ ժողովրդների: Նկատուած է, օրինակ, որ զարգացած ժողովուրդները՝ եւրոպացիները, աւելի ընդունակ են աշխատանքների, քան Աւստրալիայի վայրենիները: Անգլիական բանուորը սովորաբար աւելի ուժեղ է քան ֆրանսականը, յունականը աւելի ուժեղ է քան թիւրքականը: Մարդու ժառանգ զարգացումը աւելացնում է սէրը գէպի աշխատանք, իսկ աշխատելու ոովորութիւնը զարգացնում է մարդկանց ոյժերը և աւելացնում է այդ ոյժերը ծնողներից երեխաներին անցնելով: Որքան մարդիկ աւելի են զարգացած և որքան աւելի են յարգում աշխատանքը, այնքան աւելի է աճում նրանց օրգանիզմի պիտանութիւնը գէպի աշ-

խատանքը, այնքան, ուրեմն, աւելի ծեռնտու է տնտեսապէս այդպիսի հասարակութեան կազմը:

4. Աշխատանքի քանակը պայմանաւորող յետագայ հանգամանքը հասարակութեան մէջ, որ մենք կը յիշատակենք, ազգաբնակչութեան հիւանդոտութիւնն է: Որքան շատ են մարդիկ հիւանդանում, այնքան աւելի է կորչում նրանց մօտ աշխատելու ժամանակը: Որքան ազգաբնակչութիւնը աւելի առողջ է, այնքան նա աւելի է կարող բան շինել: Ինչքան քիչ է մի երկրում խուլերի, կոյրերի, համրերի և խելագարների թիւը, այնքան աւելի է նրա մէջ իսկական բանուորներ թիւը: Սակայն միայն դրանցմով չէ հասարակութիւնը կորցնում իր աշխատանքի գումարը աւելացնող մարդկանց: Իւրաքանչիւր մարդ հիւանդանում է: Որքան աւելի լաւ է նրա բնակարանը, կերակուրը, հագուստը, որքան աւելի սակաւ է նա ուժից վեր աշխատում, այնքան աւելի սակաւ է նա հիւանդանում: Որքան աւելի վատ է ապրում, խմում, ուտում, հագնւում, որքան աւելի վատ է օդը, որով նա շնչում է, որքան աւելի յաճախ է նա ստիպուած աշխատել ուժերից վեր, այնքան աւելի յաճախ է նա հիւանդանում այնքան շատ է աշխատանքի համար ժամանակ կորչում նրանից: Վատ սնունդի, վատ բնակարանի, օդի շնորհիւ մարդու օրգանիզմը չի կարող վարդապետապէս, ինչպէս նա կը զարգանա լաւ ապրուստի պայմաններում: Գործը աւելի վատ է կատարւում, հիւանդութիւնները աւելի յաճախ են նրան այցելում: Այնքան աւելի է աճում հասարակութեան մէջ աշխատանքի քանակը, որքան աւելի լաւ է ապրում նա, ով աշխատում է: Յետոյ, պէտք է նկատել, որ առհասարակ բոլոր պայմաններում հիւանդութիւնը փոփոխւում է տարիների ընթացքի հետ միասին: Ամենից պակաս է հիւանդանում հասակաւոր մարդը, այն է 30—40 տարեկանը: 25—30 և 40—45 աւելի յաճախ են հիւանդանում, իսկ պատանիներն ու ծերերը—աւելի ևս շատ: Ամենից շատ հիւանդանում են երեխաները: Պարզ է, որ կրկին մենք հանդիպեցինք մեր առաջին պայմանի հետ և կրկին կարող ենք կրկնել, թէ որքան աւելի է հասարակութեան մէջ չափահասների թիւը (միւս տարիքների հետ համեմատած) և, աւելացնենք՝ որքան աւելի շատ են 30—40 տարեկան մարդիկ, այնքան այդ հասարակութեան կազմը տնտեսապէս աւելի աջողակ է:

5. Առաջ գնանք և միանգամայն պարզ կը լինի որ տընտեսական աշխատանքի գումարը աճում է այն երկրում, ուր մարդկանց աւելի մեծ թիւ է զբաղուած արդիւնաբերական գործունէութեամբ: Այն երկիրը, որի մէջ 100 բնակչին, օրի-

նակ, ընկնում է 90 երկրագործ, արհեստավոր և այլն, նա ունի տնտեսապէս աւելի աշողակ հասարակական կազմ, քան այն, որին ընկնում է, դիցուք, 75: Ես արդէն ասացի որ հասարակութիւնը անկարող է մնալ առանց այն մարդկանց, որոնք ապրում են մտաւոր աշխատանքով: Սակայն որքան այդպիսիների թիւը աւելի է, այնքան այդ հասարակութեան մէջ պակասում է տնտեսական աշխատանքը: Միաժամանակ, արդիւնքի քանակը աւելանում է այնտեղ, ուր նաև երեսանները մասնակցում են չափահասների աշխատանքներում: Երեսանների համար ֆինասակար է բանել գործարաններում: Նրանց օրգանիզմը չի տանում երկարատե աշխատութիւնը վատ օդի մէջ—բազմաժամդ բանուորների պատճառով: Այդ պատճառով համարեա բոլոր երկրներում մանուկների աշխատանքը գործարաններում արգելւում է: Սակայն նրանց աշխատութիւնը տանը, նրանց օգնութիւնը ծնողներին ընտանիքում չի կարող այնքան յոգնեցնող և ֆինասակար լինել: Ահա ինչու որքան աւելի է երկրի մէջ անային արհեստանոցների թիւը, տներում տրուած աշխատանքները, փոխարէն մեծ ֆարրիկներում և գործարաններում, այնքան աւելի կարող է աճել այդ երկրում աշխատանքի քանակը:

6. Վերջապէս, աշխատանքի քանակը նուազում է այնքան աւելի, որքան շատ տօներ է ազդարնակութիւնը կատարում: Կան տեղեր (Գերմանիայում), ուր դեռ մի քիչ առաջ տարին 100 օրից աւելի էին տօնում, ուր, հետևաբար, բանում էին տարուայ $\frac{1}{3}$ -ից մի քիչ աւելի: Մեղանում Ռուսաստանում մի քանի տեղերում կարելի է տարին 150 տօն օրերից աւելի հաշուել կամ միայն տարուայ $\frac{2}{3}$ է մնում բանելու: Ոչ սակաւ տօնում են այնպիսի տօներ, որոնց կատարումը բնաւ չի սահմանուած եկեղեցուց և նոյնիսկ այնպիսիները, որոնք ուղղակի հետևանք են սոցիալութեան և մահաւատութեան («Православие», «Освящение Икры-града» և այլն): Այդպիսի տօների թիւը կրճատւում է միայն մարդկանց զարգացմամբ և սեփական շահերի հասկացողութեամբ:

Վերջապէս, առհասարակ, որքան աւելի է աճում երկրի մէջ կրթութիւնը, վարդապետը, այնքան աւելի են սկսում յարգել աշխատանքը, և այնքան աւելի է աճում հասարակութեան մէջ նրա տնտեսական աշխատանքի գումարը:

Մենք ծանօթացանք այն պայմանների հետ, որոնցից կախուած է հասարակութեան մէջ աշխատանքի գումարը: Անցնենք այն պայմաններին, որոնցից կախուած է աշխատանքի արդիւն-

նաւէտութիւնը, նրա որակը: Տեսնենք, ինչու մէկը, նոյքան ժամանակ բանելով, աւելի շատ և աւելի լաւ բան կը շինի, քան միւսը: Պէտք է նախ և առաջ տեսլ, որ այդպիսի պայմաններ շատ են և նրանց բոլոր քննել ոչ մի հնարաւորութիւնով չկայ: Քիչ են միթէ պատճառները, որոնցից կեանքի մէջ մարդը աւելի լաւ կամ աւելի վատ է բանում: Ամեն մէկը այդ տեսել է իր շուրջ և նոյնիսկ փորձել է ինքն իր վրան: Նոյն մարդը այսօր լաւ է աշխատում, վաղը վատ: Մենք կարող ենք ծանօթանալ մի քանի ընդհանուր պայմանների հետ, որոնք ներգործում են բոլորի համար միատեսակ և օգնում են աշխատանքի արդիւնաբերութեան յաւելման:

Առաջին այդպիսի պայմանը կարելի է համարել աշխատանքի բաժանումը: Դուք, դուցէ, տեսել էք երբեք, ինչպէս որմնադիրները աղիւսներ են հասցնում իրենց ձեռքով շինուող տան վերին յարկերը, յաճախ, փոխարէն տեղափոխելու աղիւսները ձեռքերի վրայ կամ կրելու պատգարակներով նրանք շարքով կանգնում են սանդուխների վրայ և տալիս են ամեն մի աղիւս ձեռքից ձեռք ներքեից վերև: Այդ եղանակը աւելի յարմար է, որովհետև աւելի պակաս ժամանակ է պահանջում քան ուղղակի տեղից տեղ կրելը: Գնդասեղային Ֆարբիկում իւրաքանչիւր գնդասեղ առաջ շինում էր ոչ մի բանուոր սկզբից մինչև վերջը, այլ շատ (մօտ 20) բանուորներ, որոնցից իւրաքանչիւրը ամբողջ գնդասեղը չէր շինում, այլ միայն նրա մի մասը: Մէկը ձգում է մօֆտուլը, միւսը նրան ուղղաձիգ էր դարձնում, երրորդը կտրում էր, չորրորդը սրում էր, հինգերորդը կոլորացնում տակի գլխիկը և այլն: Միայն գնդասեղի գլխիկը կրկու կամ երեք վարպետներ էին բանում, որոնցից իւրաքանչիւրը առանձին գործ էր կատարում: Նոյնկերպ խաղովթիկների պատրաստումը բաժանուած էր աւելի քան 70 մասնագէտ բանուորների մէջ: Փարբիկներում, մեծ մեքենայական արդիւնագործութեամբ, իւրաքանչիւր բանուոր կատարում է ընդհանուր աշխատանքի միայն շատ չնչին մասը և երբէք չի շինում ամբողջ իրը: Արդ, ե՞նչ նպատակով է աշխատանքը բաժանուած մի քանի անձանց մէջ, ինչո՞ւ գնդասեղները, օրինակ, կամ խաղովթիկները չի շինում մի բանուոր:—Որովհետև, աշխատանքի բաժանումը չափազանց աւելացնում է նրա արդիւնաւէտութիւնը (ընդհանուրութիւնը): Մտածէք, մարդ քանի՞ գնդասեղ է կարող շինել մի օրում: Ասում են, թէ հազիւ շինի մէկը և յամենայն դէպս 20 հատ չի շինիլ: Իսկ մի փոքրիկ գործարանում, առանց բոլոր նորագոյն մեքենաների, աշխատանքի բաժանման պայմանում, 10 բանուոր շինում էին օրեկան 48,000 գնդասեղից աւելի,

կամ իւրաքանչիւրը 4,800 հատից աւելի: Ասում են որ եթէ բանուորը ինքը սկսէր խաղաթուղթ շինել, հաղիւ թէ օրը երկու հատից աւելի շինէր: Իսկ խաղաթուղթեր շինող ֆարբիկում աշխատանքի բաժանմամբ, 30 բանուոր օրեկան շինում էին 15,000 կարտ, կամ մի մարդ 500 հատից աւելի: Իւրաքանչիւրը կեանքում կարող էր տեսած լինել նման բան: Այնտեղ ուր մի բանի վրայ աշխատում են միասին շատ մարդիկ, աշխատանքը աւելի աջող է գնում, քան եթէ այդ մարդիկ առանձին-առանձին բանէին: Անգլիական առածը ասում է. «Երկու շուն միասին կը բռնեն աւելի շատ նապաստակներ, քան չորսը զատ-զատ»:

Արդ, ինչից է առաջանում աշխատանքի արդիւնաւորութեան այս ահագին աճումը աշխատանքի բաժանման դէպքում: Առաջինը՝ եթէ մարդ չի կտրւում իր աշխատութիւնից, չի փոխում նրան, նրա մօտ խնայւում է շատ ժամանակ, որ կորչում է, եթէ նա սկսի մի գործից անցնել միւսին: Եթէ բանուորը օրուայ մի մասը աշխատի դաշտում, իսկ մի մասը—ոստայնագործական գործիքի առաջ և անդադար փոփոխի այդ աշխատանքը, այն ժամանակ նա ոչմիայն շատ ժամանակ կը կորցնի դաշտից արհեստանոց և հակառակն պնալ դալու վրայ, այլև կը կորչի նաև այն ժամանակը, որ հարկաւոր է նրան նոր աշխատութեան համակերպուելու, դասուելու համար: Եթէ արհեստաւորը սկսէր օրը մի քանի անգամ փոփոխել աշխատանքը զանազան արհեստանոցներում, այդ դէպքում շատ աւելի պակաս բան կը շինէր, քան այժմ: Երկրորդ՝ աշխատանքի բաժանման պայմանում շատ աւելանում է բանուորի ճարտարութիւնը կամ ճարպիկութիւնը: Հասկանալի է, նա ով միշտ շատ բազմազան բաներ է շինում, չի կարող այնպէս արագ, ճիշտ, ճարտարօրէն կատարել, ինչպէս նա որ իր ամբողջ կեանքը կատարում է միայն միևնոյն ոչ բարդ, պարզ աշխատանքը: Մարդ, որ բան էլ լաւ փականագործ լինի, նա, անշուշտ չէր կարող այնպէս ճարպիկութեամբ յղկել գնդասեղի գլուխը, ինչպէս նա որ տասնեակ տարիներ իւրաքանչիւր օր ուրիշ բան չի շինում, այդ գլխիկներից բացի: Որքան էլ հմուտ լինի դալբինը, նա չի կարող շատ մեխեր շինել մի օրում, օրինակ, 200—300 հատ, սակայն լինում են 12 տարեկան մեխագործներ, որոնք կարողանում են շինել օրը 2300 հատ: Երրորդ՝ աշխատանքի բաժանումը նպաստում է նոր հնարներ գտնելու, մեքենաների և գործիքների մէջ բարեփոխումներ մտցնելու: Պարզ է եթէ միշտ բոլոր կեանքում միևնոյն գործիքի կամ մեքենայի հետ գործ ունենալ, աւելի հեշտ է յօրինել թէ ինչպէս է աւելի յարմար

նրան իր գործին «սաղացնել», քան եթէ այդ գործիքով միայն երբեմն բան ես շինում: Շատ նոր հնարներ են գտել բանուորները հէնց այն պատճառով որ միշտ, երկարատե կատարել են նոյն բանը և նոյն գործիքով կամ յարատե գործ են ունեցել մեքենայի նոյն մասի հետ:

Սակայն պէտք է մատնանշել և այն որ այդ բոլոր առաւելութիւնների հետ միասին աշխատանքի բաժանումը ունի և այլ շատ անձեռնտու կողմը: Երևակայենք մեզ մի բանուոր, որ մասնագիտցրել է իրան մի գործի որեւէ մի փոքրիկ մասը կատարելու մէջ: Դիցուք նա միայն գիտէ գնդասեղ շինելու գործում միայն մագիթով ձգելը: Քաշում է նա այն ամեն օր, օրեկան 12 ժամ, այդպես քաշում է նա ամբողջ իր կեանքը: Ի՞նչ պէտք է լինի նրա հետ: Նա ժամանակ չունի մի ուրիշ բան սովորելու, որովհետեւ նրա ամբողջ օրը բոնուած է այդ աշխատանքով: Եւ հարկ էլ չկայ որ նա սովորի, բանի նրա աշխատավարձը աշխատութեան ուրիշ նոյնպիսի փոքր մասում (օր., գնդասեղի գլխիկներ յղկելիս) քիչ կամ բնաւ չի տարբերուելու այժմուանից: Ուրեմն, նրա դիտելիքները չեն կարող ընդարձակուել: Ընդհակառակը, եթէ նոյնիսկ առաջ նա ունէր գիտելիքներ, նա ստիպուած է մոռացութեան տալ այդ բոլորը այս մշտտեւ, անփոփոխ, նեղ, փոքրիկ աշխատութեան մէջ: Զարգացում, առաջադիմութիւն բանուորի համար այդ պայմաններում չըկայ: Նա բթանում է, դառնում է այն մեքենայի մասը, որին շըղթայուած է, որի վրայ բանելու ժամանակ ստիպուած է անդադար հսկել: Այդ դեռ քիչ է—նրա աշխատանքի լիակատար միակերպութեան պատճառով—նրա ոսկրները, մկանուները ոչ ստեղծաբանական ընթացքում հիւանդոտ փոփոխութիւնների են ենթարկւում: Իւրաքանչիւր օր գիտէ, օրինակ, որ մշտատե աշխատանքը, ծալապատիկ նստած, տալիս է ոտներին էլ խանձին ծուռ ձև (օրինակ դերձակների մօտ): Այդպիսի վանաղան ձևի խեղաթիւրումներ շատ են լինում գործարանային բանուորների մէջ: Վերջապէս, այդպիսի բանուորի օրավարձն էլ, պարզ է, որ չի աւելանում, որովհետեւ նա ընդ միշտ կապուած է միևնոյն գործի հետ: Այս պատճառներով պէտք է եզրակացնել որ աշխատանքի այդպիսի բաժանում, այսինքն այնպիսի գործելակերպ, որի ժամանակ ամեն մի բանուոր շինում է ոչ ամբողջ իրը, այլ միայն իրի մի մասը, թէև աւելացնում է հասարակութեան մէջ աշխատանքի արդիւնաւորութիւնը, բայց չափազանց փոստաւար ազդեցութիւն է գործում բանուորների վրայ:

Նոյնպիսի ազդեցութիւն է թողնում աշխատանքի արդիւնաւորութեան վրայ նաև աշխատանքի համադրութիւնը, որ լինում

է քարզ և սարզ: Պարզ համադրութեան ժամանակ, ինչպէս և բաժանման ժամանակ, մի իր շինուում է շատ բանուորների ձեռքով: Սակայն բաժանման դէպքում—աշխատանքը բաշխուում է առանձին մարդկանց մէջ, որոնցից ամեն մէկը բանում է նրա առանձին մասի վրայ: Պարզ համադրութեան ժամանակ շատ մարդիկ միանում են (համադրւում են) նրա համար, որ կատարեն ամբողջ գործը միահամուռ: Այդ անուում է կամ այն պատճառով որ գործը պէտք է պայմանաժամին հասցնուի, կարճ ժամանակում (հատիկները թափւում են, եթէ հունձը ժամանակին չհաւաքել, խոտը չորանում է, եթէ նրան չհարել կանաչ), կամ այն պատճառով, որ գործը մի մարդու ոյժից վեր է (մեծ ծանրութիւններ բարձրացնելը կամ սիւններ տնկելը): Մասայի, բազմաթիւ մարդկանց ոյժը խորտակում է այն խոչնդոսները, որոնց անկարող է յաղթել մի մարդ: Ինչքան և մի մարդը «չալիշ գար» այդպիսի աշխատանքի վրայ, նրա գործը միշտ էլ սակաւ արդիւնաւոր կը լինէր առանց միւս մարդկանց օգնութեան:

Վերջապէս, քարզ համադրութիւն կոչւում է բոլոր մարդկանց աշխատանքի համագումարը—խրաքանչիւրին իր գործում: Ամեն մէկը շինում է ամբողջ իրը սկզբից մինչև վերջ: Դարբինը շինում է օրինակ արօրը, երկրագործը վարում է իր դաշտը: Դարբինը ծախում է երկրագործին նրան հարկաւոր արօրը, իսկ երկրագործը ծախում է դարբինին սրան հարկաւոր հարբ: Մինչև այժմ մարդկութիւնը ձգտում է ապրել այնպէս, որ իւրարանջիւրը իր համար չարտադրի ամեն ինչ: Իւրաքանչիւրը կատարում է որևէ մի բան. երկրագործը՝ հաց, դարբինը՝ արօր, դերձակը՝ հագուստ, մսագործը՝ միս, ջուհակը՝ մահուդ: Դրանք բոլորը իրանց գործուածքներով փոխարինւում են: Իւրաքանչիւրը աւելի շատ բան է արտադրում, քան հարկաւոր է իրան, որպէսզի այն յանձնի նրանց, որոնք կարիք են զրուում այդ բաների մէջ, և ձեռք բերած փողով գնի այն բոլորը, ինչ որ հարկաւոր է իրան: Քաղաքներում պարտաւում են արհեստներով, գիւղերում—ամենից շատ երկրագործութեամբ. այնտեղ ուր կան հանքեր—լեռնագործութեամբ. ուր կան անտառներ—անտառագործութեամբ և այլն: Այդ պարտավունքների այդ բաժանմունքով կամ քարզ համադրութեամբ մարդիկ ստանում են ամենը ինչ որ պահանջում է տալիս իրանց և ուրիշ մարդկանց պահանջներին: Ակներև է այդ պարտավունքների այդկերպ բաժանումը կամ քարզ համադրութիւնը չի կարող այն չափով ունենալ այնպիսի փնտաւար հետեանքներ բանուորների համար, ինչպիսին մենք տեսանք աշխատանքի բաժանումից: Սակայն

իւրաքանչիւրը հնարաւորութիւն է ստանում այդ ճանապարհով բարուքիւ իր արդիւնաբերութիւնը, կատարելագործուել նրա մէջ և աւելի լաւ. աւելի ճարտար, շատ և արդիւնաւոր կերպով բանել:

Այդպիսով մենք իմացանք, որ աշխատանքի արդիւնաւետութեան առաջին պայմանն է նրա բաժանումը և համադրումներ: Դիմենք երկրորդ պայմանին՝ աշխատանքի սղատումն:

Իւրաքանչիւր որ զիտէ, որ մահակի տակից, ստիպուած լինելով աշխատելը—մի բանի նման չէ: Միայն նա, ով հաւատացած է որ իր բանելուց օգուտ կը ստանայ ինքը, միայն նա է լաւ բանում: Իսկ եթէ նրա բանելուց օգուտը ուսումնում է ուրիշը, այն ժամանակ այդպիսի բանուորի աշխատանքը քիչ բան կը տայ, կը լինի պակաս—արդիւնաւոր: Այդպէս է հէնց ստրուկների և ճորտերի աշխատանքը: Առաջներում ամենուրեք դոյութիւն ունէին թէ մէկ և թէ միւս տեսակները, իսկ ազատ բանուորներ շատ քիչ կային: Ստրուկը համարում էր աւարկայ և ոչ մարդ: Նրա բոլոր կայքը պատկանում էր տիրոջ: Տէրը իրաւունք ունէր նրան սպանել, ծախել, փոխել ուրիշի հետ: Ծորաւը կապուած էր տիրոջ հողի վրայ, չէր կարող հեռանալ նրանից և պարտաւոր էր բանել իր տիրոջ համար: Գիտութեան, կրթութեան զարգացման հետ միասին և ստրկութիւնը, և ճորտութիւնը կամաց կամաց ոչնչացան բոլոր երկրներում և այժմ Եւրոպայում արդէն ոչ մի տեղ գոյութիւն չունի, այլ մնացել է Աֆրիկայում, Ամերիկայում, բայց և այնտեղ հարուստները ձգտում են որ բոլոր մարդիկ լինեն ազատ: Ռուսաստանում ճորտական իրաւունքը, ինչպէս յայտնի է, վերացուած է Ալեքսանդր II-րդ կայսրի կամքով 1861 թուականին: Այդ ստրուկների և ճորտերի աշխատանքը չի կարող իր արդիւնաւորութեամբ համեմատուել ազատ մարդկանց աշխատանքի հետ:—Յիրաւի, ինչ կարիք ունեն նրանք շատ ոյժ բանեցնել աշխատանքի վրայ, եթէ նրանք զիտեն որ զրանից նրանց զրութիւնը չի բարուքուիլ, որ նրանք ոչինչ չեն ստանալ այն բանից, ինչ որ շինեցին: Չի կարելի մտածել, որ այդ պայմաններում բանուորների կողմից որեւէ ջանասիրութիւն կը գործադրուի աշխատանքի մէջ: Երբեմն կարելի է որ միանգամից սկսեն աշխատել, եթէ սպառնում է մտրակը կամ մահակը, սակայն արդիւնաւորութեան այդպիսի աւելացումը երկարատեւ չի լինիլ, որովհետեւ կը վերանայ այն, հէնց որ պատժուելու վտանգը անցնի: Հաշիւները ցոյց են տալիս, որ ստրուկը աշխատանքի վրայ դնում է կէսից պակաս այն ոյժի, որ նա կարող էր զնել, եթէ ցանկար: Փորձել են հաշուել և գտել են թէ այն ինչ արժէր ճորտատիրոջ համար 3 կոպ. որոշ

բանակութեամբ խոտ հարելը, ազատ աշխատանքի դէպքում նստում է միայն $1/2$ կողմ: Երկու ազատ խոտհարներ այնքան խոտ կը քաղեն որքան հարում են վեց ճորտեր: միևնույն ժամանակում: Անազատի աշխատանքի այդ պակաս արդիւնաւէտութիւնը վաղուց յայտնի էր իրանց ստրկատէրերին և ճորտատէրերին: Լինում էին դէպքեր, երբ ստրկատէրերը մի քանի շտապ դործերը յանձնում էին իրանց վարձկան բանուորներին, և ոչ իրանց սարուկներին կամ ճորտերին: Մի քանի երկրնորում տէրերը իրանք են բարուոքել իրանց ստրուկների ապրուստը, տալիս էին նրանց աշխատավարձի որոշ մասը և դրանով համարում էին նրան, որ ստրկական աշխատանքը աւելի լաւ, աւելի արդիւնաւոր և իրանց տէրերի համար աւելի օգտակար էր դառնում:

Երբորդ պայմանը աշխատանքի աշդիւնաւորութեան կայանում է նրանում որ աշխատանքի գործիքները պատկանեն իրանց աշխատաւորներին: Արդ, ի՞նչ է այդ «աշխատանքի գործիք» տասածը: Առհասարակ աշխատանքի գործիք կարելի է անուանել այն ամենը ինչ որ օգնում է աշխատանքին, առանց որին չի կարող բան տեսնել աշխատանքը: Այդ մտքով գործիք է կոչւում ոչ միայն մեքենան, գործին (инструментъ), այլև շինութիւնները, առանց որոնց չի կարող բան տեսնել բանուորը իր բանիւլ ժամանակ, և հողը, որ անհրաժեշտ է երկրագործին: Բանուորը իրո համար շատ աւելի լաւ է բանում, քան ուրիշի համար: Որքան աւելի շատ օգուտ կը ստանայ նա ինքը բանելուց, այնքան աւելի ոյժ և ջանք կը բանեցնի նա որպէսզի գործը աջող գնայ: Այդ պատճառով աշխատանքը մի երկրում այնքան աւելի արդիւնաւէտ է, որքան աւելի գործիքներ են պատկանում նրանց, որոնք իրանք են բանում: Նա ունի պատկանում է հողը՝ խնայում է նրան, չի վարում, չի սպառում այնպէս, ինչպէս նա, ով այն վարձու է վերցրել: Հողատէրը գիտէ որ նա պէտք է խնայի հողի ոյժը, որպէսզի ապագայում նրանից հասոյթ ստանայ: Իսկ նա ով վարձել է հողը երկար ժամանակով նա պահպանում է այն միայն մինչև այն ժամանակ, երբ մօտենում է տիրոջ վերադարձնելու պայմանաժամը: Ով կարճ միջոցով է վարձել հողը նա սկի հարկ էլ չունի այդպէս վարուելու, նա ջանում է իր համար կորզել ամենամեծ հասոյթը, ուշ չդարձնելով ապագայի մասին: Նմանապէս գործատէրից ոռճիկ ստացող ոչ մի բանուոր բանի չի դնի իր բոլոր ոյժերը—որովհետև նրա ոռճիկը դրանից խօմ չի աւելանալ: Միայն ինքը գործատէրը, որ ամբողջ շահը ինքն է ստանում, կարող է աշխատել իր բոլոր ոյժերի լարումով:

Նոյեմբեր, 1906.

Վերջապէս, յիշենք արդիւնքի արդիւնաւէտութեան չոր-
րորդ, ամենագլխաւոր պայմանի մասին, այն է՝ երկրի մէջ զիտու-
թեան զարգացման մասին: Ես արդէն ասացի որ բնութիւնը տալիս
է ոյժերը, որոնցով օգտուում է մարդ իր արդիւնաբերական գոր-
ծունէութեան համար: Բնութեան նուաճումը մարդու կողմից
հէնց կայանում է նրանում որ այդ ոյժերը հակադրւում են իրար
այնպէս, որպէսզի նրանք ծառայեն մարդու նպատակներին: Հա-
կանալի է որքան աւելի նուաճել բնութիւնը, որքան առաւել
ստիպել բնութեան ոյժերին ծառայել իրան, այնքան պա-
կտաւ աշխատանք է մնում իրան մարդուն, կամ որ նոյնն է՝
աշխատանքի նոյն քանակով կարելի է աւելի շատ բան անել,
այսինքն այնքանով աշխատանքը դառնում է աւելի արդիւնաւէտ:
Հետեւաբար, աշխատանքի արդիւնաւէտութեան համար անհրա-
ժեշտ է բնութեան օրէնքների զիտութիւնը: Միայն այն դէպքում,
երբ մենք ծանաչում ենք բնութիւնը, նրա ոյժերը, այն օրէնքնե-
րը, որոնց նրանք ենթարկւում են, միայն այն ժամանակ ենք
կարող մենք աւելի աշուղակ ձևով նուաճել նրանց, ստիպել այդ
ոյժերին բանել մեզ համար և աշխատանքի նոյն քանակով ան-
համեմատ աւելի բան շինել: Շատ առաջներում, երբ մարդիկ
չգիտէին ինչպէս շինել ջրադացներ կամ քամադացներ, նրանք
ահագին քանակի աշխատանք էին վատնում հացահատիկները
ալիւր դարձնելու համար: Այդ մտքով ծանօթութիւնը ջրի և
քամու ոյժի հետ անհաշուելի օգուտներ բերաւ մարդկութեան:
Որքան անգամ շատ ժամանակ էին վատնում մարդիկ փոխա-
դրութեան, ապրանքների տեղափոխութեան վրայ առաջ, երբ
գետ չգիտէին շոգու գորութիւնը, չգիտէին երկաթուղի և շո-
գենաւ շինել: Որքան անգամ աւելի արագ է ցորենը կալուած
շոգեշարժ կալսիչի, քան կամայով կամ շղթայով: միթէ գի-
տութեան զարգացումը չէր որ նպաստեց կրճատել այդ բոլոր
գէպքերում աշխատանքի և ժամանակի քանակը: Նայէք ձեր
շուրջը: Իւրաքանչիւր նոր արօր, նոր ցաքան, նոր գործիք, որ
ժամանակի ընթացքում դառել է անհրաժեշտութիւն տնտե-
սութեան կամ արհեստի մէջ—արդիւնք է գիտութեան առաջ-
խաղացման: Ուստի զիտութիւնը ահագին տնտեսական ոյժ է:

3. ԿԱՊԻՏԱԼ

Կապիտալի կամ դրամագլխի հասկացողութիւնը.—կապիտալի զոյացումը.—նրա
գործադրութիւնը.—նրա բաղադրիչ մասերը.—Հիմնական եւ շրջանառական
կապիտալ:

Մենք քննեցինք արդիւնագործութեան երկու պայման-

ներք. բնութիւնը և աշխատանքը: Մեզ ֆիտում է ծանօթանալ երբորդի՝ կապիտալի հետ:

Մենք արդէն յիշեցինք որ անանց գործիքի անհնար է որ և է արդիւնաբերութիւն: Դատարկ ձեռներով մարդ ոչինչ չի կարող անել: Երկրագործութեան, արհեստների համար անհրաժեշտ են առանձնաշատուկ գործիքներ: Եթէ մէկը իր ապրուստը հայթայթում է միայն որսորդութեամբ և ձկնորսութեամբ նոյն իսկ նրան հարկաւոր է հրացան կամ աղեղ նետերով, կամ ձկնորսական պարագաներ: Յետոյ, մարդկանց արդիւնաբերական գործողութեան մեջ անհրաժեշտ է հում նիւթ, այսինքն այն նիւթը, որ ենթարկւում է մշակութեան նախ քան նրան կը սկսեն գործածել: Վերջապէս, աշխատանքի արտադրած իրերը պէտք է պահպանուեն, ինչպէս և գործիքները: Դրա համար հարկաւոր են շինութիւններ, որոնք անհրաժեշտ են բանուորներին բանելու ժամանակ: Իւրաքանչիւր արդիւնագործութիւն պահանջում է աշխատանքի որոշ մսխումներ (գործիքների, հում նիւթի, շինութիւնների սլօի վրայ), որոնք կատարուած լինէին նախ քան այդ արդիւնագործութեան սկսուիլը: Առանց այդ անհնար է ինքը արդիւնագործութիւնը: Այդ բոլոր մսխումները կոչւում են կապիտալ:

Հետևաբար, կապիտալը նախկին աշխատանքի արդիւն է, ինչպէս գիտենք բնութիւնը ձրիարար ոչինչ չի տալիս մարդուն: Ձրիարար նա չի տալիս և կապիտալ, որ կարող է երևան գալ միայն այն պատճառով, որ առաջուց մսխեցին աշխատանքի որոշ քանակութիւն այդ կապիտալը արտադրելու համար: Յետոյ, կապիտալ կարող է կոչուել միայն այն իրը, որ հարկաւոր է նոր իրեր արտադրելու համար: Կապիտալ չի կոչուելու այն ամենը, ինչ որ հարկաւոր է մարդուն անմիջական գործադրութեան համար, այլ միայն այն, ինչ որ հարկաւոր է նոր իրեր շինելու համար: Ուստի կապիտալ չէ տունը, որի մէջ մենք ապրում ենք, հացը որ մենք ուտում ենք, սեղանը, որի վրայ գրում ենք: Սակայն տունը, որի մէջ զետեղուած է արհեստանոցը, հացը, որով մենք կերակրում ենք բանուորներին, սեղանը, որի վրայ ամբարած են փականագործական ձմրոցները, — այդ բոլորը կապիտալ է, որովհետեւ այդ բոլորը ծառայում է նոր արդիւնագործութեան:

Դրա մէջ են պարունակում երկու անհրաժեշտ պայմանները, որպէսզի որեւէ իր կաշուի կապիտալ: Իրը պէտք է լինի 1) նախորդ աշխատանքի արդիւնք և 2) ծառայի նոր արդիւնաբերութեան: Հետևաբար, կապիտալ է կոչւում մարդու ձեռքով շինուած իւրաքանչիւր ստարկայ, որ պիտի ծառայի նոր արդիւնաբերութեան համար:

Արդ, ի՞նչպէս է կարող առաջ գալ կապիտալը:

Ենթադրենք որ ձկնորսը ապրում է նրանով որ ձնոններով բռնում է ձուկ և կերակրւում նրանով: Դիցուք որ նա որեւէ այլ միջոց ապրուստի չունի: Եթէ այդ ձկնորսութիւնը բռնում է նրա ամբողջ օրը, և եթէ օրուայ ընթացքում նրան կ'աջողուի բռնել ոչ աւել քան որքան հարկաւոր է իր և իրա ընտանիքին կերակրելու համար, այդ գէպքում նրան ժամանակ չի մնալ որպէսզի իր համար ձեռք բերի ձկնորսական պարագաներ: Ուռկան, ցանց, նաւ և այլն ձկնորսական պարագաները իհարկէ կ'աւելացնէին նրա աշխատանքի արդիւնաւէտութիւնը: Նրանց միջոցով նա զգալի չափով կ'աւելացնէր բռնած ձկների քանակութիւնը: Սակայն, որպէսզի այդ ձկնորսական պարագաները շինի, նրան հարկաւոր է ժամանակ կամ անհրաժեշտ փող, որ այդ պարագաները գնի: Բայց մեր ձկնորսը ժամանակ չունի: Նրա ամբողջ օրը բռնուած է՝ ձկնորսութեամբ իրան կերակրելու համար: Նա փող էլ չունի, որովհետեւ օրեկան նա բռնում է միայն այնքան, որքան հարկաւոր է իր և իրա ընտանիքի ապրուստի համար: Վաճառելու համար նրան ոչինչ չի մնում: Ուրեմն ի՞նչպէս է կարող նա պարագաներ ձեռք բերել, այլ խօսքերով. ի՞նչպէս նա կապիտալ ձեռք կը բերի:

Ենթադրենք յետոյ, որ ձկնորսի աւելացած ճարպիկութեան շնորհիւ, կամ ձկների առատութեան շնորհիւ, կամ առհասարակ որեւէ այլ պատճառներով ձկնորսի աշխատանքի արդիւնաւէտութիւնը աւելացաւ, որ նրա օրեկան որսը սկսեց ասպնովել նրա սնունդը ոչ միայն մի օրով, այլ, օրինակ, երկու օրով: Այժմ նրա մօտ մնում է որոշ քանակութեամբ ժամանակը պարապ: Երկու օրից մէկը այժմ նա կարող է կամ ոչինչ չանել, կամ որեւէ այլ բանի գործադրել: Եթէ նա կը բանեցնի այնպէս որ իր համար շինի արդիւնաբերութեան գործիք (թոռ, ուռական, նաւ և այլն) կամ այնպէս որ ձուկն բռնի վաճառքի համար, որպէս զի յետոյ գնի այդ արդիւնաբերական գործիքները, այն ժամանակ նրա մօտ երևան կը գոյ կապիտալ: Իսկ եթէ ազատ ժամանակը կը գործադրի ուրիշ իրեր շինելու վրայ, որոնք հարկաւոր չեն արդիւնաբերութեան մէջ, այլ հարկաւոր են միայն իր սեփական գործունէութեան համար (օրինակ իր համար աման-չաման կը շինի կամ հագուստ կը կարի), այդ գէպքում նա առաջուայ պէս կապիտալ չի ունենալ:

Այդպիսով երկու պայման են հարկաւոր որպէսզի երևան գոյ կապիտալը. 1) պէտք է որ աշխատանքի արդիւնաւէտութիւնը այնքան աճի, որպէսզի մի օրում կարելի լինի աւելի քան շինել, քան որ-

քան հարկաւոր է քանուորի եւ նրա ընտանիքի համար: 2) Պէտք է որ օրեկան տպրուտը հայթայթելուց յետոյ մնացած ազատ ժամանակը դորձադրուի արդիւնաբերական գործիքների քանակը աւելացնուելամ որակը կատարելագործելու վրայ: Կարճ էր արդեօք աւելանալ մարդու կապիտալը, եթէ նա օրեկան ուղիղ այնքան արտադրէր, որքան ուզում է: Իհարկէ, ոչ: Կարճ է արդեօք աւելանալ գործատէրի կապիտալը, եթէ բանուորը նրա համար շինէր միայն այնքան, որքան իրան վճարում է իրբն ոռճիկ: Իհարկէ, ոչ: Գործատէրի համար միայն այն ժամանակ է ձեռքնուռ բանուոր ունենալ, երբ նրա աշխատանքը այնքան արդիւնաւէտ է, որ նրան տուած ոռճիկը ծածկւում է յաւելումով, օգուտով: Միայն այն ժամանակ է հնարաւոր նրա կապիտալի աճումը:

Այդ ճանապարհով է գոյանում կապիտալը: Պարզ է որ նա հանդիսանում է իբրեւ աշխատանքի արդիւնքների խնայողութիւն: Եթէ ես ինձ համար ցորեն հայթայթեցի միայն սնունդի համար՝ այդ դէպքում ես սպառեցի իմ աշխատանքը: Յորենից ես հաց թխեցի, կերայ այն—եւ աւելի ոչինչ: Ոչ մի նոր իր ես դրանից չստացայ: Ընդհակառակը, ես ոչնչացրի որոշ առարկայ—ցորենը: Իսկ եթէ ես շինեցի կացին, այդ դէպքում ես խնայեցի այն աշխատանքը, որ ես գործադրեցի իր արդիւնաբերելու համար: Այդ աշխատանքի արդիւնքը—կացինը երկար ինձ կը ծառայի իմ ուրիշ աշխատանքների համար եւ կարող է ինձ համար ապագայում շինել շատ հարկաւոր իրեր: Բայց կապիտալ, իհարկէ, մոխում է: Մանուածքը ոչնչանում է, երբ ես նրանից կտոր եմ շինում. ածուխը այրւում է դարբնոցում, կացինը կտրւում է, շինութիւնը քայքայւում է: Արդ, թնչպէս է կարող մոխում այն, ինչ որ խնայւում է, Հէնց այդտեղ է ընկած կապիտալի ամենակարեւոր տարբերութիւնը մարդու աշխատանքով արտադրած իւրաքանչիւր այլ առարկայից: Կապիտալը մոխում է նրա համար, որ վերածնուի նոր կերպարանքով, իսկ ամեն մի առարկայ մոխում է անդարձ: Մանուածքը ոչնչանում է, բայց նրա փոխարէն երևան է գալիս հիւսուածքը: Ածուխը այրւում է, սակայն դարբնի մօտ դրա շնորհիւ երևան է գալիս վաճառման համար նոր առարկայ: Կացինը կտրւում է, սակայն այն պատճառով որ մինչ այդ նա օգնեց մարդուն շատ իրեր շինելու: Արհեստանոցը հնանում է, բայց մինչ այդ նրա մէջ շինուել են շատ իրեր: Իսկ եթէ կերակուրը կերուել է, հագուստը ծաշուել, տունը, որի մէջ մենք ապրում ենք հնացել է,—այդ առարկաները կորչում են անվերադարձ եւ ոչ մի նոր իր մարդու համար չեն բերում: Պէտք է ամուր յիշել

կապիտալի այդ մսխումը որ և է այլ առարկայի մսխումից՝ Յետոյ մենք կ'իմանանք, որ կան այնպիսի կապիտալներ, որոնք հէնց նրանով են օգուտ բերում մարդուն, որ մսխում են միանգամից:

Այդպէս ուրեմն, մենք իմացանք թէ ինչ է կապիտալը, ինչպէս է նա գոյանում և ինչպէս է նա մսխում: Այժմ տեսնենք ինչպիսի առարկաներն են կեանքի մէջ կապիտալ կոչւում, ինչից են կազմւում մարդկանց կապիտալները:

Առաջին, կապիտալ են կոչւում հում նիւթերը: Ամեն մի հիւսուածագործարանում հարկաւոր է կտաւաթել, կամ կանեփ, կամ բուրդ, կամ բամբակ: Ամեն մի դարբինին կամ փականագործին հարկաւոր է երկաթ, պողպատ: Ամեն մի սեղանագործին, հիւսնին—փայտեղէն և այլն: Այդ բոլորը կոչւում է հում նիւթ: Այդ նիւթը ստացւում է և այնպիսի կերպի բերւում, որ դառնում է պիտանի մշակման համար: Այդ բոլորի վրայ, ուրեմն, արդէն մսխւած է մարդկային աշխատանք, նախ քան նա մտնում է նոր արդիւնագործութեան մէջ (ծառը, օրինակ, կտրւում է, սղոցւում, տեղափոխւում և այլն):

Երկրորդ, կապիտալ են կոչւում բոլոր գործիքները, մեքենաները և բոլոր շինութիւնները որոնք օգնում են աշխատանքի արդիւնաւէտութեան (հիւսնի, դարբնի և միւսների գործիքները, շոգեմեքենան, գիւղատնտեսական և այլ գործիքներ—զուլթաններ, արօրներ, կալսիչներ և այլն, երկաթուղի, շոգենաւ և այլն և այլն): Պարզ է որ այդ բոլորը արդիւնք է մարդու առաջուց կատարած աշխատանքի—և այդ բոլորը ծառայում է նոր արդիւնագործութեան:

Երրորդ, կապիտալ են կոչւում և տնային անասունները: Այդ անասունները ի հարկէ չեն ստեղծւում մարդու աշխատանքով: Սակայն նրանց խնամելու, նրանց կերակրելու համար շատ աշխատանք է մսխւում: Եւ որովհետեւ նրանք օգնում են մարդուն արդիւնաբերութեան մէջ, ուստի մենք կարող ենք նրանց նոյնպէս կապիտալ անունը տալ: Եղները, որոնցով մենք հերկում ենք, ձիերը, որոնցով մենք շարժում ենք կալսիչները կամ ձիթահանը և այլն այդ բոլորը, իհարկէ կապիտալ է:

Չորրորդ, կապիտալ է կոչւում այն բարուքով, որ մարդ կատարում է շրջակայ բնութեան մէջ, նրանից աւելի օգուտ ստանալու նպատակով: Անջրի անապատում ոսոգունն են մշտցնում, ջրհորներ, ջրամբարներ են շինում, որպէսզի հնարաւոր լինի հացահատիկներ ցանել, անասուն պահել: Մի քանի ցած

ծովափներում պատնէշներ են շինում որպէսզի պաշտպանուեն ալիքների գրոհից: Անպատու հողի մէջ մտցնում են պարարտ (աղբ կամ արուեստական պարարտներ), որպէսզի հողը հունձ տայ: Մեծ սարերը ծակում են անցքերով (տունել), որպէսզի կարելի լինի ճանապարհ բանալ և այլն: Այդ բոլորը հետևանք է մարդու ուժեղացրած աշխատանքի և աւելում է նրա համար որ ընդարձակուի, աւելացնուի արդիւնագործութիւնը:

Հինգերորդ, կապիտալ են կոչւում բոլոր շինութիւնները, որոնք ծառայում են իրրև աշխատավայր կամ շինուած իրերի ամբար: Այդ կարգին են պատկանում բոլոր արհեստանոցները, գործարանների շինութիւնները, ամբարները, խանութները և այլն, — մի խօսքով բոլորը ինչ որ ծառայում է արդիւնագործութեան հովանաւորելով օդի, ցրտի, տոթի, կրակի աղղեցութիւնից և ամեն տեսակ ֆիզիքական անբարեպատեհ երևոյթներից:

Վերջապէս, վեցերորդ, կապիտալ է կոչւում բանուորներին ապրուստ հայթայթելու համար նշանակուած բոլոր միջոցները որևէ արդիւնագործութեան մէջ: Եթէ ես բանուոր չունեմ և ապրում եմ միայն իմ աշխատանքով — կարող է արդեօք կապիտալ անուանուել իմ կերակուրը, հագուստը, բնակարանը: Այդ բոլորը իհարկէ, նախորդ աշխատանքի արդիւնք է, սակայն ծառայում է նաև նոր արդիւնագործութեան համար, թէ ոչ: Իհարկէ, ոչ: Մարդ ուսում է որ ապրի, և ոչ նրա համար որ նորից բանի: Նա կը կերակրուէր նոյնիսկ այն ժամանակ, եթէ չբանէր: Ուստի այդ ամենը չի կարելի կապիտալ կոչել: Սակայն եթէ ես կերակրում եմ իմ բանուորներին, տալիս եմ նրանց ոտճիկ, շինում եմ նրանց համար խրճիթ, արդեօք իմ կապիտալը կը լինի նրանց կերակուրը, այդ փողերը, այդ խրճիթը: Իհարկէ այո: Այդ ամենը առաջուայ նման — աշխատանքի արդիւնք է: Նոր արդիւնաբերութեան համար է արդեօք նա յատկացրում: Իհարկէ, յատկացրուած է: Ես բանուորներին կերակրում եմ ոչ այլ բանի համար, եթէ ոչ նրա, որ նրանք դրա փոխարէն ինձ համար որոշ աշխատանք կատարեն: Ուստի բոլոր միջոցները, որոնցով վըճարում է բանուորի աշխատավարձը, նրա գործատւի համար կապիտալ է կոչւում:

Այդպէս են կապիտալի բաղադրիչ մասերը: Մեզ մնում է յատկանշել շատ կարևոր տարբերութիւններ նրանց մէջ, այն է խօսել հիմնական և շրջանառական կապիտալի մասին:

Մենք գիտենք որ կապիտալը մսխւում է: Արդեօք միատեսակ են մսխւում բոլոր կապիտալները: Եթէ դարբնանոցում բովի մէջ զցուած է ածուխ — նա խկոյն և եթ այլուում է: Եթէ բանեցնւում է փայտեղէնը, նա կարող է ծառայել միայն

մի անգամ: Այդ տախտակից կարելի է իր շինել, իսկ յետոյ արդէն այդ տախտակը ոչ մի արդիւնադործութան չի ծառայում: Իսկ եթէ ես ինձ համար գութան շինեցի, նա արդէն չի ոչնչանում նրանից յետոյ, երբ ես նրա միջոցով ակոսեցի: Նա ինձ երկար է ծառայում, ես նրա միջոցով շատ դեսիատին տարածութիւն եմ վարում, մինչև որ նա անպէտք է դառնում գործածութեան համար: Եթէ նա իւրաքանչիւր տարի վարում է 50 դեսիատին և այդպէս անդադար բանում է 5 տարի, ուրեմն, ընդամենը նա կը բանի 250 դեսիատին: Այնտեղ ամբողջ ածուխը և ամբողջ տախտակը մի իրի վրայ են մտնում: Այստեղ իւրաքանչիւր դեսիատինի վրայ մտնում է միայն $\frac{1}{250}$ մասը գութանի (կամ այն փողի, որ նրա հանար վճարուած է): Սյդ տարբերութիւնը չափազանց կարևոր է: Յետոյ, ուշք զարձրէք այն բանի վրայ, որ ածուխը և տախտակը հէնց նրանով են օգուտ բերում, որ ոչնչանում են: Ինչո՞վ է օգտակար ածուխը: Հէնց նրանով, որ այրւում է: Ինչո՞վ է օգտակար տախտակը: Նրանով, որ պիտանի է դանազան իրեր շինելու: Չայրուի ածուխը, տախտակը իրեր շինուելու համար պիտանի չլինի— նրանք չէին բերիլ իրանց մաս օգուտը մարդուն, չէին լինի կապիտալի հաշուում: Ընդհակառակը, որքան երկարատեւ է ծառայում գութանը, այնքան նա աւելի օգտակար է մարդուն: Նա օգտակար է ոչ նրանով, որ ոչնչացնւում է, այլ նրանով որ նրան ծառայում է և այնքան առաւել է նրա օգուտը, որքան երկարատեւ է ծառայութիւնը: Ինչ օգուտ կը լինէր երկրագործութիւնից, եթէ իւրաքանչիւր դեսիատինի համար նոր գութան պահանջուէր!

Ուրեմն, նայած այն ձևին, թէ ինչպէս է կապիտալը մտնում, վերջինս կարող է լինել երկու տեսակի: Կամ նա մտնում է միանգամից, կամ աստիճանաբար: Առաջին դէպքում նա իր կոչումն է կատարում նրանով որ ոչնչանում է, փոխում է ձեւը: Երկրորդ դէպքում նրանով որ շարունակում է իրա գոյութիւնը պահպանել: Առաջին դէպքում նա կոչւում է շրջանառական կապիտալ, իսկ երկրորդ՝ հիմնական: Հիմնականը ծառայում է շատ գործերում, ոչնչանում է դանդաղօրէն, աստիճանաբար և վերականգնւում է ճանաչման շատ արտադրած առարկաներում: Շրջանառական գրամագլուխը ծառայում է միայն մի գործի և օգտակար է իր ոչնչացումով, ոչնչանում է միանգամից և վերականգնւում ամբողջապէս իրա արտադրած մի առարկայի մէջ: Մեր օրինակում գութանը վերականգնւում է 250 դեսիատինի մէջ, այսինքն 250 դեսիատինի հատոյթի մէջ պարունակւում է այն ծախքը, որ արւում է գութանի վրայ: Բայց եթէ 1 ֆ. ածուխը հարկա-

ւոր է մեխ արդիւնաբերելու համար, ուրեմն մեխից ստացած հասոյթի մէջ վերականգնուում է, պարունակւում է 1 ֆունտ ածուխ գնելու համար արած ծախքը:

Միանգամայն հասկանալի է, որ կապիտալների վեց բաղադրիչ մասերից շրջանառական կապիտալին են պատկանում հում նիւթերը եւ բանուորների՝ պանրանութեան համար միջոցները: Միայն դրանք մսխւում են միանգամից: Բոլոր միւսները մսխււում են դանդաղօրէն, ծառայում են շատ արդիւնագործութիւնների, ուստի պատկանում են հիմնական կապիտալներին:

Որքան աւելի են ընդարձակւում մարդկանց գիտելիքները, որքան աւելի է ընդարձակւում նրանց արդիւնաբերական գործունէութիւնը, այնքան աւելի է փոխարինւում ձեռքի աշխատանքը մեքենայականով, որ շատ աւելի արդիւնաւէտ է, — հետեւեալ, շրջանառական կապիտալները փոխարինւում են հիմնականներով: Արդեօք միշտ է ձեռնառու այդ փոխարինումը անել, եթէ ջուլհակը ձեռներով տարին 600 արշին մահուդ է գործում եւ եթէ այդ վայրում աւելին ծախել անկարելի է, արդեօք ձեռնառու է թանկ արժող մեքենան, որ կարող է տարին գործել 6000 արշին, մի քանակութիւն որ սպառուելու տեղ չունի: Ի հարկէ ոչ, 5400 արշինը չեն գտնիլ իրանց համար գնողներ եւ իզուր տեղը կը կորչեն: Միայն այն ժամանակ, երբ մեքենայով նորից արտադրած բոլոր իրերը կարող են ծախուել, կարող են ապառուել, միայն այդ դէպքում ձեռնառու է լինում փոխարինել ձեռքի աշխատանքը մեքենայականով: Այդտեղ կայ եւ այլ պայման, որից կախուած է մեքենայի ներմուծման ձեռնառութիւնը: Եթէ, օրինակ, մեքենան իր բանելու ամբողջ ընթացքում մատակարարեց իրեր ընդամենը 100 բուբրուց աւելի, քան նոյն ժամանակամիջոցում դրանից առաջ առանց նրան արտադրւում էր այդ իրերից, իսկ ինքը մեքենան արժէ 200 ռ., եւ նոյն իսկ թէկուզ 100 ռ. — արդեօք ձեռնառու է ներմուծել նրան: Ակներեւ է որ շահաւէտ չէ կամ, առնուազն, անօգուտ է: Նա շահաւէտ կը լինի միայն այն դէպքում, եթէ մեքենայի իրա գինը աւելի պակաս է քան նրա արտադրած աւելորդ իրերի արժէքը եւ որքան պակաս, այնքան աւելի շահաւէտ է:

D.

«ԱԶԳԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ»

Մերկացրած ոճիրների տարափի տակ անկարող լինելով՝ այլևս ծածկել դառն իրողութիւնը դաշնակցական շէֆերը և նրանց «փիլիսոփայ» Պանգլոսը այժմ դանազան սովեստութիւններով, խեղաթիւրումներով և ծակ փաստարանութիւններով աշխատում են «մեղմացուցիչ պարագաներ» դտնել և սևը սպիտակացնել, ոճիրները վարագուրել այնպէս, որ դուրս է գալիս թէ ինքը հայ ժողովուրդն է խնդրել որ դաշնակցականները ծեծեն, բռնաբարեն, կեղեքեն, սպանեն իրան՝ ի փառս ամենասուրբ Դաշնակցութեան: Շողոքորթելով հասարակութեան ամենաընկած, ամենաբիրտ և խաւար տականքսի ինստիքտներին, այդ խուժանին «ժողովուրդ» անունը տալով, դաշնակցական գերիշխանութիւնից գինովցած և վանական փոքրաւորութեան մէջ անբարոյականացած շէֆերը կաշուից դուրս են գալիս այժմ իրանց այլանդակ բարոյական գիմակները «դեմոկրատիզմի» կեղծիքի տակ առնելու:

Բերենք քաղելով «Մշակից» մի քանի նոր փաստեր, ինչպէս և շուշեցիների և մի խումբ ինտելիգենտների բողոքը, որոնք արտայայտութիւն են հայի զարթած ինչնագիտակցութեան. համբերութեան բաժակը լցուել է և աւելորդ կաթիլները թափոււմ են վերեւից, չնայած աղղային բիւրօկրատների բոլոր ֆոկլուսներին...

1905 թ. երբ տխրահռչակ Բոգոսլավսկին (Սուրմալուի գաւառապետը) մի չնչին բանի համար էկզեկուցիայի ենթարկեց Գիւլլուջա և Մօլլաղամար գիւղերը, ուղարկելով մի հարիւրեակ կօզակ, որ ապրեն գիւղացիների ծախսով երկու ամիս, միևնոյն ժամանակ այդ երկու գիւղերը ենթարկեցին Դաշնակցութեան կողմից ևս էկզեկուցիայի երկու կողմից: Դաշնակցութիւնն ուղարկեց այդ գիւղերի համար 24 հաստավիղ հայդուկներ, իբր թէ գիւղերը պահպանելու թուրքերի յարձակումներից: Երկրորդ՝ «փայտը միս անելով», ինչպէս առ հասարակ

ասում են գիւղացիները, ղէնքի փող էին հաւաքում տանից 30 ր.: Մի կողմից Բօգոսլաւսկու էկզեկուցիան, մի կողմից գիւղացիների հացի պակասութիւնը և միւս կողմից Դաշնակցութեան ղէնքի փող հաւաքելը, միանգամայն դրեցին խեղճ գիւղացիներին անելանելի դրութեան մէջ: Ի՞նչ անեն, հրտեղից վերցնեն փող, այդ ահագին ծախսերի համար: Ով որ կով, եզ, ոչխար ունէր, էժան գներով ծախում էր՝ տալիս խոտի, գարու, մսի և այլ մթերքների կողակների համար ու իր ընտանիքին՝ հացի. այժմ պէտք է ստիպուած կանաչ արտերի երեսը, մի տարուայ ապրուստն էլ ծախէր, տար ղէնքի, որ պրծնէր կազմակերպութեան անողորմ ձեռքից, թէ չէ լաւ ծեծուելուց յետոյ, կուղարկուէր Երևան կօմիտէի մօտը, որ կարող էր վատ հետեանք ունենալ. այդպէս էին ասում կազմակերպութեան շրջիկները, լիազօրները: Վերջապէս տաս օրուայ ընթացքում Գիւլլուշա գիւղում հաւաքուեց մի ահագին գումար 760 ր., և յանձնուեց իգդիրեցի տասնապետին, որը խոստացաւ գնել ինքնապաշտպանութեան ղէնքեր, որոնք մինչև այժմս էլ չկան ու չկան:

Բայց դառնանք «ազատութեան համար մարտնչող» դաշնակցական հայդուկներին, որոնք իրանց կողմից մի մի պատուհաս են դառել խեղճ գիւլլուշեցիների համար: Նրանք, այդ Տաճկաստանի զաֆտիանները, խառնվում են ամուսնական, սիրահարական, ընտանեկան գործերի մէջ և իրանց ամբողջութեամբ մի այնպիսի բռնութիւն, ծեծ հայհոյանք են դործ դնում, որ մարդուս մտղերը բիզ-բիզ են կանգնում: Օրինակ, պատմենք մի քանի դէպքեր: 48 տարեկան ծեր Եղնարին ծեծեցին, խայտառակեցին. ի՞նչ մեղքի համար, այն մեղքի, որ Եղնարը ինքը հասարակ մարդու կին լինելով համարձակուել է ենթակօմիտէի կնոջ հետ կուուել, ուշուց տալ նրան: Խեղճ Սայադին ծեծեցին չորս ղինուորներ տասնապետ շրջիկ Ափրօյի հետ. հր մեղքի համար, ի՞նչ էր արել խեղճը. նրա համար որ Սայադի շունը ցերեկով հաչել է ղինուորի վրայ. ծեր, 65 տարեկան Ասատուրին թակեցին ատամները ջարդելով. որովհետեւ «սուրբ Դաշնակցութեան» ղինուորների ճաշը մի օր ուշացրել էր. Աբաս-գեօլցի 70 տարեկան, ալեւոր Օհաննէսին իշու վրայ նստացրել մի երեսն էլ մուր քսել ման էին ածում փողոցներով. հր մեղքի համար այն մեղքի համար որ Օհանէսը ձին ինչո՞ւ չի տուել Ափրօյին, որ Իգդիր գնար ազգային գործերի համար. և Աւետիսի 16 տարեկան ջահել աղջիկը մարակի ոյժով պսակեցին 40—45 տարեկան դաւաճիշագցի Գասպարի վրայ, որովհետեւ Գասպարը ղինուորներին 50 ր.

փող էր տուել «Назад»: Վերջապէս ռըը ասեմ, ռըը խոստովանեմ, անհամարելի են ցաւը իմ, անբուժելի են վէրք իմ, մեղայ Աստծոյ: Սհաւասիկ, ազգային պաշտպաններ, ձեր արած բարերարութիւնները հայ ազգին, այս կերպով էլ երեւի ազատութեան համար էք մարտնչում. միթէ դա աւազակութիւն չէ, օր ցերեկով հաւաքել 760 ը. և առանց այլևայլութեան կորզել. չէ՞ որ այդ 760 բուրլին 760 կաթիլ արիւն ու քրտինք է գիւղացու. ամօթ, հազար ամօթ ձեզ պէս կեղծ յեղափոխականներիդ: Ասացէք, խնդրեմ, ինչ զանազանութիւն կայ, ձեր և Տաճկաստանի քրդերի մէջ:

Գիւլլիշա գիւղ.

Ս. Մելլոնեան

Գեօրջայ, 12 հոկտեմբերի

«Մշակի» 205 համարում Տեղ գիւղից գրուած Տէր-Սահակեանցի նամակը մեզ այնքան էլ չզարմացրեց նրա համար, որ Սողոմոնը անգրագէտ է: Բայց ի՞նչ անուն տանք մեր Գիրք գիւղի ուսուցչին: Այդ մարդը նոյնպէս չամաչեց օր ցերեկով հայ կնոջ նստեցնել իշու վրայ, զինուորներով շրջապատուած գիւղի փողոցները շրջեցնելու: Նոյնպէս և մի այլ մարդ, որը գաւառիս հայ և թուրք ազգաբնակութեան խորին յարգանքն է վայելում. հրամանատար աղայի առաջի պահանջով չնեղայանալու պատճառով, զինուորներ են ուղարկում այդ մարդու գիւղը. իրիկնապահին զինուորները մտնում են նրա բաղը, կնոջ և երեխաների աչքի առաջ սաստիկ ջարդ տալուց յետոյ, քշում են բերում 25 վերստ՝ հրամանատարի մօտ: Հրամանատարը հրամայում է իսկոյն մի էշ բերել, իսկոյն էշը բերում է, և զինուորների սպանալիքի տակ նստեցնում են իշու վրայ. ուսուցիչ-հրամանատարը պատուիրում է իր աշակերտներին ազգային երգեր երգելով իշու առջևից դնալ և գիւղի փողոցները շրջել, որ և կատարւում է:

Մի առ մի նկարադրել չեմ կարող այն բնութիւնները, ծանր տուգանքները, բանտարկութիւնը, ծեծը, բռնի փող ստանալը, մի խօսքով, մի քանի ամիսների ընթացքում հազարներ կորզելը աղքատ, ջրատար ժողովրդից, աննպատակ ծախքերը, և այդ բոլորը կատարում էր պարօնը նրա համար, որ «լիազօրութիւն» ունի:

Այդ բոլորի վրայ էլ եթէ հնար լինի աւելացնել նրա կատարած ոճիւրը, որի մասին լուծ եմ, այն ժամանակ շատ պարզ կը լինի, թէ ինչ ոգու տէր մարդկանց հետ ենք դործ

ունեցել և թէ Սողոմոնը մենակ չէ: Մարդ ապուշ է կտրւում տեսնելով, որ մարդիկ այդպիսի չարիքներ գործելուց յետոյ անպատիժ չըջում են:

Ականատես

Վերին-Աղբան, հոկտեմբերի 10-ին

Վերջին տարիներս հայերիս մէջ սունկի նման բուսնող ինքնակոչ ինքնակալների կամայականութիւնների մի նմուշ ևս հրապարակի վրայ դնելու համար խնդրեմ տեղ տաք երկաւորիս:

Ես, ծերունի արհեստաւոր, 55 տարի նաժուռ ու պատիւ պահած, իմ հասցէին մի «չօր» անգամ լսած չկայի, բայց անտեղի ու անակնկալ կերպով ես ևս զոհ դարձայ գիւղիս ինքնակոչ «շէյխ»-ի ամենազօր գաւազանին, որից ազատ չէ մեղանում ոչ արդարը և ոչ մեղաւորը: Գիւղը, եթէ չասեմ ողջ գաւառը, դողում է «շէյխի» ձեռքին. նա քննել, հարցնել չգիտէ. բերանդ կուղիս բաց անել, բացատրուել, վայրկենաբար գլխիդ կը տրաքի գաւազանը կամ կը շառաչի մտրակը. եթէ փորձես պաշտպանուել, աւելի կը կատաղեցնես և այն ժամանակ վայրոջ հալին ու քո օրին:

Սակայն ով էլ «շէյխի» ձեռք ճաշակէր, ևս գոնէ ինձ միշտ ազատ էի համարում այդ բանից, որովհետեւ ես ծեծուելու մարդ չեմ, ես ինձ պահել եմ պատուաւոր ու վայելուչ կերպով: Եթէ շէյխը կենտրոնի նշանակած «հասաուլ» է, և կայ իշխանութեան որեւէ բարձր ինստանացիա, ապա խնդրեմ մարդ նշանակեցէք, հարցրէք, քննեցէք և տեսէք, թէ ես ով եմ ու ի՞նչ աբուսի տէր:

Ինչ է իմ յանցանքս, ես չգիտեմ: Ժողովրդի մէջ կանգնած էր մեր «շէյխ»-ը, երբ ես ևս ուրիշների նման ահ ու դողով մօտեցայ նրան: «Կորի՛ր», որոտաց նա: Ես, ապշած, ուզում էի պատճառը հարցնել, բայց խօսքս բերանումս սահնցելով՝ «քէօփօղի» գոչեց և գաւազանով դինուած ընկաւ ջանիս: Ես լաւ ջարդուեցի, մարմինս կապտոտուեց հարուածների տակ, բայց ոչ ոք սիրտ չարեց ազատել ինձ հօր «շէյխ»-ի ձեռքից: Այդ միջոցին մի կին սարսափահար լաց էր լինում իմ դրութեան վրայ:

Մեր «շէյխ»-ը շատ յաճախ թայֆայակոն վրէժներ է լուծում: Երկար բացակայութիւնից յետոյ, երբ նա յայտնւում է գիւղամիջում, համարեա ամենքը թաղնւում են ծակ ու ծուկ-երում, որի ժամանակ աւերակի տպաւորութիւն է թողնում

գիւղը: Այս ամառ իմ եղբոր ոչխարները «շէյխ»-ը փնդակահար արաւ, կոտորեց գիւղի հանդուս և մարսեց... Շատ շատերին է նա էշի ու գոմէշի նման վայր գցում, ծեծում, գոռոցը երկինք հանում, բայց և բոլորը մարսում է: Մեր ազգը, իրաւ է, սովոր է ստրկութեան, բայց այս աստիճանի ստոր ստրկութիւն տանել չենք կարող: Խեղճ Արզուման Ղարազեադեանցը երէկ մուշտարու էր ման գալիս. նա ուզում է տուն ու տեղը ծախել և գաղթել ընդմիշտ այս երբեմն դրախտանման աշխարհից:

Ի սէր Աստծոյ, եթէ կայ մի այնպիսի աշխարհ, ուր կարող եմ ազատ շունչ քաշել, ուր չկան այսօրինակ վայրենութիւններ, ուր մարդ արարածը կարող է մարդակերպ ապրել, ցոյց տուէք ինձ. ես ևս ուզում եմ գլուխս առնել, կորչել այստեղից. վախենում եմ, գուցէ աւելի մեծ վորձաքններ կան առաջիս... Ձէ՞ որ «շէյխ»-ը ասաց, որ տկար է. և երբ առողջանայ, դեռ օյիններ շատ ունի խաղալու իմ գլխին: Շատ մարդ գիւղամիջում ծեծւում է մեր «շէյխ»-ի ձեռքով, բայց ամաչում է տանը յայտնել կնոջը. իմ կիներն էլ, երբ տեսաւ կապտոտած մէջքս, լաց եղաւ:

Եթէ մենք էլ մարդ ենք և ապրում ենք այն տէրութեան մէջ, ուր վաղուց վերացուած է մանիֆէստով ծեծը, ապա ազաւում եմ ազատեցէք մեզ այս անտեղի տուր ու քօթակից: Եթէ Դաշնակցութիւնը դեռ ջրէնք ունի և դեռ շունչ իր բերանում և եթէ այսպիսի գաղանութիւնների հեղինակն ու պաշտպանը ինքը չէ, թող չբաւականանայ ըստ սովորութեան լսել ու ականջի բամակը գցելով, այլ քննութիւն նշանակէ,*) յանցաւորին պատժէ. այլապէս մեր համբերութեան բաժակը անյատակ չէ և մի օր էլ կարող է լցուել: Այսպէս խայտառակ սպրեւուց աւելի լաւ է պատուով մեռնել:

Վերջացնելով խօսքս, աւելացնում եմ, որ նման բաշիւքօղուկութիւնների պատճառով գործողները վաղուց կորցրել են իրանց հմայքը ժողովրդի աչքում և հաւասարուել ցեխին.

*) Խեղճ, միամիտ ժողովուրդ. «քննութիւն է» պահանջում հէնց իրանց շէֆերից, որոնք ոճիրներ երևան հանելը, իրանց խայտառակ բեժիմը քննադատելը «մատնութիւն» են հռչակում: Ուրեմն, պահանջէք որ ոռոս և տաճկական բիրօկրատիան իրանք իրանց դատապարտեն. արդարանալը միթէ դժուար է: Ոչ, քննողը, դատողը պէտք է Դաշնակցութիւնից անկախ մարմին լինի: Ստրկացած ժողովուրդը դեռ չի համարձակուում «ազգային քննութեան դէմ» անկախ ժողովրդական ձեռնաս դատարան պահանջել և աղերսում է շէֆերին: Չուր յոյսեր...

այդ ճշմարտութիւնը ամենին ակնայայտնի կը դառնայ ամենամօտ ապագայում:

Երէցիօիս Վերին-Աղբանի եկեղեցու՝
Դէորգ Դէորգեան

Թեմական հոգևոր իշխանութեան գործերում ընթացք է ստացել Քարվանսարա գիւղում տեղի ունեցած հետեւեալ սըխ-րագործութիւնը, որի հերոսն է Վասիլ Գ. Ղազումեանը, 40—45 տարեկան մի անձ:

Ահա ինչպէս է պատմել և գրաւոր յայտնել զոհի հայրը, նոյն Քարվանսարայի գիւղացի Վարդան Օհանեանը, ներկայ-ութեամբ իւր քաւոր Ստեփան Խաչատրեանի:

Հերոս Վասիլ Ղազումեանը 8 ամիս սրանից առաջ դանա-զան խոստումներով և ապա իւր զինուորներէ միջոցով վախե-ցնում է Վարդան Օհանեանի 18 տարեկան դուստրը, զրկում նրան կուսութիւնից և ապա պահում իբրեւ հարձ, չնայելով որ ինքն ամուսնացած է, օրինաւոր կին և գաւաղներ ունի և 40—45 տարեկան է: Տնից դուրս է անում իւր կնոջ՝ Վարսենիկին և 2 մանր երեխաներին: Ապա նա պահանջում է աղջկայ հօ-րից օժիտը, ստանում է այդ օժիտը, և 400 ռուբլի փող, որ հայրը, վախեցած նրա ոյժից, անմունջ տալիս է: Սրանից 2 ամիս առաջ վախճանւում է օրինաւոր կինը: Խեղճ հայրը միիթարւում է, որ այժմ խմբապետը կամուսնանայ իւր աղջը-կայ հետ և նրանով վերջ կը դրուի իւր յղիացած աղջկայ ա-նարգ դրութեան. սակայն այդ յոյսը զուր է անցնում. խմբա-պետը ոչ միայն չէ ամուսնանում, այլ և դուրս է անում տը-նից աղջկան, առանց վերադարձնելու, ի հարկէ, 400 ռուբլին և կամենում է ամուսնանալ մի ուրիշ աղջկալ հետ:

Հայրը, վերցնելով աղջկան, եկել է Թիֆլիս և բողոք ներկայացրել առաջնորդին, որը հեռագրով կարգադրել է գործակալին թոյլ չտալ Ղազումեանի ամուսնութիւնը, մինչև ինզրի քննութիւնը:

Թագազիւղի ուսուցիչ և միաժամանակ այն գիւղի լիա-զօր՝ X... մտրակի զօրով Թագազիւղացիներին բեգառ, Նորա-գաւթայ քարահանքից քար կրել տուեց 16 վերստ հեռաւորու-թեամբ մինչև իրանց գիւղը և իւր համար սենեակներ շինել տուեց: Այդ բանը իւր ժամանակին ես սովորական դաշնակ-ցականի գործ էի համարում. նա դատաւոր էր, ուժեղ էր, և

ամեն բան անում էր: Դեռ ունեւորդ եւ համարում պատմել՝
ինչպէս ծեծել էր (իր աթոռակից Սողոմոնի պէս) մի կնոջ,
մերկ թէ շորերով, այդ չգիտեմ:

Իսկ թէ ինչու ուսուցիչ ղեկավար դաշնակցականի անու-
նը չտուեցի, դա կապուած է և մի քանի այդ տեսակ անուն-
ների հետ, դրա համար էլ անունը չյայտնեցի: Իսկ եթէ ու-
մանց համար կասկածելի կը լինի, ես անունները կը տամ իր
ժամանակին, եթէ հաջկը պահանջի:

Գալով «Երկիր»-ին, պէտք է ասել, որ նա կամ պիտի
արդարացնի իր ազենտներէ գործելու տակտիկան, կամ այդ
մասին չպիտի բանակուի մէջ մտնի «Մշակ»-ի հետ:

Զիգդամու

Ս. Տէր-Թովմասեան

Մեր գիւղացի Ս. Բ.-եանցին կանչում են մի տուն, զին-
ուորներով շրջապատած և զանազան անվայել խօսքերով նա-
խատելով, ուզում են նստեցնել իշի վրայ և շրջեցնել գիւղամի-
ջով, որովհետեւ լսել են, որ այդ կինը իբր թէ պոռնկութեամբ է
պարապում. կինը վարհուրելով մեր շէյխերի արնակոխ հայ-
եացքներէջ ծունկ է չոքում, աղիողորմ արտասուում, որ իրան
չանպատուեն գիւղամիջում, բայց անողոր են «մերոնք», վճիւր
ցանկանում են ի կտտար ածել, երբ արդէն գիւղի պատուաւոր
մարդիկ անպատուութիւն համարելով այդ բանը գիւղին, ներս
են մտնում և... վերջապէս համոզում այդ բանը չանել:

Կինը, այլևս չկարողանալով տանել այդ, թողեց մի գի-
շեր և փախաւ ամուսնու տնից և դնաց հեռու աշխարհ, որ
ազատուել կարողանայ «մերոնց» հօր ձեռքերից: Եւ մինչև
այսօր չէ վերադարձել իր ամուսնու մօտ, որը ստիպուած կե-
նակցում է ուրիշի հետ: «Մեր տղերք», մի՞թէ դուք եկել էք
«պոռնիկների» դատ անելու, մի՞թէ շղթաներով, ծեծով պիտի
սարսափահար անէք ժողովրդին: Ինչո՞ւ չէք գնում սարսափա-
հար անելու տաճիկին, որը ձեր քոյրերի պատիւներն շօշա-
փում...:

Ա. Կանաւտեան

Դաշնակցութեան սխրագործութիւնները Հ. Նախ. զատուի Դ.
շրջանում:

Հազարաւոր բռնութեան դէպքերից ես այստեղ բերում
եմ միայն մի քանիսը, որ լաւ բնորոշում են Դաշնակցութեան
գործունէութիւնը և ցոյց են տալիս, թէ որքան ներդաշնա-
կութիւն կայ այդ կուսակցութեան ծրագրի, շէֆերի ճոճ և ա

ֆրազները ու յօդուածները և բուն գործունէութեան մէջ, ծը-
րադրի իրականացման մէջ:

Անցեալ 1905 թուի ձմեռը Ռ. գիւղում տեղական խմբա-
պետը հրամայում է մի երիտասարդի պսակուել մի համագիւ-
ղացի աղջկայ հետ: Երիտասարդը մերժում է, ասելով թէ ին-
քը աղքատ մարդ է և պսակուելու փող չունի: Ուզում են զօ-
ռով պսակել, բայց նա փախչում է գիւղից: Այն ժամանակ
գալիս է զաշնակցական խմբապետը իր զինուորներով, կանչում
է երիտասարդի մօրը, մի լաւ ծեծում է և յետոյ տանում կան-
գնեցնում եկեղեցու դրանը և թքում խեղճ կնոջ հրեսիւն:

Նոյն ձմեռը Ն.-Ա. գիւղում երկու զինուոր մի գիւղացու
բռնում են տանում տէրտէրի տունը, սրտեղ գտնւում է այդ
ժամանակ խմբապետ Ա.: Ուժբաւեալ հրամայում է գիւղացուն
փող տալ իսկոյն: Գիւղացին մերժում է: Այն ժամանակ լսմ-
բապետը հրամայում է զինուորներին ծեծել գիւղացուն, և սկսում
են ծեծել: Այնքան ծեծում են, որ գիւղացին երկու ամիս
պառկած է եղել անկողնում:

Փող պահանջելու համար մէկին գնդակով վիրաւորել են,
իսկ շատերին ծեծել են: Դա սովորական սխրագործութիւն է
համարւում «սուրբ գործի» համար:

1906 թ. հոկտեմբեր ամսին Դ. գիւղում պատահում է
հետեւեալ դէպքը: Գիւղում, տեղական Դաշնակցութեան լիազօր
Ն. Մ. գիւղերը կանչում է իր մօտ Մ. Մ.-ին, որի հետ հին
անձնական թշնամիութիւն է ունեցել և մի ինչ որ յանձնա-
րարութեամբ հրամայում է իսկոյն գնալ Տ. գիւղը: Վերջինս
ասում է, թէ չէ կարող գնալ, որովհետ իր տունը թուրքերի
մասունք է և անտէր է. սկսում է խեղճին ծեծել մտրակով,
հարուածներ հասցնելով գլխին: Մի կէս ժամից յետոյ Մ. Մ.
ուղեղի փնասումից մեռնում է, թողնելով 8 մանր երեխաներ
առանց մի որեւէ ապրուստի միջոցի: Սպանուածի բարեկամ-
ները գանգատ ներկայացրին Դաշնակցութեան շրջանային կօ-
միտէտին, բայց կօմիտէտն ոչ միայն արդարացրեց մարդա-
սպանին, այլ և խրախուսեց նրան: Յետոյ դաշնակցական փա-
շաները պահանջեցին սպանուածի բարեկամներէ ստորագրու-
թիւն, թէ նրանք ոչ մի գանգատ չունեն Դաշնակցութեան
տեղական մարմնից և առհասարակ շատ գոհ են. և երբ միւր-
ժում ստացան, սպանում էին գիւղի զինուորական ուժի:

Այս աշնանը Չ. գիւղի գիւղացիք հաւաքւում են և 70
հոգու ստորագրութեամբ մարդ են ուղարկում Հնչակեան կու-
սակցութեան լիազօրի մօտ Վ. Ա. և խնդրում, որ նա իր զին-
ուորներով գալ իրանց գիւղը, որի ահագին մեծամասնութիւնը
նոյեմբեր, 1906,

հնչակեաններն են, և ապա տէր իրանց դաշնակցական զինուորներին և խմբապետների բռնութիւններից: Բայց հէնց որ եկան հնչակեանները, իսկոյն գալիս է գիւղը խմբապետ Լ. 32 զինուորներով և պահանջում գիւղացիներից, որ նրանք իսկոյն և եթ դուրս անեն գիւղից հնչակեաններին, ասելով, թէ հնչակեանները «սօցիալիստութիւն» են քարոզում, կառավարութեան ղէմ են և դրա համար թուրքերից վառ են, պէտք է սօցիալիստներին կոտորեն: Բոլոր գիւղացիների աղաչանքները՝ 2 օր ժամանակ սալ, որ իրանք հեռացնեն հնչակեաններին, ապարդիւն են անցնում: «Աղգային ընկերութեան» քաջերը կտուրներով ներս են խուժում գիւղացի Ս. տունը և հրացանները պարզելով ղէպի կանայք և երեխաները, պահանջում են դուրս անել այնտեղից երկու հնչակեան զինուորներին, սպառնալով հակառակ դէպքում սրի անցկացնել տանտիրոջը և նրա ընտանիքը, իսկ գիւղը մեծ տուգանքի ենթարկել: Հնչակեանները աւելի զիջող են գտնում և չկամենալով պատճառ լինել եղբայրասպան կռուի, մանաւանդ որ մէջտեղ կարող էր սարսափելի տուժել գիւղը, թողնում հեռանում են, հակառակ գիւղացիների մեծամասնութեան ցանկութեան: Ի միջի այլոց դաշնակցականները հնչակեաններին մեղադրում էին հետեւալ բանում. երկու օր առաջ մի հնչակեան զինուոր գտնում է ճանապարհին 25 բ., որը վայր դրած է լինում գըլպանից մի աղքատ թուրք գիւղացի: Հնչակեան խմբապետը կանչում է թուրքին և փողը յետ դարձնում: Այդ լսանք սարսափելի դայրացնում է մեր «աշխատաւոր մասսայի» պաշտպաններին. «Ինչպէ՞ս կարելի է գտնել փող, այն էլ թուրքի, և յետ դարձնել տիրոջը»: Այդ նրանց համար ուղղակի անհասկանալի էր:

Որովհետեւ 2 հնչակեան զինուորներին տանում էին շըրջապատուած 32 դաշնակցականներով, գիւղացիները վախեւնում են, մի գուցէ ճանապարհին սպանեն դրանց գիւղի սահմաններում և գիւղը տուգանքի ենթարկեն: Գիւղացիները մի Յ. անունով երիտասարդի գնում են կալանաւորուածների հետ, որ չթողնէ նրանց սպանեն ճանապարհին: Ա. գիւղից վերադարնալիս Տ. գիւղում բռնում են Յ.-ին դաշնակցականները և խմբապետ Մ., այնքան ծեծում են խեղճ տղային, որ զինուորները վախենալով Յ. մահից, ազատում են նրան գաղանացած խմբապետի ձեռքից: Բայց Յ. չարչարանքները դըրանով չեն վերջանում: Գիւղից դուրս բռնում են և սկսում ծեծել, ասելով. «Գո՛ւ ես այդ հնչակեան շներին բերել գիւղը, սօցիալիստ ես, ուզում ես կառավարութեան ղէմ կռիւ քարո-

գել»։ Երիտասարդը մի կերպ պրծնելով զինուորների ձեռքից, որոնք ուղղում են նրան ճանապարհին սպանել, փախչում գնում է Դ. գիւղը, իր մի բարեկամի տունը։ Բայց և այդտեղ էլ նրան հանգիստ չեն թողնում։ Իսկոյն հրաման է գալիս խմբապետից, թէ ոչ մի հայ իրաւունք չունի իր տանը օթեան տալ հնչակեանին, հակառակ դէպքում սրի կանցկացնեն ըմբոսաբնտանիքը։ Խեղճ Յ. գիշերը մնում է դրսում, եկեղեցու բակում և խնդրում է մի ծանօթ թուրքի, որ նա մի տեսակ իրան ազատի։ Թուրքը մարդ է ուղարկում Չ. գիւղը և իմաց է տալիս Յ.-ին բարեկամներին նրա թշուառ դրութեան մասին։ Մի քանի գիւղացի ստիպուած են լինում զինուած գնալ Դ. և բերել Յ.-ին։ Այդ բոլորից յետոյ գիւղացիք վճռում են այլ ևս իրանց գիւղը կուսակցական մարդ չթողնել, իսկ զինուոր բոլորովին չպահել։ Այդ վճիռը կայացնում են իրանց ազատ կամքով և միաձայն, այնքան նրանց զգուշացրել էր դաշնակցականների արարածները, որի հետեանքը կարող էր վատ լինել, բաժանելով գիւղացիներին երկու հակառակ թայֆայի։ Այն ժամանակ գալիս է գիւղը իր զինուորներով խմբապետ Լ. և մէկ-մէկ կանչելով իր մօտ գիւղացիներին՝ հրամայում է ստորագրութիւն տալ թէ կամենում են, որ դաշնակցական զինուոր լինի գիւղում, թէ՞ չէ։ Ի հարկէ ոչ ոք չհամարձակուեց գազան խմբապետի ներկայութեամբ իր կարծիքը ազատ յայտնել, բայց գիւղացիք փախչում էին, որ նրանց զինուորները չտանեն խմբապետի մօտ ստորագրութեան համար։ Զուտով խմբապետը կարողացաւ 30 ստորագրութիւն հաւաքել, բայց այդ 30-ից էլ 20-ը իսկոյն բողոք յայտնեցին շրջանային կօմիտէին, յայտնելով, թէ ստորագրութիւնը տուել են վախից, բայց չեն ցանկանում մինչև անգամ զինուորի երես տեսնել։ Բայց բողոքը մնաց առանց հետեանքի և 10 մարդու ցանկութեամբ, հակառակ հարիւրաւոր ձայների, գիւղը զինուոր ուղարկեցին։ Միթէ նոյն ծագումը չունեն և «Երկրում» բողոքների տակ ստորագրութիւնները։

Բնորոշ է, որ թուրք և հայ ժողովուրդը հնչակեաններին անուանում են «աղքատների ֆէդա», իսկ դաշնակցականներին՝ «հարուստների ֆէդա»։ Գիւղերում դաշնակցականների ներկայացուցիչները միշտ լինում են հարուստներ, որոնք, իրաւունքը գցելով իրանց ձեռքը և ունենալով իրանց պաշտպան այդպիսի ուժեղ կուսակցութիւն, տասնապատիկ աւելի սարսափելի են դառնում խեղճ գիւղացիների համար։ Դաշնակցութեան շրջիկ «սօցիալիստ» պրոպագանդիստները, որոնք ի դէպ ասած, միշտ ծածկում են իրանց զինուորներից իրանց «սո-

ցիալիստ» լինելը, որովհետև հակառակ դեպքում նրանց պատու-պատառ կանէին հէնց իրանց գինեւորները, միշտ իջնում են հարուստ գիւղացիների ժօտ և այնտեղ են կարգում իրանց դասախօսութիւնները, ժողովրդին ցոյց տալով, թէ իրանք աղքատներին պաշտպան են: Բայց ժողովուրդը նրանց չէ հաւատում, որովհետև տեսնում է, որ նրանք ծառայում են կեղերիչներին: Եւ այսպիսի պայմաններում խօսում են «ազատ ընտրութիւններ» մասին... *

Մենք, Շուշու հայ ժողովրդի ներկայացուչիչներս, տեսնելով ժողովրդի իրաւունքների ազատութեան և սեփականութեան վրայ տեղի ունեցող մի ամբողջ շարք բռնութիւններ, սրանով յայտարարում ենք, որ մենք ամենեւին կարիք չենք զգում ազգի անդամներէց մի քանիսի, ինչպէս և այսկամ այն կաղձակերպութեան խնամակալութեան, որոնք անուանման իշխանութեան ձգտելով, կոպիտ ուժի միջոցով փորձում են իսպառ խախտել ժողովրդի ազատ կամքն ու անձամբ տնօրինել նրա բաղդը:

Մեզ համար անդառնալի է այն վճիռը, որ մենք անկարող ենք այս լուսաւոր և ազատութեան համար կռիւ մղող դարում թողնել, որ մեզ վրայ բռնութիւններ դրած գրուեն, ինչպէս և առանց մեր համաձայնութեան մի խումբ մարդիկ մեր բաղդը տնօրինեն, մեր պատուի, կեանքի և գոյքի հետ միմիայն իրանց ցանկութեան համաձայն էլ վարուեն, ուստի գալիք չարիքների առաջն առնելու համար ընդունում և յայտարարում ենք.

1) Շուշու հայ համայնքը պիտի ղեկավարուի այն սկզբունքներով, որոնք արտայայտուած են առաջին ներկայացուցչական ժողովի ծրագրում:

2) Մենք ամբողջապէս ընդունում ենք այն ծրագիրը, որ ներկայացրուած է վերջի ժողովում խորհրդի անդամների կողմից, այս սեպտեմբերի 19-ի նիստում:

3) Համայնքը ոչ մի խնամակալութեան կարօտ չէ և ցանկանում է, որ իրան վերաբերեալ բոլոր հարցերը զոնուեն միմիայն ներկայացուցչական ժողովի իրաւասութեան ներքոյ:

4) Ինքնապաշտպանութեան գործը պիտի ամբողջապէս անցնի ժողովրդի ձեռքը, ուստի Դաշնակցութիւնը անմիջապէս պիտի յանձնի համայնքին այն ամենը, ինչ որ նրան է պատկանում, և ներկայացնէ իր գործունէութեան համառօտ հաշիւը:

5) Արգելւում է ամեն տեսակ բռնութիւն համայնքի ան-

դամներին նկատմամբ, թէ անհատներին և թէ կազմակերպութիւններին կողմից:

6) Արգելւում է թէ անհատներին և թէ կազմակերպութիւններին առանց համայնքի հաւանութեան՝ նրա անդամներին վրայ մի որեւէ հարկ նշանակել կամ փող ժողովել բռնի միջոցներով կամ սպառնալիքներով: Յանցաւորները կը ենթարկուեն համայնական դատաստանի:

7) Ոչ մի վճիռ այս կամ այն կազմակերպութեան համայնքի անդամներին համար պարտաւորեցուցիչ չէ: Դատապարտուած կարող են համարուել համայնքի անդամները միայն հասարակական կամ միջնորդական դատավճռի հիման վրայ:

8) Մենք ստոր բռնութիւն ենք համարում այն՝ ինչ որ կատարուեց սեպտեմբերի 4-ի երեկոյեան ներկայացուցչական ժողովի խորհրդի վերաբերմամբ՝ և յայտնում ենք զրա առիթով մեր դայրոյթը:

9) Ներկայ քաղաքական և տնտեսական պայմաններում մենք աւելորդ ենք համարում համայնքի հաշուով վարձկան զինուորներ պահել և հոկտեմբերի մէկից յայտարարում ենք զինուորներին և բոլոր զինուորական կազմին արձակուած, ռուսի և ստորագրում ենք.

Բժ. Խ. Բահաթուրեան, Ս. Մելիք-Ղարաբեկեան, Գէորգ Իսրայէլեանց, Սարգիս Վարդանեանց, Միխայիլ Եղիազարեան, Սենեքերիմ Բալասարէկեան, Ս. Իշխանեան, Մելքում Խալաֆեան, Ն. Ալիինեան, Հ. Մարտիրոսեան, Ա. Մելքումեան, Խ. Փիրջանեան, Լևոն Վարադեան, Իվան Յարութիւնեան Ալիսեան, Գ. Մինասէկեան, Թ. Աղախանեան, Հայրապէս Տէր-Սահակեան, Կարապետ Քօչարեան, Աղ. Մուրքիեան, Ն. Հէյրաթեան, Խ. Գասպարեան, Ի. Իշխանեան, Տ. Իւզրաշեան, Հ. Կոստանեան, Սարգիս Մնացականեան, Բալ. Նուրիջանեան, Մակար Դանիէլեանց, Յ. Սարգիսեան, Ս. Մ. Շահնազարեանց, Պետրոս Ղարախանեանց, Ն. Զուրաբեան, Զ. Բալաեանց, Մ. Սափարեան, Խոսրով Յարութիւնեանց, Եղուբեան, Մ. Անանեան, Սիմօն Բինեաթեան, Առաքել Բարայեան, Իսաջան Իսրայէլեան, Փարսադան Բալայեան, Ա. Սուլէյմանեան, Ա. Ամիրեան, Օհան Եղիեան, Ա. Սաղիեան, Գրիգոր Վարունցով, Կ. Շիխեան, Վանի Նզիբեան, Աստուածատուր Շախալդեան, Գ. Եղուբեան, Գրիգոր Տէր-Յակոբեան, Արշակ Բաղայեան, Ասրի Այգիւնեան, Մել. Սաչառուբեան, Մանաս Յարութեան, Նիկիտ Փիրջանեան, Աւետիս Մանուկեան, Մանաս Բաբաջանով, Մելքոն Բաբաջանեան:

Հոկտեմբերի 29-ին, Էջմիածնի վանքի շրջափակում, արքեպիսկոպոս Սուքիաս Պարզեանցի անձի դէմ կատարուել է մի այնպիսի զլուելի բռնութիւն, որ անյնում է որեւէ հաւանականութիւնից: Ոչ արքեպիսկոպոսի բարձր աստիճանը, ոչ նրա ծերունազարդ հասակը չկանգնեցրին տգէտ մարդկանց ամբոխը, որոնք չամաչեցին գարշելի կերպով վիրաւորել մարդուն, և ծերունուն, և հովուապետին: Անմիտ կատաղութեամբ կոյր, տգէտ խառնիճաղանճը կատարեց իր գործը, որ ընդունակ է ներշնչել միայն խորին նողկանքի զգացումն: Մենք մեր նուիրական պարտականութիւնն ենք համարում արտայայտել մեր ջերմ բողոքը և զայրոյթը այդպիսի իրողութիւնների դէմ, որոնք, ի մեծ վիշտ ամենքի, սովորական են դառնում հայոց եկեղեցու սրբավայր Մայր Աթոռի պարիսպներին մէջ:

Անկախ դրանից՝ մենք մեր պարտականութիւնն ենք համարում յիշեցնել հայ հասարակութեան այս փաստի սատիկ կարևոր հասարակական նշանակութեան մասին: Կոպիտ բռնութիւնը մի հովուապետի վրայ հանդիսանում է անզուսպ ինքնազատաստանի ծայրայեղ արտայայտութիւն: Այդպիսի բռնութիւնը չէ կարող վայրենի կրքերի պատահական բռնկման գործ լինել, և որովհետև այդպիսի իրողութիւններ տեղի են ունենում օր ըստ օրէ հայկական կեանքում և իրան հայ ժողովրդի դէմ, ուստի մենք պատեհ ենք համարում պահանջել, որ Էջմիածնի այդ ճշող գործը բնուի իրան՝ հասարակութեան ձեռքով, առանձին անձանց միջոցով, լիազօրութեամբ հայկական բոլոր հասարակական հաստատութիւնների և մամուլի օրգանների կողմից և որ այդ քննութեան հետեանքները իրանց ամբողջ մերկացմամբ հրատարակուեն ի գիտութիւն ընդհանուրի՝ առանց որեւէ սահմանափակումների:

Արդէն վաղուց հայ հասարակութիւնը յուզալից մտահոգութեամբ, երբեմն նաև հեղ վշտով հետևում է հայկական իրականութեան մէջ կատարուող դէպքերին, ուստի և մենք հաւատում ենք, որ հասարակութիւնը կը միացնէ իր ձայնը մեր բողոքին և ոյժ կը տայ մեր ներկայ պահանջին՝ այդպիսի բազմակողմանի քննութիւն կատարելու մասին, որը միայն կարող է բանալ լայն ճանապարհը՝ հայկական ժողովրդական հաստատութիւնները առողջացնելու և ժողովուրդը ազատելու իր ստրկացնողներէ:

Ք. Վերմիշեան, ԲԺ. Կ. Ստեփանեան, Սամսոն Յարութիւնեան, Յովհաննէս Սպէնդեարեան, Յովսէփ Խոնունց, Միքայէլ Աթաբէգեան, Պետրոս Քալանթարեան, Ռուբէն Յովհան-

Նիսեան, Սիմէօն Աֆանասեան, բժ. Բախշի Աղասարեան,
բժ. Աւետիք Բաբայեան, Պաւլ Դօլուխանեան, Գ. Եղազու-
եան, բժ. Ղազարեան, բժ. Ա. Քաթանեան:

— Թիֆլիս, 3 նոյեմբեր 1906 թ.

Րէժիմն է մեղատու

Երկար ժամանակ է, որ ես որպէս հին-դաշնակցական՝
նոր Րէժիմին հակառակ՝ հետաքրքրում եմ դաշնակցականների
գործերով... Ի՞նչ գործեր ասես որ չէ կատարուել մասնաւորա-
պէս խուլ գիւղերում, և այնքան բազմազան են կատարուած տը-
ղեղ երևոյթները, որ կարճ խօսքով կարելի է ասել՝ յիշեցնում
են «Գաղտնիք ինկվիզիցիայի» արարքները, արտոքները, որոնք
մեր ժողովրդին այն աստիճան ստրկացրել, նրա կուլտուրական
գործին հարուած են տուել, որ 10 տարուայ անխոնջ ջանքեր են
պէտք նորից նախկին աստիճանին հասցնելու համար: Այդ իմ՝
վեց տարվայ*) հետամտութեան եղբակացութիւնն է:

Դժբաղդաբար մեր գիւղական ժողովուրդը կուլտուրապէս
այնքան յետ է մնացել, որ յեղափոխութեան գործի համար պա-
տրաստի հող չունի. նա երկար ժամանակ մնալով բռնակալնե-
րի Րէժիմի տակ՝ ընտելացել է ստրուկ վիճակին, այդ պատ-
ճառով հող ու սնունդ տուեց Դաշնակցութեան բռնակալ Րէժիմի
տակ ապաստանած մութ անձնաւորութիւնների ստոր արար-
քներին, որոնք օգտուելով հանգամանքից և 5—10 կօպէկ վճա-
րելով այդ յեղափոխութեան վեհ դադափարին անարժան խըմ-
բակներին՝ միջոց ունեցան թշուառ ժողովրդին շահագործելու,
հարստահարելու ոչ միայն նիւթապէս՝ այլ և քարոյապէս 1):
Այլ բանից խրախուսված՝ կօպէկանոց յեղափոխականների թի-
ւը ստուարացաւ, որոնց տջողութիւն էր գանուռ ամեն մի թո-
կից փախած իր ստոր ինստինկտները առաջ տանելու. և այդ
անվստահելի տնգամներէ կաղմուած խումբը՝ օգտուելով ձայնի
իրաւունքից ընտրութեան գործում՝ գործի ամբողջ գեղը իր

*) «Վեց տարուց», ուշադրութիւն, Թիֆլիսեան փողոցի անամուս
րիւրօկրատներ:

ժ. խմ.

1) Ք. գիւղում մի ձերունի՝ դաշնակցական հերոսներէ մասին բողո-
քելիս ասաց. «Վարժապետ ջան, հալ տղերքը էկան մեր տուն, ևս հայ պատ-
րաստեցին, փաւ էփիլ տուի, գառ ուղեցին՝ մարթեցի, զինի ու բախի ու-
գեցին՝ ճարեցի»: Եւ խօսքը կիսատ թողնելով թշուառ ձերունին՝ արտա-
սուախառն բացականչեց. «Ախր բաւական է, վարժապետ ջան, խղճացէք մեզ,
մեր նամուսն էլ ձեռքէ գնաց»:

ձեռքն ուռաւ զոնէ գաւառներում և ամբոխի հոգեբանութեամբ տարաւ ամեն բան, որև արատաւորեց Դաշնակցութեան՝ պաշտելի նահատակների արիւնով սրբագործուած՝ զրօշակը, անվերականգնելի կերպով անուանարկեց մասնաւորապէս կուսակցութեան, ընդհանրապէս հայ յեղափոխութեան սուրբ անունը. ապա եւ անվերականգնելի կերպով, որովհետեւ ժողովուրդը աւսաւ յեղափոխութեան անունը կրօններին գողութեան, աւագակութեան, «զապթիսայի» և այլ դերերում և սոսկաց ու երկիւղից լոեց:

Դժբաղդարար այդ վտանգաւոր հոսանքը այնքան զօրեղացաւ, որ ազդեց ու կուրուցեան հասցրեց մինչև անգամ համալսարանաւարտներից շատերին, որոնք մակերութեական մի քանի գէպքերից ողորկւած՝ աւելի խրախուսեցին այդ մոլեգնած ամբոխին... որ և մի շարք ողբերգութիւնների առիթ դարձաւ: Ահա թէ ինչու չարիքը զնալով մեծացաւ և հրէշաւորութեան հասաւ... և եթէ ընդհանրապէս մամուլը, մասնաւորապէս «Մըշակը» օգնութեան չը հասնէին՝ ժողովուրդը գէպի կորուստն էր գնում մի քանի ճանապարհներով... Յեղափոխութեան երկիւղը այն աստիճանին էր հասել, որ երբ մի փափախաւոր մարդ էին տեսնում գիւղ մտնելիս՝ ոչ միայն մոծերը, այլ անմեղ երեխաներն անգամ «ծակուծուկ» էին մտնում, և այդ փափախաւորը, թէկուզ մի 18—20 տարեկան սրիկայ լինէր, երբ մըտնում էր գիւղական օգան, դառածաւ ծերունիներն անգամ սարսափած վեր էին թռչում տեղերից... Այգալիսի մի սրիկայ Զ. գիւղում մի խեղճ ծերունու ծեծել էր միմիայն նրա համար, որ վերջինս նրա ներկայութեամբ ծխելիս չէր հասկացել «մի ծըխիւր իմ ներկայութեամբ» հրամանը և շարունակել էր:

Մի ժամանակ, երբ այս սոսկալի բեժիմը չէր սկսուել, մի գիւղում երկու կամ երեք հոգի հազիւ ճարուէին յեղափոխական. միայն նրանք անկեղծ էին, իսկ այժմ, որ գիւղը ուղում էք մտէք, երեխաներից սկսած մինչև զառամեայները «յեղափոխական» են (չէ՞ որ վճարում են) և ամենքն էլ այնքան վառ սէր են ցոյց տալիս, որ ինքդ ամաչում ես այդ աստիճան ազգասէր չը լինելուդ համար. բայց էազէս սակաւ բացատրութեամբ բոլորն էլ զազուած թշնամիներ են յեղափոխութեան, որ երկիւղից կեղծ գերի մէջ են մտնում: Եթէ զաշնակցական լուրջ մարդիկ հետաքրքրուել են գիւղական ժողովուրդով անշուշտ համոզուած են, որ այդ զուտ ճշմարտութիւն է, բայց եթէ չեն խոտտովանում, անպայման իրանց սեփական հաշիւները ունեն այդ ասպարէզում: Թէև Դաշնակցութեան ջոջերը ակամայից խոստովանում են չարիքի գոյութիւնը, բայց արդարանում են համարե-

յով այն անհատական գործ, սակայն այդ արդարանալը շատ անմիտ միջոց է: Միթէ կառավարութեան պաշտօնեաների մէջ կաշառակերները անհատներ չեն, խօսմ կազմը չէ առաջարկում կամ տնօրինում կաշառակերութիւնը, սակայն անկեղծ յեղափոխութիւնը կուռն է այդ կազմի բեմի գէմ: Երևի երբ դաշնակցութեան մէջ է կառարարում միևնոյն չարիքը, տրամաբանութիւնը պէտք է փոխել՝ անհատական համարել որպէս զի չէ՞ փէրը չը կոտորուեն և անսխալական հոշակուեն ժողովրդի մէջ, չարիքների առիթ լինելով հանդերձ: Միթէ կարելի է ուրանալ, որ միմիայն բեմին է միջոց տալիս կեղտոտներին ու շահամոհներին ջուրը պղտորել և ձրիակերների ախորժակները դրդուում: Հաւատացէք, դաշնակցութեան ղեկավարներ, ձեր այդ բռնած ընթացքով դոնէ մեզանում շատ անմեղ մաքուր պատանիներ զազանացան, զոյ ու աւազակ դարձան, 17—18 տարեկան պատանիներ մարդասպան դարձան և այժմ բանտերում փութում են: Սոսկալի է չէ՞:

Միթէ այդ բոլորը չէ՞ն նկատում Դաշնակցութեան ղեկավարները. առաջ կարող էին, բայց այժմ ոչ, երբ կարելի է սեւել ամբողջ մասնուր ձայն է բարձրացրել այդ միևնոյն չարիքի գէմ. սակայն հայի եսը, հայի, որ ընտանեկան-հիմնական կրթութունից զուրկ լինելով՝ որքան սովորում է՝ դարձեալ չէ կըրթուում, մնում միևնոյն բիրտ եսականութեան մէջ, — այդ անիծուած եսը մեր մէջ այնքան հաստ է, որ միայն մուրճով կարելի է ճնշել և ոչ զրաւան խօսքով: Այդ մարդիկը գոնէ խղճային մեր ազգին և մի նոր ճանապարհ սկսէին, որով ոչ միայն ժողովրդին կը փրկէին բարուական զրկանքներից, այլ և կուրսադէր:

Մ. Ղազարեան

Կաղզվան

Պաշտօնական հաղորդագրութիւն

Լրագրներում տպագրուած էին յօդուածներ Էջմիածնում օգոստոսին տեղի ունեցած Հայկական Համագումարի մասին, ըստ որում, ի միջի այլոց, հաղորդուած էր, որ համագումարի բացման թոյլտուութիւնը ստացուել էր միայն հայոց Կաթողիկոսի երկար ու անդդուելի խնդրից յետոյ, և որ նա փակուել էր այն պատրուակով, որ, ծրագրելով, ազմիխատրացիայի համար ոչ ցանկալի, մի բանի բարենորոգումներ, համագումարը դուրս եկաւ իր շրջանակներից, որոնք նախատեսմանուած էին նրա համար Կաթողիկոսի կոնգրակներով: Մաս-

նացույց էր անւում նոյնիսկ, որ ներկայ դէպքում ազմինխտ-
րացիան պաշտպանում էր Կաթողիկոսի իրաւունքները, չնա-
յելով որ Նա ինքը ոչ միայն չբողոքեց նրանց ոտնահարման
համար, այլև պատրաստ էր գիշել իր յօժար կամքով:

Հաստատ աղբիւրներից մեզ յայտնի է, որ այս տեղեկու-
թիւնները չեն համապատասխանում իրողութեանը: Համագու-
մարի թէ բացումը և թէ փակումը տեղի է ունեցել հետեւեալ
հանգամանքներում: Համագումարը հրաւիրուած էր հայոց
Կաթողիկոսի կողմից, որը պատգամաւորներ գումարելու մա-
սին կոնդակ էր հրատարակել զեռ մայիս ամսում: Այդ կոնդա-
կի հիման վրայ ամառուայ երկու ամիսների ընթացքում ամ-
բողջ Կովկասում պատգամաւորական ընտրութիւններ կատա-
րուեցին այդ ժողովի համար, իսկ պատգամաւորական համա-
գումարի ժամանակը Կաթողիկոսի կողմից նշանակուած էր օ-
գոստոսի 15-ը զեռևս յունիս ամսում: Մինչդեռ Կաթողիկոսը
պատգամաւորական ժողով հրաւիրելու իր դիտաւորութեան
մասին կովկասեան ազմինխտրացիային տեղեկացրել է նամա-
կով օգոստոսի 3-ին, որտեղ ասուած էր, որ ժողովը գումար-
ւելու է օգոստոսի 15-ին, էջմիածնի վանքում, քննելու և
կարգաւորելու մի քանի անյետաձգելի հարցեր գալրոցական,
եկեղեցական և վանական կալուածների ու թեմական ժողովու-
րի խնդիրների վերաբերմամբ, որոնք նախատեսուած են 1905
թուի օգոստոսի 1-ին հայոց եկեղեցական կալուածների կառա-
վարութեան մասին հրատարակուած ժամանակաւոր օրէնքնե-
րով: Ժամանակի սղութեան պատճառով հնարաւորութիւն չու-
նենալով պարզելու համագումարի իսկական ընտրութիւնը և
ի նկատի առնելով որ նա հրաւիրուած է հայ եկեղեցու Պետի
կողմից եկեղեցական հարցերի վերաքննութեան համար, կով-
կասեան գլխաւոր իշխանութիւնը, ներքին գործերի մինիստ-
րութեան համաձայնութեամբ, յարմար է զտել արգելք չլինել
համագումարի բացմանը:

Համագումարը, որին ներկայ էին 53 պատգամաւորներ
գլխաւորապէս աշխարհականներ (հոգևորականներ կային մի-
այն 5 հոգի), բացուեց օգոստոսի 17-ին Կաթողիկոսի համառօտ
ձառով, որը համագումարի նախագահի օգնականներից մէկի
պատասխան-ձառից յետոյ հեռացաւ ժողովից և յաջորդ նիս-
տերին այլևս մասնակցութիւն չունեցաւ: Ժողովի նախագահ
ընտրուեց Թիֆլիսի նահանգի Բօրչալուի գաւառի հայերի
կողմից ընտրուած պատգամաւոր մասնաւոր ազրօնօմ Զաւա-
րեան: Հէնց սկզբից պարզուեց, որ համագումարին մասնակցող
պատգամաւորների մեծ մասը ծայրայեղ կուսակցութեան ներ-

կայացուցիչներին է և նպատակ է դրել. 1) բաժանել եկեղեցին պետութիւնից, 2) խլել հոգեւորականութիւնից եկեղեցական հոգերն ու կալուածները և առոնց վարձատրութեան տալ այն գիւղացիներին, որոնց ներկայումս տրուած է կապալով, 3) վերացնել հայ եկեղեցու հոգեւոր գործերի կառավարութեան մասին գոյութիւն ունեցող բոլոր օրէնսդրութիւնները և վերապահել ազգաբնակչութեան ներկայացուցիչներին բացառիկ և անմիջական իրաւունք անխտիր կերպով կառավարելու այն բոլոր գործերը, որոնք վերաբերում են եկեղեցուն և եկեղեցական գալուցներին, սահմանափակելով հոգեւորականութիւնը միայն իր քահանայապետութեան պարտականութիւնները շրջանակով:

Այդ ծրագիրը պառակտում առաջացրեց համագումարի անդամների մէջ, սաստիկ դժգոհութիւն պատճառեց հոգեւորականութեանը, մանաւանդ բարձր հոգեւորականութեանը, և բազմաթիւ լողոքներ առաջացրեց կայսրութեան զանազան մասերի ու արտասահմանի հայ հոգեւորականութեան մէջ: Այս անբաւականութիւնը մանաւանդ աւելի վորեղ կերպով արտայայտութիւն ստացաւ օգոստոսի 20-ի նիստից յետոյ, եբ համագումարը յայտարարեց, որ, լինելով ինքը ժողովրդի օրինաւոր ներկայացուցիչը, պարտաւոր զգալով բաւարարութիւն տալ նրան գալուցական, վարչական, անտեսական և հասարակական նշանակութիւն ունեցող ուրիշ հարցերի վերաբերմամբ, իրան իրաւունք է վերապահում իր կարծիքը արտայայտել այն բոլոր հրատապ հարցերի մասին, որոնք վերաբերում են ամբողջ Ռուսաստանին: Այդ բանաձևի պատճառով չափաւոր պատգամաւորները օգոստոսի 21-ին հրաժարուեցին այնուհետև մասնակցելուց ժողովի նիստերին, պատճառաբանելով իրանց մերժումը նրանով, որ ժողովը դուրս է գալիս իր համար նախատահմանուած շրջանակներից:

Տեղեկութիւն ստանալով համագումարի այդ տեսակ գործունէութեան ուղղութեան մասին, կովկասեան գլխաւոր իշխանութիւնը օգոստոսի 23-ին Երևանի ժամանակաւոր զենեւրաւ-նահանգապետի անունով ուղարկուած հեռագրով կարգադրեց համագումարը փակել, համագումարի ղեկավար Տաճատ վարդապետին, իրրեւ տաճկահայատաւի, անմիջապէս արտաքսել Ռուսաստանի սահմաններից և ազիտատօրներին պատասխանատուութեան ենթարկել: Երբ համագումարի փակման մասին հաղորդուեց Կաթողիկոսին, նա այդ լուրը ընդունեց կատարեալ գոհանակութեամբ և յայտնեց, որ, իր կարծիքով ևս, համագումարը իր գործունէութեամբ դուրս եկաւ իր համար

նախասահմանուած ծրագրից, իսկ առանձին անհատներ իրանց ճառերում համագումարում թոյլ են տուել շատ յանդուգն և ծայրայեղ խօսքեր արտասանել: Իսկ բարեմիտ հայերի և վանքի միաբանութեան մէջ պատգամաւորական ժողովի փակումն անկեղծ զոհութիւն է պատճառել:

Այդպիսով համագումարի բացումը տեղի է ունեցել առանց որեւէ արգելքների հանդիպելու կառավարութեան կողմից, իսկ նրա փակումը համապատասխանել է թէ Կաթողիկոսի և թէ հայ աղգարնակութեան մեծամասնութեան ցանկութիւններին:

Զարմանալի է

Կովկասում համարեա անկիւն չմնաց, ուսկից բողոք չլսուէր մեր «ազգային կառավարիչների» աւօրինի, սանձարձակ և պախարակելի արարքների դէմ: Սակայն, չնայելով այդ հանգամանքին, դեռ ևս գոյութիւն ունեն այնպիսի միամիտներ, որոնք յաւակնութիւն ունեն կարծելու, կամ նոյնիսկ մտքով անցկացնելու, որ այդ բոլորը հնարովի կամ չափազանցրած «շինովի բաներ» են, որոնք այսպէս կամ այնպէս մամուլին են տրուած լով այն նպատակով՝ որ Դաշնակցութեան առանց այն էլ ընկած վարկը ձգեն:

Ո՛չ, պարոններ. այդքան միամիտ լինել չէ կարելի: Դաշնակն արդէն ոսկոռին է հասել... Հաւատացէք, մեր համբերատար ժողովուրդը, առանց այն էլ լազմաթիւ անկիւններից կեղեքուող ու քերթուող ժողովուրդը, այլևս անհնաբին է համարում կրելու ազգային կեղեքիչների ծանր և դաժան լուծը... Նա արդէն սթափուել է, պարոններ, նա խնդրում է բաւականանալ այն շահատակութիւններով, որոնց այսքան ժամանակ ենթակայ եղաւ խեղճ ու կրակ ժողովուրդը...

Մինչև այժմ էլ դեռ լինում են աւարկողներ, որոնք ասում են. «Կարող է պատահել, որեւէ տեղ անդակոն դաշնակ. կաղմը իր կոչման բարձրութեան վրայ կանգնած չէ եղել: Ինչու և այդպիսի պայմաններում շատ էլ չպէտք է զարմանալ, որ ճնշումներ են տեղի ունեցել կամ այժմ էլ եթէ ունենում են»:

Բայց, ասացէք, անկեղծ սրտով ասացէք, պարոններ. վերցնենք հէնց ամենամինիմալ չափը. ցոյց տուէք ինձ մի «որեւէ տեղ», որ Դաշնակցութիւնը իր կոչման բարձրութեան վրայ լինի կանգնած:

Երևի, դուք այդ հարցին պատասխանելու համար կը վերցնէք մի այնպիսի վայր, որտեղից դաշնակցականների դէմ հրապարակական բողոք չէ լսուել. և ամենայն վստահութեամբ մատնանիշ կանէք այդ սքանչելի «Երուսաղէմի» վրայ: Այո:

Եթէ այդպէս, ապա վերցնենք, յարգելի ընթերցող, փոքրիկ համար մի այդպիսի տեղ: Հարկաւ, քո ուշադրութիւնից փախած չի լինի, օրինակի համար, որ Դաշնակցութեան ապօրինութիւնների դէմ Նուխուց բողոք չէ լսուել, այսինքն... մասնաւոր երևան չէ հիւել: Եւ դու երևի արդէն մտքումդ ուրախ ես, և երջանիկ ես համարում այդ պեղահրաշ վայրը: Բայց չգիտես, որ հղեանագործութիւններից ամենախայտառակըն ու ամենազաղրելին, որպիսին երեակայութիւնն անգամ կը հրաժարուի իր մէջ տեղ տալուց, կատարուել է հէնց այդ քաղաքում... «աղգային դործիչների» ձեռքով...

Չուր ես աշխատում անտարբեր երեակ, համաքաղաքացի ընթերցող. ես պարզ նկատում եմ՝ կրծքիդ տախտակների տակ քարէ սրտիտ տակն ու վրայ լինելը, որ ակամայից ակներև ես դարձնում դէմքիդ աննօրմալ արտայայտութեամբ...

Մի նեղանար, խնդրեմ, որ քարէ եմ անուանում քո սիրտը. անշուշտ, ինքդ էլ լաւ գիտես, որ այդպէս անուանելու իրաւունք ունիմ... այլապէս, չէ՞ որ դու այն աստիճանի սառնասիրտ և անտարբեր չէիր լինի՝ համաքաղաքացի ընկերներից հղեանական կորուստի նկատմամբ. չէ՞ որ, եթէ սրտերնիդ քարէ չլինէր, մի անգամ գոնէ կը քաշէիք. և այդ «տխր» կը միանար մեր զժրադդ ժողովրդի տառապանքի և հեծեծանքի դառն արդիւնք—«ախ»-երի հետ և մի զույցէ արձագանք տար մեր «աղգային» բռնակալների սրտում:

Եւ դու, նուխեցի ընթերցող, արդէն հասկացած կը լինես՝ թէ ինչ հղեանի մասին է խօսքս. դու շատ լաւ գիտես, թէ բռնակալների կատարած բազմաթիւ եղբրնագործութիւններից զիջելու է յիշատակեմ... և ինչպէ՞ս կարող ես իմանալ, թի՞թէ այդ հնարաւոր է, երբ մեր քաղաքի ամենափոքրիկ մանուկն անգամ վաղուց արդէն տեղեկութիւն ունի այդ մասին...

Բայց օտար ընթերցողը չիմանալով լանի էութիւնը, երևի սրտատրոփ սպասում է փաստին...

Սակայն, սիրելի ընթերցող, ամենից առաջ դուն ինձ խօսք տուր՝ որ անասելի գաղանթութիւններն ու ոչ մաքրուած միայն յատուկ չլսուած և չտեսնուած հղեանագործութիւններն

երևան հանելն ու դատարկեցիլը քո բառարանում ևս «մատնութիւն» չէ նշանակում: *)

Սօսը տուր, որ անկեղծ վերաբերմունք ցոյց կը տաս: ասածներին, և այն ժամանակ միայն ես կը պատմեմ քեզ մի ցաւալի իրողութիւն. բայց ինչո՞ւ մի. ո՞չ. այդպիսի շատ ցաւալի եղելութիւններ, որ, եթէ իսկապէս սիրտդ քարից կամ կաւից չէ, ապա մեծ քաջութիւն պէտք է ունենաս աչքերիցդ դառն արտասուներէ հեղեղը դապելու...:**)

Սակայն ես լռում եմ... լռում, որպէս մեր քաղաքի ճրնշուած հասարակութիւնը. թող փաստեր պահանջեն,***) և ես հեղեղի պէս կը թափեմ այն ձեր առաջ... Եթէ երբեմն «ազգային», իսկ այժմ «սօցիալիստ» պ. պ. պարագլուխներին յայտնի չեն այն քստմնելի արարքները, որ տեղի են ունեցել մեր քաղաքներում և գաւառներում, և եթէ նրանք իսկապէս նախանձախնդիր են իրանց կուսակցութեան պատւին, ապա թող՝ որ պարզերես երևան դան և փառտեր պահանջեն հրապարակօրէն: Հրապարակօրէն եմ ասում, որովհետեւ ես գիտեմ իմ գլխիս գալիքը, եթէ սենեակումս, կամ որ աւելի վատն է, կէս գիշերին՝ փողոցում պահանջեն փաստերը...

Նուխեցի

Դաշնակցականները, ինչպէս երևում է, չեն բաւականանում նրանով, որ «Յառաջը», «Ալիքն» ու «Զանգը» մէկը միւսից աւելի յաջող ապացուցեցին, որ Դաշնակցութիւն ասածդ ամենաուժեղ, բայց և ամենավատթար թայֆան է, որ գոյութիւն ունի հայ իրականութեան ծոցում, որ նա հայ աշխատաւոր մասսայի ամենաանբարեխիղճ, բայց և ամենահետե-

*) Այդ նամակը բնորոշ է մեր ոգորմելի հասարակութեան համար. մեր «յեղափոխական» ենիշերների և շարլատանների կատարած բազմաթիւ եղերնագործութիւնները մնում են առանց արձանագրուելու կամ վախից կամ կեղծ«ազգասիրութիւնից»: Այս, ահաբեկուած հայը ազգասիրութիւն է համարում թոյլ տալ որ իր գլխին իր հարազատ զուլդուրները ամեն տեսակ լիբրբռնութիւններ կատարեն: Միհայ բժշկուհու նամակ ենք տեսել. այդ տիկինը շրջելով գաւառներում համոզուել էր որ դաշնակցական սրիկաների քաջագործութիւնների $\frac{1}{1000}$ մասը դեռ յայտնի չէ հասարակութեան, սակայն «ազգասիրաբար» լռում է: Ամօթ՝ այդպիսի շինտիկեցնողներին...

ծ. խմբ.

**) Ինչո՞ւ լալ և ո՞չ մաքառել... Волковъ бояться въ лѣсъ не ходить.

ծ. խմբ.

***) Ովքե՞ր պիտի պահանջեն. մամուլը ձեր առջև բաց է:

ծ. խմբ.

դական խարույն ու շահագործողն է, իսկ նրա՝ այդ Դաշնակցութեան, մտածելու անընդունակ, դիտելու անկարող, պարտաճանաչութիւնից իսպառ զուրկ, որոշ աշխարհայացողութիւնից վերջնականապէս ղերծ, մի ճահճացած իրականութեան առաջնակարգ ղեմագողների բոլոր ձիրքերով առատապէս օծտուած շէֆերը, կազմում են մի սոսկ հետերօժէն կօնզլօմերատ:

Բաւական չէ այդ թիրթիւների կատարածը, այժմ էլ իր բովանդակութեամբ տնտեսական զինակին հասած «Երկիրը», դաշնակցական թուլամիտներէ մտքի այդ գերագոյն արտագլուծիւնը, գալիս է աւելորդ անգամ համոզելու մեզ նրանում, ինչ ամեն մէկի համար վաղուց արդէն պարզուած մի խնդիր է:

Դաշնակցութեան ճահճի գորտերից մէկն է, որ ձայն է բարձրացրել այդ, թող ներուի ասել, հասարակական, տնտեսական, քաղաքական և գրական օրաթերթի 38 համարի «Կօնզլօմերատ» առաջնորդողում, որը ինքնին ոչ այլ ինչ է, եթէ ոչ անմտութիւնների մի կօնզլօմերատ:

«Եւ բուրժուա-լիբերալ և՛ կղերական-պահպանողական և՛ սօցիալ-դեմօկրատ, միացած, կապուած սերտ համակրութիւններով՝ ուղղում են իրենց գրոհը այդ կազմակերպութեան դէմ, նրանով են զբաղեցնում իրենց հոգեվարք-մամուլը, հալածում են նրան աւելի քան ազգի իրական թշնամիներին, հայտնում են այն միակ պատճառով, որ նա, ժողովրդի մէջ վաղուց ի վեր արմատ ձգած այդ կազմակերպութիւնը, de facto դուրս է մղում իր հակառակորդներին կեանքի բոլոր ասպարէզներից, հող չէ թողնում նրանց քաղաքական պրօպագանդի և փառատենչ ձգտումների համար»:

Հետաքրքիր է, այդ ո՞ր սօցիալ-դեմօկրատների մասին է խօսքը, որ միտցել են կղերական-պահպանողականների և բուրժուա-լիբերալների հետ: Ռուսաստանի կուսակցութեան, թէ՛ Հայ Կազմակերպութեան:

Կասէք, որ Հայ Կազմակերպութիւնը այնպիսի մի quantite négligeable է, որ երբէք Դաշնակցութեան ուշադրութեան առարկան չէր կարող լինել, այն էլ նրա միշտ տղայամիտ, յաճախ փեղկփեղկութիւններով լի առաջնորդողներում:

Եթէ այդպէս էք կարծում, այն ժամանակ Ռուսաստանի կուսակցութեան անունը դրէք և դուք էլի մեզ արհամարած կը լինէք:

Սակայն այդպէս չէ: Ձեր ասածները մեզ է ուղղուած, չնայած, որ զուր՝ ամենաուժեղ կազմակերպութեան ներկայա-

ցուցիչներդ, վախենում էք (խնդրում ենք ֆիզիքական վախ
չհասկանալ) մեզ յիշատակելու:

Մեզ է ուղղուած ձեր ասածները և ահա ինչու: Առաջինը,
Ռուսաստանի կուսակցութիւնը այսօր «հոգեւոր մամուլ» չ'ու-
նի, որ առիթ տար ձեզ գրելու ձեր մաքի գոհար «կօնգրո-
մերատը»:

Երկրորդ, Ռուսաստանի կուսակցութիւնը այնքան էլ
«վտիտ» չէ կովկասում, որպէս զի դուք համարձակուէիք նրան
այդպէս անուանուել:

Ընդհակառակը, Ս. Գ. Բ. Հայ Կազմակերպութիւնն է,
որի հոգեւոր մամուլը ձեր հոգիները հանել է, ապա և նա է,
որ իսկապէս առայժմ «վտիտ» է: Ուրեմն խօսքը մեր մասին է:

Ուստի լսեցէք:

Ասում էք «վտիտ» ենք: Այո, ճիշտ է, վտիտ ենք: Բայց
հաստատ համոզուած եղէք, որ երբէք չէինք կամենալ ձեզ պէս
գերանալ: Եթէ այդ կամենայինք, ժամանակին կը մանէինք
ձեր շարքերը և մտած օրուանից արդէն գերացած կը լինէինք:
Սակայն հաւատացէք, եթէ մեզ իբրև կազմակերպութեան վի-
ճակուած է մի օր մեռնել, ապա մենք կը գերադասենք այսպէս
«վտիտ» մեռնել, քան ձեզ պէս գերանալ, յղիւնալ, ճարպով
ծածկուել. ամբողջ շրջապատը լեշայնել, ապականել ու այնպէս
մեռնել:

Ասում էք որ.

«Ոչ մի չաղախ չի կարող ապրեցնել մի կազմակերպու-
թեան մէջ այնպիսի մարդկանց, որոնք զուրկ են որոշ, յատակ
աշխարհայեցողութիւնից, որոնցից իւրաքանչիւրը շէֆութեան
է ձգտում և չունի հասարակական ոչ մի շինարար մտահո-
գութիւն»:

Եթէ այդ ճիշտ թէ՛ք է, ապա ինչպէս է, որ Դաշնակցու-
թիւն ասած շաղախ գալրեցնում է իր մէջ այնպիսի մարդիկ,
այն էլ շէֆեր, որոնք միեւնոյն հարցի մասին Շուշի մի բան
կասեն, երկու շարքից յետոյ Թիֆլիզում մի այլ բան, մի ամ-
սից յետոյ Բազում այդ բոլորը կը ջրեն և մի ուրիշ բան կա-
սեն ու այսպէս անվերջ... Այդ ինչպէս է, որ շաղախը, այնպի-
սի գրչակներ է ապրեցնում իր մէջ, որոնց ոչ միայն այսօր-
ուայ յօդուածը ջրում է երէկուանը, այլ որոնց ամեն մի յօդ-
ուածի վերջը ջրում է այդ նոյն յօդուածի սկիզբը:

Չէ, ճիշտ չէ ձեր ասածը: Կօնգրոմերատներ որոշ պայման-
ներում կարող են ապրել, ինչպէս օրինակ Դաշնակցութիւնն
է ապրում:

Յետոյ արդէն դուք չարաչար սխալուում էք, կարծելով, որ մեզնից իւրաքանչիւրը շէֆութեան է ձգտում:

Եթէ իսկապէս մեր ձգտումը շէֆութիւնը լինէր, մենք Հայ Կազմակերպութեան մէջ չէինք լինիլ, այլ Դաշնակցութեան շարքերում, ձեր կողքին: Այնպիսի մի «վտիտ» կազմակերպութեան մէջ շէֆ լինել, ինչպիսին է Ս. Դ. Բ. Հայ Կազմակերպութիւնը, համաձայնեցէք, շէֆութեան ձգտողի համար այնքան էլ մեծ գրաւչութիւն չի ներկայացնում: Այ ուրիշ բան է Դաշնակցութեան նման ուժեղ կազմակերպութեան մէջ շէֆ լինել՝ այդ իսկապէս, ոչ միայն գրաւիչ կարող է լինել շէֆութեան ձգտողի համար, այլ և մի չափազանց հեշտ իրազործելի բան:

Ձե՞ որ ձեր այդ Դաշնակցութիւնը էլ տափակ տիրացու չը մնաց, էլ անճարակ գրչակ չմնաց, էլ թոկից փախած չմնաց, բոլորին էլ շէֆ շինեց: Եւ եթէ «եկեղեցական կալուածների գրաւման օրով» կամ «հայ-թուրքական ջարդերի օրով» շէֆութեան ձգտողներիցս մէկն ու մէկը կամենար շէֆ լինել՝ նա արդէն վաղուց կը լինէր:

Ի՞նչ էր հարկաւոր դրա համար: Միայն այն, որ ցոյց տայինք, որ մենք դաւանանք չունենք, որ մենք որոշ, յստակ աշխարհահայեցողութիւն չունենք, որ մենք կարող ենք ծածկուել սօցիալիստական սնամէջ ֆրազիօլօգիայով և սօցիալիստական շարժման ամենամեծ թշնամին լինել: Եւ դուք գըրկաբաց կը ընդունէիք մեզ, քանի որ չընդունելու ոչ մի հիմք չէիք ունենալ:

Բայց շէֆութեան մենք չենք ձգտում, իսկ Դաշնակցութեան շէֆութիւնից մենք զզւում ենք:

Սակայն այս ամենը մենք ասացինք, ենթադրելով, որ ձեր նկատածը՝ թէ մենք միացել ենք բուրժուա-լիբերալների և կղերական-պահպանողականներին հետ, ճիշտ է:

Բայց դուք ինչո՞վ կարող էք ապացուցել, որ մենք այդ բանը արել ենք:

Ոչնչով: Դա բացարձակ խաբեբայութիւն է, դա մի միտումաւոր ստախոսութիւն է:

Այն ժամանակ, երբ մենք ձեր դէմ գրոհ էինք տալիս, դուք և ձեր բոլոր շէֆերը, շատ քիչ բացառութեամբ, այդ բուրժուա-լիբերալների և կղերականների գիրկն էիք մտած: Եւ մենք այսօր միայն շարունակում ենք մեր գրոհը ձեր դէմ:

Միթէ մենք միացել ենք նրանց հետ միայն նրա համար, որ մենք էլ ենք ձեզ դէմ, նրանք էլ:

Բայց, չե՞ որ ձեր դէմ կառավարութիւնն էլ է կուռում: Նոյեմբեր, 1906.

Ինչո՞ւ չէք ասում, որ մենք, սօցիալ-դեմօկրատներս, միացել ենք կառավարութեան հետ ձեր դէմ:

Ձե՞ որ դուք ղրանով աւելի կարող էք գրգռել ձեր սօցիալիստօրէն կրթուած մասսան: Ձե՞ որ այդ է ձեր նպատակը:

Եւ ի՞նչու էք զարմանում, որ այսօր նոյն իսկ ձեր մենտօրները ձեր թշնամիներն են դարձել: Դուք այնքան վարկաբեկեցիք յեղափոխականի անունը, դուք այնքան զաղիւր գործեր կատարեցիք, որ այսօր ոչ միայն ամեն մի յեղափոխական, այլ և ամեն մի մարդկութեան անունը չարատաւորող անձնաւորութիւն իրաւունք ունի ձեր դէմ կռուելու:

Եւ վերջապէս, մի՞թէ դուք իրօք այնքան բոբիկ, այնքան թեթևասօլիկ և այնքան ցանցաւ էք, որպէս զի կարողանաք ըմբռնել, թէ միևնոյն օրիեկտի դեմ կարող են կռւել երկու տարբեր ոյժեր, տարբեր պատճառներից դըդաւած, տարբեր նպատակներով ու տարբեր միջոցներով:

Եթէ դուք այդքան տգէտ էք, այն ժամանակ մենք հրաժարուած ենք ձեզ բան սովորեցնել:

Վերջապէս դուք կարծում էք, որ «մենք հալածուած ենք Դաշնակցութիւնը աւելի, քան ազգի իրական թշնամիներին»:

Անո՞րք, խնդրում ենք, ո՞վքեր են մեր ազգի իրական թշնամիները:

Ռուս կառավարութիւնը: Եթէ այո, այն ժամանակ տօթ է ձեզ համար, կարգացէք ձեր սօցիալիստական «նախադիմը» ու լուցէք:

Էլ ո՞վ է ազգի թշնամին: Թճճերը:

Համոզեցէ՛ք միանգամայն ընդ միշտ, որ թէպէտ դուք հայ էք, բայց և այնպէս հայ ժողովրդի աշխատաւոր մասսայի թշնամին—Դաշնակցութիւնը—որոշ պայմաններում մեզ համար աւելի մեծ չարիք է, քան անպիտակից թուրք մասսայի անմիտ քայլերը:

«Ձայն» № 8

ԱՊՍՏԱՄԲ ԶԻՆՈՒՈՐՆԵՐ

Ընկերներ. Հ. Յ. Դաշնակցութեան ժամանակաւոր Զինուորական Խորհուրդը Յայտնում է:

Որ հակառակ մեր գործ դրած ջանքերին, մեր սօցիալիստ ֆրակցիան շարունակում է իր շահատակութիւնները յօգուտ իր նոր գաւանանքի, նա իր ընկած վարկը վերականգնելու համար, հրամայեց հաւաքել Տաճկահայ համագումար. մի որո-

շուժ որը սկզբունքով հակասում է ճշմարտութեան. նրա համար որ Դաշնակցութիւնը միայն տաճկահայերին չէ պատկանում, այդ ապօրինի ժողովը աղուէսային խորամանկութեան բաղձալիւ հետքերն ունի իր ետևը թաղնուած. ահա թէ ինչպէս. նախ որ խտրութիւն առաջ բերէ Կովկասահայի և Տաճկահայի մէջ, երկրորդ որ այդ ժողովի անունից զսպէ ապրտամբութիւնը, երրորդ որ այնտեղ ուղարկելով իր յայտնի վարձկանները կայացնելու այնպիսի որոշում, որ ընդհանուր ժողովին փաստ ունենան չարարաստիկ նախագիծը արդարացնելու: Հետաքրքիր է, եթէ այդ ժողովին ամէն 500 Տաճկահայը իրաւունք ունէր իր պատգամաւորը ունենալու, ո՞ր է, ինչո՞ւ համար. չունեցան, Բաթումի և Թիֆլիսի աւելի քան 4000 ապստամբ Տաճկահայերը:

Ընկերներ, թող վարչական այս ֆոկլուսիկութիւնն էլ մի նոր ապացոյց լինի մեր ձեռքին, արհամարելու մինչև այժմ մեր գլխին զեկալար անուանուող բիւրօյի արժանիքը, այո, արհամարելի են և պէտք է արհամարուեն. թող այդ Շէֆերը որքան կամենան, մեզ ներքին թշնամի անուանելով, կոչ անեն բիւրօկրատային գործիք դառած մեր ընկերներին, թէ խտացրէք շարքերը և կուռնք ներքին թշնամիների դէմ: Մեր պատասխանը, ընկերներ, կը լինի այդպիսիներին արհամարանք. այո, միմիայն արհամարանք:

Ընկերներ, մեր կոչը մեր շարքերին կը լինի բարոյական ուժը. թող նա առաջնորդէ մեզ բարոյական մեծ յաղթանակը: Ընկերներ. մենք պէտք է ամեն կերպ զգուշանանք բռնութիւններից. քանի մենք կուռմ ենք բռնութեան դէմ. մեր անթիւ նահատակների արիւնով սրբազործուած դրօշակի վրայ գրուած է. խղճի և համոզմունքի կատարեալ ազատութիւն:

Ազատութիւն միայն:

Մենք այլոց իրաւունքների վրայ չընտանանք երբէք: Մեր խօսքը ով կամենում է լսել, նրան խօսենք միայն:

Զրոնանանք մենք երբէք: *)

Եթէ մի ուրիշն է մեզի վրայ բռնացողը, նրան իր հիմքից խորտակենք: Ժողովուրդը Դաշնակցութեան զինուորի վրայ նայում է սարսափով. մենք եթէ իսկապէս ժողովրդի համար ենք, ժողովուրդը այդպէս չպիտի վերաբերուի մեզ.

Ընկերներ. սուէք օրինակելի կեանք:

Ժողովուրդը թող սիրէ ձեզ. ահա մեր միակ պահանջը,

*) Խօսքի և խղճի ազատութիւնը բռնաբարող շէֆերին լաւ դաս և խրատ... զինուորների կողմից: Ծ. խմբ.

ազնիւ, հաւատարիմ. շիտակ և անճնուէր, ահա մեծութիւնը
մեր փառքի:

Հ. Յ. Դաշնակցութեան ժամանակաւոր Զինուորա. Խորհ.*)

«Մուրճի» վերջին երեք համարներում առաջ բե-
րած նիւթերը մեր «Ազգային կառավարութեան» Ֆի-
զիօնոմեան այնքան են պարզում, որ այլևս «սո՛ւտ է,
զըպարտութիւն է, փաստե՛ր բերէք» ազդակները, որ
լսւում են Ֆրէյլինեան բխարիոցի «յեղափոխական»
աղաների կողմից, պէտք է որ գաղարեն: Անշուշտ, մեզ
չաջողուեց երևան հանել սոսաալի բռնութիւնների և
ոճիւղների $1/100$ -ական մասն անդամ, սակայն երկրի
զանազան կողմերից, ազգաբնակչութեան զանազան խա-
ւերից և քաղաքական տարբեր կուսակցութիւնների կող-
մից միաձայն բողոքողները ապացուցում են որ Դաշ-
նակցութիւնը մեր կեանքուն չարիք է դառել: Ս. այժմ
այսքանն էլ բաւական է...

*) «Ազգային կառավարութեան» թիֆին այդ ապստամբութեան
չնորհիւ կատարեալ նմանութիւն է ստանում ուստ հին ընդհարողական
թիֆիսի հետ: Ամենայն ինչ կատարեալ է... ծ. խմբ.

ԱԿՆԱՐԿ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՅԵԱԼԻ
ՎՐԱՅ *)

Նախապատմական ժամանակները: Ներկայումս երբ ցանկանում ենք մի հայեացք ձգել ընդհանրապէս մարդկային լուսաւորութեան վրայ, անկարելի է նրան չբաժանել երկու մեծ շրջանների, որոնցից մէկը անւանում են նախապատմական շրջան. իսկ միւսը կազմում է սովորական պատմական շրջանը. որին իսկապէս ճանաչել հազիւ կէս դար է անցել: Այս վերջին շրջանը պարունակում է իր մէջ ոչ աւելի քան հինգ կամ վեց հազար տարի, և մինչ մեր օրերը նա միայնակ է ձեռնարկել որոնումներ և ուսումնասիրութիւններ, բայց, շնորհիւ անսպասելի գիւտերի որոնք տեղի ունեցան յիսուն տարուայ ընթացքում բաղժաթիւ տարբեր երկրներում, ոչ մի անձնաւորութիւն չկայ որ չենթադրի, որ հասնելու համար ներկայ լուսաւորութեանը, յամեմատութեամբ յառաջ անցած որ մեզ ներկայացնում է արդէն պատմական շրջանի առաջին օրերից, մարդիկ ստիպուած են եղել ապրել սկզբնական ժամանակներում երկար դարերի ընթացքում, ուր նրանք յառաջ են անցել յառաջադիմելով և երկար տատանումներից յետոյ: Դրանք այն դարերն են, դեռ ևս մութ և խառնաշփոթ, որոնց անուանում ենք նախապատմական դար:

Կարգիւթեան առաջին տարիները:—Որքան ժամանակ է տեւել այդ նախապատմական շրջանը: Անկարելի է այդ հարցին պատասխանել մինչև անգամ մօտաւորապէս: Յիրաւի, մարդկային երեխայութեան այդ երկար և թանձր խաւարի մէջ, եթէ ի նկատի ունենանք մարդկային յիշատակաբանները, ոչ մի ճիշտ գէպր, ոչ մի վրաւոր վկայութիւն մեզ չի լուսաւորում և մեզ չի թոյլ տալիս որոշել մի տարեթիւ որ և իցէ ճշտութեամբ:

Միայն երկրաբանութիւնը, որի յառաջադիմութիւնը մի դարուայ ընթացքում չափազանց նշանաւոր է եղած, կարող է, մի քանի կէտերի վերարեբեալ անյայտացնել մեր տգիտութիւն-

*) Կազմուած Ֆրանսիական ազբիւրններից:

նը. բայց, ինչպէս ասել է նշանաւոր գիտնականներից մէկը՝ այդ մասնագիտութեան, սեռ Զ. Լեւելը. «Երկրաբանական վէպը՝ երկրի մի պատմութիւն է շատ անկատար կերպով պահպանուած և գրուած մի լեզուով շարունակ փոփոխական. մենք ունենք այդ լեզուի վերջին բարբառը, և այն էլ յարմարուած է երկու կամ երեք երկրի վերաբերեալ. այդ մասից նոյն իսկ մենք ունենք միայն մի գլուխ չափազանց կարճ, և իւրաքանչիւր երեսից մենք կարողանում ենք կարդալ այստեղ և այնտեղ միմիայն մի քանի տող»։ Ուրեմն ոչինչ այնպէս սակաւ զարմանալի չէ որքան մեր անկարողութիւնը ժամանակագրական տեսակէտից՝ նախապատմական դարի վերաբերեալ։

Եթէ, միւս կողմից մենք մեզ հարցնելու լինենք որո՞նց ձեռքով է լուսաւորութիւնը յառաջադիմել, զորոնք են այն ժողովուրդները որոնց մարդկութիւնը պարտական է իր առաջին զարգացումը, մեր տգիտութիւնը դարձեալ աւելի ևս կատարեալ է, նա անվիճելի է։ Առաջին ժամանակի մշակի մասին մենք ոչ մի բան ճիշտ չենք իմանում և ոչ մասնաւորապէս, ոչ ցեղի որին նա պատկանում էր, ոչ ցեղակցութեանց որ կարող էր գոյութիւն ունենալ նրանց տարրեր խմբերի մէջ, ոչ լեզուն որը նրանք խօսում էին, և այլն. երկար դարեր նախապատմական շրջանի ընթացքում յառաջադիմութիւնը մնացել է անսունու։ Ինչոր պատմաբանը կարող է անել այդ հեռաւոր տարիների համար այդ այն է որ նշանակել պարզ կերպով մարդկային ընդհանուր յառաջադիմութիւնը, ինչպէս և այն մեծ ընթացքները, որ յաջորդաբար նա անցել է, համեմուտ համար այն հետարժէքի վայրկեանին, ուր մարդիկ մի կերպ հասկացողութիւն կազմեցին իրանց հաւաքական գոյութեան մասին, ուր, իրանց անհատական և գերդաստանական կեանքից միւս կողմը, նրանք սկսեցին նկատել ցեղական կեանքի կամ ցեղի, որի մի մասն էին կազմում, և պահպանել յաջորդաբար զրոյցներով ընդհանուր գէպքերի յաջորդութիւնները. ահաւստիկ այդ ժամանակ է որ սկսւում է իսկական պատմութիւնը։

Նախապատմական դարերի մեծ բաժանմունքները։—Սովորաբար, ի նկատի ունենալով գործիքները, որով առաջին մարդիկը յաջորդաբար գործ են ածել կամ աւելի լաւ՝ նիւթը, որով շինուած է այդ գործիքները, բաժանում են նախապատմական շրջանը երեք մեծ ընթացքների, որոնք յաջորդել են հետեւեալ կարգով. քարի տարիներ, բաժանուած ինքը ևս պայթած քարի տարիներ և հզկած քարի. բրոնզի տարիներ և երկաթի տարիներ։

Այս բաժանումը, երևակայած նախ սկանդինաւեան գիտ-

Նախնաներից, իրանց երկրի մէջ գտնուած հնութեանց դասաւորութեան համար, յետոյ տարածուել է բոլոր միւս երկրներում և դարձել է մի կերպ կլասիք. սակայն նա կատարեալ կերպով գոհացուցիչ չէ: Նախ, դա կարող է ազդել մտքի վրայ մի սխալ դադափար. յիշաւի, դա մի յանցանք կը լինէր կարծել, որ ամբողջ բնակուած կրկրի տարածութեան վրայ, մարդկային յառաջադիմութիւնը կատարուած լինի միևնոյն ձևով և միևնոյն ժամանակ. ընդհակառակը, մարդկութեան տուաջին օրից, գտնուել են հասարակութիւններ, որոնք աւելի լաւ օժտուած կամ գետեղուած աւելի յաջող հանդամանքների մէջ, զարգացել են աւելի արագ կերպով, մինչդեռ միւսները մնացել են չափազանց յետ. երբ մի կէտում մարդիկ արդէն գիտէին գործածել մետաղներ, աշխատել բրոնզի վրայ կամ նոյնիսկ հայթայթում էին երկաթ, այլ տեղի մարդիկ չէին կարողացել բարձրանալ սկզբնական գործողութիւնից, և ճանաչում էին միայն այն գործիքները որոնց համար քարը մատակարարում էր նիւթը: Այս բաժանմունքը նախապատմական շրջանի կարող է ճիշտ լինել, հըր գործ է դրուած մասնաւորապէս այսինչ կամ այնինչ շրջանի համար, նա անյարժար է լինում, երբ հարկ է լինում նշանակել բաժանմունքները համաժամանակ գէպերի մարդկային ցեղի պատմութեան:

Երկրորդ, այդ բաժանմունքը դարձեալ որոշ չէ. յիշաւի, տարբեր տարիները որի վրայ նրանք ձուլուել են, բաժանուած չէ եղել մէկը միւսից որոշ կերպով բաժանուած սահմանով. ընդհակառակը, նրանք մի կերպ փոխադարձաբար ներս են մտել: Ո՞վ կը յանգանի, օրինակի համար սլոնել, որ մետաղների գիւտով մէկ հարուածով անյայտացաւ քարը ընտանեկան գործածութիւնից: Ներկայ դարուս ճանապարհորդները մեզ պատմում են, որ նոյնիսկ ներկայումս XX-րդ դարում, գործ են ածում քարեայ գործիքներ Նեղոսի ափերի վրայ, ուր մարդիկ գլխները վեր են անում քարեայ գանակներով, որ բէդուինները այնուեղ կրում են գոռող կերպով նիզակներ որոնց ծայրերը զինուած են սրածայր կայծաքարերով. ուրեմն պիտի եզրակացնել, որ եգիպտացիները դեռևս քարեայ շրջանի վարժմն են ապրում:

Սակայն, եթէ ինկատի ունենանք ինչպէս վայել է այն պայմանները որ պիտի մենք գործ դնենք, այդ բաժանմունքը նախապատմական դարերի, ներկայացնում է մեզ մեծ առաւելութիւններ. նա մեզ թոյլ է տալիս մանաւանդ որոշ կարգ ներմուծել անսահման քանակութեամբ զիզուած գիտերի վերաբերեալ գիտնականների ձեռքով և որոնք կրկնապատկուում

են ամենայն օր, և շատ նեղուած կը լինենք եթէ մի կողմը թողնենք: Ուրեմն անհրաժեշտ է ընդհանրապէս ընդունել:

Քարի շրջանը:—Առաջին մարդիկը ունէին աշխատութեան և իրանց պաշտպանութեան համար միայն գործիք կամ զէնքեր կայծաքարից կոպիտ կերպով հարուածելով տաշած կայծաքարը. այս գործիքներով նրանք բաժանում էին քարից երկար շերտեր նրան իր վերջին սրութիւնը տալու համար. դա պայթեալած քարի շրջանն է: Այդ շրջանի մարդիկը ապրում էին մարդապետիններում, լեռնապաշտերում, մեծ գետերի ափերում ուր որսորդութիւնը և ձկնորսութիւնը նրանց միակ ապրուստի աղբիւրն էր իրանց կարիքներին բաւականութիւն տալու համար. նրանք բնական բան է թափառական էին. զարկ երկրագործական տարրական նիւթերից, և ոչինչ նրանց չէր կապում հողի հետ, նրանք գողում էին և փախչում անդադար հսկայական և կատաղի վազանների դիմաց, որոնք բազմանում էին երկրի վրայ և ջրերի մէջ. մամուլը, մեծ առիւծը, ձիազետին, այրերի արջը և այնքան ուրիշ շատերը: Նրանք այլ ազատահարան չունէին բացի փորած փոսերից և ծածկուած կեղևի շերտերով, կամ զառիվեր ժայռերի ստորոտները, որոնք նրանց պատսպարում էին բամբակներից:

Յետոյ, մարդը ձգեց իր խախտ ապաստանարանը և հաստատուեցաւ խոռոչներում և այրերում, որոնք եղան իր առաջին հաստատուն բնակարանները. այդտեղից ծագեց troglodytes, այսինքն, այրերի բնակիչ անունը, որը տալիս են մայրեկային ցեղերին, որոնք գործ դրին այս փոփոխութիւնը իրանց բնակավայրերում: Այնտեղ գոնէ, նա այլև կերկիւղ չունէր բամբակներից, անձրևներից, անգութ կենդանիներից. շնորհիւ այդպիսի ապահով վիճակի, նրանք կարողացան անել առաջին գիւտը, այսինքն բարուրեղ իրանց գործիքները, մանաւանդ փոխարինել պայթած քարին հզկած քարը. դա մարդկային երկրորդ տարին է: Մարդը տէր լինելով այս նոր գործիքներին, անսահման կերպով բարձր նախկիններից, որը նրան թոյլ էր տալիս փայտ կտրելը և նրա վրայ աշխատել, այնպիսի վիճակի մէջ գտնուեցաւ ձեռնարկել հազար ու մի բարեփոխութիւններ, որի մասին առաջ, մտածել նոյնիսկ արգելուած էր նրան: Ամենազարմանալին էր բնական բան է լծային քաղտոնների կառուցումը. բոլորովին տարրեր երկրներում, ամենայն տեղ ուրնա գտնուում էր ջրի ընդարձակ տարածութիւն սակաւ խորութեամբ և մակերևոյթը համարեա միշտ անփոփոխ, մարդը մտածեց կառուցանել գիւղեր ցցերի վրայ, որը նրան տալիս էր նոյն ապահովութիւնը ինչ որ խոռոչները և այրերը և նրան թոյլ էր տալիս ազատուել

խոնարութիւնից և խաւարից. ինչ ուրախութիւն նրա համար, ապրել բաց օդի մէջ, արեգակի տակ, այն գեղեցիկ լոյսի գըրկում, այնքան հաճելի որ շատ անգամ սկզբնական ցեղերը նորանից ստեղծել են իրանց աստուածութիւնը! Այդ ժամանակ իսկապէս սկսուեցաւ լուսաւորութիւնը. խեցեղէնները հնարուեցան, երկրագործութիւնը ծնուեցաւ, առաջին կենդանիները ընտելայուեցան. մարդը ուրիշ էր վերջապէս առաջին քայլերի ճանապարհի վրայ, որը նրան պիտի ուղեկցէր անսահման լաւաշաղիմութիւն:

Բրոնզի շրջանը: Սակայն, մարդկային հանճարի համար մի որոշ սահման կար որտեղից նա անցնել չէր կարող քանի որ մետաղները չէին ներմուծուել ընտանեկան կեանքի գործածութեան մէջ. մետաղեայ գործիքների և զէնքերի զիւտը եղել է սկզբնական մարդկային հասարակութեան մէջ սկզբնապատճառը մի արմատական յեղափոխութեան: Նոյն ձեռով ինչպէս պայթած քարի փոխարինութիւնը հղկուած քարի մարդուն թոյլ է տուել թողնել այրերը առաջին լճեայ քաղաքների համար, այնպէս և մետաղների ներմածումը նրան միջոց տուեց ձգել լճերը և ցցերը և ամրացնել իր ընակարանը անխախտելի հիմունքների վրայ, նոյնիսկ երկրի վրայ առաջին քաղաքները շինուեցան. առաջին գիտութիւնները յայտնուեցան, առաջին հնարագիտութիւնները դարձրին մարդկային գիտութիւնը աւելի ապահով, աւելի դիւրաւի, և միևնոյն ժամանակը աւելի յարմար:

Նկատուած է, որ բոլոր մետաղներից, բրոնզը, խառնուրդ կապարի և անագի, առաջին է գործածուած, նախ որովհետև միւս մետաղները և մասնաւորապէս երկաթը, շատ դժուար են մշակելու համար, և յետոյ որովհետև աւելի հեշտ է աշխատուում բրոնզի վրայ, աւելի հեշտ է հալում, և աւելի ընդունակ ձևակերպելու համար:

Երկաթի շրջանը:—Բայց միմիայն երկաթը, այն ամբողջութեամբ որը նրան յատուկ է, առանձին յատկութիւններով, որ ժամանակը նրան տալիս է, կարող էր ապահովացնել մարդուն բոլոր առաւելութիւնները, որոնք կարող էին հետեւել մետաղների գործածութեամբ: Մէկ անգամից տէր լինելով այդ սքանչելի գործիքին, մարդկային հասարակութիւնները պիտի զարդանային արագ կերպով. նրանք որ առաջինն են գործածել գըտել են այդ զէնքի մէջ մի անհաւառակելի գերադանցութիւն իրանց հարեանների վրայ: Ուստի և երկաթի դարին մեղ առաջնորդում է ուղիղ կերպով պատմական շրջանին, և շատ ժո-

դովուրդներ մինչև անգամ չէին իմանում դեռևս այս մետաղը այն վայրկեանին երբ պատմութիւնը սկսուեցաւ:

Նախապատմական ժողովուրդները:—Գիտնականները յաճախ հարցրել են՝ արդեօք մեր այդ նախապատմական դարի լուսաւորութեան ծաւալումը, որի գլխաւոր փոփոխութիւնները մենք ներկայացրեցինք, տարբեր ցեղերի գործ էր, եկած մէկը միւսի յետեից և կատարելով իւրաքանչիւրը իրանց առանձին բաժինը մարդկային ընդհանուր գործի մէջ նախ քան ընդմիջաւանյայտանալը, կամ թէ ընդհակառակը տարբեր ցեղեր, իւրաքանչիւրը այն շրջանում ուր նա հաստատուած էր, իմացել է սակաւ առ սակաւ կատարելագործել իրանց վարժուածքը և գործիքները, և յառաջագիմելով բարձրացել էին մինչ այն աստիճանի որ նրանք հասել էին այն շրջանին երբ սկսուեցաւ պատմական ժամանակները: Առաջին ենթադրութիւնը մեզ կը ներկայացնի մարդկային յառաջագիմութիւնը ինչպէս հետևանք մի մեծ բնական օրէնքի նման աշխատութեան բաժանման օրէնքին, որ կարգադրում է մեր օրերում բոլոր մեծ արտադրութիւնները. երկրորդը կալմում է ամենազեղեցիկ մասը ինքնակամութեան և կատարելագործութեան մարդկային մտքի, բայց հարկաւոր է խոստովանել որ դա ամենատակաւ հաւատարմին է:

Մարդկային ցեղերը որոնք բնակուել են առաջին տարիներում Միջերկրականի աւազանի շուրջը թւում է որ անկարող են եղել իրանք իրանց կատարել որոշ յառաջագիմութիւն, օրինակի համար գտնել մետաղների գործածութիւնը. դարերի ընթացքում նոքա սարքի տակ արդիւն են անսահման հարստութիւններ, առանց նոցա տեսնելու, հարկ եղաւ որ լոյսը գայ նոցա համար Արեւելքից, և որ արեւելեան արշաւանքները նոցա բերէին այն ծանօթութիւնները որը նոքա չէին կարողացել ինքնուրոյն կերպով ձեռք բերել: Մի կէտում գոնէ, երկաթի ներմուծումը, արշաւանքի փաստը չի կարելի հակաճառել. երկաթը բերուած է Միջերկրականի ափերի վրայ աշխարհակալների ձեռքով, գուցէ Հնդկաստանից եկած, յամենայն դէպս վերին Ասիայից և մի աւելի մեծ կալմուածքով քան երկրի նախկին բնակիչները. ահաւասիկ այն գոնէ կարելի է եզրակացնել այդ գործողութիւնից, որ երկաթի սրերը միշտ ունեն մեծ բռնելու տեղ քան բրոնզեայ սրերը ունեցել են. նոյն իսկ ապարանջանները և ժամանակները երկաթեայ զուրդ ունեն միշտ աւելի նշանաւոր տրամագիծ քան յիտազայ տարիներինը:

Մարդկային ցեղերը: Ընդհանրապէս մարդկային ցեղերը բաժանում են երեք մեծ գերդաստանների, սպիտակ, սև և դե-

դին. և այդ բաժանմունքը վաղուց հետէ ժողովրդականացած և ընդունուած ամենքից, թուում է որ պահպանուած է ներկայ յառաջագիմութեամբ և մարդկային բնական պատմութեամբ: Յիրաւի, երբ մարդ ի նկատի է ունենում բոլոր առանձին տարբերութիւնները, և երբ դասաւորում են մէկը միւսի կողքին ազգակցական կարգով բոլոր տեսակները մարդկային ցեղի, վերջապէս ճանաչուում է, որ նոքա խմբուում են երեք որոշ ցեղերի շուրջը:

Մի սպիտակ ցեղ, տարածուած բոլոր հարաւ արեւմտեան մասում Ասիայի և համարեա ամբողջ Եւրոպայում:

Դեղին ցեղ որը գոյութիւն ունի Չինաստանում, Հնդկաստանում և ամբողջ Արեւելեան և Միջին Ասիայում:

Եւ սև ցեղ որը գրաւում է Կենդրոնական Աֆրիկան և Հարաւային և կարծես տարածվում է մինչև Աւստրալիան:

Այս երեք գլխաւոր տիպերի մէջ, գոյութիւն ունի մի մեծ քանակութիւն այլ միջնորդ տիպերի, որոնք թոյլ են տալիս անցնել մէկից միւսը, և որոնք առաջանում են խառնուրդներէ. դոքա են խառնուրդից յառաջացած միջին ցեղերը. այսպէս բևեռային ցեղը որը բնակուում է հիւսիսային բևեռի շուրջը է միջնորդ սպիտակ և դեղին ցեղերի: Մալայո-պոլինէզիական ցեղը որ կազմում է միևնոյն ժամանակ նեղրական տիպ, սպիտակ և դեղին, և տարածւում է Մալակա թերակղզուց մինչ Մադագասկար և Պոլինէզիա.— Կարմիր ցեղը որը աւելի ևս մօտենում է քան նախկինները սպիտակ ցեղին և դետեղուած Ամերիկայում. Հոտենտոտ ցեղը, միջնորդ դեղին և սև ցեղերի և որին հանգրպում են Աֆրիկայի հասարակածային մասում, և այլն:

Հին դարերի մեծ բաժանմունքներ:— Հին պատմութիւնը չէ պարունակում իր ուսումնասիրութեան սովորական շրջանի մէջ ոչ այս բոլոր կողմերը, ոչ այն բոլոր ժողովրդները որոնք մենք թուեցինք. նա թողնում է մի առանձին գիտութեան որը կազմուել է մեր օրերում և գործ է գրել մի անսպասելի յառաջագիմութիւն նախապատմական գիտութեանը — մի ընդարձակ տարածութիւն ժամանակի սրը տեւել է մարդուս երկրի վրայ յայտնուելու օրից մինչ այն վայրկեանը երբ կազմուեցան իսկապէս աղտութիւնները. և նա կանգ է առնում այն ընթացքում երբ մարդկային հասարակութիւնը բոլորովին վերանորոգւում է բարբարոսների արշաւանքով և քրիստոնէութեան յաղթութեամբ: Նա տարածւում է սյգպիսով երեք կամ չորս հազար տարի առաջ Քրիստոսից, մինչ հինգերորդ դարը մեր տարեթուի: Մարդիկ այդ շրջանից առաջ եղած վայրենի և թըշ-

աւառ, չը գիտէին այլ մտածմունք բացի նիւթական գոյութիւնից: Նրանք չէին տիրապետում ոչ գիղարուեստների, ոչ ձեռնարկութիւնների որ տեղից դուրս եկաւ քաղաքակրթութիւն, կամ թէ նրանց գործ էին դնում բոլորովին տարրական ձեռք և առանց կարողանալու հաղորդել իրենց պործողութեանց յիշողութիւնները. մեր տարեթուի V դարում հին դարը վերջանում է և տիղի է տալիս ժի նոր պատմութեան, այն է միջին դարերի:

Այսպիսով սահմանափակուած ժամանակի մէջ, հին պատմութիւնը սահմանափակուած է նոյնպէս և տեսակների մէջ. նա չէ գրադուում սե ցեղով, որի անյայտ գոյութիւնը ընթացել է Աֆրիկայի միստիքական խորութեան մէջ առանց յիշատակարաններ թողնելու, և որ ինքն իրեն երբէք չէ դուրս եկած բարբարոսութիւնից. նա անփոյթանում է նոյնպէս հին պատմութիւնը զանազան ցեղերի որոնք, ինչպէս չինացիք, կարողացան բարձրանալ մի որոշ աստիճան լաւաջ լուսաւորութեան մէջ, բայց խնամքով պահպանեցին իրանց համար արած գիւտերը, և որոնք, անջատուելով հաստիքութեամբ աշխարհի ֆնացեալ մասերից, երբէք չեն նպաստել մարդկային ցեղի ընդհանուր յառաջագիմութեանը: Պատմութիւնը սահմանափակուած է պատմել զանազան ժողովրդների անցեալը որոնք մասնակցել են մարդկայինը նդհանուր մշակութեանը, որոնք բերել են իրանց մասը, փոքր կամ մեծ, գիղուած սերունդներից այն աշխատութիւնը, որի շնորհիւ մարդկային ցեղը զարգացել է դարերի ընթացքում, զանդադ բայց շարունակաբար, և վերջապէս ներս է մըտել մեր ներկայ լուսաւորութեան տիրապետութիւնը:

Ամենահին ժամանակներում, մարդկային լուսաւորութիւնը սկիզբն առաւ մեծ պետութիւնների մէջ որոնք բարձրացել են Աֆրիկայում և Ասիայում, այն կէտում ուր այս երկու մասերը աշխարհիս յարաբերութեան մէջ են, Նեղոսի ափերում, Յորդանանի, Եփրատի և Տիգրիսի. այնտեղից նա անցաւ Յունաստան, վերջապէս Յունաստանը փոխադրեց Հոռոմ, որը յաջորդեց իր կողմից Արեւմտեան ժողովրդներին:

Հետեալէս կարելի է որոշել յաջորդաբար երեք շրջան հին պատմութեան. առաջինում նկատուում են արեւելեան ժողովուրդների զարգացումը առանձին. Եգիպտացիք, Փիւնիկացիք, Հրէաները, Ասորիներ, Բաբելացիներ, մինչ այն օրը երբ ամենքը հնազանդուեցան Մեգական և Պարսկական հզօր պետութիւններին, մեր տարեթուից վեց դար առաջ: Յետոյ առաջին կարգը գրաւում են Յոյները, որոնք իմանում են արգաւանդ դարձնել քաղաքակրթութեան սերմերը որը նրանք ստացան Արեւելից, և որոնք Ալեքսանդրի հետ, սփռում

են բոլոր արևելեան աշխարհների վրայ. 3-րդ վերջին շըրջանում, Հռոմայեցիները, աշակերտներ Յոյների, սանձահարեցին և միևնույն ժամանակը նուաճեցին լուսաւորութեամբ համարեա ամբողջ նախկիններից ճանաչուած յայտնի աշխարհը:

Յ. Այվազեանց

ԵՐԲ ՊԻՏԻ ԹԻԻՐՔԻԱՆ ԴԱԴԱՐԻ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒՑ *)

(Արմինիոս Վամբերի)

Յիսուսն տարուց աւելի զբաղուած լինելով Արևելքի տեսական ու գործնական ուսումնասիրութեամբ բնաւ չեմ դարձանում, որ յաճախ հարցնում են իմ կարծիքը այս հարցի վերաբերմամբ՝ «երբ պիտի Թիւրքիան դադարի գոյութիւն ունենալուց»: Սրան կից կը ցանկանայի մատնացոյց տնել իշխան Շուպեօլի 200 տարի սրանից առաջ Լուի XIV-ին ներկայացրած զեկուցագրին, որի մէջ Ֆրանսիայի Նշանակաւոր քաղաքագէտը յայտարարում էր՝ թէ Թիւրքիայի տիրապետութիւնն Եւրոպայում մօտ է իր վախճանին. սակայն Թիւրքիան ընդհակառակը դեռ ևս գոյութիւն ունի: Շատ ուրիշ նման գուշակութիւններ ոչ մի հիմք չեն ունեցել մինչև այժմ, ուստի դարձանալի չէ, որ շատերը համարում են Եւրոպական Թիւրքիայի կառավարութեան կենսունակութիւնը ոչ բոլորովին անյուսալի: Աւելի խորը նայելով այդ հարցին՝ կը տեսնենք, որ այդ երկու իրարու հակառակ տեսակէտները հերքուած են պատմական փաստերով:

Ոչ ոք չի կասկածում, թէ այն շէնքը, որ կոչում է Օտոմանեան պետութիւն, ցնցուել է մինչև հիմքերը: Այդ երբորն շինութիւնը պահպանւում է գլխաւորապէս երկու սիւնե-

*) Առաջ եմք բերում հեղինակաւոր Վամբերիի այս կարծիքը, որ աւելի հիմնաւոր է քան մեր տնարոյս որոշ պոլիտիկաների հարայ-հրոցները Թիւրքիայի ապագայի նկատմամբ:

Ծ. խմբ.

բով, որոնց զիմացկանութիւնն ու ամբողջութիւնը կախուած է ոչ թէ բացառապէս Թիւրքիայի իրանից, այլ առաւելապէս նրա կատաղի թշնամիներէից, և դրանք ընականաբար ակնդէտ սպասում են, որ այդ պաշտպանողական միջոցները հետզհետէ թուլանան ու վերջնականապէս տապալին:

Այդ սիւնների առաջինն է օտար պետութիւնների և Թիւրքիայի ասիական ու եւրոպական հարեանների միջև եղած պայքարն ու մրցումը: Թիւրքիան մի այնպիսի իւզալի պատառ է, որ հազիւ թէ յաջողուի տէրութիւններից միայն մէկին ժառանգել այդ: Դարերի ընթացքում դրա համար շատերի բերանի ջուրն է գնացել: Ի նկատի առնելով մրցակիցների այդ անյազ ակորժակը դեռ հարց է՝ թէ ինչպէս պէտք է լուծուի այդ կնճռոտ խնդիրը:

Շատ անգամ ենթադրուած է՝ թէ Անգլիան դրաւելով Եւրպոսը, Մալթան ու Կիպրոսը, այլ ևս աչք չունի Պոլսի վրայ և թէ նրա ու Ռուսիայի միջև եղած մրցակցութիւնն այդ խնդրում այլ ևս գոյութիւն չունի. բայց դա սխալ մի ենթադրութիւն է: Այն մտալից ոսկորը, որ կազմում է կոուրի տարեկան, ոչ թէ պէտք է համարել Պոլսը միայն, այլ և գերիշխանութիւնը Միջերկրականի վրայ: Անգլիան հազիւ թէ իր հաւանութիւնը տայ Ռուսիային դրաւել Բոսպորն ու Դարդանելը, և էլ աւելի անհաւանական է, որ Իտալիան ու Աւստրո-Ունգարիան անտարբեր դիրք բռնեն, եթէ մի նոր պետութիւն փորձէ մօտենալ այդ ջրերին:

Ինչ վերաբերում է Թիւրքիայի հարեան պետութիւններին՝ պէտք է շատ միամիտ լինել կարծիքով՝ թէ Աւստրո-Ունգարիան ու Ռուսաստանը մշտապէս հրաժարուել են իրանց հին ձգտումներից՝ ազդեցիկ դիրք բռնելու օսմանեան պետութեան իրանց սահմանակից գաւառներում: Ներկայումս պետութիւնների համերաշխ գործակցութիւնները Մակեդոնիայում շատ օգտակար ու գովելի է. քանի որ դեռ դրանք վարում են ոստիկանի պաշտօն և աշխատում են յուզուած նահանգներում խաղաղութիւն հաստատել: Սակայն անշուշտ մի արտակարգ փոփոխութիւն տեղի կ'ունենայ, հէնց որ այս օրուայ խաղաղարարներն իրարու օձիբից բռնած իմ ու քոնի հարցը մէջ տեղ կը բերեն: Մի խօսքով՝ այն պաշտպանութիւնը, որ Թիւրքիան վայելում է արեւմտեան պետութիւնների մրցակցութիւնից, դեռ ուշ կը կորցնի իր ոյժը:

Նրկորդ սիւնը, որ պահպանում է օսմանեան խախուտ պետութիւնը, այն համերաշխութիւնն ու հակառակ ձգտումներն են, որ ընդդէմ են այդ պետութեան մէջ ապրող զանազան

ոչ-թրքական տարրերը: Թէպէտ այդ տարրեր ազգութիւնները հաւասարապէս տուում են իրանց ընդհանուր թշնամուն, սակայն ընդհանուր տարրերում են իրարից և իրար մագեր են պոկում այն ժամանակ, երբ հրապարակ են հանում ազգայնական հարցեր: Յոյները զգուշանքը դէպի սլաւոնները ու այս երկու ազգերի գարշումը հայերից անկասկած աւելի մեծ է այն ընդհանուր ասելութիւնից, որ բրիտոնեայ հպատակները զգում են իրանց մահմեդական պետի դէմ: Այս փոխադարձ թշնամութիւնը յոյների ու սլաւոնների միջև գոյութիւն ունի վաղուց ի վեր: Դա սկիզբ է առել 7-րդ դարում, երբ բողղարները գաղթեցին ստորին Վոլգայի ափերից դէպի Միւսիայ ու շփուեցին Բիւզանդիայի հետ: Ծագումով Ուրալ—Ալթայիկ ցեղին պատկանող ու հեռագիտէ սլաւոնացած բողղարները պահպանել են իրանց նախնիների պատերազմասէր բնաւորութիւնը և հետեալաբար եղել են միշտ լարուած դրութեան մէջ իրանց զարգացած բայց և խորամանկ հարեանների հետ: Քանի որ երկուքն էլ ճնշում էին կիսալուսնի երկաթէ բռնակալութեան տակ, այդ փոխադարձ թշնամութիւնն երևան չէր գալիս աւելի ուժեղ կերպով: Սակայն վերջին տարիներում դա ստացել է աւելի սուր կերպարանք, այնպէս որ ներկայումս այս երկու ցեղերի ուս ուսի տուած դիմադրութիւնը իրանց ընդհանուր թշնամու դէմ շատ աննշան է: Բացի դրանից պէտք է հաշուի առնել այն նախանձը, որ գոյութիւն ունի բողղարների ու սերբիացիների միջև—այդ մի կողմից, իսկ միւս կողմից՝ այդ երկու ցեղերի թշնամական յարաբերութիւնները քուցովալլաքների հետ, այնպէս որ ինչքան էլ սուլթանի քաղաքական ու զինուորական ոյժը թոյլ լինի, այսուամենայնիւ նա կարող է յաջողութեամբ դիմադրել այդ իրար հետ անհաշտ ապրող ազգերին:

Ուրեմն բանի որ Թիւրքիան դեռ յենուած է այդ երկու սիւնների վրայ, իզուր է խօսալ նրա մօտալուտ վախճանի մասին: Չկայ և՛ ոչ մի հիմք կարծելու, թէ մեծ պատութիւնները պիտի ունենան ձեռք առնել ստիպողական միջոցներ նրա անկման բոլոր արագացնելու համար: Ժամանակը և միմիայն ժամանակն է, որ իր հետ պիտի բերէ արեւելեան հարցի լուծուածը—մի հարց, որ անքան անհանդատութիւն է պատճառել Եւրոպային:

Այն օրից, երբ Թիւրքիան կորցրեց բուզը, 1882 թ., սկսել է նրա մասն կտորների փշրուելու պրոցէսը—մի պրոցէս, որ դեռ շարունակուած է կարճ ընդհատումներով: Այդ կազմալուծումը պիտի շարունակուի անկասկած նաեւ մինչև

մօտիկ ապագան: Տառն ու իններորդ դարում այդ պետութիւնից կտրուել են Յունաստանը, Ռումանիան, Սերբիան ու Բուլղարիան: Քսաներորդ դարում առաջ պիտի անջատուի Մակեդոնիան և ապա Ալբանապոլի շրջանը: Ինչ վերաբերում է Պոլսին, այդ շատ ցանկալի ու աւելի թանկագին ժառանգութեանը, դրան էլ սահմանուած է այն դերը խաղալու թրքական պետութեան մէջ, ինչ դեր դա խաղացել է Բիւզանդական իշխանութեան պատմութեան մէջ—այն միակ տարբերութեամբ միայն, որ դեռ այժմեանից չէ կարելի դուշակել թէ այդ յեղաշրջումը երբ պիտի տեղի ունենայ:

Շատ տարիներ առաջ իմ համբաւաւոր բարեկամ միստր Սթէդը առաջարկեց՝ թէ աւելի լաւ կը լինէր Բոսպորի գրաւման գործը յանձնել Միացեալ—Նահանգներին: Նա աշխատում էր հաւատացնել՝ թէ դա է այն միակ պետութիւնը, որ կարող է այդ գործը գլուխ բերել առանց զրգուելու եւրոպական մրցակիցների կասկածոտութիւնը: Սակայն գէթ ներկայումս այդ տեսակ մի միտք պէտք է համարել զուր ու երևակայական: Կիսալուսինը Այա—Սոֆիայի գմբէթից հեռացնել ու նրա տեղը միթեան կամ երկթեան խաչը տնկելն այնքան էլ հեշտ րան չէ, ինչպէս Թիւրքիայի թշնամիներն են երազում: Պէտք է ասել՝ թէ եւրոպական տէրութիւնները վարւում են իմաստութեամբ, երբ թոյլ չեն տալիս որեւէ բռնի միջոց այդ նպատակի համար և խուսափում են ամեն տեսակ ցնցումներից և անօգուտ արիւնահեղութիւնից: Եւ իրաւ, ինչո՞ւ դիմել բռնի միջոցների, քանի որ դա արդէն բնական ընթացքով դիմում է իր կատարեալ կազմալուծմանը:

Թէկուզ հիւանդ մարդի մահուան ճգնաժամը առակի ձև է ստացել, և նրա ապաքինումը շատերին թւում է անյուսալի, սակայն նրա վախճանը կարող է վրայ հասնել միայն մի երեւելի դիպուածով—այն է նրա ֆինանսական դրութեան շարունակ վարթարանալովը—մի հիւանդութիւն, որից նա տանջւում է աւելի: Թիւրք ազգի հետզհետէ աճող աղքատութիւնով ու թրքական զանձարանի մշտական դատարկութիւնովը անկարելի պիտի դառնայ տիրել բազմազան և իրարու թշնամի ազգութիւնների վրայ: Ի նկատի առնելով Թիւրքիայի դրամական վարկի կատարեալ բացակայութիւնը եւրոպայում՝ բոլորովին անհասկանալի է՝ թէ ներկայ ձեռքէքերան քաղաքականութիւնը կարող կը լինի տեւել երկար ժամանակ: Պետական մեքենան պէտք է վաղ կամ անադան կանգ առնէ: Անվճար, մերկ ու սոված զինուորները ոչ կ'ուզեն և ոչ էլ կարող են կռուել մի պետութեան համար, որ այդպէս բոլորովին աչքաթող է

անուժ իրանց. և պաշտօնակւան անձինք, որոնց ռոճիկները 6—8 տմոխց ի վեր յետաձգուած են, սկսել են արդէն դանց անել իրանց պարտականութիւնները: Ուրեմն ոչ թէ օտար պետութիւնների յայտնի ու ծածուկ մերկնայութիւնները, ոչ թէ հակաթրքական ազգերի ծրագիրները, այլ լայդ ֆինանսական դժբաղդութիւնն է, որ պիտի առաջ բերէ օսմանեան պետութեան անկումը: Այն ժամանակ արեւմտեան պետութիւնները ստիպուած պէտք է լինեն միջամտել ու վերականգնանել կարգը:

Հետ չէ սակայն նախատեսել՝ թէ երբ պիտի վրայ հասնէ այդ աղէտալի բոպէն: Դա աւելի՛ դժուարանում է մանաւանդ մի նոր ֆակտորով, որ երևան է եկել մօտիկ արեւելքի բեմի վրայ—մի ֆակտոր, որի շահը պահանջում է հիւանդ մարդու հոգեվարք գոյութիւնը երկարացնել և այդ հանգամանքից օգտուելով հաստատ հիմքերի վրայ դնել իր տնտեսական շահերը: Այդ ֆակտորը՝ այսօրնքն Գերմանիան, անշուշտ պիտի գործածէ ամեն միջոց փրկելու իր բարեկամին ու դաշնակցին, բայց դեռ հարց է՝ թէ արդե՞ծք նրա ջանքերը այդ ուղղութեամբ պիտի պսակուեն յաջողութեամբ: Եթէ Թիւրքիայի ներկայ միապետը, այդ խորամանկ ու ընդունակ իշխանը, շնորհիւ իր անգութ ու աննկարագրելի բռնապետութեան իր սեփական մոսուլման հպատակներին իրանից խորթացնելու սըխալը գործած ու այդպիսով ամբողջ երկիրը իր հետ թշնամացրած չլինէր, կարելի էր յուսալ, որ նա վերջապէս ապաքինէր իր տեստնական պահապանի անձնուէր խնամքի տակ: Սակայն սուլթան Համիդը բոլորովին կործանեց այդ յոյսը: Նրա անսանձ բռնակալութիւնը հանգցրել է իր ժողովրդի ազգային ինքնավստահութեան ամեն մի կայծը: Նրա մահից յետ հաղիւ թէ կարելի լինի օտոմանական պետութեան կրիտիկական բոպէի առաջն առնել: Ռէշիդ էֆէնդին, նրա կարծեցեալ ժառանգն ու եղբայրը, հոգեկան յատկութիւնների կողմից աւելի նուազ օժտուած լինելով՝ անընդունակ է այս իրարու վրայ կուտակուած դժուարութիւնների ճնշողութեան տակ պետութեան ղեկը վարելու: Ոմանք պնդում են՝ թէ դրութիւնը աւելի յուսալի կը լինէր, եթէ հանգ. Սուլթան Ազիզի որդի Իզզէդինը յաջորդէր այժմեան սուլթանին. բայց ոչ ոք չէ կարող ասել՝ թէ այդ իշխանին պիտի յաջողուի իր իրաւունքը գործադրել ու դա՛նք բարձրանալ: Հետեւաբար սուլթանական այդ յաջորդների խառնաշփոթ հարցի շնորհիւ ևս Թիւրքիայի ապագան չափազանց մութ է:

Օսմանեան պետութեան ապագայի հարցը քննելիս, մենք Նոյեմբեր, 1901,

չենք կարող գէթ անցողակի կերպով չշօշափել և՛ համխառմական գաղափարը, որը այժմեան սուլթանի կարծիքով մի զօրավիզ է իր այն ջանքերին, որ նա գործ է դնում քրիստոնեայ տրեմուտքից սպառնացող վտանգի դէմ: Վերջերս մեր առատըխական մասուլը շատ զբաղուեց այդ կոշմարական հարցով: Եւ մեր լրագրներինց ուսանք հակուած էին այդ «վերահաս վտանգը» հաւասար դասել զրանից ոչ պակաս երեւակայական «bug boo» (դեղին վտանգը) հետ: Պանխալամիզմի բուն իմաստը բացատրելու համար հարկաւոր է մի առանձին յօդուած: Առ այժմ սա միայն կ'ասեմ՝ թէ սուլթան համիզը նայում է դրա վրայ իրրեւ ապագայի մի մեծ խարխալի վրայ. բայց նա չաւրաչար սխալուած է: Պանխալամիզմը կարող է արդարեւ լինել իրրեւ հոգևոր միութեան մի կապ. բայց դա հազիւ թէ կարողանայ նպաստել քաղաքական ու աշխարհային նպատակներին և իսկապէս դա երբէք չի գործածուել իրրեւ մի ընդհանուր դէնք իսլամի քրիստոնեայ թշնամու դէմ:

Ի մի գումարելով այս բոլորը՝ պէտք է ասել, թէ ինչ տեսակէտից էլ այդ հարցին նայենք՝ «երբ պիտի թիւրքիան դադարի գոյութիւն ունենալուց» միակ բաւական ստոյգ եզրակացութիւնն այն է՝ թէ օսմանեան պետութիւնը եւրոպայում, բայց միայն եւրոպայում, մօտ է իր վախճանին և այժմեան միապետի մահովը պիտի վրայ հասնէ զրա պատմութեան կրիտիկական ընթացիկից մէկը: Սակայն եւրոպական թիւրքիայի անկումը դեռ չի նշանակում ամբողջ պետութեան վախճանը, այլ միայն մի վերադարձ իր հին որբանին: Եթէ նոյն իսկ եւրոպան դէն շարունակ իրանից այդ աւելորդ ու անօգուտ բնուր, դարձեալ թիւրքիան կ'արդէ դեռ մնալ իրրեւ մի ուժեղ պետութիւն Փոքր Ասիայում:*)

(Թարգմ. անգլ.) ԱՐՐ. Մ.—Ջանեանց

*) Այս վերջին պարբերութեան վրայ թող առանձին ուշք դարձնեն մեր «պանարմենիստները», որոնց օրդանները ժընեվ, Թիֆլիս, Պարիզ, Բուդապէս, Ամսթըրդամ և Եդինպուր շարունակում են անխղճաբար շահագործել քաղաքականապէս տհաս հայերի «ազգասիրութիւնը» զանազան կեղծ «յիշատիական-ապստամբական» միլիտաներով «ազատ հայաստանի» մասին... Այդ բախտախնդիրներին կամ մարտուածների դէմ պէտք է մտքառել անդուլ կերպով և իսպառ բուժել զգաստացուցիչ զեղբերով մեր ժողովրդի խեղաթիւրած մեղքը: «Յեղափոխութիւնը» իմաստակներին էքսպերիմենտներին, մանաւանդ փող չորթոյներին, մարգասպաններին և խենթութիւնների գործ չէ. թող ձեռք վերցնեն այդպիսիները հայ ժողովրդի վրայից իրանց անկոչ լինամակալութիւնով:

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ ԵՒ ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՆ *

Սոցիալ-դեմոկրատիայի հիմնական սկզբունքներից մէկը ասում է թէ ներկայ հասարակական դարդացման շարժիչ ոյժերից մէկն է դասակարգային կռիւը պրոլետարիատի և բուրժուազիայի մէջ: Սակայն դրանից բնաւ չի հետևում թէ նա ով այդ սկզբունքը բերան արաւ արդէն ունի պատրաստի պատասխան այն բոլոր հարցերի, որոնք յարուցւում են մեր ժամանակի սոցիալական և քաղաքական պայքարով: Դրա համար բաւական է թէկուզ մատնանշել այն թէ ռիչափ տարբեր են զանազան երկրների պրոլետարիատը և բուրժուազիան, ռիչափ տարբեր են այն յարաբերութիւնները որոնց մէջ նրանք ծագում են և պայմանները որոնց մէջ նրանք մաքաւում են:

Իսկ բուրժուազիայի և պրոլետարիատի միջև գտնւում է ազգաբնակչութեան տարբեր շահեր ունեցող շերտերի ամբողջ մի շարք: Այդ շերտերը խառնւում են երկու դասակարգերի կռուի մէջ, զօրավիգ լինելով մերթ մէկ, մերթ միւս կողմին: Եւ ազգաբնակչութեան այդ շերտերը նմանապէս յարաճուն փոփոխութիւններ են կրում, ուստի մշտապէս փոփոխւում են դրանց ոյժերը, դրանց ձգտումները, դրանց մաքաւման միջոցները:

Այդ դասակարգերից իր վրայ է ուշք դարձնում նաև ինտելիգենցիան, որի վերաբերմունքը դէպի սոցիալ-դեմոկրատիան մի կարևոր հարց է:

Հարցը նրանումը չէ թէ արդեօք պէտք է սոցիալ-դեմոկրատիան սիրայօժար կերպով իր շարքերի մէջ ընդունի ը'կերպ ներ ինտելիգենցիայի միջից—մի հարց որ վճռւած է «Կոմունիստական մանիֆեստի» հետևեալ խօսքերով. «Ինչպէս առաջնեքում ազնուականութեան մի մասը անցնում էր բուրժուազիայի կողմը, այնպէս այժմ բուրժուազիայի մի մասը անցնում է պրոլետարիատի կողմը, այն է բուրժուական գաղափարա-

*) Որոշ յապաւումներով կազմուած է Կառլ Կոպսկու «Ինտելիգենցիան և սոցիալ-դեմոկրատիա» գրուածքով:

խօսանքի այն մասը, որ բարձրացել է պատմական ամբողջ շարժման տեսական ըմբռնողութեան: Նոյն հարցը լուծում է և այն իրողութեամբ որ սոցիալ-դեմոկրատիայի հիմնադիրները — Մարքս, Էնգելս, Լասալ — ինտելիգենտներ էին: Սոցիալ-դեմոկրատիայի շարքերի մէջ ուրախութեամբ ընդունում է իւրաքանչիւրը, ով ընդունում է նրա հիմնական սկզբունքները և մասնակցում է նրա ազատագրական կռոււմ, օգտուելով դրա համար ցոյց տուած միջոցներով, — ինչ հասարակական դասակարգից էլ գալիս լինի այդպիսի անձը: Այն հայեացքը, որով վարձու բանուորների գործը կարող է կանոնաւոր կերպով տարուել միմիայն վարձու բանուորների ձեռքով, պրոլետարիատի ամենայնատափնաց մասի կարծիքն է, այն մասի որ դեռ չի ազատուել համբարական նեղ հայեցողութիւնից:

Այստեղ մենք ուզում ենք քննել այն հարցը թէ ճիշտիւր ինտելիգենցիայի շահերը համանման են պրոլետարիատի շահերին, թէ չափով կարելի է սպասել թէ ինտելիգենցիան մասնակցութիւն կ'ունենայ պրոլետարիատի գասակարգային կռոււմ և թէ ինտելիգենցիայի որ շերտերին ամենից հեշտ է զրաւել սոցիալ-դեմոկրատիայի կողմը:

Ֆիզիօլոգիական տեսակէտից չի կարելի արդարացնել տարբերութիւնը մտաւոր և ֆիզիքական աշխատանքի մէջ: Նոյն իսկ զուտ մտաւոր գործունէութիւնը մարմնի ֆունկցիա է, իսկ միւս կողմից և ամենակոպիտ աշխատանքը լոկ մկանունքների գործունէութիւն չէ, այլև հոգու, այսինքն ուղեղի և ներվերի: Վիտտելսգեֆեր վերջերումս ապացուցեց որ այսպէս կոչուած մտաւոր աշխատանքի մի քանի տեսակները պահանջում են մտքի աւելի քիչ լարում, քան այսպէս կոչուած ֆիզիքական աշխատանքի մի քանի տեսակները:

Այդ տարբերութիւնները կազմուել են պատմականօրէն. մտաւոր աշխատանքը սովորաբար կոչոււմ է աւելի բարձր կարգի, աւելի ազնիւ աշխատանք և մինչև այժմ իրանց և իւրանց հովանաւորուածների համար են պահել շահագործողները, իսկ ֆիզիկական աշխատանքը՝ շահագործուողներին, ստրկացածներին, լարհամարհուածներին էր վիճակուած, ուստի կոչոււմ էր պիւրէյական աշխատանք: Մտաւոր աշխատանքի կարգին էին պատկանում պետական, վարչական, դոքտրին, լուսաւորութեան, եկեղեցու, դեղարուեստի և գիտութեան նուիրուած աշխատանքները, այդ կարգին է պատկանում և այն աշխատանքը, որ պահանջում է որոշ գիտելիքներ և հախապատրաստութիւն, որոնց ձեռք բերելու համար պահանջում է

աւելի շատ ազատ ժամանակ և միջոցներ, քան այդ սովորաբար առձեռն դանւում են շահագործողներին մօտ:

Այդպիսով մտաւոր աշխատանքը եղել է առանձնաշնորհեալ աշխատանք և այդպիսին ընդհանուր գծերով մնում է և այժմ, թէև որոշ փոփոխութիւն այդ կողմից արդէն սկսուել է: Առաջներում մտաւոր աշխատանքով պարապում էին իրանք շահագործողները, իսկ կապիտալիստական արդիւնաբերութեան ժամանակ շահագործողները այնքան զբաղուած են իրանց գործով որ իրանք բոլորովին ժամանակ չունին որևէ այլ գործի համար, էլ չենք ասում որ սկի ոչ մի կարիք էլ չեն զգում այդ մտաւոր աշխատանքի մէջ... Նրանք իրանց աղատում են այդ աշխատանքից ինչպէս և ֆիզիկականից և ամբողջապէս անձնատուր են լինում շահին. իսկ մտաւոր աշխատանքը դառնում է առանձին դասակարգի յատուկ նպատակը: Դա այսպէս կոչուած ինտելիգենցիան է, որ իր ապրուստը հայթայթում է վաճառելով իր մասնագիտական տեղեկութիւնները և ընդունակութիւնները:

Կապիտալիզմը ոչ միայն աւելի և աւելի շատ ինտելիգենցիայի վրայ է դրում այն աշխատանքը, որ մինչև այժմ կատարում էին իրանք շահագործողները, այլև օրէցօր նրա համար աշխատանքի նորանոր ասպարէզներ է բանում: Արդիւնաբերութեան կապիտալիստական եղանակը փոխաբինում է արհեստը խոշոր ինդուստրիայով, տարբարւոծում է արհեստաւորի աշխատանքը ֆիզիկական և մտաւորական աշխատանքի և մեքենաների մօտ բանուորների հետ անհրաժեշտ է դառնում ունենալ և ինժեներներ, քիմիկոսներ, կառավարիչներ և այլն: Արդիւնաբերութեան կապիտալիստական ձևը կենտրոնացման եղանակով է ներգործում պետութեան վրայ, ազդաբնակութիւնը քշում է մեծ քաղաքները և ձուլում մանր պետութիւնները մի խոշոր պետութեան մէջ, մանր ինքնավար համայնքների փոխարէն նաև կառուցանում է լայնատարած և բարդ շինուածք, որ պահանջում է իր կառավարութեան համար յատուկ նախապատրաստութիւն ստացած պաշտօնեաներ. բիւրօկրատիան արագօրէն աճում է: Զարգանում է համաշխարհային առևտուրը և նրա հետ միասին նաև համաշխարհային քաղաքականութիւնը: Տնտեսական և քաղաքական կեանքը այդ բոլոր շրջաններում, խոշոր քաղաքում, մեծ պետութեան մէջ, միջազգային յարաբերութիւնների մէջ ստեղծում է տեղեկանալու և ազդելու համար առանձին օրգաններ. մամուլը դառնում է խոշոր ոյժ: Արդիւնաբերութեան կապիտալիստական եղանակը կամաց կամաց բոլոր արդիւնաբերութիւնը վերածում է ապրանքային արդիւ-

նաբերութեան և դրանով անվերջ բաղձապատկում է այն առանձնայատուկ ընդհարումները օպրանքաարդիւնաբերողների մէջ, որ կթան կռվ են դառնում փաստաբանների դասակարգների համար: Արդիւնաբերութեան կապիտալիստական եղանակը մասսաներից խլում է աղատ ժամանակը և սպանում է ժողովրդական գեղարուեստը: Նրա տեղը բռնում է վտրձատրուող արուեստը որ դառնում է արդիւնաբերութեան առանձին ճիւղը: Տին ջուլհականոցների տեղ, ուր ժողովուրդը ինքն իրան պատմում էր իր սեփական հէքեթները, երևան են գալիս թատրոններ, բալադաններ, ժողովրդական երգի տեղը բռնում են արհեստաւոր խեղկատակի յօրինած ղուարձասացները:

Այդ և այլ միջոցներով կապիտալիզմը ստեղծում է գիտութեան և գեղարուեստի աճումը, իսկ նրա հետ միասին նաև ինտելիգենցիայի աճումը:

Սակայն ինչքան էլ արագ աճի մտաւոր աշխատանքի պահանջը, աւելի ևս արագ է աճում նրա առաջարկը:

Նախ և առաջ ինտելիգենցիայի շարքերը միշտ լքցւում են իրա աճողութեամբ: Նա չի ուզում թոյլ տալ որ իր որդիք ընկնեն աւելի պակաս արտօնուած դասակարգերի դուրթեան, իսկ բարձրանալ և մտնել խոշոր շահագործողների դասակարգի մէջ համեմատաբար շատ քչերին է աջողում ինտելիգենցիայից: Մեծ մասը ստիպուած է բաւականանալ հնարաւորութեամբ իրանց երեխաներին տալ այնպիսի կրթութիւն և դաստիարակութիւն, որ պահանջւում է ինտելիգենցիայից:

Բայց և բարձր դասակարգերի երիտասարդ սերնդից շատերը ներս են հրւում ինտելիգենցիայի շարքերի մէջ:

Ֆէօդալական տիրապետութեան ժամանակ աղնուակականութեան մէջ ընդունուած էր որ կալուածքը յանձնւում էր աւագ ժառանգին, իսկ կրտսեր որդիների համար ապահովութեան միջոցներն էին համարւում ղինուորական ծառայութիւնը և եկեղեցին: Կապիտալիստական արդիւնաբերութեան ձեւը դժբանց աւելացրեց ինտելիգենտ պարապմունքները, լաւ վարձատրուող պաշտօնները:

Ինտելիգենցիայի մէջ մտնելու հոսանքը նկատուում է և մանր բուրժուազիայի կողմից, նոյնիսկ գիւղացիութեան և շատ չնչին թուով և պրոլետարիատի միջից: Ինտելիգենցիայի շարքերի մէջ մտնելու համար անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերելը շատ հին ժամանակից ստորագոյն դասակարգերի անձների համար միակ միջոցն էր իր դասակարգից բարձրանալու համար: Սակայն այդ կատարւում էր միայն եղակի դէպքերում առանձին ձիրքերի և հակումների դիպուածներում, և վեր էր

բարձրանում միայն այդ դասակարգերի ջսկովի տարրը: Այժմ այդ փոխումը է: Քաղաքում և գիւղում մանր արգիւնաբերութեան անկումը ստիպում է մանր բուրժուաներին, իսկ երբեմն և գիւղացիներին, ինչ դնով էլ լինի, աշխատել որ իրանց վաճակները մանեն ինտելիգենցիայի շարքերի մէջ, անկախ նրանից ունեն նրանք արդեօք զրա համար հակում թէ ոչ, որովհետեւ սերնդի այն մասին, որին այդ չի վիճակուիլ, սպասում է ընկնել պրոլետարիատի շարքերը: Զարմանալու ոչինչ չկայ որ մտաւոր աշխատանքի շրջանում առաջարկը կամաց կամաց գերազանցում է պահանջից, այնպէս որ կարելի է խօսել ինտելիգենցիայի թուական գերաճման մասին:

Այդպէս կազմում է նոր միջին դասակարգ, որ չափազանց ուժեղ է իր թւով և անընդհատ աճում է: Նրա աճումը որոշ հանգամանքներում կարող է լրացնել առհասարակ միջին դասակարգի նուազումը, որ հետեանք է մանր արդիւնաբերութեան անկման: Անդադար ակման շնորհիւ ինտելիգենտ բանուորները թիւը աւելի է դառնում քան պահանջ կայ. այդտեղից ծագում է նրա անբաւականութիւնը, զժգոհութիւնը իր կացութիւնից:

Սակայն լոկ այդ զժգոհութիւնը չէ միակ կապը պրոլետարիատի և ինտելիգենցիայի մէջ:

Շատերը պնդում են որ ինտելիգենցիայի դասակարգային շահերը բոլոր էական կէտերում նոյնն են, ինչ որ պրոլետարիատի շահերը: Ինտելիգենցիան, ստույգ են նրանք, կազմում է միայն պրոլետարիատի մի մասը, և հէնց որ նա գիտակցում է իր դասակարգային շահերը, նա պէտք է յարի սոցիալ-դեմոկրատիային:

Իբր ապացոյց որ ինտելիգենցիան պատկանում է պրոլետարիատին բերում են. 1) կիսաքաղցած ապրող ինտելիգենտների մեծ թիւը 2) այն ֆակտը որ ինտելիգենցիան, ինչպէս և արդիւնագործական վարձու բանուորները, ապրում է վաճառելով իր աշխատանքը: Այդ հէնց ուղղակի այն երկու բնորոշ յատկութիւններն են, որոնք մօտեցնում են պրոլետարիատին. բայց միթէ այն օրից երբ գոյութիւն ունի քաղաքակրթութիւնը միշտ չէ՞ն գտնուել ժառղիկ, որոնք կիսաքաղցած են ապրել: Բայց միթէ չկային վարձու բանուորներ դեռ մինչև XIX դարը: Սակայն միայն այդ XIX դարը առաջացրեց դասակարգային ինքնագիտակցութեամբ տոգորուած յեղափոխական պրոլետարիատ, որ սոցիալիստական շարժման կրողը դառաւ: Առանձին պատմական պայմանները ստեղծեցին այդպիսի մի պրոլե-

տարիատ. նա խոշոր կապիտալիստական ինդուստրիայի զաւակն է:

Ուրեմն այդ ապացոյցները բաւական չեն. եթէ գործին աւելի մօտից նայենք մենք կը տեսնենք որ ինտելիգենցիան չունի ընդհանուր դասակարգային շահեր, այլ միայն արհեստակցական շահեր: Շահերի թիւ ընդհանրութիւն է կապում բժշկին և երգուեստ հաւատարմատարին, նկարչին և լեզուագէտին, քիմիկոսին և լրագրական առաջնորդողներ գրողին: Այդ գրադմուսներէից իւրաքանչիւրի ոչ միայն հոգեկան, այլև նիւթական շահերը բոլորովին տարբեր են: Եթէ արդէն ուզուի՝ էք դրանց համեմատել ֆիզիքական աշխատանքի բանուորներին հետ, այդ կողմից դրանք նման են ոչ թէ խոշոր ինդուստրիայի պրոլետարիատին, այլ միջին դարերի շակերտներին, որոնք նմանապէս չգիտէին ընդհանուր դասակարգային շահեր, այլ միայն արհեստակցական շահեր: Բայց ինտելիգենցիայի նկատմամբ քիչ է ասել թէ շահերի համերաշխութիւն տիրում է միայն իւրաքանչիւր արհեստակցութեան ներսում: Մինչդեռ նոյն արհեստի արդիւնարեքական բանուորներին կեանքի մակերևոյթը ըստ էականի միատեսակ է, ընդհակառակը՝ նոյն պրոֆեսիային պատկանող առանձին անհատներին մէջ ինտելիգենցիայի շրջանում նկատուում է կենսական մակերևոյթի մէջ անազին տարբերութիւններ, ուստի տարբերութիւն և շահերի մէջ: Ինչ շահունի մի ուրեք «լուսատու», գեղարուեստի երկնակամարի մի աստղ այն բանի մէջ, որ նրա անյայտ ընկերները իրան նման լաւ վարձատրուին...

Իւրաքանչիւր ինտելիգենտ պրոֆեսիայում աւելի ուժեղ է գործում մրցումը, ընկերների հաշուով առաջ գնալու ձրդտումը: Եւ ոչ մի տեղ այնքան զարգացած չեն նախանձը, կարիէրիզմը, ստորաքարշութիւնը և ամբարտաւանութիւնը, ինչպէս գեղարուեստագէտների և գիտնականների շրջաններում:

Բայց այս բոլորից աւելի շատ է ինտելիգենցիային պրոլետարիատից բաժանում այն իրողութիւնը, որ ինտելիգենցիան արտօնեալ դասակարգ է: Որքան և տարբեր, նոյնիսկ հակառակ լինեն շահերը ինտելիգենցիայի մէջ, այնուամենայնիւ մի բան միացնում է նրան. դա արիստոկրատիական քնոյթն է: Ինտելիգենցիան—դա հոգու արիստոկրատիան է, և նրա շահերը ժամանակակից հասարակութեան մէջ հրամայում են նրան բոլոր միջոցներով պահպանել իր արիստոկրատիական փակուածութիւնը: Այդ արտօնեալ դրութիւնը պահպանելու նպատակով ինտելիգենտները պէտք է ըստ կարելւոյն զէմ լինեն նոյն տարբերի ներմուծման իրանց շարքերի մէջ, զժուարացնեն նոր

տաղանդները, նոր ժրջակիցները աւելանալուն: Այդ ձգտումը հակառակ է պրոլետարիատի իբրև ստոր կանգնած դասակարգի բնական ձգտման—ոչնչացնել բոլոր առանձնաշնորհումները ինչ տեսակի էլ նրանք լինեն:

Եթէ սոցիալ-դեմոկրատիան յայտարարում է բոլորի համար կրթութեան հաւասար իրաւունք, եթէ նա ձգտում է կոտորել այն արգելքները, որոնք այժմ խանգարում են կնոջ և պրոլետարիատին մտնել ինտելիգենցիայի շարքերի մէջ, այսինքն ինտելիգենտ պրոֆեսիոնների մէջ, չէ որ այդ ձգտումը նշանակում է մեծ չափերով աւելացնել հէնց այն, ինչ որ ժամանակակից հասարակութեան մէջ ամենից աւելի կորստաւեր էր ինտելիգենցիայի վրայ ազդում,—այսինքն—կրթութեամբ մարդկանց թուի աւելի մեծ աճում, քան նրա աշխատանքի մէջ պահանջ է դրացում:

Ահա այս վճռողական կէտում պրոլետարիատի և ինտելիգենցիայի շահերը տրամագծօրէն հակառակ են: Եւ հէնց միայն այս պատճառով, թողնելով մի կողմ բոլոր միւս պայմանները, ինտելիգենցիայի շահերին դիմումը բնաւ պիտանի միջոց չէ որպէս զի բոլոր ինտելիգենցիան ամբողջապէս գրաւել սոցիալիզմի կողմը. նրան իրբեւ դասակարգ առհասարակ չի կարելի համոզել մասնակցութիւն ունենալ պրոլետարիատի դասակարգային կուռի մէջ:

Սակայն պէտք է նկատել որ առհասարակ իրականութեան մէջ դանազան դասակարգները այնպէս խիստ իրարից չեն տարբերում, ինչպէս այդ բնորոշում է տեսականապէս, իրապէս դասակարգների արանքում կանգնած են մի շարք անցողական շերտեր, աստիճաններ: Այդպէս, ինտելիգենցիայի մէջ կան մի շարք այնպիսի պրոֆեսիոնների շերտեր, որոնք շատ մօտ են կանգնած պրոլետարիատին: Արհեստագիտական կրթութեան զարգացումը այնքան բնահանուր են դարձնում մի քանի մասնադիտական գիտելիքները որ նրանք այլ ևս չեն կարող ապահովել առանձնաշնորհալ գրութիւն: Պրոլետարական դասակարգին մօտ են կանգնած և «մտաւոր բանուորները» նաև այն բանաւէները, որոնք կանգնած են պետական, հասարակական և կապիտալիստական ձեռնարկութիւնների վարչական ամենացած աստիճանների վրայ. երկաթուղիները, պոստային և կապալիստական ծառայողներ և ուրիշները: Այդ խաւերը հեշտութեամբ յարում են արհեստակցական և քաղաքական շարժումներին:

Աւելի զփուրէ և գրաւել սոցիալ-դեմոկրատիայի կողմը ինտելիգենցիայի արիստոկրատիական մասը—բժիշկներին, փաստա-

բաններին, միջնակարգ և բարձր ուսումնարանների ուսուցիչներին, բարձր կրթութիւն ստացած քիմիկոսներին և այլն: Դրանց չի կարելի գրաւել սոցիալ-դեկոկրատիայի կողմը դիմելով դրանց դասակարգային կամ պրոֆեսիօնալ շահերին: Այդպէս կարելի է միայն խօսել առանձին անհատներին գրաւելու մասին: Իսկ ինչով կարելի է գրաւել դրանց և թէ ոչ նրանով որ նրանք հասկանում են մաքսուող պրոլետարիատի նպատակների պատմական օրինականութիւնը, նրա յաղթանակի անհրաժեշտութիւնը: Որոշ բացառութիւններով այդ ինտելիգենցիան ուղղակի չի շահագրգռուած պրոլետարիատի շահագործումով, իսկ իր պրոֆեսիայով նա մշակում է իր մէջ այն հոգեկան ընդունակութիւնները, որոնք նրան դարձնում են աւելի պատրաստ ընդունելու հասարակական վարդապետ անհրաժեշտ ընթացքը, քան ուրիշ դասակարգերին պատկանող անձանց, որոնց շահերը չեն համապատասխանում այդ վարդապետական գործունէութիւններին:

Ընդհանուր առմամբ ինտելիգենցիան վերաբերում է պրոլետարիատի դասակարգային կռուին մօտաւորապէս այնպէս, ինչպէս մանր-բուրժուազիան և գիւղացիութիւնը. ի՞նչ վերջին երկու դասակարգերը չեն շահագրգռուած կապիտալիստական շահագործման մէջ և յաճախ թշնամական դիրք են բռնում դէպի կապիտալիզմը, բայց նրանք նմանապէս իրանց շատ կարեւոր շահերի շնորհիւ հակառակ են և պրոլետարիատին: Բայց ինտելիգենցիան տարբերում է մանր-բուրժուական և գիւղացիական դասակարգերից իր աւելի լայն մտաւոր հորիզոնով, վերացական մտածողութեան աւելի լաւ մշակումը ընդունակութեամբ և չունի ընդհանուր դասակարգային շահեր: Այդ բոլորը նպաստում է որ ինտելիգենցիան դառնայ արգարնակութեան այն խաւը, որ աւելի մեծ դիւրութեամբ կարող է դասակարգային և դասային սահմանափակումներից վեր կանգնել, կարող է իրենց աւելի ազնւութեամբ իրան ժամանակաւոր և մասնաւոր շահերից աւելի բարձր զգալ և կենտրոնացնել իր ամբողջ ուշքը հասարակութեան ամբողջութեան տեղական շահերի վրայ, պաշտպանել այդ շահերը: Ինտելիգենցիան ընդհանուր առմամբ սոցիալական բեֆորմների, էմօլլիցիական վարդապետական կողմնակից է հանդիսանում:

Նորակացումին. ինտելիգենցիայի մէջ, ինչպէս և միւս դասակարգերում, կայ ուժեղ և աճող դեմոկրատիկութիւն. բայց չի կարելի սպասել, որ այդ դեմոկրատիկութիւնը կը ստիպէ ինտելիգենցիային, իբրև դասակարգի, յարել պրոլետարիատին. մտաւոր քանուղիները տարբերում են այն առանձնայատկութիւնով, որ նրանք չեն ճանաչում ընդհանուր դասակարգային շահեր,

այլ միայն ընդհանուր պրոֆեսիօնալ շահեր և, բացի այդ, նրանք իբրև սոցիալական թեման առանձնաշնորհում խառնակամարտի մէջ է գտնուում պրոլետարիատի հետ, որ իբրև աւելի ստորին դասակարգ բնականաբար ուղոււմ է վերջ դնել լրոլոր առանձնաշնորհումներին:

Սակայն կայ շերտերի և պարագմունքների ամբողջ շարք, — և նրանց թիւը և ծաւալը օրէց օր աւելանում է, — որոնք կանգնած են ինտելիգենցիայի և պրոլետարիատի արանքում, իջնում են ինտելիգենցիայի շարքերից պրոլետարիատի շարքերը և քանի գնում է աւելի և աւելի են դադարում վայելք զգալ իրանց առանձնաշնորհաւ գիրքի մէջ: Այդ շերտերի գրական շահերը դառնում են միաժամանակ պրոլետարիատի շահեր, այդ շերտերը ընդունակ են դառնում մտնել դասակարգային կռուի մէջ, և նրանցից մեծ մասը շուտ թէ ուշ ներմուծուած կը լինի այդ կռուի մէջ, թէև ոչ առանց դժուարութիւնների, որոնք առաջ են գալիս մասամբ նրանց աւանդական նախապաշարմունքներից, իսկ մասամբ նրանց կախումը վիճակից:

Իսկ ինտելիգենցիայի արեստօկրատիան, իբրև դասակարգ, կարող է գրաւուել դէպի սոցիալ-դեմօկրատիան նոյնքան քիչ, որչափ բուրժուազիան. միայն առանձին անհատները նրանցից կարող են գրաւուել այդ կողմը. բայց ինտելիգենցիայի մէջ այդ աւելի գիւրաւ է կատարուում քան գործարանատէրերի և վաճառականների մէջ, որովհետև ինտելիգենցիան, սակաւ բացառութեամբ, ուղղակի շահագրգռուած է պրոլետարիատի շահագործութեան մէջ և իր գրադմունքների շնորհիւ նա իր մէջ մշակում է հոգեկան այն յատկութիւնները, որոնք նրան աւելի ընդունակ են դարձնում ճանաչել հասարակական պարզացման անհրաժեշտ ընթացքը, քան ուրիշ դասակարգերի անձերին, որոնց շահերը չեն միանում այդ պարզացման կարիքների հետ:

Ամենից հեշտ ինտելիգենցիայի մէջ սոցիալիզմի կողմը կարող են գրաւուել ուսանողները: Այնտեղ ուր պրոլետարական շարժումը թոյլ է և բաւականաչափ գիտակցական չէ, և միաժամանակ գոյութիւն ունի ուժեղ սոցիալիստական շարժում ուսանողութեան մէջ, այնտեղ վերջինս կարող է տիրապետող և ղեկավարող դեր ստանձնել պրոլետարական շարժման վրայ, իսկ որովհետև դեռ կեանքը չմտած ուսանողութեան վրայ ընդհանուր առաւմբ չի կարելի հաստատ յոյս դնել, ուստի այդ դերը կարող է մեծամեծ վտանգների և անմիտ էքսպերեմենտների պատճառ լինել: Ուսանողները աւելի լաւ է թող սոցիալիստական պրոպագանդա անեն իրանց մօտ կանգնած ուսանողական շրջանակներում:

E.

ԿԱՐԼ ՄԱՐԲՍԸ ԵՒ ՄԱՐԲՍԻԶՄԸ ^{*)}:

I

Մարքսի կեանքը, սօցիալ-քաղաքական, հրապարակախօսական գործունէութիւնը եւ գրական վաստակները.

Segui il tuo corso e lascia dir le genti!

Հետեիր ճանապարհիդ, և թող մարդիկ խօսեն, ինչ ուզում են:
Դանիէ.

19.

Ֆրանսիական բուրժուազիայի յաղթութեան և Փարիզի պրոլետարիատի պտրտութեան համաբերօղական արժէքը:—Բախունին և ինտերնացիօնալը:—Բախունու կազմակերպութիւնը՝ «Սօցիալիստական դեմոկրատիայի դաշնակցութիւնը»:—Ինտերնացիօնալը և Ալիանսը:—Վերջինիս պաշտօնական կազմալուծումը:—Բախունու տեսական ծրագրի խակութիւնը և անմտութիւնը:—Բախունու նամակը Մարքսին:—Բախունին՝ մարքսիզմը հակացող Մարքսի աշակերտ:—Բախունու անջատ առանձնայատուկ տենդենցները:—Բախունու անուանարկիչ արշաւանքը ընդհանուր խորհրդի դէմ:

70-ական թուականներից ի վեր սկսում է ինտերնացիօնալի կազմակերպչական կեանքի և առհասարակ իր պոյութեան հարցի համար մի նոր ուշագրաւ շրջան: Փարիզի կոմունան և նրա անկումը եկաւ մի խոր ակոս փորելու համաբերօղակական պրոլետարիատի դասակարգային կռուի ու շարժման բաղմամալ շերտերի մէջ:

25-րդ ֆրանսիական արմատական յեղաշրջումների մի կլասիք հայրենիք լինելով՝ ամենից շուտ, ամենամեծ չափով և ամենաուժեղ որակով զարգացրեց իր ծոցում դասակարգային բացայայտուած կռիւը և նրա ալիքաւոր արտայայտութիւնները, պատմական բնկումները: Ֆրանսիական բուրժուազիան

քաղաքականապէս ամենալուսաւորուած ու հասունացածն էր համակերպական բուրժուազիայի. իսկ ֆրանսիական պրոլետարիատը ամենից շատ յեղափոխական ու զիտակից տարրն էր ժամանակակից համակերպական պրոլետարիատին: Նշանակում է ժամանակակից սոցիալ-քաղաքական կեանքի զարգացման կատարը բոլորած այդ երկու դասակարգերի կատաղի ճակատամարտը. ֆրանսիայում պիտի բնական անհրաժեշտութեամբ իր ուժեղ ներգործութիւնն ունենար միւս երկրների դասակարգային յարաբերութիւնների վրայ:

Վերսայլի յաղթանակող կառավարութիւնը ոչ միայն փաստական ու պաշտօնական ներկայացուցիչն էր ֆրանսիայի «հանրապետական» բուրժուազիայի, այլև իր խաղացած դերի պատմա-քաղաքական արժէքով նա եղաւ արտայայտիչը համակերպական բուրժուազիայի դասակարգային իղձերի: Իսկ ֆրանսիայի, աւելի ճիշտ ու բնորոշ՝ Փարիզի մարտնչող ու պարտուող պրոլետարիատը, աւելի շուտ և աւելի մեծ չափով եղաւ համակերպական բանուորութիւն դասակարգային հասունութեան ու կինսունակութեան արտայայտիչը: Եւ Փարիզի կոմունայի պարտութիւնը եղաւ, կարելի է ասել, վերջին արեւնահեղ կատաստրոֆը, որ փակեց դասակարգային կռուի յեղափոխական բռնկումների, բարիկադային ճակատամարտերի շրջանը և տեղի առեց բուրժուական լեզալիզմի խաղաղ ու «նորմալ», յամբընթաց ու անվրդով մի տեսական շրջանի: «Ամենագօր» բուրժուազիան արեւմտեան Եւրոպայի՝ խորտակելով իր հին թըշնամուն՝ ֆէդալ-աբսօլիւտիզմին, — և սանձահարելով իրաւական կապանքներով իր նոր թշնամուն — պրոլետարիատին, — ամբապնդեց իր դասակարգային տիրապետութիւնը տեսական կռուանքների վրայ:

Կոմունայի պարտութիւնը, — այսինքն ինտերնացիօնալի ծոցում սնուած ու կազմակերպուած պրոլետարիատի մի հատուածի քաղաքական ձեռնբեցութեան վիժումը, — իբրև պատմական մի խոշոր փաստ, եկաւ մի կողմից բեվիզիայի ենթարկելու իրա ինտերնացիօնալի այսպէս ասած՝ մոտաւոր գլխի — Կարլ Մարքսի — քաղաքական նախատեսումները համակերպական յեղափոխութեան մասին, իսկ միւս կողմից նա մղեց բուրժուական կառավարութիւններին համախմբուելու մի «սրբազան» կօալիցիայի մէջ, որի նշանաբանն էր՝ հալածանք ու արշաւանք բանուորական շարժման դէմ: Նշանակութիւն չունէր, որ ինտերնացիօնալը իր ամբողջ էութեամբ գուրկ էր երդուեալ յեղափոխականների կոնսպիրատիւ բնաւորութիւնից, բաւական է հէնց այն փաստը, որ նա իր գոյութեան իմաստով նուիրուած

էր պրոլետարիատի դասակարգային ազատագրութեան. ergo նրան հանդուրժել չէր կարող բուրժուական կառավարութիւնները կօշտիցիան: Անխնայ հալածանքն ու րեպրեսիաները՝ մանաւանդ Ֆրանսիայում, կրիտիքական զրութեան մէջ էին զրել բանուորական շարժման ղեկավար ոյժերին, պրոֆեսիօնալ ինտերնացիօնալիստներին:

Այդ մի փորձաքար՝ ինտերնացիօնալի կազմակերպական կեանքի համար:

Միւս կողմից հէնց իրա ինտերնացիօնալի ծոցում առաջացել էր այսպէս անուանուած «ցեց և ուտիչ» ոյժերի մի խումբակ, որ երգուեալ տերորիստի նման ձգտում էր կազմալուծման և դեզօրգանիզացիայի ենթարկելու ինտերնացիօնալի սկզմած շարքերը, նրա վսեմ կառուցուածքը:

Այդ խումբը կազմում էին բախուհատ-անարխիստները կամ ալիանսիստները (գաշնակիցներ):

Ի նկատի ունենալով այն բացասական-բայքայիչ խոշոր դերը, որ խաղացել է Բախուհին ինտերնացիօնալի զոյլութեան վերջին տարիներում, այն ուժեղ պայքարը, որ ունեցել է նա Մարքսի և մարքսիստների հետ 70-ական թուականի սկզբներին, — արժէ այստեղ փոքր ինչ ծանրանալ այդ օրիգինալ տիպի դեզօրգանիզատօրական ձգտումների վրայ, չժանկելով իհարկէ երկրորդական մանրամասնութիւնների մէջ:

Բախուհին ինտերնացիօնալի հին անդամներից չէր: Նախքան Մարքսի ինտերնացիօնալին յարելը, նա անդամ էր (կենտրոնական վարչութեան մէջ բաղմած) այսպէս անուանուած՝ «Խաղաղութեան և Ազատութեան լիգայի» («Friedens—und Freiheitsliga») ընկերութեան, — բաղկացած բուրժուական հանրապետականներից և խաղաղութիւն տենչացող արխտոկրատ իւլիզիօնիստներից: Ինտերնացիօնալի Բրիւսելի կոնգրեսի ժամանակ (1868 թ. սեպտեմբերին), լիգայի կենտրոնական վարչութիւնը Բախուհու ձեռներէցութեամբ առաջարկում է կոնգրեսին համերաշխութեան դաշն կապել լիգայի և ինտերնացիօնալի մէջ: Կոնգրեսը մերժում է այդ առաջարկը առանց այլեւայլութեան: Մի քանի օրից յետոյ կայանում է Բերնում լիգայի կոնգրեսը: Բախուհին առաջարկում է, որ լիգան իր հիմնական ձգտումներից մէկը դարձնէ և մտցնէ իր ծրագիրը հետեւալը. «դասակարգի տնտեսական և սոցիալական հասարացումը»: Բուրժուական «խաղաղասէր» ու «ազատասէր» ֆիլանտրոպները պայքարում են նրա դէմ: Բախուհին մնում է փոքրամասնութեան մէջ և զուրս գալով լիգայից իր համախոհներով, մանում է Ինտերնացիօնալի մէջ: Միևնոյն ժամանակ այդ փոք-

ըամասնութիւնը հիմնում է իր համար մի սեփական կազմակերպութիւն «Alliance de la Démocratie Socialiste» («Սոցիալիստական դեմոկրատիայի դաշնակցութիւնը») անունով, որ պիտի կազմէր ինտերնացիօնալի մի հատուածը:

Բախունուն յաջողում է, շնորհիւ իր նախկին ծանօթութիւների, իր Ալլիանսին (որի կենտրոնը ժընևուան էր գրտունում) սկսականող սեկցիաներ հիմնել Իսպանիայում, Իտալիայում և Ֆրանսիայում: Այս կազմակերպութեան ծրագիրը, թէօրիական հիմքը խարսխուած էր Բախունուն այն հիմնական մտքի վրայ, որ մերժուել էր լիգայից. այն է՝ «դասակարգերի անտեսական սոցիալական հաւասարացումը (նոյնիսկ ոչ հաւասարութիւն, այլ հաւասարացում Բ. Ի.), ժառանգութեան իրաւունքի վերացումը պէտք է դառնայ սոցիալական յեղափոխութեան սկիզբը» և մի շարք անբովանդակ ու ուսողական ֆըրազներ:

Ի հարկէ այդ նորիւկ կազմակերպութեան գոյութիւնը անյայտ չէր ինտերնացիօնալի գէներալ խորհրդի համար: Եւ Մարքսը շատ լաւ ճանաչելով Բախունուն (գեռ վաղուց), գիտէր և նախատեսում էր, որ նրա նախաձեռնած գործի գոյութեան իմաստը կոչուած է կուռելու Ինտերնացիօնալի դէմ, քալքայելու նրա հիմքերը: Եւ երբ Ալլիանսի կենտրոնը Բեկլքերի գրութեամբ դիմում է ընդհանուր խորհրդին (ինտեր.) որպէսզի վերջինս վաւերացնէ նրա ստատուաները, ընդհ. խորհուրդը վճռապէս մերժում է այդ առաջարկը և մասնանշում Ալլիանսի դեղորգանիզատորական տենդենցների վրայ, որ ներաւ գոյութիւնը, որպէս մի անշատ կազմակերպութիւն, հակասում է Ինտերնացիօնալի կոնսուադրութեան:

Այդ բացասական պատասխանը յուսահատական ազդեցութիւն է ունենում յայտնի անարխիստի նորածին կազմակերպութեան վրայ: Ֆրանսիական և բելգիական սեկցիաները խորհուրդ են տալիս կազմալուծել Ալլիանսը: Բախունին խոնարհում է անհրաժեշտութեան առաջ: Կազմակերպութեան կենտրոնական ընտրոն յայտարարելով իր բոլոր սեկցիաներին Ալլիանսի կազմալուծումը և հրաւիրելով նրանց Ինտերնացիօնալի մէջ մտնելու, ստորագրուելու նրա ընդհ. խորհրդին, աւելացնելով միեւնոյն ժամանակ, որ Ալլիանսի տեսական պրոգրամը պէտք է պահպանէ իր ոյժը: Ընդհանուր խորհուրդը ընդունում է այդ առաջարկը, ուղղադրելով հանգերձ Բախունուն սխալ ֆըրազը, որ դասակարգերի հաւասարացման փոխարէն պէտք է դնել դասակարգերի վերացումը, ըստ ղիտական սոցիալիզմի սկզբունքների: Մարքսը իր մի մասնաւոր նամակով (Սերնօին

ուղղած, 1868 թ.) և Բրաունշվայգի կոմիտէին հաղորդած (1870 թ.) իր մի գրութեան մէջ ֆարս է անուանում Ալլիանսի տեսական ծրագիրը և իրաւամբ ծիծաղում, հեղնում Բակունու անժտութեան վրայ: Ի՞նչ է նշանակում դասակարգերի հաւասարացում: Դա իմաստի մի կոպիտ, տրամաբանական սխալ է, որ պնդել կարող է միայն նա, ով չէ ըմբռնում ոչ կապիտալիզմի, ոչ սոցիալիզմի և ոչ նոյնիսկ անարխիզմի էութիւնը: Եւ իրաւ, Բակունին այն մարդն էր, որ չէր հասկանում ոչ մէկի, ոչ միւսի և ոչ երրորդի էական հիմքերը, էսսենցիան:

«Դասակարգերի հաւասարացում»,— դա տնտեսական, սոցիալական և քաղաքական բովանդակութիւնից խալառ զուրկ մի մեխանիքական-արուեստական (օրգանական, մանաւանդ ժարդկային-հասարակական կեանքում անիրականացնելի) դրութիւն է, որ նշանակում է երկու աննման մեծութիւններ կտրուկով, չափով ու ձեւով հաւասարացնել միմեանց հետ: Նոյնը պնդել դասակարգերի նկատմամբ, նշանակում է պնդել այն ցանցառ ու անհեթեթ միտքը, որ կարելի է և կամ պէտք է, անհրաժեշտ է (պրոլետարիատի շահերի տեսակէտից) կապիտալն ու աշխատանքը շահագործող կապիտալիստն ու շահագործուող բանուորը դնել մի սերտ ու ներդաշնակ յարաբերութեան մէջ: Եւ երբ Ինտերն. ընդհ. խորհուրդը ուղղում է Ալլիանսի ծրագրային այդ կոպիտ սխալը և հաւաստացման փոխարէն վերացում դրնում, Ալլիանսի կենտրոնական բիւրօն ընդունում է այդ, բայց իր կողմից աւելացնում դրան մի նոր անժտութիւն, որ իբր Ալլիանսը ձգտում է «անհատների քաղաքական, տնտեսական և սոցիալական հաւասարացման»,— մի յիմարութիւնից ընկնում են միւս յիմարութեան մէջ:

Սա մի փոքրիկ նմուշ է, սակայն ամենակարգինալ խնդրի վերաբերեալ, որ պարզ վկայում է Բակունու Թէօրիական հասկացողութեան չափը:

Սակայն չարիքի արմատը չէր կազմում այդ «ֆարս» թէօրիան և մարքսիստական Ինտերնացիօնալը ամենեւին երկիւղ չունէր դրանից. չարիքի արմատը թագնուած էր Բակունու և բակունիստների այն դեգորգանիզատօրական տեղային ձեռնարկների մէջ, որոնցից երբէք չհրաժարուեց ինքը Բակունին, թէև նրա ձեռակերտ Ալլիանսը պաշտօնապէս կազմալուծուել էր: Եւ այն մարդը, որ իր անխնայ ինտրիգներով դուրս էր լարում աջ ու ձախ՝ Ինտերն. ընդհանուր խորհրդի և մանաւանդ Մարքսի դէմ, այդ նոյն մարդը շարունակում էր արտաքուստ շողորթութել Մարքսին, նրա բարեկամութիւնը վաստակելու կծկումներ անել: 1868 թ. դեկտեմբերի 22-ին գրում է նա Մարքսին մի

նամակ, ուր առած է ի միջի այլոց հետեւեալը. «... Սիրելի Մարքս, ես այժմ աւելի, քան երբեքէ քո մօտիկ ընկերն եմ: Միայն այժմ եմ հասկանում, թէ որքան դու իրաւացի ես, երբ հետեւում եմ տնտեսական յեղաշրջումներ ընթացքին և հրաւիրում ուրիշներին նոյնն անելու... Ես անում եմ այժմ նոյնը, ինչ դու տարիներից ի վեր անում էիր... Այժմ ես ոչ մի ուրիշ ընկերութիւն և միլիօ չեմ ճանաչում, բայց եթէ բանուորների աշխարհը: Իմ հայրենիքը այսուհետև Ինտերնացիօնալն է, որի առաջնակարգ հիմնադիրներից մէկը դու ես: Դու տեսնում ես, «իրելի ընկեր, որ ես քո աշակերտն եմ, և ես հպարտ եմ այդպէս լինելով: Այսքանը բաւական է քեզ իմ դիրքը և հայեացքները բացատրելու համար»: 75)

Այս խօսքերը դրում էր ինքը՝ Բակունին, անխնայ խորտակման ու բնաջնջման մոլի սիրահարը, որ իր ամբողջ կեանքում չհասկացաւ երբէք ժառքսիղմը, թէ և ինքը իրան աշակերտ է հռչակում Մարքսին: Նա դրում էր այդ տողերը այն ժամանակ, ասում ենք, երբ նա յետին ճանապարհով Ինտերնացիօնալը թունաւորելու ոչ մի միջոցի առաջ կանգ չէր առնում:

Ի՞նչի մէջ էին կայանում Բակունու առանձնայատուկ տենդենցները, նրա անջատ կտրմակերպութեան իմաստը: Բակունին յեղափոխական բոմանտիղմի մի կոյր մետաֆիզիկներ-կայացուցիչ էր: Յեղափոխութիւն ոչ թէ հասարակական ընթացքի արարելութիւնների ու ֆակտօրների հասունացման և նրանց օրգանական յեղաշրջման իմաստով, ոչ, մեծ անարխիստը գըլուխ չունէր ըմբռնելու հասարակական կեանքի աստիճանական էվօլյուցիայի այդ օրէնքը: Նրա ցանկացածը մի ուռու պիտակն, մի իլլիւզիօն յեղափոխութիւն է, որ պէտք է ամեն բան միանգամից խորտակէ ու քնաջնջէ: Նա հակառակ է Ինտերնացիօնալի ամբողջ պրոլետարական քաղաքականութեան-տնտեսական և քաղաքական դասակարգային կռուին: Նա վարդապետում է բանուորութեան քաղաքական ժողովալութիւն և ձեռնպահութիւն, հեռու լինել բոլոր ակցիօններից: Որովհետև, ըստ բակունիզմի, ոչ թէ պէտք է ձգտել բանուոր դասակարգի տնտեսական և սօցիալ-քաղաքական դրութեան բարուրման՝ քաղաքական ակցիօններով և բէֆօրմներով, այլ պէտք է միանգամից խորտակել գոյութիւն ունեցող կարգերը և պրօլետարիատին վախճանապէս ազատագրել:

Այս ուռուպիղմը, այս միտաֆիզիքական ֆրազիօլոգիան իհարկէ միանգամայն անհամակերպելի էր մարքսիստական

75) Տե՛ս, «Neue Zeit» XIX տարի, 1 հատ. երես 6.
Նոյեմբեր, 1906,

ինտերնացիոնալի պատմականօրէն ճշգրիտ հասկացուած նպատակի ու ձգտումների հետ, որոնց մասին մենք խօսել էինք նախկին գլուխներում:

Բակունին աշխատում էր Բազելի կոնգրեսում (1869 թ.) գրաւել իր անարխիստական հովերի շուրջը կոնգրեսիստների մեծամասնութեան և ինքը տէր դառնալ Ինտերնացիոնալին. սակայն նա չարաչար պարտուեց մարքսիստներից, նոյն իսկ Մարքսի բացակայութեամբ:

Այնուհետև Բակունին խայթում տրամադրութեամբ ձեռնարկում է գրական մի ուժեղ ու անխնայ պայքարի ալլիանսիստ-«Egalité» (Ժրնալում, իր խմբագրութեամբ) և «Progrès» (շվեյցարական Իւրայում, ուր բակունին դուրս վնդելով աւանտիւրիստ Կուլերիին, տիրանում է սեկցիաներին և իր գործնէութեան կենտրոնը դարձնում այնտեղ) օրգաններում: Մի կողմից Բակունին վարդապետում էր իր սպեցիֆիկ անարխիզմը, իսկ միւս կողմից, տմարդի խժրժանքներով ու ինտրիգներով՝ անուանարկութեան մի կատաղի արշաւանք սկսում Ինտերնացիոնալի և մանաւանդ նրա ընդհանուր խորհրդի դէմ:

Պաշտօնապէս կազմալուծուած բակունիստների Ալլիանսը սկսում է ուժեղ թափով վերակենդանանալ. Շվեյցարիայում, Ֆրանսիայում, Բէլգիայում, Իտալիայում և Իսպանիայում նա արդէն արմատ էր բռնել, ունէր սէկցիաներ: Գերմանական երկրներում Բակունին մինչև վերջ ոչ մի յաջողութիւն չունեցաւ: Բլանքիզմի և պրուդօնիզմի (մի կողմ թողնելով ուսուսու սոցիալիզմի նախահայրերին) շեօլայում սնուած բռնաճանաչ տաքարիւն պրոլետարիատը զարմանալի չէ, որ տարւում է Բակունու յեղափոխական ֆրազիօլոգիայով: Յարաբերութիւնները Ինտերնացիոնալի և Ալլիանսի մէջ այնքան են սրւում, որ չէին կարող Ինտերն. պաշտօնական մարմինների ուշադրութիւնը չհրաւիրել, այդ կրիզիսին վերջ տալու համար:

20.

Ինտերնացիոնալի կոնֆերենցեան Լոնդոնում:—Կոնֆերենցիան և բակունիստական Ալլիանսը:—Կոնֆերենցիայի կազմակերպական որոշումները:—Ալլիանսի կոնգրեսը:—Մի սկանդալ գրութիւն ընդհանուր խորհրդի դէմ:—Բակունիստ-ալլիանսիստների ստախօսութիւնը, ինտրիգան ձգտումները և հայեցանքներն ու կեղտոտ ինսինուցիաները Մարքսի դէմ:—Մարքսի ցաւակցական դանդաղութիւնը Զօրգէին:—Անգլիական կազմակերպուած պրոլետարիատի սեփական կենտրոնը:

Ֆրանս-գերմանական պատերազմը մի կողմից, Փարիզի կոմունան երկրորդ կողմից և մի շարք այլ երեւոյթներով պայ-

մանաւորուած համակրողական ընկերան՝ երրորդ կողմից— դարձան այնպիսի անյաղթահարելի խոչնդոտներ, որոնք խանգարեցին Ինտերնացիոնալի կոնգրեսների կանոնաւոր ընթացքը: Սակայն համագումարի՝ ներքին ու արտաքին բարդուած գործերի հրապարակական—կողլեկտիւ ընդունութեան կարիքը խիստ մեծ էր Ինտերնացիոնալի մէջ: Բէակցիան այնքան ուժեղ էր և Ինտերնացիոնալի այնպիսի կարևոր հատուածներ, ինչպէս են Գերմանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի ազգային սեկցիաները, —ենթակայ էին այն աստիճան ճնշման ու հալածանքի, որ անկարելի էր համագումարի մասին մտածել: Այդ պատճառով ընդհանուր խորհուրդը հրաւիրում է 1871 թ. սեպտեմբ. 27-ին մի կոնֆերենցիա Լոնդոնում 76), որին մասնակցում են ընդամէնը 23 պատգամաւորներ: Վերոյիշեալ երեք երկրներից սեկցիաները չեն կարողանում մասնակցել քաղաքական արգելքների պատճառով:

Կոնֆերենցիան վճռական միջոցների չի զիմում առ այժմ բաւուրստական Ալլիանսի դէմ: Նա վաւերացնում է ընդհ. խորհրդի կազմալուծման վճիռը և չի ճանաչում Ալլիանսի պաշտօնական գոյութիւնը: Կոնֆերենցիան զգում է, որ համակրողական ընկերան փաստելով Ինտերնացիոնալին, միայն մեծապէս նպաստել է Բաւուրնուն՝ կրիլիսի վտանգաւոր ըրողներին առաջ տանելու իր անձնական կամայականութիւնը, քայքայիչ պրօպագանդը, ապա թէ ոչ Ինտերնացիոնալը նրան վաղուց կը հեռացնէր իր միջից:

Որպէս զի կարելի լինի ըստ հնարաւորին կռուել դեղօրգանիզատօրական տենդենցների դէմ, Մարքսի խորհրդով կոնֆերենցիան աւելի ու աւելի է յարում կենտրոնացման, գեներալ խորհրդին վերապահելով միշտ լիազօրութիւններ: Ապա Մարքսը Ինտերնացիոնալի կանոնադրութեան և մինչ օրս ունեցած քաղաքականութեան հիման վրայ նորից ու նորից շեշտում ու յիշեցնում է, որ պրոլետարիատը պէտք է ուժեղ ու անդուլ ջանքերով մասնակցէ քաղաքական կռուին, կազմակերպուէ այդ հողի վրայ, խոյս տայ բուրժուական տարրերից, ինքնամփոփուէ իր մէջ և կռուէ որպէս դասակարգային կուսակցութիւն իր յատուկ ծրագրով ու տակտիկով: Կոյւ տնտեսական եւ քաղաքական հողի վրայ անխտիր:

Այնուհետև կոնֆերենցիան զբաղւում է կազմակերպական միշտ խնդիրներով: Վերացնել զանազան սեկցիաների և ճիւղերի վրայից նրանց խայտաբղէտ աղանդաւոր անունները՝

76) Gustav Jaechh, «Die Internationale» էր. 154.

պօղիտիվիստ, մուտուալիստ, կոլլեկտիվիստ, կոմունիստ, անթէ-
իստ և այլն: Կազմակերպել կանանց ընկերութիւններ բանուոր-
դասակարգի մէջ: Շուտով պահանջել ընգհանուր վիճակագրու-
թիւն բանուոր դասակարգի վերաբերեալ: Ուժեղացնել պրոպա-
գանդը գիւղացիական բանուորութեան մէջ: Այն երկրներում,
որ բէակցիայի ճընշումով քայքայուել են Ինտերն. սեկցիանե-
րը, հիմնել նորից տարբեր անունների տակ, սակայն խոյս տալ
գաղտնի, կոնսպիրատիւ ընկերութիւններ ունենալուց:

Մի քանի օր անցած Ալլիանսի այսպէս անուանուած «Բո-
մանական Դաշնակցութեան Կոմիտէն» գեմօնատրատիւ կերպով
հրաւիրում է ալլիանսիստների կոնգրեսը Սոնվիլիէ քաղաքում
(77), որին մասնակցում են 14 պատգամաւորներ:

Կոնգրեսին ներկայ է լինում Ժիւլ Գէդը յեղափոխական
սոցիալիստական կազմակերպութեան կողմից (այն ժամանակ
Գէդը շատ էր հեռու մարքսիզմից):

Կոնգրեսի ամենագլխաւոր և ուշագրաւ զբաղմունքը կազ-
մում է մի խայտառակ բրօշիւրայի բովանդակութիւն, ուղղուած
Ինտերն. ընգհանուր խորհրդին—աստ և կրկնիր—Մարքսի դէմ:
Կոնգրեսը այդ հրատարակութեամբ կոչ է ուղղում բոլոր դաշ-
նակցութիւններին միանալու Իւրայի ըմբոստ սեկցիաներին՝ բո-
ղոքելու համար ընգհանուր խորհրդի դէմ և պահանջու. Ին-
տերնացիօնալի ընգհանուր կոնգրեսը գումարելու: Ալլիանսիստ-
ները բողոքում են ընդհ. խորհրդին վերապահուած լիազօր իրա-
ւունքների դէմ, որը, նրանց կարծիքով, պէտք է լինի միայն
կենտրոնական թղթակցութեան մի քիւրօ, ուրիշ ոչինչ: Եւ այն մար-
դիկ՝ Բակունին և իր ընկերները, որոնք Բազելի կոնգրեսում
ամենամեծ պաշտպանողներն են եղել խորհրդի լիազօր իրա-
ւունքներին—յոյս ունենալով այն ժամանակ, որ իրանց կը յա-
ջողուի շուտով տիրանալ ընդհ. խորհրդին,—այժմ, իրանց կոնգ-
րեսում, պահանջում են նրա զոյութիւնը գերօյի հաւասա-
րեցնել:

«Ընգհանուր խորհրդի անդամի մանդատը դարձել է մի
քանի անհատների ձեռքում որպէս անձնական սեփականու-
թիւն»... «Այդ մարդիկ այնքան են հեռու գնացել, որ ուզում
են բռնադատել Ինտերնացիօնալին իրանց մասնաւոր ծրագիրը
անձնական զոկտրինան ընդունելու: Որովհետեւ իրանք հանդի-
սանում են իրանց աչքում կառավարութեան մի որոշ տեսակը,
ուստի բնական է, որ նրանց մասնաւոր գաղափարները երևան
եկան որպէս բանուորական խմբակցութեան պաշտօնական թէ-
օրիան, մինչդեռ միւսների գաղափարները ոչ թէ համարուեցին
որպէս օրինաւոր արտայտութիւն հաւասարազօր կարծիքների,

այլ կատարեալ հերետիկոսութիւն: Եւ այսպէս հետզհետէ կազմուել է մի օրթօդոքսիա, որի նիստը գտնուում է Լոնդոնում, իսկ նրա ներկայացուցիչները համարւում են ընդհանուր խորհրդի անդամները:» «Մենք մեղադրում ենք ընդհանուր խորհրդին—ասուած է մի այլ տեղ,—որ նրա անդամները՝ իրանց մասնաւոր ուսմունքի յաղթանակի համար, մտացնում են Ինտերնացիօնալի մէջ հեղինակութեան սկզբունքը»...⁷⁸⁾

Ալլիանսիստների այս բողոքաւոր տողերը բղղիւում էին Բակունու թունաւորուած սրտի խորքից, ուղղուած յատկապէս Մարքսի դէմ: Ինտերնացիօնալի՝ որպէս իրողետարական միջազգային մի կազմակերպութեան, տեսական գաւառները և գործնական քաղաքականութիւնը կառուցուած էր Մարքս-էնգելսի գիտական սօցիալիզմի հիմքերի վրայ: Մարքսը, լինելով Ինտերնացիօնալի առաջնակարգ հիմնադիրներից մէկը, փաստապէս դարձաւ Ինտերնացիօնալի այսպէս ասած մտաւոր գլուխը, նրա գործունէութեան տոն տուողը: Ոչ թէ կամասլաշտութիւնը, փառասիրական դիկտատուրան և զանազան ինտրիզան տենդենցներն էին, —որոնց տիպիքական մարմնացումն էր կազմում ամենից առաջ ինքը Բակունին,—այլ զուտ պօզիտիւ փիտութիւնն էր, մտաւորականի գերակշիռ ու յաղթահարող ոյժն էր, որ բնական բերմունքով շնորհել էր Կարլ Մարքսին մի բարձր ու հեղինակաւոր գիրք Ինտերնացիօնալի կենտրոնում:

Բակունիստների բողոքը մի բացայայտ, բայց անուղղակի պայքար էր անարխիզմի կողմից զիտական սօցիալիզմի դէմ: Բակունիստների բողոքը, ասում ենք, մի տենդենցիօզ և քինախնդիր անուանարկութիւն է ընդհանուր խորհրդի հասցէին ուղղուած: Բացարձակապէս սուտ է և հակասում է միասնամայն Ինտերնացիօնալի կանոնադրութեան ալլիանսիստների կոնգրեսի այն պնդումը, որ իբրեւ ընդհ. խորհուրդը օրինաւոր չէ համարում ուրիշների կարծիքների արտայայտութիւնը և անուանում է այն հերետիկոսութիւն: Հէնց ինքը ընդհ. խորհուրդն է եղել, որ թոյլտրել է ալլիանսիստներին իրանց տեսական ծրագիրը պահպանել, ուղղելով նրա մի քանի անհեթեթ կէտերը: Զանազան ազգային սեկցիաներ կարող են որոշ տեսական խնդիրների վերաբերեալ ունենալ նիւանսներ, միայն թէ չհակասէ այդ բանուոր դասակարգի ազատագրութեան գործին,—ահա այն սկզբունքը, որի հիման վրայ ընդհ. խորհուրդը նորանոր խմբեր էր ընդունում: Եւ վերջապէս միթէ ընդհ. խորհուրդը

⁷⁸⁾ Ibid եր. 163—14.

մեղաւոր է, որ բազմաթիւները իրանց ուսուցիական ֆրազիօլոգիայով չարաչար պարտւում էին ինտերնացիօնալի կոնգրեսներում բացարձակ մեծամասնութիւնից:

Կռիւ ու բողոք Մարքսի անհատական հեղինակութեան դէմ,— սա մի համատարած ախտ է դառնում 70-ական թուականներին սկզբներում՝ ինտերնացիօնալի գոյութեան վերջալոյսին, և վարակում ոչ միայն բազմաթիւ ալիանսիստներին, այլ և շատ հեռաւոր շրջաններում՝ Անգլիայի բանուորական պարագլուխներին, անգամ Մարքսի մտերիմ կողմնակիցների՝ Էնգս. խորհրդի անդամների մէջ:

Տեսական-սկզբունքային և կազմակերպական-կենսական խնդիրների շուրջը չէ պատում կռիւների ու բողոքների այն տարափը, որ ուղղել էին Ալլիանսի օրգանները («Solidarité»), «La Bénévolence sociale» և Իւրայի սեկցիաների յիշատակագիրը) Էնգս-հանուր խորհրդի և մասնաւորապէս Մարքսի դէմ, այլ սկանդալ արարքների, հայհոյանքների և կեղտոտ ինսինուցիաների, անգամ պրովոկատօրական փնդենցների մի կուտակուած աղբ էր, որ ինտրիգան բազմաթիւները նետում էին Մարքսի անբիծ անձնաւորութեան դէմ: «Մարքսը և իր ապենտները», Մարքսի «ստախօսութիւնները», «բենտիւր Մարքս», «բենտիւեր Էնգելս», «բէնտիւեր Լաֆարգ», «հրէայ Մարքս», «Մարքսը դեռ աւելի վատ է, քան հրէան. նա գերմանացի է»: Իսկ Մարքսի գերմանացի լինելու տակ ի՞նչ էին հասկանում բազմաթիւները, զիտէք: Նրանք անուանում էին Մարքսին «պանգերմանիստ», «Բիսմարկիստ»: Ընդհանուր խորհրդին անուանում էին «մի գերմանական կոմիտէ, որ զեկավարւում է բիսմարկեան ուղեղով»:

Բուլվարային օրգանների յատուկ այսօրինակ ստոր ու ապականուած միջոցներով էին կուտում տխրահռչակ բազմաթիւները այն մարդու դէմ, որ կուտելու ուրիշ ոչ մի զէնք չունէր, բայց եթէ իր զրական գիտութիւնը, մտքի խորութիւնը, առողջ ու րէալ աշխարհայեացքը, և ուրիշ ոչ մի ձգտում, ոչ մի այլ հասարակական իդէալ չունէր, բայց եթէ իր բոլոր անհատական ոյժերով նուիրուել մարդկութեան «չորրորդ դասի» պատմական ազատազրութեան սրբազան գործին:

Մարքսի նորերս լոյս տեսած բազմաթիւ նամակներից (ուղղած իր հաւատարիմ ընկեր Զորգէին, Նիւ-Եօրկում) երեւում է, թէ ինչպէս նա իր դառն ու կծու գանգատները, ցաւակցութիւնն է յայտնում, որ համաւերոպական բնակչիայի վտանգաւոր բողոքներին անարխիստների խումբը ոչ մի միջոց չի խնայում զեղօրգանիզացիայի ենթարկելու ինտերնացիո-

նալին: «Նրանց յարձակման օրիեկտը—գրում է մարքսը Զբր-
գէին—կազմում են ոչ թէ մեր գէտ միացած և բոլորակա-
ն կառավարութիւններն ու տիրապետող դասակարգերը, այլ Լոնդոնի
ընդհանուր խորհուրդը և իմ նուաստութիւնը»: «Նրանց աշ-
քում ինտերնացիօնալը մեղապարտ է առհասարակ, երբ նրա
կենտրոնում գերակշռում է գերմանական ազդեցութիւնը (գեր-
մանական գիտութիւնը այսինքն)»: «Նրանց արձակած պարոլն
է, որ իբր ընդհ. խորհրդի մէջ իշխում է պանգերմանիզմը
(այսինքն բիսմարկիզմը): Իրաւագէտ, սովալայն, գերմանական
տարրը խորհրդում ^{2/3} անգամ քանակով քիչ է, քան անգլիա-
կանը, և աւելի քիչ, քան Ֆրանսիականը: Ուրեմն Ինտերնա-
ցիօնալի մեղքը կայանում է նրանում, որ նրա կենտրոնում
անգլ. և Ֆրանս. տարրերը տեսականապէս (մտաւորապէս)
աւելի թոյլ են և իշխում են գերմանական տարրից. սովալայն
այդ տիրապետութիւնը ինքը գերմանական գիտութիւնն է,
ըստինքեան օգտակար ու անհրաժեշտ»: «Բաւականին,— մի մարդ,
առանց թէօրիական որևէ պատրաստութեան,— յաւակնութիւն
ունէր մի անջատ կազմակերպութեան մէջ Ինտերնացիօնալի
գիտական պրօպագանդը մղելու և դա իր կողմը դարձնելով
ինտերնացիօնալի մէջ երկրորդ ինտերնացիօնալ հիմնելը»: «Ին-
տերնացիօնալի պատմութիւնը եղել է մի շարունակական կռիւ
ընդհանուր խորհրդի կողմից ընդդէմ այն բոլոր ազանդների և
զիլիստանտական խողերի գէտ, որոնք աշխատում էին արժատ
բռնել ինտերնացիօնալի մէջ և քայքայել ու ֆլեասել բանուոր
դասակարգի իրական շարժումը»: 79)

Այսպէս բազմախտական Ալլիանսը անգաղար առաջ է
տանում իր ինտրիգան քաղաքականութիւնը և ամենայն եռան-
դով աշխատում, որ բողոքների և արտունջների ոյժը ընդ-
հանրանայ ամենուրեք և այդպիսով հող պատրաստուի, ինտեր-
նացիօնալի գալիք կոնգրեսում բռն արշաւանք գործելու
մարքսիստների գէտ: Եւ բոմանական երկրներում Ալլիանսը
հասել էր բաւական զգալի յաջողութեան, թէ և նրա «կազ-
մակերպուած» մասսան տարերային շարժման և քնազդական մղում-
ներին, անարխիստական հովերին կուլ գնացած մի ամբողջ էր,
սար ու ձորի տարբերութեամբ հետո ինտերնացիօնալի կազ-
մակերպուած գիտակից բանուորներէից: Ինտերնացիօնալը շա-
րունակ յառաջադիմութիւն էր գործում գերմանական երկր-

79) *SLu.* «Briefe und Auszüge aus Briefen von J. Phil. Becker, Jos. Dietzgen, Jr. Engels, F. Marx u. A. an F. A. Sorge und Andere» հր. 33, 38, 39—40.

ներում, որոնց միացել էին նաև սկանդինավական երկրները, մանաւանդ ինդոուսոսթիական Դանիան։

Անգլիայում արդէն սուաջանում են կազմակերպական զգալի փոփոխութիւններ։ Բուն անգլիական պրոլետարիատը չունէր իր կազմակերպական կենտրոնը։ Ընդհ. խորհուրդը, ինտերնացիօնալի կենտրոն լինելով հանդերձ, միևնոյն ժամանակ ստանձնել էր անգլիայի բանուորական շարժման կենտրոնական ֆունկցիաները։ Նախ քան Փարիզի կոմունան, Մարքսը հաւատալով համակերպական յեղափոխութեան շուտափոյթ զաւթեան, ուզում էր, որ անգլիական պրոլետարիատի ղեկավարութեան կենտրոնը մնար անմիջապէս ընդհ. խորհրդի ձեռքին, յեղափոխութեան ընթացքին տոն տալու համար։ Սակայն Մարքսը յետոյ աւելի խորը նախադիտելով իրերի ապագայ զարգացման ընթացքը, փոխեց իր սկզբնական նախատեսումը, տեսնելով, որ պրոլետարիատը պիտի դեռ տանեակ տարիներ թաղաքական կռիւ ունենայ։ Ինտերնացիօնալի Լոնդոնի կոնֆերենցիան արդէն զգալով անգլիական բանուորութեան յատուկ կենտրոն ունենալու անհրաժեշտութիւնը, վճռում է հիմնել «բրիտանական զաշնակցութեան խորհուրդ» անունով մի կենտրոնական մարմին, որ իր մէջ պիտի ամփոփէր անգլիական բոլոր սեկցիաների ղեկավարութիւնը։ Քանի գնում, այնքան մեծ քանակով տրէդ-ունիօնիստներ էին յարում ինտերնացիօնալին, մանաւանդ 1871 թ., երբ ինտերնացիօնալը աջակցելով մեքենայագործ բանուորների գործադուլին և նրա յաջող յաղթանակին, մեծ հմայք էր վաստակել տրէդ-ունիօնիստների շարքերում։ Միաժամանակ հիմնում են նաև իրլանդական սեկցիաներ ինտերնացիօնալի սկզբունքներով։ Մարքսը քաղաքական խոշոր նշանակութիւն տալով իրլանդական շարժման, յանձնարարում էր անգլիական կազմակերպութեան պրոլետարիատին պաշտպանելու իրլանդական շարժումը։

21

Ինտերնացիոնալի կոնգրեսը Հաագայում:—Բախունիստների հռանդուն մասնակցութիւնը:—Մարքսի ջանքերը:—Կռիւ երկու տրամադծօրէն հակառակ ուղղութիւնների մէջ:—Բախունիստների բարոյական սնանկ պատկերը:—Ընդհանուր խորհրդի աղբերը:—Մարքսիստների առաջին յաղթութիւնը:—Ընդհանուր խորհրդի տեղափոխութեան խնդիրը:—Վալեանի րէզոլուցիան քաղաքական ակցիոնի մասին:—Մարքսիստների երկրորդ յաղթութիւնը:—Մարքսիստների երրորդ և վերջին յաղթութիւնը:—Մարքսի եզրափակող ճառը:—Հաագայի որոշումները և ազգային սեկցիաները:—Ալլիանսիստների պսակօ-ինտերնացիոնալը:—Բախունու գաղտնի կազմակերպութեան խայտառակ մերկացումը:—Բախունին՝ պանսլաւօնիստ իդէոլոգ:—Ալլիանսի քայքայումը:—Մարքսի ինտերնացիոնալի վախճանը և զրա պաածաոնները:

Վրայ էր հասել արդէն Ինտերնացիոնալի ընդհանուր կոնգրեսի ժամանակը (1872 թ. սեպտեմբերի), ուր, ըստ Մարքսի, պիտի վճռուէր Ինտերնացիոնալի «կեանքի և մահուան խնդիրը», ուր, ասում ենք, մարքսիստները և բախունիստները վերջին ահաւոր ճակատամարտը պիտի մղէին:

Կոնգրեսը բացուեց սեպտեմբերի 2-ին, Հաագայում: 80) Սա առաջին կոնգրեսն էր, որ բարձր աստիճանի միջազգային բնաւորութիւն ունէր իր մասնակցողների բազմազանութեամբ: Բացի Եւրոպայի բոլոր մեծ ու փոքր երկրների բանուորական կազմակերպութիւնների ներկայացուցչութիւնից, պատգամաւորներ եկել էին նաև Ամերիկայից և Աւստրալիայից: Մասնակցում էին ընդամենը 65 պատգամաւորներ:

Բախունիստական Ալլիանսը մեծ յոյսերով ու երազներով էր մասնակցում կոնգրեսին: Նրա կենտրոնը՝ Շվէյցարական Իւրան, իմպերատիւ մանդատներով էր ուղարկել իր պատգամաւորներին կոնգրես, պահանջելով ամեն կերպ աշխատել ընդհանուր խորհուրդը վերացնելու, համերաշխ լինել ամեն մի սեկցիայի պատգամաւորութեան հետ, որը կը բողոքէ, կը կռուէ խորհրդի գէմ, անհատական հեղինակութեան սկզբունքի գէմ, լինել կոնգրեսում մի սերտ ու ինքնամփոփուած մարմին, և իսկոյն թողնել կոնգրեսը այն գէպքում, երբ բացասաբար կը շօշափուեն ու կը տրորուեն Ալլիանսի սկզբունքները:

Հին (մարքսիստական) Ինտերնացիոնալի պատգամաւոր անդամները վստահ էին իրենց ոյժերի, իրենց դաւանած գա-

80) D. Jaechh, Die Internationale» էր. 189.

դափարների յաղթահարիչ կենսունակութեան վրայ: Մարքսի, որպէս անհատի, և Մարքսի, որպէս մի կենտրոնաձիգ առանցքի, բոլոր ջանքերը ուղղուած էին՝ փրկել Խոտերնացիօնալը պարտութիւնից, անկումից:

Երկու սուր ու տրամագծօրէն հակառակ ուղղութիւններ անհաշտ կռուի են դուրս եկել Խոտերնացիօնալի բաղդը որոշելու համար: Մի կողմում՝ մարքսիզմը, գիտական սոցիալիզմը, յառաջադէմ ու էվօլյուցիոնիստական աշխարհայեացքը, պրոլետարիատի գոյութեան ըէալ հիմքերի վրայ խարսխուած առոյգ իդէօլոգիան, միւս կողմում՝ բուրժուազմը, նիւիլիստական անարխիզմը, յեղափոխական բոմանտիզմը, անբովանդակ, սիմպլ ու մակերևոյթային ֆրադէօլոգիան, քայրայիչ և ղեգորդանիզատօրական տենդենցներ:

Անպայման գրանցից մէկի յաղթութիւնը պիտի վկայէ միւսի պարտութիւնը և ընդհակառակը:

Դեռ կոնգրեսի առաջին նիստերում, մանդատների քննութեան ժամանակ, խիստ գծերով մերկանում է բախումիստալլիանսիստների բարոյական սնանկ պատկերը: Զանազան ծայրերից եկած բազմաթիւ բողոքաւոր նամակներ մանրամասն նկարագրում են նրանց զեղծումները, ինտրիգան և գաղտագողի մեքենայութիւնները: Լաֆարգը մերկացնում է անխնայ բախումիստների սկանդալ սխրագործութիւնները Խալանիայում. էնգելսը սուր քննադատում է նրանց գաղտնի կազմակերպութեան բոլոր խարդախութիւնները, հակապրոլետարական ձգտումները:

Այնուհետև կարգացում է ընդհանուր խորհրդի ազրեսը, որ արտայայտիչ գոյներով նկարագրում է ինտերնացիօնալի ծանր դրութիւնը, կրիտիքական բուպէները համաերոպական ըէակցիայի ազդեցութեան տակ. ցամաքային Եւրոպայի կառավարութիւնների հալածական կօալիցիան, բուրժուական թերթերի զրպարտութիւնները, բոնապարտիստական կառավարութեան կատաղի բռնութիւնները, գերմանական կառավարութեան կեղծ դաւադրական պրոցեսներով անհաշտ հալածանքն ու բանտարկութիւնը, աւստրիական կառավարութեան դոնքիշոտութեան հասցրած ըէպրիսիանները, հռովմէական պապի խենթ ու ապուշ կռիւը տեղական սեկցիայի գէմ և այլն և այլն, — ֆէօդալիզմի, բուրժուազիայի և կոերականութեան ուշադնական Եւրոպան, տիրող ու հրամայող ըէակցիօնէր Եւրոպան երդուեալ զանճի նման հալածում, նրնշում էր «չորրորդ տարրի»՝ սրբազան զաշինքով միաբանած միջազգային կազմակերպութիւնը: Խոտերնացիօնալը՝ իր խրոխտ ու անվեհեր գործիչներով, ոչ միայն անսասան մնաց այդ բոլորի հանդէպ իր բարոյական մեծութեամբ, այլ և խորացրեց ու ընդլայնեց իր պորճնէութիւնը այնտեղ, ուր նա վաղուց էր արմատ

բռնել և տարածուեց ու սփռեց իր ազդեցութիւնը այնտեղ, ուր նա մուտք չէր գործել կամ ամուր գիրք չունէր. օրինակ՝ Հոլլանդիայում, Դանիայում, Փորտուգալիայում, Շոտլանդիայում, Իրլանդիայում, Ամեր. Միացեալ Նահանգներում, Աւստրալիայում, Նոր-Զելանդիայում, Արգենտինիայում: Այդ առտիճան հսկայական ծաւալ էր ստացել Ինտերնացիօնալը իր մի քանի տարուայ գոյութեան ընթացքում:

Կոնգրեսը անցնելով իր իսկական զբաղմունքներին, ամենից առաջ քննութեան նիւթ է դարձնում ընդհանուր խորհրդի հարցը:

Սա ալլիանսիստներին ջգածութեան մէջ դնող մի փոփոակ խնդիր էր, որ, սակայն, երկար վիճաբանութիւնից յետոյ ձայների ճնշող մեծամասնութեամբ ընդունում է ըէզոլիւցիա ի նպաստ ընդհանուր խորհրդի: Հիմնապէս ջրւում է բաւկունիստ—ալլիանսիստների բողոքաւոր ֆրազէօլոգիան. Լաֆարգը, Մարքսը պաշտպանում են դեմոկրատական ցնտրալիզմի սխտեմը, ընդհ. կենտրոնին վերապահելով Ինտերնացիօնալի բարձրագոյն ատեանի—կոնգրեսի—որոշումները ի կատար ածելու լիազօրութիւնը: Ընդհ. խորհուրդը չունի ոչ հրացան, ոչ զինուորներ և ոչ ոստիկանութիւն, նրա հեղինակութիւնը զուտ և բացառապէս բարոյական է—ասում է Մարքսը:

Սա առաջին յաղթումն էր բաւկունիստների գէմ. թէև նրանց իմպերատիւ մանդատը պահանջում էր թողնել ու հեռանալ կոնգրեսից, այնուամենայնիւ նրանք շարունակում են իրենց մասնակցութիւնը՝ աւելի մեծ ու զգալի պարտութիւններ կրելու համար:

Այնուհետև էնգելսի առաջարկութեամբ կոնգրեսը ձայների նուազ բազմութեամբ վճռում է ընդհանուր խորհրդի նիստը Լոնդոնից տեղափոխել Նիւ-Եօրք: Այդ առաջարկը շատերին խիստ զարմացնում է: Իսկ Մարքսի և էնգելսի համար դա վաղուց վճռուած մի հարց էր: Լոնդոնում պայմանները այնպէս էին դասաւորուել, որ անհրաժեշտ էր խորհրդի տեղափոխութիւնը գէթ առժամանակ: Բացի դրանից Մարքսը խիստ շատ էր իմանալու. նա, ինչպէս յաճախ գանգատւում էր իր նամակների մէջ, դժուարանում էր լարուած էներգիայով և ինտենզիւ ոյժերով նուիրուել գիտական զբաղմունքներին, Ինտերնացիօնալի կենտրոնի՝ իր վրայ բարձուած գործնական աշխատանքը խանգարում էր նրան: Էնգելսը շատ էր աշխատում Մարքսին ազատ պահել այդ ծանրութիւնից, և ամենայն հաւանականութեամբ կարելի է ասել, որ այդ վճիռը վերադրելու է աւելի շուտ էնգելսի ազդեցութեան յօգուտ Մարքսի:

Միւս կողմից, ինչ ասել կուզի, տուժում է ինքը Ինտերնացիոնալը, երբ բանուորական շարժումը ղեկավարող կենտրոնական մարմինը Եւրոպայի ծոցից տեղափոխւում է հեռւոր Ամերիկան: Սակայն ինքը Մարքսը շատ լաւ գիտէր և նախատեսում էր Ինտերնացիոնալի գոյութեան ընական վախճանը Եւրոպայում, այնպէս որ ընդհ. խորհրդի Լոնդոնում մնալ չըմնալը մեծ կարևորութիւն չունէր: Մենք խնդիրը աւելի կը պարզենք, երբ խօսենք Ինտերնացիոնալի անկման պատճառների մասին:

Կոնգրեսը քննում է քաղաքական ակցիօնի խնդիրը: Ալլիանսիստները հանգէս են գալիս յանձինս իրանց Փանֆարօն և թեթևոլիկ ներկայացուցիչներից մէկի, Գիլոմի, որ պաշտպանում էր քաղաքական ձեռնպահութեան սկզբունքը. չմասնակցել պարլամենտական կեանքին, լինել միայն պասսիւ քաղաքականներ և բոլոր ոյժերով ձգտել պետութիւնը խորտակելու, ինչ ձևի էլ ուզում է թող լինի: Քաղաքագիտական այդ նորակուրս իդիօտիզմը Ինտերնացիոնալի մէջ երկրպագուներ էր ձեռք բերել միայն ալլիանսիստների շարքերում ի հարկէ:

Վալենսը առաջարկում է կոնգրեսին մարքսիստական ոգով կազմուած մի սուր ու բովանդակալից բեզոլիւցիա, որ երկար վիճաբանութիւնից, բակունիստներին ջախջախելուց յետոյ ընդունւում է ձայների ճնշող մեծամասնութեամբ: Բեզոլիւցիան հետևեալն է՝

«Իր ազատազրական կռիւների ընթացքում բանուոր դասակարգը կարող է միայն այն ժամանակ որպէս դասակարգ գործել, երբ նա կազմակերպւում է իրեն քաղաքական կուսակցութիւն, և բոլոր հին կուսակցութիւններից, որոնք կազմուած են ունևոր դասակարգերից, սահմանազծուած ու նրանց թշնամաբար հակադրուած լինի: Բանուոր դասակարգի քաղաքական կուսակցութեան մէջ ամփոփուելը ու կազմակերպուելը խիստ անհրաժեշտ է, որպէսզի կարելի լինի պսակել սոցիալական յեղափոխութեան յաղթանակը և վախճանապէս վերացնել բոլոր դասակարգերը: Ոյժերի այն համախմբումը, որ բանուոր դասակարգը իր տնտեսական կռիւների ընթացքում առաջ է բերել, պէտք է միաժամանակ կուտան ծառայէ խոշոր կալուածատերերի և կապիտալիստների քաղաքական ոյժի դէմ մղած կռիւների ընթացքում: Բանուոր դասակարգի ռազմական բուլէներին պէտք է նրա տնտեսական շարժումը և քաղաքական ակցիօնը անբաժան օղակուած լինեն միմիայն հետ»:⁸¹⁾

⁸¹⁾ Gustav Jaechh, Die Internationales, 194 էր.

Այս ընդունակության ընդունելությունը նշանակում էր երկրորդ մարքսիստական յաղթանակը բախումների դեմ:

Մօտ 35 տարի սրանից առաջ ձևակերպուած այդ ընդունակության մի աւանդ՝ մարտնչող պրոլետարի հին Խնտերնացիօնալից նոր Խնտերնացիօնալի: Միացում, ներդաշնակ ու օրգանական շաղկապում պրոլետարիատի տնտեսական շարժման և քաղաքական ակցիօնի, որպէս անհրաժեշտ նախապայմաններ բանուոր դասակարգի պատմական ազատագրութեան համար. — կռուի այս լօզունգը ամենաայժմէական բնաւորութիւնն ունի արդի բոլոր սոցիալական կուսակցութիւնների համար: Որովհետեւ հէնց այժմ է, որ տասնեակ տարիներ առաջ ճշդիտ սահմանների մէջ տեսականօրէն մշակածը, պէտք է գործնականապէս իրականացնել. — համերաշխ գործակցութիւն և սերտ միացում քաղաքական-պարլամենտական գործնականութեան և արհեստակցական շարժման (տնտես. կռուի) միջև:

Հաագայի կոնգրեսը մի այլ հետաքրքրական որոշում ևս կայացրեց: Նա յանձնարարել էր հինգ պատգամաւորներից բաղկացած մի յանձնաժողովի քննելու ալլիանսիստների գործերը: Յանձնաժողովը այնպիսի մերկացուցիչ փաստեր էր երևան հանել այդ ինտրիգան կազմակերպութեան սկանդալ արարների վերաբերեալ, որ կոնգրեսը դարձեալ ճնշող մեծամասնութեամբ վճռում է դուրս վաճառել Բախումուն, որպէս Ալլիանսի հիմնողի, և նրա երկու գլխաւոր արբանեակներին: Ալլիանսիստներից հինգ պատգամաւոր խում ևն իրանց բոլոր կապերը այդ կազմակերպութեան հետ և նորից միանում են հարազատ Խնտերնացիօնալին:

Այդ էլ երրորդ ևս վերջին պարտութիւնը այն գոնքիշուտ բախումնախնտերի, որոնք երազում էին տապալել Խնտերնացիօնալի սիւներին և իրանց ձեռքն առնել միջազգային պրոլետարիատի կազմակերպութեան դերը: Կոնգրեսի միայն մի համեստ փորձառնութիւնը բաց է թողնում մի բողոք ուղղած ընդհանուր խորհրդի իրաւունքների կրկնակի ընդարձակման դէմ:

Կոնգրեսը ընդունում է ի նպաստ իրլանդական քաղաքական բանտարկեալների մի ընդունակ ընդդէմ անգլիական «իւրեւալ» կաբլինետի բռնութիւնների: Դրանից յետոյ, կոնգրեսի վերջում, Մարքսը արտասանում է մի ընդհանուր լուսաբանական ճառ ընդունուած որոշումների վերաբերեալ, որ փակում է հետեւեալ խօսքերով.

«Յեղափոխութիւնը պէտք է համերաշխ (solidarisch) լինի, և մենք գտնում ենք մի մեծ օրինակ յանձինս Փարիզի կոմուն-

նայի որը ընկաւ, որովհետեւ միւս բոլոր մայրաքաղաքներում՝ Բելլին, Մադրիդ և այլն, միաժամանակ չբռնկուեց մի մեծ յեղափոխական շարժում, որպէսզի կառակցութեան մէջ ժողովրդի պրոլետարիատի այդ հսկայական ապստամբութեան հետ: Ինչ ինչ է վերաբերում,—շարունակում է Մարքսը,— ես պիտի շարունակեմ աշխատել այդ խնդրի վրայ, բանուորներին՝ ապագայում այն աստիճան արդիւնաւոր համերաշխութեան ամրապնդման համար: Ոչ, ես չպիտի յետ քաշուեմ Ինտերնացիոնալից, և իմ կեանքի մնացորդը—ինչպէս իմ անցեալ աշխատանքի ժամանակ է եղել,—պիտի նուիրուած մնայ սոցիալական գաղափարների յաղթանակին, որոնք, մենք բոլորս վստահ ենք դրա մէջ, պիտի մի օր գլուխ բերեն պրոլետարիատի տիրապետութիւնը»:⁸²⁾

Հաագայի կոնգրեսի որոշումները մեծ իրարանցում են առաջ բերում զանազան սեկցիաների մէջ: Շատ տեղեր, ամենից առաջ Անգլիայում, ուր բախումիւմի հետքն անգամ չկար և չէր էլ կարող լինել իրրե մի պարսաւուած նիհիլիստական անարխիզմ, այնուամենայնիւ բաւական մեծ թուով ազգային սեկցիաներ չեն ընդունում Հաագայի որոշումները և յայտարարում են իրանց համերաշխ Ալլիանսի բոլորի հետ: Ընդհանուր առմամբ, կազմակերպուած պրոլետարիատի մեծագոյն մասը մնաց Ինտերնացիոնալին հաւատարիմ (Ֆրանսիայում, Գերմանիայում, Աւստրիայում, Հոլլանդիայում, Դանիայում, Ունգարիայում, Լեհաստանում, Միացեալ Նահանգներում, Շվեյցարիայի մի ժամում և այլն):

Հաագայի կոնգրեսից անմիջապէս յետոյ գումարւում է ալլանսիստների համագումարը, որը խիստ պարսաւելով Հաագայի կոնգրեսի որոշումները, հիմնում են մի Նոր Ինտերնացիոնալ, բախումիստ-ալլիանսիստների կեղծ, պսևդո-ինտերնացիոնալ: Սակայն որքան դժբաղդ հիմքերի վրայ և պայմանների մէջ է կեանքի կոչւում սեկցիոնիստների (բաժանուածների, անջատուածների) այդ պսևդո-ինտերնացիոնալը: Արդէն կարճ ժամանակից յետոյ Սեկցիոնը լուծուեց ու վերածուեց անարխիայի: Սեկցիաներին «աւտոնոմ» իրաւունքներ տալով, մնացել էր, որ անհատներին ևս «աւտոնոմիա» տրուէր, և արուեց նոյն իսկ այդ վերջին քայլը... Սեկցիոնիստական սեկցիաները, —շարունակում է Ինտերնացիոնալի պատմագիրներից մէկը,—ահապին արագութեամբ կազմալուծուեցին մեծ ու փոքր անջատուած գրուպուաների, որոնք ոչ մի կապակցութիւն չու-

⁸²⁾ Ibid, եր. 195

նէին միմեանց հետ, բայց եթէ կուում, վիճում էին և դրանով դժուարացնում և ունայն դարձնում աշխատանքի թշնամիների դէմ ուղղուած միահամուռ կիրքը»։⁸³⁾

Այս էր հռչակաւոր Բակունու «կազմակերպչական հանճարի» արդիւնքը։

Բայց այդ գեռ ոչինչ։

Ինտերն. ընդհանուր խորհուրդը բաղմաթիւ գաղտնի դուկումենտների հիման վրայ հրատարակում է մի կործանիչ մեղկացում բախուհատների դէմ։ Բանից երևում է, որ Բակունու Ալլիանս ասածը եղել է մի գաղտնի, կոնսպիրատիւ ընկերութիւն իր բիւրօկրատական հրարելիայով և կառավարչական օրգաններով։ Ալլիանսը ունեցել է իր երեսն ու աստուղը,—հրապարակական Ալլիանս, որ ամփոփել է իր մէջ միջազգային և ազգային եղբայրները և նրա յետև թագնուած գաղտնի Ալլիանս։ Միայն 100 հոգուց բաղկացած միջազգային եղբայրները կազմում են սուրբ կոլլեգիումը։ Միջազգային եղբայրները ոչ մի գաղտնիք չունեն միմեանց մէջ։ Ազգային եղբայրները կազմակերպւում են նոյն ծրագրով, ինչպէս համազգայինները։ Միջազգային Ալլիանսը տիրում է մի օրէնսդրական օրգանի կենտրոնական կոմիտէի մէջ։ Ժընևի կենտրոնական սեկցիան կազմում է նոյն «կենտր. կոմիտէի հաստատուն պատգամաւորութիւնը»։ «Ալլիանսի գործադիր խորհուրդը»։ Այդ կենտրոնական սեկցիան բաժանւում է երկու մասի՝ կենտրոնական և վերահսկիչ կոմիտէի։ Նրանց անդամները «տալիս են իրանց լիազօրութիւնը քաղաքացի Բակունու ձեռքը»։ «Ուրեմն կենտրոնական միայուն կոմիտէն աւելացնում է նոյն պատմագիր Գուստաւ Եկքը, որ ամփոփում էր իր մէջ սահմանադրական և օրէնսդրական ոյժը ամբողջ Ալլիանսի վրայ, ուրիշ ոչ ոք էր, բայց եթէ ինքը քաղաքացի Բակունին»։

Երևակայեցէք, այն մարդը, որ անխնայ բողոքում էր և իր ինտրիգաներով բողոքել տալիս միամիտ սեկցիաներին Կարլ Մարքսի կարծեցեալ դիկտատուրայի, անհատական հեղինակութեան դէմ, այդ նոյն մարդը իր անձնական հետ մէջ էր բեռել ամբողջ կազմակերպութեան լիազօրութիւնը։

Այդ ջախջախիչ մերկացումների վրայ աւելացրէք և Կարլ Մարքսի ջախջախիչ կրիտիկան Բակունու դէմ, որով նա ցոյց է տալիս բաղմաթիւ ցիտատներով և վկայութիւններով Բակունու գրուածքներից, որ Բակունին մի առաջին կարգի պանպաղոսիստ իդէօլոգ է, ուրիշ ոչինչ։ Նոյն դրօշմն էր կնքել նրա

⁸³⁾ Jhid, եր. 204։

ճակատին և ինքը Բակունու մտերիմ ընկեր Նեչաևը, որին, ինչպէս և շատ երիտասարդ ուսանելի, Բակունին գործիք էր դարձրել իր ձեռքին և Իստերնացիօնալի անունով հասցրել նրանց մինչև անարխիստական ոճրագործութեան:

Ինչ ասել կուզի, որ այս բոլորը մահուան ստուեր են ձգում Բակունու և նրա գործնէութեան վրայ, անկման վերջին հարուածը հասցնում նրա կազմակերպութեան: Մի երկու կիսատ-պուտ կոնգրեսներից յետոյ արդէն քայքայում և կազմալուծում է (1874 թ.) Բակունու կազմակերպութիւնը, իր հետ դիւրեղման տանելով նաև բակունիզմը, թողնելով մի քանի անարխիստական սև բծեր շվէյցարական Իւրայում, Իտալիայում և մանաւանդ Իսպանիայում, ուր բակունիստներն արկածալից ապստամբական փորձերը Ալլիանսին հասցրին մինչև կարիկատուրային աստիճանը:

Սակայն ինչ վախճան ունեցաւ հին, մարքսիստական Իստերնացիօնալը:

Իստերնացիօնալի պատմական գոյութեան և սոցիալ-քաղաքական գործունէութեան վերջին ակտը—փառաւոր ու յաղթական ակտը—խաղաղուեց արդէն 1872 թ., սեպտեմբեր ամսին, Հաագայի կոնգրեսում: Թէև մի տարի յետոյ (1873, սեպտեմբերին) դարձեալ գումարուեց ժընևում նրա կոնգրեսը և դեռ մի քանի տարի շարունակ կանգուն մնաց նրա ընդհանուր խորհուրդը Նիւ-Նօրքում, այնուամենայնիւ Իստերնացիօնալի, որպէս միջադարանուորական խմբակցութեան՝ կենդանի գործնէութիւն ու ղեկավար դերը կնքել էին իրանց փաստական վախճանը 1872 թ.: Ժընևի կոնգրեսը աւելի լոկալ (տեղական) բնաւորութիւն ունէր, պատգամաւորների մեծագոյն մասը բազկացած էր շվէյցարացիներից: Եւ եթէ նա մի նշանաւոր վճիռ ունեցաւ, այդ այն էր, որ երկու տարով յետաձգեց Իստերնացիօնալի յաջորդ կոնգրեսը, իսկ դա փոխարեւորական իմաստով նշանակում է, որ նա պաշտօնապէս լուծեց Իստերնացիօնալը: Իսկ Նիւ-Նօրք հաստատուած ընդհանուր խորհուրդը համարեա ֆիկտիւ նշանակութիւն ունեցաւ Եւրոպայի բանուորական շարժման համար: Նրա ունեցած գործնէութիւնը մեծ մասամբ վերադրելու է Մարքս-Էնգելսի տուած խորհուրդներին և դիրեկտիւներին, որ նրանք շարունակ հաղորդում էին Լոնդոնից ընդհանուր խորհրդին կամ նրա անդամներից մէկին, միւսին, մանաւանդ Զորգէին:

Սակայն ինչո՞ւ քացաւ Իստերնացիօնալը, որպէս այդպիսին, ի՞նչ էր պատճառը:

Բուրժուական իդէօլոգները իդէալիստական մտածողու-

Թիւնը ինչպէս որ ամեն երեւոյթի բացատրութեան յենակէտը որոնում է որոշ արտաքին դէպքերի արտաքին ցոլացումների մէջ, այնպէս էլ Ինտերնացիօնալի «անկման» խոր պատճառը, չարիքի արմատը որոնում է մարքսիստական և բոլշևիստական տարածայնութիւնների և կոիւնների, պառակտումների մէջ:

Բայց այդ դատողութիւնը նշխարան սխալ է, որքան նա մակերեւոյթային է:

Ինտերնացիօնալը չնկալ, որպէս խոնջացած մարանչող՝ կռուի դաշտում, այլ նա մեծաւ իր քնակալ, նորմալ մահով: Նրա չքացումը ապացոյց էր, որ նա իրո լիթամեայ գոյութեան ընթացքում մի վերին աստիճանի կենդանի, կենսունակ և բնականհրաժեշտ կազմակերպութիւն է եղել, որ պատմական մահով կենքում է իր վախճանը այն դէպքում, երբ պատմականօրէն մահանում են նրա գոյութեան կոռուանները:

Ինտերնացիօնալը, որպէս միջազգային պրոլետարիատի շարժման ընդհ. ղեկավարութիւնը ինքնամիտ մի հաւաքական մարմին, իբրև գործնէութեան ֆունկցիաները միացնող մի համակենտրոն ձեւ ունեցող կազմակերպութիւն, պիտի բնական անհրաժեշտութեամբ մեռնէր այն ժամանակ, երբ արդէն կազմակերպութեան այդ ձեւը անարժէք ու կենսազուրկ է դառնում սոցիալ-քաղաքական նոր երեւոյթների ու յարաբերութիւնների նոր շրջանի ծոցում:

Ասացէք, ի՞նչ էին ներկայացնում 60—70-ական թուականները: Դա ուրիշ ոչինչ չէր՝ իր քաղաքական իմաստով, բայց եթէ բուրժուական յեղափոխութիւնների պատմաշրջանը փակող և բուրժուական լիգալիզմի, սահմանադրական կարգերի նորասկիզբ շրջանի մի միջին, փոխանցող ժամանակամիջոց, երբ եւրոպական պրոլետարիատը իր յետեր թողնելով բարիկադային յեղափոխութիւնը և իր առաջը նկատելով լիգալ գործնէութեան պարլամենտական արտայայտութիւնը, դասակարգային անհրաժեշտութիւն զգաց հետզհետէ ինք զինքը շտկելու, կազմակերպուելու: Հէնց այդ փոխանցող ժամանակամիջոցի հարկադրող ազդակների արդիւնքն էր Ինտերնացիօնալը, որ իր համակենտրոն կազմակերպչական ձևով եկաւ համախմբուող բանուորութեան ներշնչելու միուրոյն նպատակ, միուրոյն տակտիկա, կռուի միուրոյն մեծող, դասակարգային իդէալի մերձաւոր (minimum) և հեռաւոր (maximum) միուրոյն ծրագրներ:

Սակայն 70-ական թուականներից սկսած, երբ համաեւրոպական բէակցիան հետզհետէ մեղմացնում է իր աւերիչ բռնկումներն ու հալածանքները և երբ ամեն մի սղոյային պատուծեան մէջ պրոլետարիատը սկսում է արագ թափով կազմա-

կերպուել քաղաքական հողի վրայ՝ իր դասակարգային կուսակցութեան մէջ, երբ, ասում ենք, զանազան երկրների պետական-քաղաքական և սոցիալ-տնտեսական տարբերութիւնները անհրաժեշտօրէն պահանջում են պարլամենտական գործնէութեան ու տակտիկայի նուրբ նիւաններ (անպայման չվրիպելով համալրութեամբ-սոցիալիստական սկզբունքից), — այդ գէպըում, ինչ ասել կ'ուզի, Ինտերնացիօնալը, իր համակենտրոն կազմակերպչական սխտեմով, կորցնում է իր գոյութեան հողը, կենսական արժէքը: Դեռ 40-ական թուականների վերջերին էր, որ «Կոմունիստական Մանիֆեստի» հանճարեղ հեղինակը ասում էր. «Թէև ոչ ըստ բովանդակութեան, սակայն ըստ ձևի պրոլետարիատի կռիւն բուրժուազիայի դէմ ամենից առաջ ազգային ընաւորութիւն ունի: Ի հարկէ իւրաքանչիւր երկրի պրոլետարիատ պէտք է ամենից առաջ իր սևիական (ազգային, Բ. Ի.) բուրժուազիայի հետ վերջացնէ իր պատմական հաշիւները»: 84) 70-ական թուականներից սկսած արդէն, բանուորական շարժման զարգացման պատմական տենդենցիան իր բնական բերմունքով սկսեց ընթանալ Մարքսի հետատեսած ուղիով:

Ուրեմն Մարքսի ինտերնացիօնալը հասունացնելով պրոլետարական շարժումը մինչև մի որոշ աստիճան և աւելով ներան իր ազատագրութեան և առօրեայ կռուի բովանդակութիւնը, ինքը իր կազմակերպչական համադրային ձևով անհրաժեշտօրէն տեղի տուեց ազգային ձևի, պահպանելով, կրկնում ենք, նոյն բովանդակութիւնը:

Մարքսը 1873 թ. սեպտեմբերի 27-ին (ժընևի կոնգրեսից յետոյ) իր մի հետաքրքրական նամակում՝ ուղղած նոր ընդհանուր խորհրդի անդամ և իր ընկեր Զորգէին ասում է ի միջի այլոց հետեւալը. «Եղելութիւնները (պատմա-քաղաքական, Բ. Ի.) և երկրի անխուսափելի զարգացումն ու կոնժիւնկերը պիտի ըստինքեան հոգան Ինտերնացիօնալի վերատեսչման բարենորոգում ձևով» (նոտրգիրը մերն է): 85)

Պարձեալ մի նախատեսում, որ բառացի ճշտութեամբ իրականացաւ 1889 թ., Մարքսի մահից վեց տարի յետոյ, երբ Փարիզում առաջին անգամ գումարւում է բոլոր երկրների սոցիալիստական կուսակցութիւնների միջազգային կոնգրեսը, որով հիմք է դրւում նոր ինտերնացիօնալին բարենորոգում ձևով:

Ուրեմն 1872 թ. (պաշտօնապէս 1872 թ.) մեռաւ Մարք-

84) K. Marx und Fr. Engels, «Das Kommunistische Manifest», էր. 17

85) Karl Marx an Sorge (տես «Briefe von Fr. Engels, K. Marx u. A. n. a F. A. Sorge u. Andere», էր. 121—122)

սի հին ինտերնացիոնալը, որպէս զի 1889 թ. յարութիւն առնէ մարքսիստական սոցիալիզմի վրայ կառուցուած նոր ինտերնացիոնալը:

Իսկ այդ նոր ինտերնացիոնալի էութիւնն ու պատժութիւնը դուրս է արդէն մեր թեմայի շրջանակից:

Բ. Իշխանեան

ՄՕՏԻԿ ԱՆՅԵԱԼԻՅ *

Մեր քննական յետադարձ հայեացքը եօթնասնական թուականի վերջում շիկացած ազգային բոմանտիզմի արտայայտութիւնների վրայ ամփոփելուց առաջ, աւելորդ չի լինի ներկայացնել մեր ընթերցողներին այն երկու «Տեղեկագրերները», որոնց մէջ թիւրքահայ ազգային վարչութիւնը արտայայտում է թիւրքահայերի բողոքները և խղճերը: Եթէ թիւրքական վաւթար բեթիմի դէմ հայերի առանձնայատուկ զրկանքները անաչառօրէն քննենք և ապա աչքի առաջ ունենանք այն ճնշումները, որոնց ենթակայ էր հայութիւնը կովկասում ուսումնականութիւնի հին բեթիմի ժամանակ և, վերջապէս, քաջութիւն ունենանք նկատի առնել և այն փաստերը, որոնք բնութարարում են մեր գաղնակցականների ստեղծած «ազգային կառավարութիւնը» Անդրկովկասում և Պարսկաստանում—պէտք է որ բաւական մեղմենք այն «դժողբի» արհաւիրքները, որոնցով «ազատ Հայաստանի» ջատագովները համոզեցուցիչ էին գարծնում գերմարդկային գոհարերութիւնները հայ ժողովրդի կողմից եղակի ջանքերով «անկախ Հայաստան» ստեղծելու:

Այդ դոկումենտները տպուած էին արտասահմանի մի հայ թերթում, որից անփոփոխ առաջ ենք բերում այսեղ:

Ա. Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ԳԻՒՄԱՌԱԿԱՆ ՀԱՐՍՍԱՀԱՐՈՒԹԵԱՆՅ

Ներկայացնալ տա Բ. Գուռն յանուն ազգային ժողովոյ

Ի 11 ապրիլի 1872

Այլևայլ ժամանակներ, մասնաւորաբար վերջին 7—8 տարւայ միջոցին, Անատոլոյի ներսերը պատահած ցաւալի դէպքեր, որոնց համար Ազգային Պատրիարքարանս գրեթէ Բ. Դրան գանգատած և անոր ուշադրութիւնը և դարմանատարու-

*) Տես «Մուրճ» № 10

թիւնը խնդրած է, այնքան բազմացան, և այս մասին Առաջնորդաց գանգատներն այնչափ ընդհանրացան, որ Ազգային Ընդհանուր Ժողովն 1870 նոյեմբեր 27-ի նստին մէջ յատուկ Յանձնաժողով մը կազմեց, այդ ցաւալի դէպքերը քննելու և մանրամասն տեղեկադրելու համար:

Յանձնաժողովը յատուկ շրջաբերականներ ուղղեց առ ամենայն Առաջնորդս, որ իրենց գաւառի վիճակին և ցաւոց վրայ մանրամասն և ճիշտ տեղեկութիւններ տան, զգուշանալով ամենայն չափազանցութենէ, և ցաւոց դարմանին վրայ ալ կարծիքը հաղորդեն:

Յանձնաժողովը՝ հասած առաջնորդական տեղեկագրութիւնները և Ազգային Պատրիարքարանի 20 տարւան արձանագրութիւնը մանրամասն աչքէ անցնելով, և պատմած դէպքերը մանր հետազոտութեամբ քննելով ստուգութիւնը բազում ապացոյցներով հաստատուած եղելութեանց վրայ հիմնելով՝ իր Տեղեկագիրը պատրաստեց:

Տեղեկագիրը մատուցեցաւ Ազգային Ընդհ. Ժողովին, 1871 հոկտեմբեր 8-ին, այնպիսի ժամանակի մը մէջ, յորում Կայսերական բարեխնամ Կառավարութիւնը արդէն ուշադրութեան առած էր կայսրութեան ներքին ընթացքը, պաշտօնէից վիճակը, և մասնաւորաբար Անատոլոյի գաւառաց վիճակին քննութիւնը, նորընտիր յատուկ գործակալաց ձեռքը:

Ասանկ բարեպատեհ ժամանակի մը մէջ մեր Ազգն ալ, յարկէսդի ըստ կարի օժանդակ գտնւի մեր Օղոստափառ Կայսեր արթնն և լուսամիտ պաշտօնէութեան ձեռք առած այլ և այլ բարեկարգիչ միջոցներուն, կը փութայ Ընդհ. Ժողովոյ մատուցեալ տեղեկագրին ղրխաւոր պարունակութիւնները՝ նոյն Ժողովին 1872 փետրւար 18-ի նստին յայտնած ընդհանուր կամքին և որոշմանը համեմատ՝ բարեխնամ Կառավարութեանդ ուշադրութեանը ներկայացնել:

Այլ և այլ զեղծման և անկարգութեանց վրայ ժողովրդեան ստէպ ստէպ գանգատներէն կ'ստուգւի և կը հաստատուի թէ՛ տեղ տեղ՝ մանաւանդ մայրաքաղաքէս հեռու և յարաբերութեան մասին դժուարութիւն ունեցող գաւառաց կայսերական պաշտօնեայք՝ Վեհ. Սուլթանին կամաց և հրամանաց և կրկին օրինաց հակառակ ընթացքի մէջ են, որոնց թոյլտուութեամբ կամ անհոգութեամբը շատ անգամ կրօնական խտրութեանց և մոլեռանդութեանց աղետալի անցքեր կը պատահին արքունի շինւածոց համար մարդիկ անկարեայի կը բռնւին, դրամական պահանջումներ կըլլան ճանապարհաց շինութեան պատրուակաւ ժողովուրդը կը կեղեքւի, հպատակ ազգաց՝ մանաւանդ մեր ազ-

գէն անջատեալ հայոց և մեր մէջ բաժանման և երկպառակութեան տարեքնները կաճին, կանայք և անչափահաս մանկունք բոնի մահմեդականութեան դարձնելու ջանքեր կըլլան: Դարձեալ՝ սոյն պաշտօնէից անհոգութեամբն արքունի տրոց բաշխման և հաւաքման մէջ գեղծմունք կը գործեն ասկեր պետելիէ տուրքը մեռնողի և գաղթողի կամ բոլորովին անյայտ եղողի բաժինն ալ մնացեալներէն կը պահանջւի, որով վճարումն անկարելի եղած պագայէնր մնալով կը ծանրանան այլեայլ գաւառաց մէջ:

Այսպէս նաև էմլագ եւ թէմէտոլի տրոց մասին անարգար բաշխում և հաւաքում կըլլայ, որ բաղդատմամբ ոչ-մահմէտականաց վրայ աւելի ծանրացած է՝ քան թէ մահմէտականաց: Վերջապէս տրոց հաւաքման պատրուակաւ աղքատին անհրաժեշտ կահկարասիքն ու գործիքը բոնի ծախելու և դանոնք բանտարկելու խտուրթիւններ ի գործ կը գրւին:

Իսկ միւլթէզիմներու համար եղած զանգատներն ընդհանուր են: Այս մասին զանգատները միարեւրան կը հաստատեն թէ եղած գեղծումները այն պէյերին կամ կառավարութեան ժողովոց այն անդամներէն են, որոնք օրինաց հակառակ չը գործելու համար՝ իրենք վարձակալութեան (իլթիզմ) չեն ընել, այլ իրենց տղայքը կամ սպասաւորները կամ այլ ծանօթները:

Օրէնքին արգելքը բաւական է հասկցնել թէ երբ այսպիսի չարաչար գործածութեան ճանապարհ մը գտնւած է, ժողովուրդն ինչ ձեռքերու տակ կը մնայ, աղքատը որչափ անիրաւութեան տակ կը ճնշւի զինքը հարստահարողէն: Այս տեսակ Միւլթէզիմները գիտնան իսկ պիտի փնտսին, չեն վախճար զի փնտսին հանելու միջոցներն ունին, աղքատը կեղեքելով և չափազանց զինքը դնելով անոնց բերքին վրայ:

Այսչափ ցորեն կամ բամբակ կուտայ այս արտը, այսչափ դրամ պիտի տաս կըսեն, (դրամ՝ կ'առնուն և ոչ բերքին տեսակէն, և այն ալ, պղինձ դրամ չեն առնուր), եթէ բերքին տէրը զժկամակի տալ՝ միւլթէզիմն ալ աւելի կը հակառակի և բերքն երեսի վրայ կը թողու (զի մինչև տասանորդը չառնուր՝ բերքը իր շտեմարանը չը բարձւիր), որ կրնայ շատ փնտսնելու ենթակայ ըլլալ, ապա առաջի ուղած տասանորդին կըրկնապատիկը կը պահանջէ ու կ'առնու:

Տան պիտոյից համար տան պարտիզի մէջ ցանւած բերքին վրայ ալ տասանորդ կը պահանջւի:

Եթէ բերքին տեսակէն տասանորդ առնւի, նոյն իսկ բերքին տիրոջը բառնալ կուտան առնւած տասանորդը, և խեղ-

ձերին օրերով կսպասեն պէյլիկ ամսարին գուռը, որ ըերքը չափուի ու վերցուի:

Կը գանգատին նաև թէ միւլթէղիմները հնձոց ժամանակ չեն գար, շատ անգամ մինչև այն ատեն տասանորդը ծախած չըլլալուն համար կառավարութեան կողմէ ալ մէկը չը գար, և այնպէս բերքն երեսի վրայ կը մնայ ու կը փթի, և հուսկ ուրեմն կուգան և այն ֆլասեալ ու փտեալ բերքերուն համար ողջի արժէքով դրամ կը պահանջեն:

Այս պարագային մէջ գեղապետաց օգնութեամբն աղքատն աճեն տեսակ տառապանաց կենթարկւի, դատի կը քաշկուտի, կը արորւի, կը բանտարկւի: Միւլթէղիմներու հետ զազանի ընկեր եղող պաշտօնեայք անոնց շահուն միայն կը ծառայեն, և խեղճ հողագործը ճարահատեալ՝ իր ունեցածը վրայ կ'ուտայ, և տակաւին չկրնար միւլթէղիմին ձեռքէն ազատիլ:

Չմըան մօտ՝ և երբեմն ի մէջ ձմռան, միւլթէղիմներուն ի գիւղօրէս ելնելէն խիստ ֆլասեալ արգիւնքներ յառաջ կուգան: Գիւղացին պարտաւոր է ձրիաբար կերակրել միւլթէղիմն և անոր գործակալները, որչափ ժամանակ որ հլւր մնան իրենց գիւղը, անոնց հաւնեցնելու եղանակաւ, երբեմն ալ կանանց պատիւ կարատաւորի:

Վերջին ատեններս քանի մը գաւառներու մէջ հողագործաց եզանց լծերն ալ գրւեր և ի գլուխ մէկ լծոց երկու կոտ, այն է չորս լիտր ցորեն առնւեր է տասանորդ և կարի խըստութեամբ, քանզի անոնք որ ցորեն չունէին, բոնագատուեր են դրամով գնել քաղաքացիներէն և վճարել:

Շահնալըք կամ էօլէք հազըր ըսած արգելեալ տուրք մալ կայ, որ բերքին $\frac{1}{16}$ -ն է, երբեմն ալ աւելի, զոր հողագործը եթէ չը տայ՝ շահնան շատ ֆլասներ կը հասցնէ անոր:

Այս գանգատներն աւելի ծանր են այն դաւառաց մէջ, յորս պէյ կամ աղա կամ քիւրդ բոնաւորներ կան, և անոնք ալ կամ իշխանութեան մէջ են, և կամ իշխանութեան տուջև ազգեցութիւն ունին:

Բարեխնած կառավարութիւնդ արդէն տեղեակ ըլլալով գաւառաց խորերուն մէջ պատահած այոպիսի ղեղձմանց, նոր և աղբու միջոցներ ձեռք առած է բարեկարգութեան հաստատութեանը և ժողովրդեան բարօրութեանը համար: Եւ արդարեւ՝ ձեռք առնւած միջոցներուն մէջ ամենէն ընտիրը կը համարուի այն դրութիւնը՝ որ քօնթօլ մ'է տեղական կառավարութեանց դէմ, որ յատուկ ժուրնալճիներու ձեռօք կատարել կը փորձուի առաջին անգամ: Այս դրութիւնն իր օգուտները պիտի ժատակարարէ կառավարութեան և երկրին ժողովրդեան:

Միայն թէ այս քննչութիւնը օգտակար ըլլալու համար հարկ է որ ժողովուրդն անվախ ըլլայ իր ցաւերն անկեղծութեամբ խօսելու և այս անվախութիւնն ալ կառավարութեան ձեռք առած և առնելիք միջոցներէն կրնայ դոյսնալ, երբ յանցաւոր որեւէ գաւառական պաշտօնեան անմիջապէս պաշտօնէ՝ ձգելի եւ պատժելի, խաղառ մերժելով զայն ի պաշտօնէ։ Այս անգրգռելի կամքը վերջին անգամ փորձով տեսնուելով, մեծ յոյս կուտայ կայսերական կառավարութեանդ բոլոր հաւատարիմ ժողովրդեան թէ հետզհետէ մեծամեծ բարիք վայելելու և իրենց ցաւերը մոռնալու արժանի պիտի ըլլան, շնորհիւ Վեհ. կայսեր և անոր արժանընտիր պաշտօնէութեան։

Այս մասին բարեխնամ կառավարութեանդ ունեցած հայրական բարի դիտաւորութեանց ճշտիւ դործադրութեան հակելու համար մեծապէս կրնան նպաստել նաև մեր Աղլին գաւառական վարչութիւնները և անոնց առաջնորդները, որոնց գանգատները թէ ուղղակի տեղական կառավարութեան և թէ Պատրիարքարանիս Թագրիբնեբուն միջոցաւ բարեխնամ կառավարութեանդ ներկայացած են և կը ներկայանան միշտ։ Սակայն ասկէ յառաջ պրծածաւ խմբիւմ-ի եղանակը մեծապէս աննպաստ էր ժողովրդին ցաւոց դարձան ըլլալու մասին, վասնզի՝ յայտնի կերեւէր թէ ժողովուրդը որչափ վախ ունէր տեղական կառավարութեանց վրայ գանգատելէ, կամ թէ որ դանգատէր, խմբիւմ մէջ յետս կոչելու, կամ սխալ տեղեկութիւն հաղորդելու կը պարտաւորէր, զի խմբիւմը բուն իսկ այն կառավարութենէն կըլլար, որմէ էր ժողովրդեան գանգատը։ Այս անպատեհ եղանակը՝ որ այժմ ժուրնալճիներու գրութեան հաստատութեամբը բարձուած կը յուսացելի, ոչ միայն տեղական կառավարութեանց վատթարանալուն կը ծառայէր, այլ շատ անգամ արդելք իսկ կըլլար այն տեղական կառավարութեանց՝ որ ժողովուրդն աղէկ հոգալու և աղքատը պաշտպանելու ջանք կուզէր ցուցնել։ Այս արդելքն յարուցանողներն եղած են միշտ իւրաքանչիւր գաւառի համար տեղացի բնիկ մեծատունը, որոնց զօրութենէն աղաւ կամ զերծ՝ կառավարութեան պլուս մը կամ այլ պաշտօնեայ թերեւ եղած չէ, կամ թէ որ եղած ալ է նէ, շուտ հասած է անոր անկումը տեղացի բնիկ մեծատանց միաբանութեամբը. վասն զի՝ կառավարութեան պաշտօնէից համար աղէկ կամ դէշ վկայութիւն տուողներն իրենք եղած են միշտ։ Որչափ և այս բնիկ մեծատանց աղղեցութիւնը չափաւորուած կը համարուի գաւառական կառավարութեան թէշքիւլաթի եղանակաւ, դարձեալ այդ ընտրութեան եղանակը հիմնապէս անոնց կը ծառայէ, թէ՛ Գրիբ

Մէճլիսին կը բաղկանայ Միւթէսարըֆէ, Հաքիմ էֆէնտիէ, Թահրիրաթ միւտիրիէ և ոչ-մահմետական ժողովրդեան գլուխներէ, որոնք ուղածնին ընտրելեաց ցանկը կընան անցնել, և այս ցանկն ալ փակիտլ ըլլալով, կառավարութեան պաշտօնէից խորհրդակցութիւնը ստանալեալ մարդոց տոսմնաշնորհութիւնն եղած է միշտ և կը մնայ այնպէս: Օրինաց այս տրամագրութենէն տեղացի բնիկ մեծատանց շատ օգուտ չը քաղելու միջոցը բարեխնամ Կառավարութեանդ բարձր հոգածութեանց տրժանի նիւթ մէ, և այս առթիւ Պատրիարքարանս սա խնդիրը միայն կը համարձակի աւելացնել թէ թէֆրիք Մէճլիսին պատրաստած ընտրելեաց ցանկն աւելի ընդարձակութեան կարօտ է. կամ թէֆրիք Մէճլիսին կազմութիւնն աւելի ժողովրդեան և տղատին նպատաւոր եղանակի մը վերածել պէտք է, և ինչպէս Առաջնորդաց ներկայութիւնն հարկաւոր է, նոյնպէս առանց անոնց ներկայութեան կամ հաւանութեան՝ ընտրելեաց ցանկ չը պատրաստուի, և իւրաքանչիւր ազգի ընտրելիներն ալ կանխաւ ազգային ներքին ժողովից խորհրդակցութեամբը պատրաստուած ըլլան:

Փորձը կապացուցանէ թէ ձեռք արնւած ազդու միջոցներէն ամենէն աւելի զօրաւորն արդարութեան ճշտիւ կիրառութիւնն է, և պիտի ըլլայ միշտ. երբ Կառավարութիւնդ կը քննէ, կը զարմանէ և ապագային ապահովութեան համար կը պատժէ, տարակոյս չը կայ թէ բաղձացած նպատակին պիտի հասնի: Ուստի երբ զաւառաց մէջ առաջնորդները որեւիցէ դեղձման մը վրայ բողոք կամ գանգատ ունենան տեղական կառավարութեան, և այն ուշադրութեան առնուի, և կամ եթէ Պատրիարքարանս գանգատ կամ բողոք ունենայ առ Բ. Դուռն, թէ Կառավարութեանդ և թէ Պատրիարքարանիս կողմէն լիազօր քննիչներով քննութիւն ըլլայ, կամ իհարկին քննութիւնը ի Պօլիս փոխադրուի, մեծ և իրական արդիւնք ձեռք բերել հնար պիտի ըլլայ, այսպիսի ազդու միջոցներով: Մասնաւոր պէտք է որ Բ. Դրան հրամանագրերն Վիլայէթի պաշտօնական լրագրաց միջոցաւ հաղորդին ի տողեկութիւն ժողովրդեան, որպէս զի շատ անգամ անդորձադրելի մնալու և կամ թերի գործադրուելու վիճակէ զերծ ըլլան. և հպատակ ազգաց գլուխները և նոյնիսկ այն ժուրնալճիները, որոնց պաշտօն տրւած է Բ. Դրան հրամանագրերուն գործադրութեան վիճակը քննել ժողովրդական աղբիւրներէ, կարող ըլլան անոնց վրայ հսկելու և անոնց գործադրութիւնը պահանջելու: Այսպէս նաև հարկ է Տիւթուրըն ալ ամեն ազգաց լեզուն վերածել թարգմանութեամբ: Ռամիկ և տգէտ մարդոց մէջ կրօնական խտրութեան

առիթներով ծագած գծաութեանց մէկ գլխաւոր առարկային նւագման ոչ սակաւ պիտի նպաստէ, եթէ օրէնքը կրօնափոխութեան դիմողներու համար որոշ տրամադրութիւններ պարունակէ, մանաւանդ կնիկ մարդոց համար. ան տունն այս մասին եղած բաղմադիմի գանգատները վերջ կը դնեն, և կրօնափոխն իր ազատ համոզմանը տէր կըլլայ՝ որ արդէն բարեխնամ Կառավարութեանդ ընդունած ազատ սկզբունքներէն մէկն է:

Այսպէս օրէնքի մը հարկաւորութիւնը կը նկատուի, կրօնափոխ արանց իրենց կնոջ և զաւակացը նախապէս մը վճարելու մասին:

Եթէ բարեխնամ Կառավարութիւնդ ազդու միջոցներով գաւառական կառավարութեան պաշտօնեաները հսկողութեան ներքեւ առնու, այն տունն արդարութիւնը բարձր ի գլուխ պիտի պանծայ, և անով շատ մը գանգատներու աղբիւրը պիտի չորանայ. արքունի տրոց նկատմամբ եղած զեղծմունք պիտի բարձուն. տրոց բաշխումն և հաւաքումը արդարութեան վրայ հիմնել կարելի պիտի ըլլայ, և մանաւանդ երկերը պիտի ազատի միւլթէզիմիրու երեսէն, որ այսօր հոգեվարք վիճակի հասած է. բարեխնամ Կառավարութեանդ շնորհիւ պիտի սկսի նոր կենդանութիւն զգենուլ այս մայր արուեստը՝ որ Արեւելցւոցս միակ արւեստ մնացած է, և բնութիւնն ալ զայն զարգացնելու միջոցներով օժտած: Այս մասին մեծապէս պիտի նպաստէ անվճարելի պագայէներուն և հողագործներուն ուրիշ կարեւոր ապահովութիւններու շնորհումը, որ բարեխնամ Կառավարութեանդ ձեռնհասութեանը կը պատկանի:

Ուրիշ գծախտութիւն մ'ալ կայ որ ոչ նւազ ցաւալի հետեանքներ ունեցած է և կունենայ միշտ. այն է՝ ոչ-մահմետականաց վկայութեան չը բռնելը: Աւելորդ է ըսել թէ այս պատճառաւ սրչափ առեանգութիւնք, յափշտակութիւնք, գողութիւնք, նա մանաւանդ սպանութիւնք անպատիժ մնացած են կամ անյայտ, նոյնիսկ կառավարութեան ջանիցն հակառակ. տարակոյս չը կայ որ եթէ բարեկարգութեան Հրովարտակին տրամադրութեանց համաձայն՝ կալածական, առևտրական և ոճրագործական դատերն անպատճառ (հէր հալտէ) նիզամի տեսեաններու մէջ քննելն, բարեկարգութեան հաստատութեանց և շատ տեսակ զրկանց բարձման ծառայելէ զատ, հաւասարութիւն ըսած սկզբունքը պիտի իրականացնէ: Դարձեալ ամենացաւալի հարկի մը մէջ կը դնուինք գանգատելու քերդերու և այն լեռնցի ցեղերու դէմ՝ որոնք վրանարնակ ըլլալով՝ ամեն ազգաց մանաւանդ կառավարութեան գանձուն ալ մեծապէս

փաստակար են: Ասոնք ղէնք կը կրեն, կառավարութեան ոչ տուրք կուտան ոչ ալ զինւոր, և ապոտամբ են, մինչդեռ միւս ժողովուրդներն անդէն են և կառավարութեան տուրք և զինւոր կամ պէտէլ կուտան, աւելի տուրք մ'ալ այդ արստամբներուն տալու պարտաւորութեամբ: Այս հարստահարութեանց ներքեւ առաւել կը գտնւին էրզրումի և Տիարպէքիւրի վիլայէթները, և անոնց մէջ Մուշ, Վան, Քղի, Ղուղուլջան, Դերջան, Բաղէշ, Ջարսանճագ, Սղերտ և այլն:

Կայսերական բարեխնամ Կառավարութիւնդ արդէն հրատարակեալ Խաթիթը Հիւժայուններով ժողովրդական կենաց, ընչից և պատուոյ ապահովութեան պիտի յօր ճանչցած է, որ ըստ այնմ երկիրը բարդաւաճի և զարգանայ, սակայն ցաօք սրտի կը տեսնուի որ գաւառաց, ժամուանդ վերոյիշեալ գաւառաց ժողովուրդը քիւրդ և այլ լեռնցի ցեղերու աւաղակութեանց և յափշտակութեանց և սպանութեանցն ենթակայ եղած է: Ժողովուրդն այսպիսի կեղեքմանց ներքեւ անհնար է որ կարող ըլլայ աշխատիլ, աշխատիլ այնպէս՝ ինչպէս որ երկրին բարգաւաճումը կը պահանջէ:

«Երկրի մը յառաջադիմութեանը և հարստութեանը միջոց ժողովրդեան աշխատութիւնն է», ինչպէս որ բարեխնամ Կառավարութիւնդ ժուռնալճինելու հրահանգի մէջ նշանակած էր «ամեն յառաջադիմութեան հիմն եղող աշխատութիւնն ալ այն ատեն կարելի է, երբ աշխատողն իր աշխատութեանց արդասիրքը կտարեալ ապահովութեանը վայելելու վստահ ըլլայ. մարդս ընականաբար իր վիճակը բարեկարգելու և իր հայրենեաց բարօրութիւնը փնտռելու անընդհատ միտում ունի, մարդուս այս բնական միտումն այն ատեն կեղծանի, երբ տեսնէ որ իր աշխատութեանն իրմէ աւելի ուրիշներն օգուտ կը քաղեն»: Վասն որոյ երկրին յառաջադիմութեանը և հարստութեանն արգելք եղող այս բիւրդերուն և այլ լեռնցի ցեղերուն և տէրէպէյիներուն մասին ըլլալիք քննութիւնները դիւրացնելու հաճախ Պատրիարքարանս կը փութայ ծանուցանել թէ, արդէն Պատրիարքարանս մանրամասն ցուցակն ունի այդ ապստամբ անձանց զըլխաւորներուն և այլ պաշտօնէից ուսանց, և 20 տարի հետէ անոնց երեսէն ժողովրդեան կրած տառապանաց և չարչարանաց սոսկալի նկարագիրներովն իր գիւտնը լի է, որ ատեն բարեխնամ Կառավարութիւնդ բարեհաճի ուղել պատրաստ է տալու թէ անսուններն և թէ զործոց նկարագիրները:

Մինչ ցարդ Պատրիարքարանսն այս մասին մատուցած խնդրագիրներն ըստ մեծի մասին անգործադրելի ֆայցած են,

վասն զի ձեռք ատնւած սիջոցներն անբաւական եղած են: Բարեխնամ Կառավարութիւնդ անգամ մը Մշոյ սահմանակից քրդաց գլխաւորները ձերբակալելով՝ նոյն երկրէն հերացոյց, և ասով ժողովրդեան աշխատութեանը մեծ դիւրութիւն ընծայեց. սակայն այդ աքսորեալ գլխաւորներէն ռմանք սկսան վերադառնալ նոյն երկիրը, որով աւելի ևս կենդանացաւ և զըրգոնցաւ ասոնց բարբարոսութիւնը:

Այս դառն վիճակէն ազատելու հնարը բարեխնամ Կառավարութեանդ ձեռք ատնելիք ազդու միջոցներէն կախումն ունի միայն, երբ այդ քիւրդ և այլ լեռնցի վրանաբնակ թողունքը հնազանդութեան ներքեւ ատնւին որեւէ եղանակաւ, և իրենց իշխանութեան ներքեւ գտնուող հասարակ քիւրդերու և այլ ցեղերուն ձեռքէն ղէնքն՝ առնել և գիւղալեւակ ժողովրդոց կարգը դասելն, մաճ կամ հովւական ցուպ տրւի անոնց ձեռքը փոխանակ վիճուց: Եւ տարակոյս չը կայ թէ բարեխնամ Կառավարութեանդ իր այս բարեբար կամայը զործակից ըլլալու պատրաստ պիտի գտնէ նաև տարապեալ տեղացի բնիկ ժողովուրդը, մտնաւանդ մեր հաւատարիմ ազգը, ինչպէս որ ուրիշ տէրէպէյիներ կամ լեռնցի բռնաւորներ նաւաճելու միջոցին մերայնոց ծառայութիւնն ապացուցւած է:

Կամ մեր ազգայինները շարունակ հարստահարող քրդաց ձեռքէն ղէնքն ատնել, կամ՝ իրենց կեանքը, պատիւը և ինչքը հարստահարողներու դէմ՝ ինքզինքնին պաշտպանելու վիճակի մէջ դրելն: Յուսալի է թէ բարեխնամ Կառավարութիւնդ այնպիսի վերջին տնօրինութիւն մը ձեռք կառնու, կայսերական բանակին քաջութիւնը անմիջապէս քրդաց դէմ բանեցնելով և հարստահարեալ գաւառաց մէջ զօրաւոր ոստիկանութիւն մը հաստատելով, ինչպէս որ Րումէլիի մէջ սովորութիւն եղած է, մեր ազգայիններն ոստիկանութեան մեծ ու պզտիկ պաշտօնեաներուն մէջ ընդունելով. այսպիսի կենսական պարագայից մէջ միայն՝ հաւատարմութեան սկզբունքը ժողովրդեան աչաց տուչ և իրենց իրականանալ:

Ինչպէս հարազատ որդի մը իր վիշտերը կը յայտնէ իր հօրը և օգնութիւն ու դարման կը խնդրէ, նոյնպէս և մենք մեր ազգին ցաւերը մեր առատագութ Սուլթանին բարձր և հայրական Կառավարութեանը ներկայացնելով, անմիջական և ազդու դարմաններ կը խնդրեմք: Բնական է որ մեծ ցաւերը մեծ դարմաններու կը կարօտին:

Պատրիարք Կ. Պօլսոյ

ՄԿՐՏԻՉ ԱՐԲԵՊ. ԽՐԻՄԵՍՆ

(Կնիք)

Բ. Տ Ե Ղ Ե Կ Ա. Գ. Ի Ր

ԳԱՒԱՌԱԿԱՆ ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԵԱՆՅ

Ի Խորհրդարանական Յանձնախմբէ առ Ազգային Ժողովին

Հստ որոշման Ազգային Ժողովոյդ՝ որ ի չնիստ 10 սեպտեմբեր 1876, Խորհրդարանական Յանձնախումբս՝ զաւառական հարստահարութեանց նախորդ ընդհանուր Տեղեկագրի թըլականէն յետոյ պատահած հարստահարութիւնները տեղեկագրելու համար՝ փութաց ի քննին առնուլ Պատրիարքարանի թագրիւններն ու արձանագրութիւնքն, և՛ իւր պաշտօնն ըստ կարելոյն կատարելով՝ սոյն երկրորդ տեղեկագիրը բերել պատկառելի ժողովոյդ:

Ազգային Ժողովով պատրաստած յիշեալ ընդհանուր տեղեկագիրն, որ 1872 փետրուար 18-ի նիստին ատենագրութեանց մէջ արձանագրեալ է, առաջին անգամ նոյն տարւոյ ապրիլ 11 թւականին մատուցած է Բարձրապատիւ Եպարքոս Մանուկ Նէտիմ փաշային:

Ազգային Պատրիարքարանի արձանագրութիւնք յայտնի ցոյց կուտան թէ՛ այս տեղեկագիրն ակնկալեալ արդիւնքը չէ արտադրած: Թէև Պատրիարքարանն ասոր պատճէնը յաջորդ Եպարքոսներուն ալ մատուցած և Ազգին խնդիրը կրկնել չէ դադրած:

Հետեւալն՝ յիշեալ տեղեկագրին թւականէն ի վեր հարստահարական խնդրոց վրայ Պատրիարքարանի կողմանէ առ Բ. Դուռն մատուցեալ թագրիւններուն կարևոր մասին հաւաքածոյն է, թւականի կարգով, և անոնց մի քանիին ամբողջ պատճէններն ու միւսներուն ալ համառօտութիւնը կը պարունակէ, ի բաց թողլով համանման խնդրոց վրայ առ զաւառաց կուսակալ ըս ուղղեալ բաւական թւով դրութիւններն, որք քանի մը մասնաւորութիւններէ զատ մեծագոյն մասամբ զարձեալ ապարդիւն մնացած են: (Բերած են փաստեր):

Հոս կաւարտի Պատրիարքարանին թագրիւններուն հաւաքածոյն, որոյ մէջ չեն գաւառաց ոմանց մէջ վերջին օրերս տեղի ունեցած մի քանի հարստահարութիւնք. ընդ որս և Եօզղատ գաւառի Սարը Համզա գիւղի մէջ Բեռիֆ զօրաց կողմանէ ի գարծ դրւած բռնաբարութիւնք և անիրաւութիւնք, որք տեղական Ազգային Վարչութեան հասած պաշտօնական հեռագրով ստուգւած են: Պատրիարքարանն այս հեռագիրն հաղոր-

դած է Բ. Դրան և բերանացի բանակցութեան մտած ընդ այն:

Առանց այս վերջին անցից բացառութեան մտնելու, տեղեկագրեալ 38 իրողութիւններն՝ որք պաշտօնական բանակցութեան նիւթ եղած են՝ բաւական կը կարծեմք հաստատելու թէ գաւառացի մերազնէից հարստահարեալ վիճակն ինչ որ էր յառաջ, ընդհանրապէս նոյնն է և այսօր, հակառակ մեր ազգովին տրտնջանաց և զանգատանաց, որք անընդհատ մատուցւած են Կոյսերական Կառավարութեան, թէ և Բ. Դուռն իր ազդու հրամանադրերովն, որոց մէկ քանիին պատճենները վերը կերկին, հայրախնամ ջանք ցոյց տւած է:

Ազգային ժողովոյ 1872 ապրիլ 11-ի Տեղեկագրին պարունակած ցաւերն հետեւեալքն էին.

ա. Օրէնքն ու արդարութիւնն ի գործ դնելու մասին գաւառական պաշտօնէից ընդհանրապէս անփոյթ և անտարբեր մնալն և զանգատանաց ընտելեան Խմբիւմի դրութեամբ կատարելովն՝ անոնց աւելի ևս զեղծանիլը.

բ. Գաւառական Արքունի ժողովոց Թէշքիլաթի օրինօք կազմակերպութեամբն՝ անոր անգամակցութեան շահախնդիր անձանց առանձնաշնորհութիւն դարձած լինելը.

գ. Գաւառացի Հայուն՝ Խալամաց մոլեռանդ մասին նախատանաց և թշնամաց ենթակայ ըլլալը.

դ. Արքունի շինւածոց համար տարապարհակ վարիւն ու դրամական անիրաւ պահանջմանց ենթարկւիլը.

ե. Ճանապարհաց շինութեան պատրասակաւ կեղեքիլը.

զ. Պաշտպանեալ Միւլթէզիմներու ապօրէն պահանջմանց առջև՝ բերոց տասանորդը դրամով վճարելու բռնագատելը.

է. Նմանապէս՝ իւր ընտանեաց ուտեստին համար մշակած տան պարտիդի բերքէն տասանորդ տալ բռնագատելը.

ը. Բերքէն արւած տասանորդն ինքն անձամբ Միւլթէզիմի շտեմարանը փոխադրելու բռնաբարելը.

թ. Միւլթէզիմը ժամանակին չգալուն համար՝ բերքն անձրեկին տակ թողնով փտեցնելու և յետոյ փտած բերքին վերայ ողջ արժէքով տասանորդ տալու բռնագատելը.

ժ. Միւլթէզիմն ու սորա զործակալներն իւր տան մէջ հիւնընկալելով ձրիաբար կերակրելու պատսպարելու պարտաւորելը.

ժա. Եւ երբեմն ալ մինչև իսկ եղանց լուծելու վրայ՝ տասանորդ անւամբ՝ այսչափ ցորեն տալու բռնաբարելին, ինչպէս տեղի ունեցած է Կարնոյ նահանգին գաւառաց մէջ.

ժբ. Ասոնցմէ զատ՝ գաւառացի հայուն Շահնալըզ կամ

էօլէք-Հազըը ըսած արգելեալ տուրքեր վճարելու բռնադատելը.

ժգ. Զինուորական տուրքէն՝ մեռնողաց, գաղթողաց և փախստականաց մասը վճարելու հարկադրելը:

ժդ. Թէմէթթիւ և Էմլաքի տրոյ անարդար բաշխմամբ՝ Իսլամաց բեռը կրելը:

ժե. Տրոց վճարման պատրւակաւ՝ անհրաժեշտ կահ-կարասին ու գործիքը ծախելու, և մինչև իսկ ոստիկանաց ձեռք ձեռնելու ու բանտ մտնելու խստութեանց մատնելը:

ժդ. Կիներու և անչափահաս մանկանց մահմեդական կըրօնքն ընդունելու ստիպելը:

ժէ. Կիներու, հարսներու և նոյնիսկ աղջիկներու առեանդիւն ու բռնաբարելը:

ժը. Ոչ-մամեդականաց վկայութեան չբռնուելովն առեւանդութեանց, գողութեանց և սպանութեանց անյայտ ու անպատիժ մնալը:

ժթ. Զինեալ քրդերու, լեռնցի ցեղերու, չէքէզներու և բնիկ թուրք տէրէպէյներու այլև այլ հարստահարութեանց ներքև հայ ժողովրդեան տառապիւն ու չարհարելը:

Ահաւասիկ՝ այս չարեաց բարձմանն համար՝ յիշեալ տեղեկագրին մէջ ցոյց տրուած դարմաններն ալ.

ա. Պարտազանց գաւառական պաշտօնեայն սլաշտօնէ ձգել և ուրիշ գաւառի մէջ պաշտօնի չը կոչել.

բ. Իսթիլամի եղանակը բարեփոխել, Կառավարութեան և Աղդին կարգեալ լիազօր քննիչներ ղրկելով ի գաւառս.

(Այս խնդիրը ս. Պատրիարքի ձեռք վերջին անգամ բարձրապատիւ Եպարքոսին առաջարկեալ դարմաններսն մէջ ալ կրկնուած է):

գ. Գաւառական Աղգային Վարչութեանց և Առաջնորդաց առ Տեղական Կառավարութիւնս մատուցուած թաղրիրները լրջօրէն նկատողութեան առնուլ և արդարութիւնն անմիջապէս ի գործ դնել.

դ. Գաւառաց Մէճլիսի-Իտարէ, Մէճլիսի-Տաափի, Թէմեիդի-Հուգուզ և Մէճլիսի-Ճինայէթ անուն վարչական և դատական ժողովներուն հայազգի անդամոց ընտրելիներն՝ Աղգ. Գաւառական Վարչութեանց ձեռք պատրաստել տալ.

ե. Բ. դրան հրամանագրերն իւրաքանչիւր Կուռակալութեան պաշտօնական լրագրաց մէջ հրատարակել.

զ. Տիւթուրն ամեն ազգաց լեզւի վերածել և ժողովըրդաց մէջ տարածել.

է. Կրօնափոխութեան գիմոզնմբու վերաբերեալ օրինաց

մէջ որոշ արտադրութիւններ դնել, և կրօնափոխներն իրենց համոզումն յայտարարելու գործին մէջ ճշդումէ ազատ պահել.

(Ս. Պատրիարքի ձեռօք վերջին անգամ բարձր Եպարքոսին առաջարկեալ դարձաններուն մէջ ալ այս խնդիրը կրկնուած է, 21 տարին չը լրացուցած կրօնափոխութեան դիմողին՝ դաւանութիւնն ու խօսքը չը բռնելու պայմանաւ):

Ը. Կրօնափոխ արանց համար՝ իրենց կնոջ և զաւակաց օրապահիկ (նաֆազա) վճարելու օրէնք մը սահմանել.

Թ. Արքունի ամեն տեսակ տուրքերն արդարութեամբ բաշխել և օրինաւորապէս հաւաքել.

Ժ. Անվճար Պապայէները շնորհել.

Ժա. Հողագործութեան զարգացման համար՝ հողագործաց ամեն կարևոր ապահովութիւնները տալ.

(Ս. Պատրիարք Հայրը՝ վերջին անգամ առ Բարձր Եպարքոսն առաջարկած դարձաններուն մէջ՝ այս խնդիրն ալ կրկնուած է, մասնաւորաբար բացատրելով՝ հողագործաց իրենց մշակած հողին տէր ճանչելու պէտքին կարևորութիւնը):

Ժբ. Հարստահարիչ քրդաց և աւաւարաց գլխաւորներն ու թիւրք տէրէպէյիներն իրենց որջացած տեղերէն հանել ու պատժել, և բոլոր լեռնցի վրսնալնակ յեղերն ի հնազանդութիւն բերելուր գիւղաքնակ ընել և տսոնց՝ ինչպէս նաև չէրքէզներու՝ ձեռքէն սուրն ու հրացանն առնելով, մաճ և հովւական յուսկ կրելու վարժեցնել զանոնք. տեղական ոստիկանութեան յաշտամանց մէջ անխաբի հայեր ալ դնել, և կամ հայ ժողովրդեան արտօնութիւն տալ իրենց կեանքն ու պատիւը ղէնքով պաշտպանելու:

(Տէրէպէյիներու պատժելն ու հեռացուցելն ալ ս. Պատրիարքին առ Բարձր Եպարքոսն ներքայացուցած առաջարկութեանց մէջ կրկնուած է):

Ժգ. Ոչ-մահմեդականաց վկայութեան բռնելն և անոնց կալւածական, առևտրական և ոճրագործական որ և է խնդիրներուն միայն նիդամի ատեաններու առջև դատուիլը:

(Ոչ-մահմեդականաց վկայութեան խնդիրն ալ՝ վերջին անգամ ս. Պատրիարքին առ Բարձր Եպարքոսն առաջարկած դարձաններուն մէջ կրկնուած է):

Յիշեալ տեղեկադրին մատուցւած թւականէն ի վեր (11 ապրիլ 1872) հարստահարութեանց համար Պատրիարքարանէն դուրս թաղրիրներն ալ, ինչպէս կերեին Ձեր յանձնախմբին պատրաստած հաւաքածոյէն, կամ պաթթալ ըլլալով կամ անպատասխանի թողնելով և կամ Իսթիլամի ապարդիւն դրութեամբ յետաձգւելով, և առ առաւելն՝ կենդրոնական Կառա-

վարութենէն տու գաւառականս ուղղեալ հրամանագրաց անգործադրելի մնալովը՝ մոռացութեան մէջ թաղւած են, առանց դարման տանելու ժողովրդեան կրած տառապանաց:

Իրանց այս աղէտալի և անհանդուրժելի վիճակին տմենաժեծ պատճառ՝ հաւասարութեան զարգացարին Իսլամ ժողովրդեան մէջ չընդհանրանալն և արդարութեան անխտիր չգործադրւելն է: Գաւառական Վարչութեանց գլխաւորաբար ստորագաս պաշտօնէութեան մէջ մուտ գրած ապիկար անձինք՝ տգիտութեամբ, նախապաշարմամբ և ղօշաքաղութեամբ՝ ոչ հաւասարութեան սկզբունքն ընդհանրացնելու գործին մէջ յաջողակութիւն ցոյց տւած են, և ոչ ալ արդարութիւնն անխտիր մատակարարելու տրամադրութիւն, մինչդեռ իրենց նւիրական պարտականութիւնքն էին ասոնք, ինչպէս մեր նորաստեղծ Սուլթանն ալ իւր Խաթիբը Շէրիֆին մէջ բացայայտ կերպիւ կըսէ.

«Մեր միակ փափաքն ու մտածմունքն է ազատութեան, անդորրութեան և արդարութեան բարիքն առանց բացառութեան մեր ամեն հպատակաց վայելի տալ. քաջայայտ և աներկմիտ եմք որ Մեր Տէրութեան նախարարներն և ամէն պաշտօնատարներն ալ մեր օրինակին հետեւելով՝ այս բազմաւոյ կատարմանը ոյտի դործակցին»:

Չեք յանձնախումբը կը կարծէ թէ՛ յիշեալ խաթիբին հրատարակութեան վրայ, ճիշտ այն միջոցին, որ Կայսերական Կառավարութիւնն երկրին քրիստոնեայ ժողովրդոց վիճակին բարւոքումն իւր բոլոր հոգածութեան նիւթ ըրած է, ժամանակ է որ 1872-ի ընդհանուր Տեղեկագրի պատրաստութենէն ետե՛ հարստահարութեանց համար զբւած թագրիւններուն սոյն հաւաքածոյ ցուցակը՝ յիշեալ Տեղեկագրի պատճէնին կցելով՝ Ազգային Կեդրոնական Վարչութեան ձեռօք մատուցելու բարեխնամ Կառավարութեան, և խնդրել որ վերոյիշեալ հարստահարութեանց իսպառ բարձմանն համար շնորհ ընէ նկատողութեան առնուլ գտնոնք և պարունակած խնդիրներն ի գործ դնել:

Տարակոյս չկայ որ Ազգային Պատրիարքարանն զԲ. Դուռն այսչափ զբաղեցուցած չափով ըլլար իւր գանգատանաց և բողոքոյ թագրիւններով.

I. Եթէ ներկայ չարեաց իբր դարման՝ Բ. Դրան երբեմն ձեռնարկած բարեկարգութիւններն աւելի ընդարձակ հիմանց վրայ զբւած ըլլային, և՛ գաւառական պաշտօնէից մէջ անձեռնհաս և մոլեռանդ անձինք չգտնուելով՝ անընդհատ գործադրւէին, նա մանաւանդ՝ եթէ արդէն բամբասեալ բնիկները պաշտօնէութեան կոչւած չըլլային, որք հայ ժողովուրդը ճնշեալ, տրկար և աղքատ պահելու բնական հակամիտութեամբ՝ միակերպ աղէտ են թէ երկրի և թէ մեր ժողովրդին և եթէ երկրին բա՛

րիբը խորհող և կրօնական ու բաղաբական անխտրութիւնն իրապէս ի գործ դնող ձեռնհաս պաշտօնեայք մը՝ առանց յանցանաց պաշտօնանկութեան ենթարկելէ ազատ մնալով՝ իրենց ձեռք առած բարեկարգական միջոցները շարունակել կարենային:

(Այս կարգի պաշտօնէից ազատամտութիւնը միշտ իւր արդիւնքը տւած է, և Պատրիարքարանի արձանագրութեանց մէջ ալ իւր հետքերն ունի: Ս. Պատրիարքի ժամանակոր զրութիւնը իսկ բաւական եղած են՝ արդարակոյրով պաշտօնէից՝ կար՛որ խնդիրներ կարգադրելու և զրկելոյն հատուցումն ընելու:)

2. Եթէ Վիլայէթի, Մութասարրըֆութեան և Գայմաղամութեան Արքունի ժողովոց կազմութիւնն աւելի էողովրդեան վստահութիւնը գրաւելու եղանակաւ կտտարւէր, անոնց անդամոց բաշխումը՝ տեղւոյն բնակիչ գանազան Ազգաց թուոյն համեմատութեամբ ըլլար, և հայ անդամոց ընտրութիւնը մեր Ազգային դաւառական վարչութիւններէն ծագումն առնուր:

(Բարեբաղդ եմք ըսելու թէ՝ Վեհափառ Կայսեր իրատէրով մեր Ազգի շնորհալ Սահմանադրութեան համաձայն՝ մեր Ազգային գաւառական Վարչութիւնք՝ մինչև իսկ գիւղականք՝ սահմանադրապէս կազմակերպեալ և ժողովրդական քէտակութեամբ ընտրեալ ըլլալով, ժողովրդին համարատու են և ըստ այնմ անոր վստահութիւնը լիովին կը վայելեն):

3. Եթէ մեր գաւառական Ազգային Վարչութեանց և Առաջնորդաց առ Տեղական Կառավարութիւնս ուղղած խնդիրներն ու պիտոյութիւններն աւելի լրջօրէն նկատողութեան առնւէին տեղական ատեաններէն, որով ի Պօլիս գանգատներ տեղալու և Պատրիարքարանին ու Բ. Դրան այսչափ տագնապ պատճառելու տեղի չմնար:

4. Եթէ քրիստոնէից վկայութեան կնճռոտ խնդրոյն լուծման գոնէ ամենադիւրին եղանակն ի գործ դրւէր, այն է՝ ոչմահատականաց բոլոր առեւտրական, ոճրագործական և կալւածական դատերն ամեն պարագայի մէջ Նիզամի ատեաններուն առջև դատւէին:

5. Եթէ՝ տեղ տեղ բռնացող քրդերն ու Տէրէպէյի թուրքերն իրենց որջերէն հեռացուցելով պատժէին, և ապառաժ վրանաբնակները հպատակ գիւղաբնակներ դառնային. եթէ հայ հողագործին յափշտակեալ արտ, կալւած և այլ սեփականութիւնքն իրեն վերադարձւէին, և զանի՝ կեղեքող ձեռքերէ, որոց ծանրութենէ և անիրաւ պահանջումներէ գերծ պահելով,

հող ունենալու իրաւունք, աշխատելու զիւրութիւն և ճակատին քրտանց արգիւնքը վայելելու ազատութիւն տրւէր իրեն:

Այսուամենայնիւ մեծայոյս հմբ մեր նորապսակ Օգոստոսփառ Սուրբանին հայրական ջանից և հոգածութեանց վրայ, քանզի այս Վեհապետն երկրին աղէտը ժատնանիշ ցոյց կուտայ իւր բարենշան Խաթթին մէջ, ըսելով թէ՝

«Ներկայ տալնալայից վիճակն օրինաց թերի գործադրութենէն և վարչական գործոց մէջ իւրաքանչիւրին անձնական հաճոյից իբրեւ կանոն բռնելէն յառաջ եկած է...

Նւ թէ՝ «Այսուհետեւ կարող եւ ձեռնհաս անձինք պաշտօնի պիտի գործածին...

Թէ՝ «Ասն աստիճանի պաշտօնատարք պատասխանատու պիտի լինին...

Եւ դարձեալ թէ՝ «Մեր դատարանաց տակաւին անհատական իրաւունքներն ապահովելու կարող չըլլա՞ն՝ օրինաց կանոնաւորապէս եւ յարատեւութեամբ չգործադրելէն յառաջ եկած է...

Բարձրէն եկած այս խօսքերուն յուսադիր՝ քաղցր է մեղ հաւատալ թէ՝ ապագային մէջ այլեւ հարստահարութեանց այսպիսի հաւաքածոյներ պատրաստելու նիւթ չպիտի ունենանք: Վասն զի Բ. Դուռն ի հարկէ մեր վերոյիշեալ խնդիրներն այս անգամ աւելի ուշով նկատողութեան պիտի առնու և փութով գործադրէ: Անոնց գործադրութիւնն՝ ամեն տեսած զեղծմանց և հարստահարութեանց աղբիւրը ցամքեցնելով՝ դաւառացի հայուն ինչքը, պատիւն ու կեանքը պիտի ազատէ, ինչպէս և երկիրն յառաջդիմութեան շաւղին մէջ դնելով՝ օր քան զօր պիտի բարգաւաճէ զայն և հարստացնէ:

Հայ Ազգն՝ իւր տառապանաց բարձմանն ակնկալու՝ վերատողեալ միջոցները կառաջարկէ, վասն զի արդարութեան և հաւասարութեան շնորհն անխափր վայելելու իրաւունք ունի՝ թէ մահմետական և թէ ոչ-մահմետական միւս հպատակ Ազգաց չափ: Վասն զի հայն իւր դարաւոր հաւատարմութեան անփխտելի փորձեր տւած է անգաղար Կայսերական Կառավարութեան. հայն՝ իրեն զձեւած սահմանին մէջ՝ ամէն կարելի ծառայութիւն ինքնայորդոր մատուցած է միշտ Օսմանեան Պետութեան և վերջապէս հայն՝ իւր ապագայն այս երկրին ապագային մէջ կը վիստէ, և իւր ամէն խնդրածն իրեն և երկրին միապէս օգտակարն է, համաձայն իւր օգոստոսփառ Վեհապետին բարի գիտաւորութեանց:

Ձեր Յանձնախումբն, իւր պաշտօնն այսպէս կատարելով, կաղաչէ որ եթէ երբէք իւր տեղադրին մէջ թերութիւնք նշմարէ Ազգային Ժողովը՝ ներողամիտ լինի, ի նկատի ունենալով

որ սոյն գործին համար սահմանեալ ութօրեայ կարճ միջոցը ժամանակ չէր թողուր նիւթապէս ասկից աւելին պատրաստելու:

17 սեպտ. 1876,

Ստորագրութիւնք.

Մատթէոս եպիսկոպոս Իզմիրեան (ատենապետ), Կարապետ եպիսկոպոս Սերոբեան, Յովհաննէս քահանայ Մկրեան (պտրիքրկն փոխանորդ), Յ. Մէրեմ-Գիւլի (ատենադպիր), Տ. Փշտիմալճեան, Կ. Ս. Իւթիճեան (խմբագիր «Մասիս» լրագրոյ), Ս. Պ. Պ. Փափազեանց (Տնդեկաբեր):

Համեմատէք այդ երկու «տեղեկագիրները» և կը տեսնէք որ երկրորդը առաջինի շեշտած կրկնողութիւնն է. նոր հարստահարութեանց փաստեր չեն բերուած: Առաջին տեղեկագրի մէջ շոշափուում են հարկահանութեան վատթար սխտեմը, ֆէօդալիզմի (բէյ և տղա) կեղեքումները, ժողովրդի «վախը» գանձատուելու թիւրք տեղական բիւրօկրատներէց, նեղութիւն աւաղակային խմբերից: Ընդհանուր վատթար բեժիմի արդիւնք է և կրօնափոխութեան, ինչպէս և քրիստոնէից վկաների նկատմամբ աչառու վերաբերմունքը: Այդ տեղեկագրերով հաստատուում է միայն այն որ Անատոլիայում ընդհանուր վերանորոգութիւններ են հարկաւոր, ժողովուրդը բիւրօկրատներէ, բէյերի, աղաների և ճրմիկ մեծատանց» շահագործութիւններից ապատելու համար: Այդ պահանջների դէմ չէին կարող լինել և տաճիկ գիտակից ժողովուրդը. քիւրդ ֆէօդալների դէմ այն ժամանակ կուռում էր և ինքը թիւրք կառավարութիւնը, որին ձեռնտու չէր այդ կիսանկախ ֆէօդալների գոյութիւնը: Եւ այդ ընդհանուր վերանորոգութեան հողի վրայ դրած բողոքները երբէք չէին յարուցանիլ թուրք ժողովրդի կողմից կասկածներ հայ շովինիստական-անջատական ձգտումների մասին: Պետական ընդհանուր բեժիմի դէմ առանց ազգային խտրութիւնների բողոքը կը մօտեցնէր գիտակից բոլոր օսմանցիներին և 50 տարուայ ընթացքում կուլտուրական—տնտեսական ընդհանուր բարգաւաճման հետ կը զօրեղանար և փտած բեժիմի դէմ ընդհանուր յեղափոխական շարժումը: Բայց հայ ջոջերը չափազանց մեծ կարծիք ունէին հայի գերազանց կուլտուրական—մտաւոր յատկութիւնների վրայ և վերեւից ներքեւ էին նայում դէպի թուրք գիտակից տարրը: Երբ վրայ հասան սլաւոնական շարժումները, Բալկանեան սլաւոնների այդ ապսամբութիւնը մեր տհաս և աւրդէտ ազգապետների զխում յարուցեց անհիմն անալոգիաներ, բորբորուցեցան և ազգային բոմանտիզմիներն շնչած երազները, որոնք

միանգամայն փոփոխեցին հայերի և թիւրքերի փոխադարձ յարաբերութիւնները. արանքում մի ճեղք բաց արին, որ կամաց կամաց «յեղափոխականների» ամբարտաւան և յիմար գործողութիւնների շնորհիւ օրէցօր լայնացաւ և դառաւ մի վիհ հայ ժողովրդի համար:

Ռուս-թիւրքական պատերազմից յետոյ մեր փարաջաւոր քաղաքագէտները և պուլըիցիստները վստահանալով նախ ուսի, ապա անգլիացու և յետոյ բոլոր մեծ պետութիւնների խոստումներին, սկսեցին իրանց պահել այնպէս իբր «ազատ Հայաստանի» ներկայացուցիչներ: Վայրագ և խորամանկ զազանին սկսում էին գրգռել, բնաւ չմտածելով զարհուրելի հետեանքների մասին, ոչինչ չնախատեսելով ինքնապաշտպանական միջոցների մասին: Բոլոր յոյսը դրուած էր Աստծոյ և մեծ պետութիւնների միջամտութեան վրայ: Դեռ երբէք համաշխարային պատմութեան մէջ թեթեամտութեան և անգիտակցութեան նման օրինակ չէր եղել. կոխ էր յայտարարուած մի ժողովրդի անունից, որ բխարար էր բանից, որ ոչ մի պատրաստութիւն չունէր ոչ միայն կուռելու, այլ նոյն իսկ ինքն իրան պաշտպանելու. «խմաստուն» հովիւները ոչխարներին դուրս էին բերում գայլերի դիմաց և սպասում որ մի հրաշքով ոչխարների հօտերը կը յաղթեն գայլերի վոհմակներին... Ծայրայեղ միամտութիւնը դատարկ ձեռներով հանդէս էր գալիս պայքարելու մաքիավելական նրբամիտ քաղաքականութեան մէջ վարժուած մի բռնապետի դէմ, որ հրաշալի ու ուսումնասիրել էր մեծ պետութիւնների թոյլ կողմերը, որ իբր ձեռքի տակ ունէր պատերազմասէր հզօր բանակ, բլրօկրատիական հլու-հնազանդ մի ընդարձակ ցանց և, բացի այդ, իր ձեռքում պահած ունէր խալիֆայութիւնը, իր ուղղահաւատների կրօնական — ազգային ինստիտուտները հարկաւոր դէպքում բորբոքելու և խեղճից հանելու միջոցը: Թողած բոլոր միւս առաւելութիւնները մի կողմ, վերցրէք հէնց վերջին միջոցը: Հայ մեծամեծները և ազգասէրները երբէք չուզեցան ի նկատի ունենալ այն պարզ ճշմարտութիւնը որ իրանց պահանջների մէջ քաղաքական անջատման, ազգային ինքնօրինութեան իւրաքանչիւր շեշտ պէտք է խփէր օսմանցու ազգային ինքնասիրութեան, յարուցանէր նրա մէջ շովինիստական կասկածամտութիւնը և ատելութիւնը: Եւ մի ազդ, որի քաղաքականութիւնը վարում են պատահական մարդիկ, հասարակական — քաղաքական հմտութիւններից զուրկ փարաջաւորներ և խակմիտ պատանիներ, չէր կարող ազդեանների մէջ չընկնել: Բայց դժբաղդութիւնը այն է որ ազգի անունից խօսողները ինքնավստահութիւն ունեն ժողովրդին նոյն ոճիւրների ճանապարհով քաշկուտել և այժմ: Կարդացէք Նգիպտոսի,

Ամերիկայի, Բուլղարիայի «յեղափոխական» կոչուած թերթերի նէյնիմները, յոխորտանքով լին տղայամտութիւնները, հերոս Մուրադի վրայ զնուող առասպելական յոյսերը և... մի համայն-
ձայնուէք ինձ հետ թէ ազգային հաշիշից թունաւորուածներին բուժելու համար տիտանական ջանքեր են հարկաւոր...

Անկախ

ՔՆՆԱԳԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏՆՈՒՍՈՒԹԻՒՆ

Ս. Զաւարեան՝ Նախագիծ ևւ ծրագիր գիւղացի ազգաբնակութեան տնտեսական վիճակի ուսումնասիրութիւն, 1906, Թիֆլիս:

Տասնեակ տարիներով մեր «ըմբոսաների» գլխում այն մեկն էր ցցուել թէ՛ բոլոր ժողովուրդները զարգանում են մի շարունակ և ոչ մի կարիք չկայ ուսումնասիրել տեղնուտեղը մի ժողովրդի առանձնայատուկ պայմանները. բաւական է, առանց աչքի առաջ ունենալու քաղաքական-աշխարհագրական-ազգաբնակչական-մտեսական-կուլտուրական հանգամանքները, փոխ վերցնել թեթեւութիւն և անհիմն անալոգիաներով ուրիշներին՝ ըմբոստացման շարուն դառած եղանակը և «յեղափոխականի» անունը ձախտին կակարդի նման կպցրած ամենաֆլուսակար և տմարդի էքսպերիմենտներ կատարել հարազատ ժողովրդի գլխին: Այժմ ազգային դաշտութեան ւէջ փորձուած մի քանի «լրջացած» գիւղական սկսել են այն բանից, ինչից պէտք էր սկսէին տասնե հինգ տարի առաջ... Լաւ է ուշ քան՝ երբէք! Դէթ զբանով պէտք է մխիթարուել... Այդ նոր շաւղով է գնում, ըստ երևոյթին, և պ. Ս. Զաւարեանը. «զգալով մեր տգիտութիւնը հողագործ գիւղացուն վերաբերեալ հարցերի նկատմամբ, ղուրկ լինելով մեր տնտեսական կեանքին վերաբերեալ ամենատարրական տեղեկութիւններին» նա հաստատում է որ այժմ «մեր կեանքի հասունացած պահանջ է» որ ճիշտ փաստերի վրայ հիմնուեն մեր կեանքի մէջ մտցուելիք փոփոխութիւնները», ուստի այդ պահանջին գէթ փոքրիկ չափով բաւարարութիւն տալու համար է որ ձեռնարկել է այդ «ծրագրի» հրատարակութեան:

Դալով ուսումնասիրութեան ձևին (մեթոդին) պարոնը

դժուարանում է կանգ առնել մինչև օրս գոյութիւն ունեցող և գործադրուող ձևերից որևէ մէկի վրայ և առաջարկում է մի ինքնուրոյն ձև. ուսումնասիրութիւնը կատարել ոչ մասսայական, որ դժուար է, այլ ընտրովի տիպիկ միջակ դիւղերի և այդ գիւղերում դտնուած տիպիկ մի քանի ընտանիքների վերաբերմամբ»:

Դժուար չէ առաջուց գուշակել որ այդ եղանակով շատ չնչին արժէք ունեցող եղրակացութիւնների կարելի է դալ: Զգիտենք ովքեր են լինելու այն «եռանդուն և աշխատասէր» պարոնները, որոնք «մասնադէտների հմտութիւնը պէտք է փոխարինեն (?)» բարի ցանկութիւններով» և այդկերպ տեղեկութիւններ ժողովն: Այդ «եռանդուն և աշխատասէր» պարոններից շատերը գաւառներում արգարե մտցրին յայտնի բեժիմ, սակայն նրանց կարողութիւնը ոչ «ինքնապաշտպանական», այլ զուտ կուլտուրական-ուսումնասիրական ասպարէզում աւելի քան կասկածելի է... Մեր երևելի «հայ-ժողովրդական (?)» «կազմակերպութեան» «ակնաւոր» ուժերն անգամ սկը սպիտակից ջոկելու ոչ տրամադրութիւն և ոչ րարեխղճութիւն ունեն, էլ ուր մնաց դրանց «սովորականների» կարողութեանը: Ծրագրի XXV, և 2 հարցերին, օրինակի համար, տալիս են պատասխաններ այն բաղմաթիւ անհերքելի փաստերը, որոնք արձագանք են գտնում ոչ դաշնակցական մամուլի մէջ: Իսկ այդ փաստերի լուսարանութիւնը տրուած որոշ «տղերանց» կողմից նոյնն է ինչ որ պայմագա Գեղի և սև հարիւրակային պարագլուխների արդարացումները... Քանի դրօշ արժէք ունեն այդպիսի միակողմանի-թայֆայական ուղեղների հաւաքած «փաստերը»: Ժողովուրդն ստըրկացնելուց, կեղեքելուց և անբարոյականացնելուց յետոյ դանաղան իմաստակներ գալու են «տեղեկութիւններ» ժողովն... Երանի՛ նրանց, որոնք հաւատ կընծայեն այդպիսի «ուսումնասիրողներին»:

Na

Ю. Веселовский, Очерки Армянской литературы и жизни, 1906, ц. 70 к.

Իւր. Վեսելովսկու ջանքերով ուսւ ընթերցող հասարակութիւնը ծանօթանում է հայոց գրականութեան հետ և թողնում այն նախապաշարմունքներից շատերը, որոնք շահագործում են ուսւ օտարակերների և շովինիստների կողմից: Վեսելովսկու գրուածքները ցոյց են տալիս թէ ռոչափով և ինչ կերպ էրմընում օտարը մեր մտաւոր—գեղարուեստական արտացոլում:

ները: Հաժակընդհանրապէս և միշտ շփուելով միայն Մոսկուայի որոշ հայկական—գրական շրջաններին Վեսելովսկին հայ իրականութիւնը և գրականութիւնը բաւական ժակերեցոյթային դիլլետանտ կերպով է ծանօթ: Նրա դատողութիւնների մէջ ինքնուրոյն քննադատական անալիզ, խոր ուսումնասիրութիւն զուր չէր գտնիլ, այլ մեծ մասամբ չափազանցացրած գովասանքներ և շարքօն ընդհանրացումներ: Զգուժ էր որ հեղինակին պակասում է անմիջական ծանօթութիւնը մեր կեանքի և նրա հասարակական հոսանքների հետ: Չնայած այդ պակասութեան ողու ընթերցողների համար գնահատելի արժէք ունեն նրա գրութեանքները:

М.

Армянская Муза, сборникъ изданный под ред. Ю. Веселовскаго и проф. Г. А. Халатянцъ, со вступительною статью, Москва—1907, ц. 1 руб.

Մեր բանաստեղծներին վրայ երկրորդ անգամ է աջողում ներկայացուել ողու ընթերցող հասարակութեան առանձին գրքոյկով: Նախաձեռնութիւնը այդ կողմից պատկանում է պ. Դերվիշին, որ մի բանի տարի առաջ հրատարակեց Մոսկուայում համարեա նոյն ողու գրողների թարգմանութեամբ մեր նորագոյն բանաստեղծներին: Ներկայ հրատարակութեան մէջ պ. պ. Վեսելովսկին և խալաթեանցը արած են տարբեր ընտրութիւններ ոչ միայն նորագոյն, այլ և համեմատաբար աւելի հին «երգիչների» գրութեանքներից: Երկու հրատարակութիւնները այդպիսով իրար լրացնում են:

Ներկայ շրջի հրատարակուած գրքի մէջ գետեղուած են Թ. Պատկանեանի, Ս. Շահ-Աղիդի, Գ. Դողոսեանի, Յով. Յովհաննիսեանի, Լևոն Մանուէլեանի, Ալ. Ծատուրեանի, Լեւոնցի, Յով. Թումանեանի, Աւ. Իսահակեանի, Ղ. Ալիշանի, Ս. Հէքիմեանի, Սորէն Նար-Բէյի, Մ. Պէշիկթաշեանի, Պետրոս Դուրեանի, Արշակ Չորանեանի, Մալեղեանի և Սիրիլի ողանաւորները: Որքան բանաստեղծներ, բայց միաժամանակ ինչ քիչ իսկապէս ժուղայի վառ շնորհ պարունակող անկեղծ գոհարներ: Մեր բանաստեղծների մեծագոյն մասի ողբալի—տոգոյն զգացմունքները և ստրկական անինքնուրոյն մտքերն աչքի են դառնում երբ այդ «լուսագոյն գոհարները» ի մի ամփոփուած ենք տեսնում: Հայրենասիրութիւնը, ազգային բովանտիզմը բուրում է հայ բանաստեղծի իւրաքանչիւր խօսքից, դա է այն ինքնուրոյն աղանցը, որի շուրջ պատում է նրա հոգեկան աշխարհը: Մի քանի իսկական մարգարիտների բացառութեամբ

Ֆնացածը միջակ բաներ են թէ ընդհանուր մարդկային և թէ զուտ հայկական ստեղծագործութեան տեսակէտից... Պ. պ. Վե- սելովսկուն և Պալաթեանը «հայկական մուղայի» դանձարանի մէջ մօտ 100 մարդարիտներ են գտել... Բաւական ներողամիտ և սիրալիր ընտրողութիւն, բայց և այնպէս թող տեսնեն ուրիշները թէ իսկապէս մենք ինչ ենք և ոչ չափազանցնեն մեր չունեցած առաքինութիւնները, ոչ էլ «միայն վաշխառութեան» ընդունակ և «նենգ» ազգ համարեն հային: Թարգմանութիւնները աջող են և տեղտեղ նոյնիսկ գեղեցկացրած բնագրների անձաշակութիւն- ները...

R.

Լրացուցիչ կարծիք

Թոյլ տուէք պատուական ամսագրիդ միջոցով լրացնել մի կարծիք, որը ես ցանկացել էի արտայայտել «Մուրճի» հոկ- տեմբերի ամսի համարի մէջ: Իմ այդ կարծիքս էր մի պտրդ քննադատութիւն մի դասագրքի, առանց վիրաւորիչ և վրդա- վեցուցիչ խօսքերի, բայց չգիտեմ ինչից դրդուած խմբագրութիւնդ անողոր կերպով խուզել է նրա ամբողջ մի երեսը, որով կտրուել է այն կապը, որը գոյութիւն ունէր առաջին և երկրորդ երեսների մէջ: Նա ընաւ ժողովս անգամ չեմ անցկացրել ասել իմ քննադատութեանս մէջ. «բայց այնքան էլ ուշադրութեամբ չի օգտուել», այլ դրա փոխարէնը ասել եմ հետեւեալը և ինդրում եմ առանց փոփոխութեան հրատարակել իմ կարծիքս լրացնելու համար:*)

Պարոն Լ. Բաբայեանը իր յառաջարանում յիշել է. թէ ինքը օգտուել է այս դասագիրքը կազմելու ժամանակ ուսսական և դերմանական դասագրքերից, թէպէտ դրական է թիրքան պա- հանջում էր յիշել ոչ միայն հեղինակների անունները, այլ և հատորների երեսները, եթէ նա բազմահատոր աշխատութիւն- ներից էր օգտուած, առնելով նրանից վերցրած խօսքերը չա- կերտների մէջ, որպէսզի ընթերցողը կարողանար գտնաւար կազմել թէ ո՞րն է պ. Բաբայեանի ժողով արտայայտութիւնը և ո՞րը այլ հեղինակներից օգտուած: Իսկ եթէ նա վերցրել է

*) Փաստեր պակասում էին ձեր մեղադրանքների մէջ: Այն ինչ այժմ էք բերում այն ժամանակ ձեր գրութեան չկար: Գրական զոգութեան մէջ մեղադրում էիք, իսկ փաստեր այն ժամանակ չէիք բերել: Պարզ է որ այդ ծանր մեղադրանքը խմբագրութիւնս ստիպուած էր հանել և ձեւակերպել այն խօսքերով որ դուք զգոհութեամբ առաջ էք բերում: Ժ. Խոմը.

մի օտար հեղինակի աշխատութիւն, լինի դա ուսերէն թէ գերմաներէն, թարգմանել նրան հայերէն, աւելի կամ սակաւ կրճատումներով, մեր կարծիքով դա «կազմել» չի նշանակի, այլ՝ դրականական գոյութիւն:

Այնուամենայնիւ, եթէ ընդունակութիւն ունենար արտագրելուց յետոյ գիտակցօրէն և դասաւորել, առանց սխալների, էլի մի բան էր, որովհետեւ մի գերմանական աշխարհագրադէտ չկարծեմ (գոնէ Ֆրանսերէնի մէջ չեմ տեսել), որ զետեղած լինի իր դասագրքի առաջին երեսում Աւստրալիան, փոխանակ Ասիայի, որը իսկոյն և եթ աչքի է ընկնում աշխարհագրութիւնից փոքր ինչ գաղափար ունեցողների համար:

Փաստերով խօսենք. պարոն Լ. Բաբայեանը պարտաւոր էր գեսեղել ամենից առաջ Ասիան.

1-ին որովհետեւ երեխան, որի համար պատրաստուած էր դասագիրքը, Ասիայում է ապրում.

2-րդ Ասիան որրան է մարդկութեան, կենդանական և բուսական թագաւորութեան.

3-րդ Ասիան ամենամեծ ցամաքն է, որի հետ ուսուցիչը այլ աշխարհներ անցնելու ժամանակ միշտ համեմատութիւն է կազմում.

4-րդ Ասիան սովորելուց յետոյ նա կանցնէր Աւստրալիային, որին նա միանում է առանց որ և իցէ բնական սահմանի, Զոնդեան արշալիւի միջոցով, որը նրա մի մասը լինելով նախկին ժամանակներում, ներկայումս ևս միացած է նորա հետ ստորերկրեայ շէնքով, և կազմում է Աւստրալիայի մէջ այնպիսի մի փոխանցման ճանապարհ, ինչպէս յունական արշալիւը Ասիայի և Եւրոպայի մէջ: Թէպէտ և կարելի է զետեղել նախ Աւստրալիան, յետոյ Եւրոպան կամ Ամերիկան, դա ճաշակի խնդիր է, իսկ մեր խօսքը գիտութեան ժառին է, որի մէջ ամենայն ինչ շտկապուած պիտի լինի միմիանց հետ, առանց որի աշխարհագրութիւնը մնում է մեռած տառ և աւանդումը անօգուտ:

Ահաւասիկ իմ ասածներս անցեալ անգամ. այժմ պատիւ ունեմ ձեր ամսագրի միջոցով յայտնելու, որ իմ քննադատութեանս և ոչ մի խօսքը պ. Բաբայեանցին չէ վերաբերում, որովհետեւ նրա դասագրքի մէջ արտայայտուած և ինձանից քննադատուած կարծիքներից և ոչ մէկը նրան չէ պատկանում, այլ ուրս աշխարհագրագէտ «В. ЯНЧИНС»-ին, այն էլ խեղաթիւրուած նրա արտայայտած կարծիքները, տղայական պարզամտութեամբ որոշ նախադասութիւններ դուրս ձգուած, տեղերը փոխած, ազգաբնակութեան թիւը արտայայտող թուա-

նշանները փոքր ինչ աւելացրած կամ պակասեցրած, այն էլ շատ ազեղ, անիմաստ կերպով, արտագրութեան հետքերը կորցնելու համար, որոնք շատ անգամ առիթ են եղել տաճնց այն էլ սխալներով լի բնագիրը աւելի ևս սխալներով լցնելու: Օրինակ՝ Եանչինը ասում էր գասագրքի (երես 8) մէջ, Աւտրալիայի վերաբերեալ. «Земледѣліе стоитъ на третьемъ мѣстѣ, ибо ему мало благопріятствуютъ условія климата и орошенія, но и оно съ каждымъ годомъ развивается».

Իսկ պ. Բարայեանը Թարգմանել է ի Թիւս այլոց և իրեն սեփականացրել. իսկ թէ ինչ խելքով երրորդ նախադասութիւնը դուրս է ձգել, քանի որ նա բաւականի լրացնում էր բուն հեղինակի արտագրած սխալ կարծիքը Աւտրալիայում տեղի ունեցած յառաջադիմութեան մասին, այդ միայն պ. Բարայեանի նման տշխարհագրագէտին է յայտնի... Մի այլ օրինակ, թէ ինչո՞ւ պարոնին հաճելի է եղել ամբողջապէս Եանչինից արտագրելով հասնել մինչ 17-րդ երեսը, և նրա «Жители въ Африкѣ полагаютъ до 200 мил.» փոխել է իր գասագրքի 23 երեսում «Աֆրիկան ունի մօտ 180 միլիոն բնակիչ»։ փոխանակ ասելու 210 միլիոն, քանի որ ֆրանսիական պոպուլեյսոնները դրականապէս պնդում են որ նրա բնակիչները աւելանում են: Արդեօք, պ. Բարայեանը կամրժում է որ Աֆրիկայում «décroissement» է սկսուել.— դուցէ, ընդհակառակը Աւտրալիայինը աւելացրել է 55-ը 60000 է շինել, որը եթէ իջեցրած լինէր 45000-ի սխալուած չէր լինի, որովհետեւ նրանք հետզհետէ նուազում են: Միննոյն երեսում Եանչինը ասում է, Աֆրիկայի վերաբերեալ. «Всѣ они стоятъ на довольно низкой степени умственнаго развитія». Լ. Բարայեանը իր գասագրքի 24 երեսում, Եանչինի մեղմացուցիչ բաղդատական ածականը խեղաթիւրելով շինել է գերադրական. «նրանք բոլորն էլ կանգնած են մաւուր դարգացման ամենաստորին աստիճանի վրայ»: Եանչինը ասում է նոյն երեսում. «Почти у всѣхъ существуетъ рабство, и отецъ нерѣдко продаетъ жену и дѣтей за пестрый платокъ или нитку бусъ. Охота составляетъ главное занятіе болѣе грубыхъ негровъ; другіе занимаются скотоводствомъ, третьи земледѣліемъ; нѣкоторые умѣютъ выдѣлывать, правда, очень грубо, хлопчатобумажныя матеріи, орудіе и кожу».—պ. Բարայեանը «Пестрый»-ին Թարգմանել է հասարակ, այն ինչ գունաւոր պիտի Թարգմանած լինէր, և դա վայրենու համար անհրաժեշտ էր հրապուրուելու համար, եթէ մի վայրկեան ընդունենք որ Աֆրիկայի ամեն մասերում մի խայտառղիկ աղլիսով կարելի է

մի կին կամ մի աղջիկ առնել. բայց թէ ինչո՞ւ «хлобчатобу-
мажные материи»-ին դուրս է ձգել, բանի որ այդ նախադասու-
թիւնը նեղրեների լուսաւորութեան ճանապարհի վրայ մի քա-
նի աստիճան յառաջադիմելու է ցոյց տալիս. այդ պ. Բաբայ-
եանին է յայտնի: Ֆրանսիացիք շափաղանց լուսաւորուած էին
համարում իրանց, երբ կարողացան իրանց թագուհիներին մէ-
կի ժամանակ առաջին անգամը բամբակից մի շալիկ գործել:

Իսկ ինչ կը վերաբերի Ասիայի մասին իմ վերցրած
օրինակի համար Եանչինը ասելի է իր զասաղրքի երես 43-
րդում (Բաբայեանում 59). «Армяне, населяющие плоскогорье,
большею частью земледѣльцы или пастухи: всѣ—христиане».
Ինչ զարմանալու բան կայ որ Եանչինը Հայաստանի և հայերի
համար երկու տող է նուիրել, և պ. Բաբայեանն էլ նրան է
հետեւել. չէ՞ որ նրա հայրենակիցներին մէկը, դժողը զարձրած
երկրի համար ասել էր. «je veux voir l' Arménie sans des ar-
méniens». —

Այսրան օրինակներինց յետոյ, ընթերցող հասարակութեանն
ենք թողնում դատելու, թէ որքան իրաւացի է պ. Բաբայեանի
վարժունքը ուրիշի աշխատութիւնը թարգմանել և իր անունը
խոշոր դատերով գրողմել վրան իրբե կազմող...

Յ. Այվազեանց

ՆՈՐ ՄՏԱՅԱԾ ԳՐՔԵՐ

- 1) Армянская Муза, Сборникъ, изданный подъ редакціей Ю-
рія Веселовскаго и проф. Г. А. Халатянца со вступитель-
ной статьей «Нѣсколько словъ о новой Армянской
поезій, Москва—1906. Цѣна 1 руб.
- 2) Մագաթ Պիարոսեան, «Պատմութեան», Թիֆլիզ, 1906,
գինն է 30 կ.
- 3) Հ. Վերնից, Երեւայի կրթութիւնը մինչև 6—տարեկան հա-
սակումը, Թարգմ. լեհ Ստ. Լիս., 1906, գ. 25 կ.
- 4) Ю. Веселовскій, Очерки Армянской литературы и жизни
1906. Армавиръ, ц. 70 к.
- 5) Աղիանի, Խաբուած Յոյսեր, կոմեդիա շարար. վրաց. փոխ.
Մարտո, Բոստով Դոնի վրայ, 1906, գ. 15 կ. հրատ.
«Դէպի Լոյս»:
- 6) Պեարովիչ, Պրոբետարներ բոլոր երկրների միացէք: Թարգմ.
Աղիւն, 1906, գ. 5 կ.
- 7) Ս. Զաւարեան, ծրագիր և նախագիծ գիւղացի ազգաբնա-
կութեան անտեսական վիճակի ուսումնասիրութեան:
- 8) Վ. Գոլուբով, Ինչ է ժողովրդագիտութիւնը, ուսու. թարգմ.
Լ. Ղ., 1906, Թիֆլիս, գ. 2 կ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Յեղափոխական բռնաճիգմը.—«Ռուս մարդկանց դաճակցութիւնը»—Կաղէս-
ները ծայր երկրներում.—Հայ դեմոկրատիական կուսակցութիւն.—Դաճակցու-
թիւնը՝ ազգային «փողոսաչի».—Երեւ մահ. Նահապետութեան, Սեդրակեան եւ
Պետրոսեան:

Միայն մի տարի է անցել Մոսկուայի Դեկտեմբերեան
ապստամբութիւնից յետոյ, սակայն այդ մի տարուայ ետուն
կեանքը որքան խոր հետքեր թողեց մեր իրականութեան մէջ:
Դարերի ստրկութեան շղթաները ջախջախած ժողովրդի ամենա-
երիտասարդ և անփորձ տարրերը սկզբում տարուեցան յեղա-
փոխական բռնատիրգմով, կորցրին բէալ պայմանների ըմբռնո-
ղութիւնը և սկսեցին երեակայել որ Ռուսաստանը պէտք է
նոր զարագլուխ կազմի համաժարդկային պատմութեան մէջ,
կարծելով որ աբսոլիւտիզմի կործանման հետ միաժամանակ
կարելի է նաև սոցիալիստական յեղափոխութիւն առաջ բերել:
Եւ զարմանալին այն է որ այդ հակաէվոլիւցիոնական անահա-
ւատութիւնը պաշտպանում էին նաև սոցիալ-դեմոկրատները, ու-
րոնք այդ ժոմենտում մոռացել էին Մարքս—Էնգելսի գիտա-
կան սոցիալիզմն էլ, Պլեխանովների երկար տարիների քարոզ-
ներն էլ: Այդ բռնէին կարծես Ռուսաստանում իսկական սոցիալ-
դեմոկրատներ չէին մնացել, այլ բլանկիստական—բակունիս-
տական հովերով բռնուած յեղափոխականներ, որոնք իրանց
տաքտիկայով ոչնչով չէին տարբերում բռնատարական—գա-
ւադրական տակտիկա գաւանդ սոցիալիստ-բեվոլիւցիոններնե-
րից: Վիտտէ-Դուրնովօի մինիստրութեան ժամանակ Տրէպովը,
իսկ յետոյ Ստոլըպինը ցոյց տուին թէ քաղաքական հասարա-
կական հարցերի լուծումը Ֆիզիկական ոյժով, բրաունինգների,
մաուզէրների և գնդակացիրների դործադրութեամբ շատ աւել-
ի ձեռնտու է բիւրօկրատիային, որ իր տրամադրութեան տակ
ունի անհամեմատ աւելի ռազմական միջոցներ: Յեղափոխական
անամէջ յախորտանքները, պոռոտախօսութիւնը, բոյկոտ Պ. Դու-
մայի դէմ, միւս դեմոկրատիական կուսակցութիւնների անուա-

հարկումը, դուտրինեօրական վէճերը, ոյժերի բէալ յարաբերութիւնների կատարեալ արհամարհումը, անիմաստ գործադուները և նմանօրինակ սխալները բաւական թուլացրին այն ընդդիմադիր ոյժը, որ հնարաւոր էր դուրս բերել կառավարութեան դէմ: Եթէ այդպէս էր ամենալուրջ և հզօր կազմակերպութեան տակտիկական սխալները էլ ինչ խօսենք այն յեղափոխական կուսակցութիւնների մասին, որոնց դաւանանքով մի խումբ խիզախ դաւադիրների ահաբեկիչ փորձերով կարելի է պիտական—հասարակական կողմ հիմնադրուած անել... Էքսպերիմիտները անհետեանք անցան, բէակցիան ուժեղացաւ և նոր ընտրութիւնների ժամանակ «Ժողովրդի ազատութեան» կուսակցութեան նման էվոլյուցիօնիստական տարրերը անգամ զրկուեցան հնարաւորութիւնից ազատօրէն մղել նախաընտրական պայքարը: Այժմ ազատ գործելու ասպարէզը ֆիացել է «հոկտեմբերականների» և «ռուս մարդկանց դաշնակցութեան» կուսակցութիւններին, որոնցից առաջինը այն օրից, երբ նրանից հեռացան Լիով, Գէյդէն, Շիպով, Ստրախով և այլ «խաղաղ վերանորոգութեան» պարագլուխները, իսկ թեքուեց և ձեռք մեկնեց այնպիսի սև հարիւրակային կազմակերպութեան, ինչպիսին է «իսկական ռուս մարդկանց դաշնակցութիւնը»: Հ. Իօաննի Կրօնշտատսկու, Դուրբովիի և նման դեմագոգների դեկավարութեամբ գործող այդ «ռուսական դաշնակցութիւնը» կարող է համարուել աջակողմեան յեղափոխական կազմակերպութիւն, որ պատրաստ է բռնի ոյժով ոչնչացնել «լիտի սահմանադրութիւնը» և նրա տեղ դնել «իսկական ռուս մարդկանց դաշնակցութեան» դիկտատուրան: Մայրաքաղաքների մանեփներում այդ «պատրիօտական» կոնգլոմերատը առանձին շիկով ի ցոյց հանեց իր խուժանական գնդերը, որոնց վայրագ աղաղակներից և հերոսական ժեստերից ահուգողի մէջ թագնւում էին «սովորական մարդիկ»: Այդպիսի ահեղ դաշնակիցների վրայ են իրանց յոյսերը դրել հին բեթիմի կողմնակիցները և ներկայ կառավարութիւնը:

Բէակցիայի վրայ յենուելով Ստոլըպինի մինիստրութիւնը կարողացաւ մի քանի լրացուցիչ օրէնքներով սահմանափակել այն ընտրողների ցուցակները, որոնցից օպպոզիցիան ոյժ է ստանում: Բիւրօկրատիան, զանազան խոչնդոտներ դնելով ձախակողմեան կուսակցութիւնների ազատ նախընտրական պայքարի առաջ առանձին աջակցութիւն է ցոյց տալիս բոլոր աջակողմեան կուսակցութիւններին «Հոկտեմբերի 17»-ի միութիւնից սկսած: Նահանգապետները առանձին շրջաբերականներով առաջարկում են իրանց ստորագրեալներին. տարածել աջա-

կողմնան սև հարիւրակային թերթերը, բաժանորդներ ճարել «խակական ուռւս մարդկանց դաշնակցութեան» օրգանների համար: Այդպիսով այն համեմատական չեզոքութիւնը, որ ցոյց էր տալիս կառավարութիւնը Պետական Դումայի առաջին ընտրութիւնների ժամանակ, այժմ մի կողմ է դրել և ուղում է այժմ ստա՛րգուվեան-հայ-դաշնակցական մեթոդով դործել...

«Նպատակը արդարացնում է միջոցները!»:

Ընտրողական պայքարին այս անգամ մասնակցելու են Անդրկովկասի բոլոր քաղաքական կուսակցութիւնները: Մեր երկրի զարմանալի առանձնատկութիւններից մէկն էլ այն է որ բոլոր ազգաբնակիւթիւնը ըստ երևոյթին «յեղափոխական» կուսակցութիւններին է յարած: Չափաւոր, խաղաղ—էվոլյացիոնական կուսակցութիւններից կադէները միայն գոյութիւն ունին, այն էլ չափազանց թոյլ կերպով արտայայտուած: Այդ կուսակցութիւնն էլ միջազգային լինելուց կարծես դադարում է, որովհետև վրացիները և հայերը անջատուելով ազգայնանում են, ինչպէս և թուրքերը, իսկ ուսները յարում են «հակամերբականներին»: Նոյն երևոյթը—կադէտների տարրալուծումը և ազգային-դեմոկրատիական կուսակցութիւնների վերածուիլը նկատուում է միւս ծայր երկրներում, օրինակ, Լիհտաւանում:—Հայերի մէջ նոր կազմակերպուած «դեմոկրատիական» կուսակցութիւնը «ժողովրդի ազատութեան» կուսակցութեան ծրագիրն է ընդունում իբրև ելակէտ և նրա հետ միասին է մասնակցելու ընտրութիւններին: Հետևեալ գեկլարացիայով է աստարէզ գալիս այդ «Հայկական Դեմոկրատիական կուսակցութիւնը».—Հայ ժողովուրդը Ռուսաստանի բազմամիլիոն ազգաբնակչութեան մասը կազմելով և իր քաղաքական-քաղաքացիական կեանքով կախուած լինելով ընդհանուր—պետական կարգերից, պէտք է աշխատէ, որ այդ ընդհանուր պետական կարգերը դրուած լինեն մարդկային աղատ զարգացումը չը խանգարող պայմանների մէջ: Այդպիսի պայմաններ կարող է ստեղծել միմիայն դեմոկրատիական սկզբունքների կատարեալ իրականացումը Ռուսաստանում: Հետևաբար, հայ ժողովուրդը նախ և առաջ պէտք է օժանդակէ Ռուսաստանում դեմոկրատիական—պարլամենտական օրինակարդ հաստատելու գործին:

«Հայկական Դեմոկրատիական կուսակցութիւնը, որ նոր է ծնունդ առնում, ձգտելու է, կազմակերպելով հայ ժողովրդի շիտակ, առաջադէմ և կենդանի ոյժերը, մարդկային արժանապատուութիւնը չարատարող բոլոր միջոցներով, ակտիւ աջակցութիւն ցոյց տալ Ռուսաստանի քաղաքական առաջադէմ

կուսակցութիւններին, նոր ազատ և արդար կարգեր մտցնելու ամբողջ պետութեան մէջ:

«Հայ Դեմոկրատիական կուսակցութիւնը, թողնելով մանրամասն ծրագրի մշակումը ապագայ կուսակցական համագումարին, որը տեղի կ'ունենայ անմիջապէս, երբ կը կազմակերպուեն կուսակցութեան ճիւղերը ուրիշ քաղաքներում, հայաբնակ տեղերում,—գտնում է, որ իբրև գործունէութեան մերձաւոր ելակէտ՝ աւելի մօտ է ընթալ՝ մասնաւորապէս և հայկական պայմաններին և ներկայ մօմենտին «Ժողովրդական ազատութիւն» (սահմանադիր—սամկալար) կուսակցութեան ծրագիրը, որին նա առ այժմ յարելու է սկզբունքային կէտերով և ձգտելու է առաջիկայ ընտրութիւններին անցկացնել իր թեկնածուներին—թէ պատուիրակների (выборщики) և թէ Պետական Դուռնայի պատգամաւորների վերաբերմամբ՝ փոխադարձ համաձայնութեամբ ժողովրդական ազատութեան կուսակցութեան հետ:

«Հայ Դեմոկրատիական կուսակցութիւնը, ընդունելով իբր ելակէտ՝ ժողովրդական ազատութեան կուսակցութեան ծրագրի ընդհանուր սկզբունքային, հիմնական կէտերը, մասնաւորապէս Կովկասի և հայ ժողովրդի վերաբերմամբ սահմանում է հետևեալ սկզբունքները.

1) Մտցնել Անդրկովկասում տեղական անդասակարգ ինքնավարութիւն և համա-անդրկովկասեան սէյմ օրէնսդրական ֆունկցիաներով անդրկովկասեան խնդիրների վերաբերեալ:

2) Վերակազմել հայկական բոլոր հիմնարկութիւնները դեմոկրատիական սկզբունքով:

3) Ունենալով ազատ կուլտուրական ինքնաորոշման իրաւունք, կուսակցութիւնը պէտք է նպաստէ այնպիսի հաստատութիւնների վարձացման և ստեղծման, որոնց նպատակն է պահպանել և զարգացնել հայ ժողովրդի լեզուն, գրականութիւնը և կուլտուրան:

4) Կուսակցութիւնը, ունենալով իր գործունէութեան զբաղմունք շրջանը Կովկասում, պէտք է մտցնէ կեանքի մէջ Կովկասի բոլոր ազգերի գործակցութեան և կուլտուրական միութեան գաղափարը»:

Ի հարկէ դա սկիզբն է այն շերտաւորման, որ սկսում է հայկական կեանքում: Թիւրքահայկական հարցն է եղել պատճառներից մէկը որ կանգնեցրել է այդ բնական պրոցեսի աւելի կանուխ սկսուիլը: Մինչև 1892 թուականը «ազգային-յեղափոխական» երկու ընկերութիւններ-Դաշնակցութիւնը և Հնչու-կեանները միակ կազմակերպութեամբ «կուսակցութիւններն» էին

մեզանում: Այդ թուականից սկիզբ առաւ սոցիալ-դեմոկրատիան, որ մի քանի տարւում կարողացաւ զգալի ծաւալ ստանալ մեր արդիւնաբերական կենտրոններում: Պրօլետարիատի մի չնչին մասն էր դեռ յարել այդ զուտ դասակարգային կազմակերպութեան, իսկ մնացած հայութիւնը կամայ թէ ակամայ դաշնակցական կամ հնչակեան էր գրւում... Ինչպէս ամեն մի ջերմեռանդ կաթոլիկ ս. Պետրոսի հարկ պէտք է վճարի, այնպէս էլ իւրաքանչիւր հայ քրիստոնեայ պէտք է ազգասիրաբար «հրկրի մէջ կոռուղ եղբայրներին համար» իր լուծման տար: Հարուստ, աղքատ, բանթիէ, բանուոր, գիւղացի, արհեստաւոր, վաշխառու, տէրուէր, վարդապետ, ինտելիգենտ—բոլորն էլ իրանց հոգու փրկութեան համար ազգասիրաբար դաշնակցական էին կամ հնչակեան... Այդ երանելի տիրապետութեան առաջին հարուածը հասցրին սոցիալ-դեմոկրատները—մէջ տեղ գցելով դասակարգային կռուի խնձորը: Ապա ուսանական յեղափոխութիւնը ցնցեց ճահճայած ազգային կեանքը իր սնահաւատութիւններով ու ջանփիղայական առասպելներով և սկսուեցին հասարակական ստրուկտուրայի համապատասխան կուսակցական գոյացումներ:

Ինքն ըստ ինքեան հասկանալի է որ մի կազմակերպութիւն որ ձգտում է իր մէջ ամփոփել և իր ձեռքում կենտրոնացնել ամբողջ մի ժողովրդի կեանքի բազմապիսի կողմերի ղեկավարութիւնը և բռնեցքի ոյժով նրա վրայ խնամակալութիւն հաստատել—դառնում է ոչ թէ մի քաղաքական կուսակցութիւն, այլ մի ընկերութիւն որ ձգտում է իր շահերին ծառայեցնել ահաբերկումից շշմուած մի անգիտակից ժողովուրդ: Այդպիսի մի ընկերութիւն ուղուրպատօր «փողբաշու» նման զօռով տիրանալով ինքնապաշտպանական միջոցներին, հասարակական հաստատութիւններին, այնքան ամբարտաւանում է որ յետոյի բան ամբողջ աբգի բերան և ներկայացուցիչ է յայտարարում, միջամտում է ընտանեկան, եկեղեցական, դպրոցական գործերում, ամբողջ ազգի կողմից դիմումներ է անում օտար պետութիւններին և այլն և այլն: Անշուշտ այդ բոլոր օլիգարխիական, կամայական, ինքնազուլ զործողութիւններին կեղծ սանկցիա տալու համար մերթ նա խօսում է այնպէս որ կարծես Դաշնակցութիւնը—դա ինքը հօյ ազգն է, մերթ դուրս է գալիս թէ Դաշնակցութիւնը հայ «աշխատաւոր մասսան» է, մերթ՝ Դաշնակցութիւնը տմենայն հայոց կաթողիկոսի կամարիլլան է, մերթ Դաշնակցութիւնը հայ բուրժուազիայի թիկնապահն է, նրան ուրիշ էքսպրոպրեհատօրներից պաշտպանողն է. մի խօսքով այդ գարմանալի շէֆերը ամեն մի գէպքի և հանգամանքի համար նոր լողունդ

են դառնում և դառնում ուղղակի անհրաժեշտութիւն հայ ազգի գոյութեան տեսակէտից: Ժողովրդի վրայ տիրացած այդ ընկերութիւնը միշտ «ժողովուրդ» ասելով հասկանում է այն խումբան, տակաւնը որ կոյր գործիք է իր ձեռքում:

Այդպէս, օրինակ, նրանք յայտարարեցին թէ էջմիածնի խայտառակ դէպքում «ժողովուրդն էր իւր արդար զայրոյթը յայտնում Սուրխասի դէմ»: Իսկ այդ շէֆերին համակրող վարդապետներից մէկը «Մշակում» (№ 268) գրում է թէ «ամբոխն է այդպէս արել» և ոչ ժողովուրդը: «Ամբոխի վարմունքից չեն յուզվում, ամբոխը երբեմն իր բարերարին է պատառ-պատառ անում, ամբոխին պատասխանատուութեան չեն ենթարկում, դռէք ագիտատորներին» ասում է այդ վարդապետը: Իսկ երբ ագիտատորների մասին է լինում խօսքը՝ ջոջերն ասում են. «ինքը ժողովուրդն է իր արդար զայրոյթը յայտնել»: Եւ անվերջ հասարակութիւնը պատեցնում են, հոլովում ստախօսութեան և կեղծիքների մի լաբիրինթոսում: Մարդիկ չեն ուզում հրաժարուել անսահման իշխողների այնքան պաւիչ դերբերից, հետեւաբար պէտք է ինչ գնով էլ լինում է լինի սեւ սպիտակեցնեն: Շատ բնորոշ մի նամակ էր տպուած վերջերում «Մշակում» մի գաւառական գործիչի կողմից, որի անկեղծութիւնը և պարզամտութիւնը բուրում է նրա իւրաքանչիւր խօսքից: Դարդացէք ընթերցող այդ անպաճոյճ տողերը և եթէ միջոցների մէջ խորութիւն ճանաչող դիպլոմատ չէք ձեռք առնել, կամ անգութ էգօիստ կամ կարիերիստ—նշանակութիւն տուէք «հայոց մեծերի» հաւաստիացումներին թէ բանը Դաշնակցութեան բիւրոկրատների յուսի սիստեմի մէջ չէ, այլ թշնամիները «եղակի» դէպքերը շահագործում են: Լսենք պ. Մ. Ղազարեանցին:

Խումբանի կատարած բարբարոսական դէպքը Պարզամտի դէմ, շատերի զայրոյթն է շարժել, սակայն քանի-քանի դիւղացի ծերունիներ միեւնոյն, դեռ աւելի զգուշի անարզանքին են ենթարկվել, բայց ո՞վ է խեղճ դիւղացուն մարդու տեղ դնում, կարծես նրա մէջ սիրտ ու զղացմունք չը կայ, թէեւ նա աւելի «Թափաբով» ու «աբուռով է». բայց երկիւղը այն աստիճան խիստ է, որ դժբաղ դիւղացին ամեն մի անարզանք կուլ է տալիս... Սակայն մինչեւ երբ շարունակվի այս ժողովրդին ոտրկացնող, անհատի կամքը սպանող քեթիմը, չէ որ աչս ամեն մի քաղականութիւնը մեր սրտերից արիւն է կաթնեցնում, որովհետեւ կատարված եւ կատարվող դէպքերը շատ արիւն են յցրել մեր սրտերը... Դաշնակցութեան դրօշակին ծառայող լուրջ (?) մարդիկ, մի փորձեցէք այդ քեթիմին հակառակ ձեռով մըտնել դիւղերը, պատմել տուեցէք դիւղացիներին... այն ժամանակ կը համոզվէք եւ գտնուե՞նամք կը քաղականչէք, թէ ո՞ր Սաղայէն է ստեղծել այդ չարիքներ... Պ վիպասաններ(,..?) յատկապէս ձեզ եմ դիմում, ձեր հոշոյեմբեր, 1906.

զին, որ այնքան զգայուն է, զրիչ շարժելիս քար սրտերն անզամ փափկացնում էք, (?) ինչ է քարայրել ձեզ ժողովրդի եղերանքների դէմ: Դուք եւ ձեզպէսները դոնէ մեզ գաւառացիներն ալ տըր է հաւատար *) նամանաւանդ՝ ինծպէս հասարակ գրողներին՝ այն հիման վրա, որ մենք ոչ մի բան չենք կարող ստեղծագործել, այլ միայն՝ կեանքում կատարվող երևոյթներ ենք արձանագրում: Ընդհանրապէս Գաշնակցութեան դէմ գրողներին ոչ մի անձնական ներքին նպատակ չէ առաջնորդում, ալ միայն ժողովրդի տառապանքներն են նրանց հրապարակ դուրս բերում, որովհետեւ անձնական-ներքին նպատակներ առաջ տանելու համար պէտք է գաշնակցական լինել (sic): Մի դաղթական կին¹⁾ լսելով իմ հրաժարվելը «կոմիտէի» անդամ ընտրվելուց՝ կնոջս անկեղծ ցաւակցութեամբ ասում է, «խանութ քուր, լսել եմ ու աղախպէրը կոմիտայի չէ եղնում, ուզում է տէրտէր էղնել, ափսոս չէ, կոմիտայութիւնը շատ խելով, օգուտով է տէրտէրութիւնից...»,

Գժբաղդսութիւն ունեցայ, իբրեւ չեզոք անձն մի զիւղիւմ քննելու մի խումբ մարդկանց, որոնք «Գաշնակցութեան» կուսակցութիւնից անցել էին «Հնչակեան» կուսակցութեան: Բոլոր քննվողները միաբերան դանդաղում էին Գաշնակցութեան ասպետների ճնշումից, ²⁾ եւ այդ քննութեան ժամանակ մի քանի հոգի ի միջի այլոց յայտնում էին պործի հետ կապ ունեցող մի գաղտնիք, որ այդ ասպետներից մէկը գիշերով գիւղացու երգիկից խոկով իջել է տուն եւ նրա հարսին բռնաբառել...

Գաշնակցութեան աչքը լոյս, իր քէժմը աւելի լայն շրջան է ստանում գնալով—թուրքերն ու քրդերն էլ միեւնոյն ձեւով սկսել են գործել, ի հարկէ նրանք աւելի առաջադէմ աշակերտներ կը լինեն: Այժմ կատարեալ ուժ են ստացել «ջանքեզարների» խմբերը: Նրանք էլ իրանց ազգակիցներից բռնութեամբ անդամավճար են հաւաքում, թուրքիկ խմբեր կազմում սեծ մասամբ «մուհաճիբներից» եւ զոգութեամբ եւ աւազակութեամբ ու մորդասպանութեամբ պարսպում, արշաւելով պիսաւորապէս հայ գիւղերի վրա, եւ եթէ կառավարութեան կողմից ձեւի համար դնում են

*) O Sancta Simlitas...

ծ. խմբ.

¹⁾ Մի կին տեսնելով «գորապետի» ձեծելը մի երիտասարդի՝ օգնութեան է կանչում իր ամուսնուն. սակայն վերջինս իր ճնշում ձայնով ասում է. «Ի՞նչ ես ասում ա՞յ կնիկ, հայոց մեծ է»:

²⁾ Այդ ասպետներից մէկը մի, իրանից շատ բարձր թէ բարոյապէս եւ թէ կրթութեամբ, երիտասարդի ձեծել տալով, սպանեց. թէեւ նա ֆիդէլիտան տանջանքից չը մեռաւ, այլ բարոյական, որի մասին բերտ-ծեծի իշխանութեամբ դործ տեսնողը գաղափար կարող է չունենալ, սակայն այդ դուռ ճշմարտութիւն է, որ ձեծված երիտասարդը սառտիկ ճնշված այդ բարբարոսութիւնից՝ ձի է նստում, գնում է զիւղ՝ ճոնապարհին շարունակ հռոպելով—«Ես այս դէպքից «դաւաբաս» կը լինեմ», ե իրաւ, նա ասում հառնելուն պէս ընկնում է անկողին եւ մի քանի օրից վերջը մեռնում:

քոնելու, քանրկարները իսկայն անցնում են սահմանից, Տանկաստան: Այդ քանրէզարների վարմունքը յիշեցնում է այն կոտակերգութեան մէջ եղած ծառայի խօսքերը, որ իր պարոնին ասում է. «Քէ դու քո Աննաման ունես, իմ Խալլի Նուբարն էլ պակաս չէ»:

Ք. որդում մի յոյն, կատարված մի զոդութեան դէպքից օգտվելով՝ շատ լաւ նկատեց, թէ՛ «հայերը երկրագործութեան արհեստը տալով քրդերին, իրանք դրանց արհեստը—աւազակութիւնը ձեռք առան...»:

Արդ, ընթերցող, ո՞վ է խնամակալութեան կարօտ, հայ ժողովուրդը թէ՛ այդ շէֆերը, որոնք վարմանալի անամթութեամբ ստանձնել են անկոնտրոլ խնամակալների պաշտօնը: Խնամակալում են՝ իրենք լուրջ խնամակալութեան կարօտ մարդուկներ... Ողբալի կացութեան մէջ հս, հայ ժողովուրդ:

Ռուսական յեղափոխութեան հարուածը իջաւ ոչ միայն մեր ջանֆրիդայութեան գլխին, այլ և կղերականութեան:

Եթէ հին բեթիմի ժամանակ Ռուսաստանում պետութիւնից անջատուած հայոց եկեղեցին որոշ քաղաքական-հասարակական դեր էր կատարում իր «խնքնագլխութեան» շնորհիւ, այժմ պետական կեանքի փոփոխուած պայմանների շնորհիւ ազգային եկեղեցու նշանակութիւնը պէտք է օրէցօր սահմանափակուի, հետզհետէ զրկուելով բոլոր ոչ-կրօնական ֆունկցիաներից: Իսկ հին բեթիմի ժամանակ ազգային եկեղեցու նշանակութիւնը այնքան չափազանցրած էր որ նոյն իսկ մի ամբողջ ուղղութեան էր տիրում մեր ինտելիգենցիայի մէջ, որի համոզմունքով եկեղեցին և կաթողիկոսի արքայապետի դմբ հակաւ կեանքի բոլոր չարիքների դէմ մի պանացեա էր «կաթողիկոսութիւնը Վահան եկեղեցոյ, Ասպար ազգութիւն» ասում էին նրանք... Այդ մեղուական ուղղութեան տիպիկ ներկայացուցիչներից մէկն էր հանգուցեալ Նահապետ եպիսկոպոսը: Բնագէտ, համալսարանական Նահապետեանը գլխին վեղար էր ծածկում որ իր ընտրած մանկավարժական—վարչական ասպարէզում աւելի դիւրաւ իրագործի իր իդէալը—էջմիածնի և կղերի հեղինակութիւնը բարձրացնելով պահպանել ազգութիւնը: Այդ նպատակի համար, մեղուական տեսակէտով, պէտք էր կաթողիկոսական արքայապետի ամբողջպէս պահպանել: Եւ ահա նոյն այդ արքայապետի դմբ իր տգէտ քմայաճոյքով աւերակ դարձրեց Նահապետեանի և իր համախոհների օգային ամբողջները... մնում էր յուսալատ հառաչել և ողբալ: Բնագէտ Նահապետ եպիսկոպոսի հակառակ ուղղութեան էր պատկանում խնքնակրթութեամբ զարգացած Արիւտակէս արքեպիսկոպոսը. այդ լիբերալ եկեղեցականը սահմանադրական օրինակարգ կուզէր տեսնել էջ-

միածնում. բարուոքելով հոգևորականութեան մտաւոր և տընտեսական գրութիւնը, վերացնելով կաշառակերութիւնը և քմահաճոյքը նա հաւատում էր որ եկեղեցին իր կրթական հաստատութիւններով կարող է նպաստել մեր անկուլտուրական և դեռ ֆետիշիզմի շրջանից դուրս չեկած ժողովրդի առաջադիմութեան: Բայց Պոլոժենեան և հէնց նոյն ազգի մէջ արմատացած նախապաշարմունքը կաթողիկոսի միահեծան կամքի մասին—ցոյց տուին Սեդրակեանին որ «ամենաժողովրդական» կրօնապետից անգամ լուրջ վերանորոգութիւնների իրագործում զուր է սպասել: Կաթողիկոսի քէֆի, վեհարանի անպատասխանատու շշնջողներն ինտրիգների դիմաց լինչ նշանակութիւն ունին ծրագրային բարի ցանկութիւնները: «Ազգընտիր» կաթողիկոսի միահեծան կամքին համակերպելու ճկունութիւնից զուրկ, կոյր գործիք դառնալու անընդունակ նա այնքան մաքուր էր և շիտակ որ ստիպուած էր գրել իր «Ո՞վ հաւատացը» և կամաւոր աքսոր գնալ Աստրախան և հեռուից դիտել և ողբալ խորտակուած յոյսերի վրայ: Այսպէս ուրեմն տարբեր ճանապարհներով ընթանալով ոչ Սեդրակեանը և ոչ Նահապետեանը աջողութիւն ունեցան: Էջմիածնի քաօսական գրութիւնից կարողացան օգտուել միմիայն մեր... աշխարհական եզուիտները, որոնք իմացան թէ ինչպէս պէտք է ցուլին բռնել պոգերից և գործիք դարձնել նրան իր թայֆայական նպատակների համար...

Մեր գաղափարական ինտելիգենտներից էր և հանգուցեալ Գէորգ Պետրոսեանը: Ամեն մի հասարակական ձեռնարկութիւն որ շահ չի բերում, այլ կուլտուրական նշանակութիւն ունի, մեզանում զարգանում է միայն անհատական զոհաբերութեամբ և զրկանքներով: Անկուլտուրական ժողովրդների մէջ գաղափարական գործիչի խաչը անհամեմատ աւելի ծաւր է, քան կուլտուրական ազգերի մէջ: Մեր ժողովրդի ահագին մեծամասնութիւնը իր կենցաղավարութեամբ և հասկացողութիւններով քիչ է տարբերւում նախապատմական տրոգլոտիդներից... Միայն քաղաքներում ազգաբնակչութիւնը իւրացրել է զրսից քաղաքակրթական սովորութիւնների հետ նաև գեղարուեստը, թատրօնը:

Եւ ահա արուեստական միջոցներով պահպանուող հայկական բեմին իր ոյժը, եռանդն ու կեանքն վճուում է դեռ պատանեկական հասակից նուիրել մի շնորհալի գերասան, չմտածելով որ այդ արուեստը անկարող է մեզանում ապահովել նրա ընտանիքի ապագան: Կարէիք, անձնական բարօրութեան հոգսերով տարուած մեր ինտելիգենցիայի մէջ Գէորգ Պետրոսեանը

այն սակաւաթիւներկայացուցիչներից մէկն էր, որը զնաց իր ներքին ձայնի թելադրութեամբ և չղեկավարուեց հեռատես հաշիւներով... Իբրեւ դերասան նա աչքի էր ընկնում իր արհեստակիցների մէջ աւելի բարձր զարգացմամբ և ճաշակով: Ծիշտ է նա նոր շկուա, նոր ուղղութիւն, նոր հոսանք չմտցրեց հայկական բեմի վրայ, բայց ձգտեց նրա մակերևոյթը բարձրացնել, թատրոնի կրթական նշակութիւնը տարածել մեզանում:

Նրա մահուան առիթով Հայ. Դրամատիկական ընկերութեան վարչութիւնը առանձին հանդանակով մասնաժողով հիմնեց, որ դիմում է հայ հասարակութեան օժանդակութեանը: Այդ ցաւալի անհրաժեշտութիւնը միթէ չպիտի ստիպէր Հայ. Դրամատիկական Ընկերութեան յատուկ ֆոնդ հիմնել, իւրաքանչիւր ներկայացումից որոշ $\frac{0}{10}$ յետ գցել և այլ միջոցներ գտնել նման դէպքերում նպաստ տալու բեմական գործիչների ընտանիքներին և ծերացած կամ հիւանդ դերասաններին: Ամեն անգամ հանդանակութեան գիմելու սովորութիւնը ապացոյց է որ «կուլտուրական» հայ ազգը հասարակական կազմակերպուած ինքնօգնութեան գործում շատ քիչ է տարբերւում... բօշաներից:

6 գեկտ.

ԱՐՏԱՒԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Եւրոպական կապիտալիզմը Աֆրիկայում:—Գերմանական բոլշևիզմի արձակումը —Ճապոնիայի գերիշխումը խաղաղ Ովկիանոսում եւ Ասիայում:—Ճապոնական եւ ամերիկական կապիտալիստների մրցումը եւ առա՛նձնայատկութիւնները:

Եւրոպական կապիտալը զինուած ռազմագիտական եւ ար-
դիւնագործական տեխնիկայի վերջին խօսքով չի բաւականում
այն «չնչին» շահով, որ տալիս են քաղաքակիրթ երկիրները
(ուր կազմակերպուած աշխատանքը կտրել է նրա գիշատիչ ճի-
ւանները) եւ թափառում է երկրիս երեսին գտնելով կուսա-
կան վայրեր աւելի շահաւէտ հարստահարումներէ համար: Փառ-
թած Աֆրիկան դառել է եւրոպական բոլոր կապիտալիստ-
ների Աւետեաց երկիրը, ուր նրանց առաջնորդում են մարդա-
ջնջման տեխնիկայի կատարելագործութիւններով զինուած զօ-
րավարներ եւ «ամենահզ» միսսիօնարները: Ինչ ընդդիմադրու-
թիւն կարող են ցոյց տալ խղճուկ սեւամորթները աւտոմոբիլ բեր-
դեր եւ գնդակացիրներ հնարած եւրոպացիների գէժ, ինչ կա-
րող են ասել աւետարանի պերճախօս քարոզիչներին Ֆետիշ-
ների երկրպագուները:

Եւրոպական կապիտալիզմից բարերարուած երկրներից մէ-
կըն էլ Կոնգոն է, որի 20 միլիօն սեւամորթները մասնուած են 1000
հոգի բելգիացիների շահագործութեան: Այդ անսահման հարուստ
երկրից բելգիացիները տարեկան 65 միլ. ֆրանկի փողոսկը,
կաուչուկ, բանան, շաքարեղեգն, արմաւենու իւղ, ոսկի, պղինձ են
արտահանում, իսկ ներմուծում են ալկոհօլ, ծխախոտ, վառոդ...

Կոնգօն շահագործում է բելգիական մի Ընկերութիւն:

Բելգիական խոշոր կապիտալիստների այլ ընկերութեան մէջ
ամենամեծ բաժնետէրը ինքը Լէօպոլդ Թագաւորն է, որ միաժա-
մանակ մեծ պետութիւնների կողմից ճանաչուած է իբրեւ Աֆրի-
կայի այդ «անկախ տէրութեան» միապետ: Օգտուելով իր դիրքից
եւ հարստութիւնից Լէօպոլդ Թագաւոր—կապիտալիստը ծծել է
Կոնգօից որքան կարողացել է եւ այժմ ձեռնտու է համարում պարտ-
քերով ծանրաբեռնուած այդ «անկախ տէրութիւնը» նաղդել:

իր սիրեցեալ բելլիական ժողովրդի վրայ: Բելլիական պար-
լամենտում Կոնգոն միացնելու հարցի քննութեան ժամանակ
սոցիալ-դեմոկրատիական պարագլուխ Վանդերվելդէն ի միջի
այլոց ասել է հետևեալը. «Մենք համոզուած հակառակորդ-
ներ ենք դադուլթային քաղաքականութեան, որովհետև փորձը
ապացուցեց, որ նա նպաստում է արտոլիտալիզմի ուժեղացման
և բարբերի բիրտութեան: Այդ ցայտուն կերպով հաստատուեց
Բելլիայում: Ի հարկէ, սահմանադրութիւնը առաջուայ նման
անձեռնմխելի է, սակայն թագաւորի անձնական կամքը այժմ
արտայայտում է քաղաքական կեանքի բոլոր կողմերում, իսկ
Աֆրիկայում, համարեա Եւրոպայի չափ մի տարածութեան
վրայ, այդ անձնական կամքը ներմուծել է՝ ընդհանրի վաղանա-
յին մի հարստահարութիւն: Ես չեմ բացասում որ թագաւորը
բարձրացրեց Բելլիայի նշանակութիւնը, ստեղծելով այդ դա-
դուլթը և որ նա մեծ խելքի տէր մարդ է, սակայն նա սիրտ
չունի, այդ անսրտութիւնը նրան դարձրել է կապիտալիստ-շա-
հագործողների գործակից: Թագաւորի ամբողջ խելքը ուղղած
է բացառապէս իր հարստութիւնը բազմապատկելու վրայ, այն
բոլորը ինչ որ մարդկային է և ազնիւ—խորթ է նրան: Այժմ
նա խոտտանում է բեֆորմներ, բայց գրանք չկ'են լինելու արդ-
եօք, ինչպէս և առաջ, մեռած տառեր»:

Կոնգոն կապած են և Վելհելմ II-ի փայտայած գերմանա-
կան զաւուլթները: Վերջերում, ընթիստագում բաւական
տաք վիճաբանութիւններ էին ծագել այդ կողմնեաների առի-
թով: Գադուլթային ղեկարտածենտի նոր դիրեկտոր Դերնբուրգը
պատասխանելով կենտրոնի պատգամաւոր Բերենին ստիպուած
էր խոտտովանել ընտութիւնների և զեղծումների գոյութիւնը և
ընդունել վարչական բարեկարգութիւնների անհրաժեշտութիւ-
նը: Այդ զաւուլթների առևտրական—արդիւնաբերական ձեռ-
նարկութիւնների մէջ դրուած է մօտ 300 միլ. մարկ գերմա-
նական կապիտալ, չհաշուած այն ահագին ծախքերը որ անում
է կայսրութիւնը նրանց միջ «կարգ ու կանոն» հաստատելու և
սեւածորթ բնիկներին նուաճելու վրայ: Այդ բնիկները Հարաւ-
Արևմտեան Աֆրիկայում ահա մի քանի տարի է ապստամբ-
ուել են: Ապստամբութիւնը գեռ զսպուած չէ և Վելհելմ II-րդի
կառավարութիւնը ընթիստագից պահանջում էր «լրացուցիչ
վարկ 29 միլլիօն մարկի չափ»: Բիւլովին Հաջողուեց համո-
ղել կենտրոնին և սոցիալ-դեմոկրատներին և նա կարգաց
կայսերական հրամանը ընթիստագի աքճակման մասին: Այդպիսով
Գերմանիայի ժողովուրդը նոր ընտրութիւնների միջոցով

պէտք է արտայայտի իր վերաբերմունքը դէպի գաղութային ազգրեսիւ քաղաքականութիւնը:

Այդպէս է գործում սպիտակների կապիտալիզմը, որ այժմ խաղաղ Ուկրաինոսում զօրեղ մրցակից է գտել յանձին դեղին կապիտալիզմի: Ճապոնիան այդ ասպարիզում էլ, ինչպէս և պատերազմի մէջ, ցոյց է տալիս տաղանդաւոր ինքնուրոյնութիւն: Սպիտակ և դեղին կապիտալիզմի վէճը ծագել է Կալիֆորնիայում: Եւ ետնկիները վարակում են կամաց-կամաց ճապոնատեղութեամբ այն աստիճան որ հալածում են ճապոնական մանուկներին Կալիֆորնիայի ուսումնարաններից: Ատեղութեան պատճառը այն է որ ճապոնացի կապիտալիստը օգտուելով աւելի չափաւոր աշխատավարձ պահանջող ճապոնացի բանուորների աշխատանքից, կարողանում է իր ձեռքը դրել առևտուրը, արդիւնագործութիւնը, հողերը և տներ կառուցանել աւելի ձեռնտու է արագ քան եակին:

1860 թ., երբ ինքը Միացեալ Նահանգների կառավարութիւնն էր ճապոնացի գաղթականներ հրաւիրում, 63 ճապոնացի էր իջել Հեռաւոր Արեւմտքի ափը, իսկ 1903 թ. Ամերիկայում 40 հազար ճապոնացիներ էին ապրում, որոնցից 25 հազարը միայն Կալիֆորնիայում: Հաւայի, Սանդվիչեան կղզիները ողողել են ճապոնացիներով. նրանք սկսել են տիրել և փրկալ պինեան կղզիներին:

Ճապոնացիները շրջանկատ, հաստատակամ և խիստ հետևողական ծրագրով նուաճում են Հեռաւոր Արեւելքը: Նրանք պահանջում են որ Ռուսաստանը բանայ Ամուր և Սուրգարի գետերը միջազգային առևտրի համար, ազատութիւն տրուի ճապոնացիներին ձկնորսութեամբ պարապել Միւրերի եղերքներում: Եւ իր պահանջները դէնքի ոյժով պահպանելու փառաւոր ապացոյց տալուց յետոյ, ճապոնիան այժմ ձգտում է մտաւոր—կուլտուրական ճանապարհով իր կողմը գրաւել Մանգուլիան, Չինաստանը, Սիամը, Հնդկաստանը, Մանջուրիան: Տոկիոյ համալսարանը և զինուորական բարձր ուսումնարանը դէպ իրանց են գրաւում դեղին ցեղի երիտասարդութիւնը: Այդ քաղաքի համալսարանում այժմ 13 հազար Չինացի ուսանող է սովորում: Ճապոնիան ուղում է դառնալ Ասիայի և Խաղաղ Ուկրաինոսի կղզիների Ուսուցիչ և Պաշտպանը: Եւ սպիտակ ցեղը ստիպուած է խոստովանուել որ իր արեւական արեան և բրիտանիական քաղաքակրթութեան վրայ դրուած մեծամիտ կարծիքները պէտք է վերաբնութեան ենթարկուին ճապոնացիների տուած դասերից յետոյ:

ՊԱՐՔԵՐԱԿԱՆ ՀՐՄՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

«Armenie» vol. 12. Friends of Armenia.—Տիկին Մէյրի Հիքսըն, «Բարեկամը Հայաստանի» ընկերութեան գործադիր ժողովի անդամներէց միւնը մի շրջաբերականով հետեւեալ տեղեկութիւններն հաղորդում է իրանց գործունէութեան մասին:

Ընկերութեան քարտուղարը, որ մի տիկին է, գտնուում է այժմ Կ. Պոլսում գործերի ընթացքին և իրանց վիճակին հետ մօտիկից ծանօթանալու համար:

Բաղդատարար Թիւրքաց Հայաստանի մէջ աւելի խաղաղ է այժմ կացութիւնը: Որքերի թիւը որքանոցներում սկսել է պակասել, հասակաւոր որք աղջիկները ամուսնանում են, մանչերը բարձր ուսումնարաններ են մտնում կամ գործի են գընում իրենց օրապահիկը հայթայթելու, թէև շատ դժուար է գործ գտնել:

Դոկտոր և տիկին Ռէյնոլդց հասել են Վան և վերսկսել են իրանց օգտակար զործունէութիւնը, որը ընդհատուել էր իրանց դէպի Ներսիս արած ճամբորդութեան պատճառով:

Ամերիկեան ուսումնարանի կից մի դրաղարան-ընթերցարան հաստատուել է, ուր արդէն 800 հատոր գիրք կայ: Բոլորն էլ 1900 թուականից ի վեր հրատարակուածներէց ընտրուած գրքեր: Հայոց կաթողիկոսը գրքեր նուիրել է այդ նոր հաստատութեան և ուրիշներ էլ խօստացել են ֆրանսերէն և անգլիերէն գրքեր նուիրել: Մասնաւորապէս արական սեռն է ընթերցող դասակարգը, բայց աշխատում են որ կանայք էլ մասնակցեն ընթերցանութեան:

Պարբերում դրամի մեծ պէտք է զգացուած ինդուստրիական գործը մասնաւորապէս կարպետագործու-

թիւն և երկրագործութիւն—դարգացնելու համար, նկատելով որ Ուրբանոցից դուրս եկած սաները այդ միջոցով կարողանում են իրենց ապրուստը ճարել:

Փողի սակաւութեան պատճառով Տիգրանակերտի որբանոցը հարկ է եղել փակել:

Պէտք է գիտնալ որ, ասում է Տիկին Հիքսըն, մենք Փոքր Ասիոյ մէջ տիրապետող թշուառութեան դեռ միայն մի ծայրն շօշափել ենք մեր բարեարութեամբ, այնտեղ կան հազարաւոր զրկուած ամեն բանից անխնամ և անօգնական, շատ գիւղերում կարօտութիւնը խրօնիքական է դարձել և այնպիսի մի աստիճանի է հասած որ ոչ ալ կարելի է նկարագրել և ոչ էլ Անգլիայում մենք կարող ենք նոյն իսկ երեւակայել դրա ահաւարութիւնը: Եւ սակայն, եթէ մենք յարատէինք օգնել այս ժողովրդեան այս սոսկալի թշուառութեան մէջ, նրանք պիտի կարողանային շուտով ինքնօգնութեամբ նորից դարգանալ և դրաւել քաղաքակրթութեան մէջ այնտեղը որին նրանք պէտք է որ գրաւէին:

Ադնիւ անգլիացի տիկինը վերջացնում է իր տեղեկագիրը կոչ անելով բարեսէր հասարակութեան, օգնելու և օժանդակելու «Հայաստանի բարեկամներին» ստանձնած այդ բարի գործին:—Սյո, բարեարարութեան, ողորմութիւն, կանեն «ցլվիլիզացիոնները» թշուառներին, իսկ ոչ զինուած միջամտութիւն ի նպաստ «ինքնավար Հայաստանի», ինչպէս դեռ շարունակում են յուսաբերել մեր quasi-յեղափոխականները և փողեր հաւաքել անմիտ ձեռնարկութիւններ ի համար...

Անտիս, № № 8—9. «Մուրճ»-ի № 7-ում տպուած «արտաքին տեսութեան» առիթով Փարիզի այդ հանդէսում մէջ են բերուած կըցկաւոր խօսքեր, որոնք ճիշտ չեն պատկերացնում մեր «նոր ճանապարհ» յօդուածը: «Մենք պէտք է վերջ դնենք մեր ժողովրդների կեանքը պղտորող դոշիական սիպի «գործիչներ» գոյութեան և թէ թիւրքիայում, թէ Կովկասում և թէ Եւրոպայում միանանք համաթիւրքական վերանորոգութեան մի ծրագրով և գործենք համեմաշխ... Ոչ մի աշխարհայեցողութիւն այնքան զօրեղ չի բուժում մարդկանց հոգուց բռնիկական ցաւ դառած նացիօնալիզմը, սրբան սոցիալիստականը: Հետեւաբար, Թիւրքիայի կեանքի մէջ այդ նոր ուղղութեան իրագործումը պէտք է սկսեն թուրք և հայ սոցիալիստները. կորիզը պէտք է առողջ լինի որ նրանից ծլած ծառն էլ կհնաւնակութիւն ունենայ: Նոր ճանապարհ ընտրէք թիւրքահայեր»: —Մեր այդ միտքը Չոպանեանը այնպէս է հասկացել թէ մենք առաջարկում ենք «թուրք ժողովրդեան հետ միացած պայքարել» սոցիալիստական հողի վրայ...: Այնտեղ ուր դեռ կանգուն է ամենափայլող արսօլիտիզմը կռիւր քաղաքական է և ոչ սոցիալիստական հողի վրայ: Մեր առածը այն էր որ նոր ճանապարհի ռահվիրաները կարող են լինել միայն սոցիալիստական աշխարհայեացքի աւազանում մկրտուած գործիչներ, որովհետեւ այլպէս գոյութիւն մարդիկ ազատուած այն շովինիզմից որ արգելք է լինում հարեւան ժողովրդների գործակցութեան: Թէ ինչ չափերի է հասնում շովինիզմը «Հայ ազգի իդէալի իրականացման համար» մասնով նաեւ պ. Չոպանեանի նման բանաստեղծի մէջ—այդ երեւում է նրա հետեւեալ խօսքերից. «Ընկերավարականութիւնը՝ ազգապիւրութիւնը ջնջող կամ գէթ դայն տկարացնող վարդապետու-

թիւն մընէ. արդ, մենք՝ հայերս այս պահուս կը դանդաղենք այնպիսի բացառիկ կացութեան մէջ, որ իրաւունք չունինք ազգասիրութիւնը տկարացնող ու է տարրի տարածումը քաջալիւրելու մեր մէջ:—«Նս ազգայինական եմ (№ 3—4—5, Երես 67) որովհետեւ իմ ազգս յառաջադիմութեան, քաղաքակրթութեան տարր մըն է ի բնէ, լոյսի գործիք մըն է, գեղեցկութեան աղբիւր մըն է, ազատութեան կայծ մըն է: Իմ ազգայնականութեանս նպատակը շրջակայ ազգերուն փոխել, անոնց չքացմամբ իմ ազգս մեծացնել չէ, այլ չեզոքացնել յառաջադիմութեան խոչնդոտ դերը գոր կը կտտարեն մեզ շրջապատող մահմետական յետաւնաց, տգէտ և բիրտ դանդաղութիւնները, տալ միջոցներ որ իմ ազգս, աշխատող, արտադրող, շէնցնող, ազատասէր, արուեստագէտ իմ ազգս՝ իմ բոլոր ձիրքերը, իր բեղուն հողին բոլոր ուժերը կարենայ ազատօրէն գործածել յօգուտ ոչ միայն իրան, այլ բոլոր Արեւելին, բոլոր մարդկութեան:—Սյդ ազգասիրական գիֆիրամբի հետ նս խօսքեր չի դնում վատարանելու համար «թուրք-թաթար դանդաղութիւն» և խրախուսելու հայերին դարձեալ ընկնել ոռւս կառավարութեան գիրկը և նրանից փրկութիւն սպասել: «Համոզուած եմ որ ապահովելու համար մեր ազգին գոյութիւնը—չարունակում է պ. Չոպանեանը—մահմեդական դանդաղութիւն մէջ՝ ուր բնկմամբ ու տարադնած ենք, անհրաժեշտ է որ մահմեդական դանդաղութիւն միշտ դապուած մնայ ոռւսական դժբութեան ստեղծմին տակ, ու մենք կը թնամ ըլլանք այդ գորութեան վրայ... «Թուրք-թաթար ցեղերը, անս մեր բուն թշնամին:—Անպաղաքակիրթ և յետաւնաց, կոպիտ ցեղի մը գերին ըլլալը գերութիւնը կը կնապէս անտանելի կը դարձնէ: «Հայու վեհանձն ու բարի հողին, որուն մէկ կայծը կը զգամ մէջս,

ինծի թոյլ չի տար որ յաւիտենական բարբառութեան դատապարտուած նկատեմ ցեղ մը, որ մարդերու հաւաքածու մըն է, ինծի նման արարածներու համախմբումն է ե այլ և այլն: Այժմ պարզ պէտք է լինի թէ ղոչիական տիպի գործիչներին պակաս վտանգաւոր չեն մեր ժողովրդի գոյութեան համար նաեւ ազգային բովանդակով և մեծամշտութեամբ գինովցած բանաստեղծներ, որոնք ձգտում են լինել և... քաղաքագէտներ: Քննարկեցուն լաւ կանէր մի կողմ թողնել պոլիտիկան: Զգայականութեան և սառն դատողութեան մեթոդները տարբեր են...

Նոյն Armenia ամսագրում միսո Աննի Մարշալը Տաճկաստանի հայ կանանց ասեղնագործութեան մասին մի հետաքրքրական յօդուած է գետել:

Ասեղնագործութեան արուեստը ծանօթ է եղել Ասիայում մոզ ժամանակներից ի վեր: Դեռ Մովսէսի ժամանակ Իսրայէլի կանայք պատրաստում էին զանազան գոյներին ասեղնագործ քթաններ վկայութեան խորանը դարձնելու համար: Լէյպպի նինուէական աւերակների տակից գտած քանդակագործ սեղանատախտակներից երեւում է, որ հին ժամանակներում թագաւորներն ու քահանաները ասեղնագործ հանդերձներ էին հագնում:

Դարերի բնթացքում այդ գեղեցիկ արուեստը չի անհետացել: Այժմեան հայուհիները դեռ շարունակում են պահպանել ու աւելի կատարելագործել այդ հին արուեստը: Արհեստական ոչինչ չենք գտ-

նում նրանց այդ ձեռագործների մէջ: Իւրաքանչիւր գաւառ Հայաստանում ունի իր որոշ ասեղնագործութիւնը: Մարդուանամ, Այնթապում, Պարբերում, Էրզրումում, Կ. Պօլսում, և այլ հայաբնակ գաւառներում ասեղնագործում են ձեռքով մանած նուրբ քթանների՝ «բեզ» երի վրայ, որոնցից պատրաստում են բարձեր, վերմակներ, վարագոյրներ և այլն և այլն: Բաց—կարմիր ու կապոյտ գոյներին առաւելութիւն է արւում: Առաջ ուրուագծում են մի սրածայր փայտի կտորով ամենանուրբ կտաւի վրայ և ապա սկըսում ճարպիկ մասներով ասեղնագործել: Թղթէ օրինակներից կամ պատկերազարդ ժուրնալներից չեն օգտւում երբէք: Ձեն ու տարազը առնում են շրջապատողներից. օր. ֆինջան, օրօբաց, խաղողի ջութ, նուռ, ծաղիկներ և այլն և այլն. գոյներն ու նկարները վայելուչ են ու վարպետօրէն իրար յարմարեցրւած: Իմ հարցին՝ թէ ով է սովորեցրել նրանց այդ արուեստը, պատասխանում են՝ «մենք սովորել ենք մեր մայրերից, նրանք էլ ոսկորել են իրանց մայրերից և այդպէս էլ շարունակուել է միշտ»: Ինքնուրույնութիւնը յատուկ է հայ կանանց: Նրանք չեն օրինակում իրարից կուրօրէն այլ իւրաքանչիւրը աշխատում է նոր-նոր ձեւեր ու պատկերներ աւելացնել այդ արուեստի մէջ: Հայկական կոտորածներից յետոյ՝ մեծ քանակութեամբ հայուհիներին այդ ձեռագործերը վաճառահանուել են Եւրոպայի զանազան երկրներում գլխաւորապէս յօգուտ հայ որբերի:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Բանուորական աշխատանքի նոր պայմանների համեմատ (ամսավճար և 8 ժամուայ աշխատանք) «Հերմես» տպարանը չէր յարմարեցրել գործը ինչպէս հարկըն է, ուստի նա անկարող գտնուեց ժամանակին հասցնել «Մուրճի» № 11: Խմբագրութիւնս ստիպուած լինելով միացնել № 11, 12, միջոցներ է ձեռք առել որ այսուհետև ամսագիրս լոյս տեսնի իւրաքանչիւր ամսուայ 20-ին:

Բանալով 1907 թուականի բաժանորդագրութիւնը խմբագրութիւնս աւելորդ չի համարում նկատել որ 1906 եռուն թուականը տոհասարակ աննպաստ էր ամսագրների ինչպէս և մեծ գրքերի հրատարակութեան համար. եթէ ուստաց այդ տիպի հրատարակութիւնների համար լայնածաւալ երկրի բազմաթիւ գրադարան-ընթերցարանները, ուսումնարանները և այլ հաստատութիւնները մշտական բաժանորդների մի պատկառելի կոնտինգենտ են կազմում—մեր հայկական խղճուկ և անկուտուր իրականութեան մէջ մի քանի գրադարան-ընթերցարանները և դպրոցները ճրի են ուղղւած ամսագիր ստանալ, իսկ հրատարակիչները պէտք է մեզանում իրենց յոյսերը դնեն «ընթերցող» հասարակութեան վրայ... Այդ կաթեգորիան էլ այնքան սակաւաթիւ է և սակաւապետ մեզանում որ բազմացած օրաթերթերը, շաբաթաթերթերը, ծաղրական բազմերանգ նկարները, էժանագին բրօշիւրները լքցնում են նրա փոքրիկ պահանջները:

Զնայած այդ չափազանց ծանր պայմաններին մենք պէտք է շարունակենք ծեծել, կռել և կռփել մեր հասարակական-քաղաքական հարցերը, նոր դաստիարակութեան և զարգացման նոր ճանապարհի գիտակցութիւնը զարթեցնել մեր ժողովրդի մէջ: Պոիւր, պայքարը հին

նախապաշարմունքների և խակ, մոլար, իմաստակ հաւկացողութիւնների դէմ պէտք է շարունակենք անդուլ եռանդով և անվեհերութեամբ. մենք համոզուած որ անկախ, քննադատող, գիտութեան և արդարագատութեան պահանջները ամեն տեսակ պոլիտիկանութիւնից բարձր դասող մի ամսագրի գոյութիւնը անհրաժեշտ է մեզ: Թեթև հեծելագորքը և հրացանակիր վաշտեսը ի դէմս ամենօրեայ թերթերի, ինչպէս նկատեցինք անցեալ տարի, չեն կարող կատարել այն, ինչ թնդանօթածիգ բրիգադը ի դէմս ամսագրի, որ հիմնաւոր ումաւործութեամբ պէտք է նախապատրաստի և գիւրացնի շտուրմը, գրոհը բռնութեան և նախապաշարմունքների դէմ:

Մեր ուղղութիւնը որոշ է Pro domo su a (№ № 11—12, 8) յօդուածներից և՛ իւրաքանչիւր հասարակական-քաղաքական ընթացիկ հարցի նկատմամբ յայտնած մեր կարծիքներից և հայեացքներից տարիներ շարունակ: Նոյն ուղղութեամբ պիտի շարունակենք մեր գործը, և եթէ բաժանորդագրութիւնը 1907 թ. սկզբում աջող գնաց—մենք «Մուրճի» մէջ կը տանք նւ պատկերներ: Մեր յոյսը մեր գիտակցող ընթերցողների վրայ է դրուած:

ԲԱՅՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ՔՆՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

(35-րդ տարի)

ԱՌԱՋԻԿԱՅ

1907

ԹԻՖԼԻՍԻՆ

«Մշակը» կը հրատարակուի նոյն պրոգրամով եւ նոյն ուղղութեամբ

Ամեն օր քացի տօներին յաջորդող օրերից:

Բաժանորդագինը «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասնամէկ ամսանը նոյնպէս 10 ռ., տասն ամսանը՝ 9 ռ., ինն եւ ութ ամսանը՝ 8 ռ., եօթն ամսանը՝ 7 ռ., վեց ամսանը՝ 6 ռ., հինգ ամսուանը՝ 5 ռ., չորս ամսանը՝ 4 ռ., երեք ամսուանը՝ 3 ռ., երկու ամսուանը՝ 2 ռ. եւ մի ամսուանը 1 ռուբլի:

Արտասահմանեան բաժանորդագրութիւնը. Ա. մ եւրիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դրլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի:

«Մշակին» գրուել կարելի է Խմբագրատանը (Բազարնայա եւ Բարոնսկայա փողոցների անկիւն):

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «Մշակին» գրուելու համար եւ առհասարակ նամակներ եւ ծրարներ ուղարկելիս՝ պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФ-ЛИСЪ, Редакция „МШАКЪ“, իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունուում են բոլոր լեզուներով:

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունուում: 2—3

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԴԱԻԹԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ

լոյս են տեսել

№ 5. Մօպսսան—«Մի կեանք»

Թարգմ. Ս. Տէր-Անանեան 1 ո.

№ 6. А. Агаронянъ, Кусочекъ хлѣба, Пѣтухъ

Թարգմանեց Վ. Բարեան. 10. կ.

№ 7. Ա. Աննենիլայա, «Հանրապետութիւն»

Թարգմ. Ս. Տէր-Անանեան 5. »

№ 8. Ա. Բեբել, «Բրիտաննէութիւն և Սօցիալիզմ»

Թարգմ. Ս. Տէր-Անանեան 10. »

«Շուտով լոյս պիտի տեսնեն.

№ 9. «Զւիցէրիա» և

№ 10. «Կորչին Սօցիալ Դեմօկրատները»:

2—2

«ԳՈՒՏՏԵՄԲԵՐԳ» զրախանութում

Վաճառոււմ են լիտիւն ՍՐԳՍԵՆԻ հետեւեալ գրքերը.

1) Ժողովրդի կրթութեան գործը մեզանում, 1892 թ.

գինն է 20 կ.:

2) Հին ցաւ (հրապարակախօսական խոհեր—մեր կղերի մասին), 1900 թ. » 30 կ.:

3) Մի քանի օր Արցախում եւ Սինիքում » 20 կ.:

4) Այց Թիւրքաց Հայաստանին, 1890 թ., » 60 կ.:

5) «Մայրենի խօսք» ընթերց. ձեռնարկ 3-րդ և 4-րդ տարիների համար: » 80 կ.:

ԱՌԱՅՆՉՐԻ

1) Վշտի ծիծաղը (պատմութեան ժողովածու) գ. 1 ր.:

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆԻ

Ազուլիցոց քարաւոր, Լեզուար., հետագ. գինը 2 ր.

LA REVUE

(Ancienne «evue des Revues»)

A B O N N E M E N T

Etranger (Union postale) par an: 28 fr.

» » » par semestre 16 fr.

Directeur-Rédacteur en chef

JEAN FINOT

Administration et Rédaction:

12 Avenue de l'Opéra

Paris

Բացում է ըստանորոգագրութիւն

Ա. ԴԻԻՄԱՅԻ

„ԲԱՍԴԻԼԻ ԱՌՈՒՍԸ“

Հոգակաւոր պատմական գործն՝ Փրանսիական սեծ յեղա-
փոխութեան ժամանակից

Թարգմանութիւն

Մ. ԲԱՂԴԱՍՏԱՐԵԱՆԻ B. D.

Գիրքը 300 էջերից բաղկացած 9 և $5\frac{1}{2}$ ծաւալով և ընտիր թղթի
վրայ տպագրուած, մամուլի տակ է և լոյս կը տեսնի շուտով:

Պարսկաստանի համար՝ կազմածը 10 դրան, թղթակազմ 8 դր.

Ռուսաստան թղթակազմ . 1 ռ. 50 կ.

Եւրոպա » 4 ֆրանկ.

Ամերիկայ » 1 դոլար.

Դրավաճառներին 20⁰/₀ գեղջ կտրուի

Փոշտի ծախսը մեղ է պատկանում:

Պատուէրները ուղարկել կանխիկ դրամով

Հրատարակիչ Մ. ԲԱՂԴԱՍՏԱՐԵԱՆԻ

ԹԱԻՐԻԶ

M. BAGHDASARIAN

Tauris (Perse)

Ջ. Մ Ո Ր Ի Է Ր Ի

ՀԱԶԻ ԲԱԲԱՅԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

2 հատորի գինն է 3 ռ. 50 կոպ.

«Մուրճի» տարեկան բաժանորդների համար 2 ըուրլի ճանա-
պարհածախսով:

Դիմել խմբագրութեանս հասցէով:

երկրներում.—Հայ Գեմտկրատիական կուսակցութիւն.—
Գաշնակցութիւնը՝ ազգային «փողրակ».—Երեք մահ.
Նահապետեան, Սեդրակեան եւ Պետրոսեան:

19) ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Եւրոպական կապիտալիզմը Աֆ-
րիկայում.—Գերմանական բայխստադի արժակումը.—Ճա-
սոնիայի գերիշխումը Խաղաղ Ովկիանոսում եւ Ասիա-
յում.—Ճապոնական եւ ամերիկական կապիտալիստնե-
րի մրցումը եւ առանձնայատկութիւնները:

18) ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ «Armenia»,
«Անահիտ»:

19) ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ 154
20) ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ 156

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագրերից՝ դրել պարզ
մանաւանդ քուերը, յաւուկ ամուլներն ու օտար բառերը, եւ քերքի միայն մի
երեսի վրայ, առանձնապէս ուժ զարձնել կէտադուրքեան, ուղղապարհեան եւ
նոր պարբերութիւնները որոշակի լինելու վրայ: Թարգմանութեան հետ պէտք
է ուղարկել խմբագրութեանը նաեւ բնագիրը:

2. Ձեռդռնուած մեծ յօդուածները պահուած են խմբագրատանը 6 ա-
միս, իսկ յետոյ ոչնչացնուած են: Ձեռագիրը յետ ստանալու համար պէտք է
ուղարկել ճանապարհածախսը: Փոքր յօդուածներն ու ոտանաւորները չեն
վերադարձնուում:

3. Գրուածքների վարձատրութեան չափը որոշում է խմբագրութիւ-
նը: Խմբագրութեան առանց պայմանների ուղարկուած ձեռագիրները հա-
մարում են անվճարելի:

4. Խմբագրութիւնը իրան է վերապահում ուղարկուած յօդուածները
փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:

5. «Մուրճի» համարը չստացուելու դէպքում պէտք է խմբագրութեա-
նը տեղեկութիւն տալ ոչ ուշ, քան յաջորդ համարի լոյս տեսնելը:

6. Խմբագրութեանը զանազան հարցումներով դիմող անձինք պէտք
է պատասխանի համար ուղարկեն նամակազրույժ կամ պոստային բլանկ:

7. Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոպէկի Հասցէի
փոփոխումը պէտք է ստացուի իւրաքանչիւր ամսի 10-ից ոչ ուշ, որպէս-
դի առաջիկայ համարն ուղարկուի նոր հասցէով: Նոր հասցէի հետ պէտք է
յայտնել նաեւ հին հասցէն:

ԲԱՑՈՒՆԺ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1907

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

(Նոր շրջան ՄԱտարի)

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր ՈՒ Թ Ի Ն Ը

Գրքակազմ

Պարբերական

տարեկան 10 ռ.

կէս տարին 5 ռ 40 կ

ամսական 90 կ.

Պարբերական

տարեկան 12 ռ.

կէս տարին 7 ռ.

ամսական

(32 Ֆ.)

(18 Ֆ.)

(3 Ֆ.)

Բաժանորդագինը կարելի է վճարել նա՛նու մաս-
մաս(5—5 ռ.), երկրորդ վճարը լինում է մայիսին: Տարբ.
դպրոցներում ուսուցանողների, աշակերտների, ուսանող-
ների, գիտացիների և քանուկների համար բաժանոր-
դագինն է (Ռուսաստ.) 8 ըուրլի տարեկան, որ կարելի
է վճարել մաս-մաս(4-4)ռ.:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԻՈՒՄ Է

ԹԻՖԼԻՍԻՄ — Խմբագրատանը (ձախմատական վարչոց, տ. № 12)

«Դուստներդ», «Կենտրոնական» և «Новая Рѣчь» (Դորովիսակիյ, արբ. թատ-
րոնի դիմաց) գրախանութներում:

Կայքուրևում այլ «եղերից» գեղար. է դիմել՝ Тифлис.

въ редакцію журнала «МУРЧЪ».

Առաստանսից՝ Tiflis, Rédaction de la revue «MOURTCH».

Եթէ 1907 թուականի բաժանորդագրութիւնը սկզբում աշուղ դնայ՝ «Մուր-
ճը» դառնալու է ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ Ընդունուում է ամեն լիզուով: Յայտարար-
ութիւններէ համար վճարում են.— 1 երես ամսոյ յայտարարութեան հա-
մար 10 ռ., 1/2 եր. 5., 1/4 եր.— 2 ռ., տպարան (կորպ.)— 10 կ.:

Խմբագիր՝ ԼՆԻՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ





